

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 (23)
2 0 2 0

Գյումրի 2020

*«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն
հիմնադրվել է 1998թ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ (15.01.1998):*

Ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերականների ցանկում:

ISSN 1829-4316

Գլխավոր խմբագիր՝ Բանասիրական գիտությունների դոկտոր
Ս.Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝ Աբրահամյան Լ.Հ. (պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ
թղթակից անդամ), Ակոպով Ա.Ա. (պատմ. գիտ. թեկնածու, պատասխանատու
քարտողար), Ավետիսյան Պ.Ս. (պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ),
Բազեյան Կ.Ռ. (պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ), Գրիգորյան (Հայկազուն) Ա.Հ.
(ճարտ. դոկտոր, պրոֆեսոր), Խաչատրյան Լ.Մ. (բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր),
Խաչիկյան Գ.Վ. (բան. գիտ. դոկտոր), Հայրապետյան Ա.Ս. (պատմ. գիտ. թեկնածու,
դոցենտ) Հարությունյան Հ.Հ. (արվ. թեկնածու), Մելքոնյան Ա.Ա. (պատմ. գիտ. դոկ-
տոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), Մկոյան Ա.Ա. (փիլ.գիտ. թեկն., մանկ. գիտ.
դոկտոր, պրոֆեսոր), Պետրոսյան Ս.Գ. (պատմ. գիտ.դոկտոր), Մահակյան Կ.Ա.
(հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ), Քոսյան Ա.Վ. (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)

ԳԱԱ ՇՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

NN 1 (23) / հայագիտություն և հասարակական գիտություններ // ՀՀ Գիտությունների ազ-
գային ակադեմիա, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն/: Խմբ. խոր-
հուրդ՝ Ս. Հայրապետյան և այլք.- Գյումրի, «Ռ.Ավետիսյան» ԱԶ, 2020. – 265 էջ:

*Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ. Սարգսյան 5ա
հեռ.՝ +374/312/6 94 77, +374/94/411-228
էլ. հասցե՝ scient.works@shirakcenter.sci.am
կայքէջ՝ www. shirakcenter.sci.am*

ISSN 1829-4316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն 2020

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК
1 (23)
EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre of Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2020 Gyumri

*“Научные труды” основан в 1989г. решением ученого совета Ширакского центра арменоведческих исследований НАН РА (15.01.1998)
Входит в перечень периодических изданий, утвержденных ВАК-ом МОНКС РА.*

*The periodical collection of “Scientific Works” was established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS of RA (15.01.1998).
The periodical is indexed in the list of SCC MESCS RA.*

ISSN 1829 - 4316

Главный редактор: доктор филологических наук **АЙРАПЕТЯН С. А.**
Редакционная коллегия: **Абрамян Л.А.** (к.ист.н., член кор. НАН РА), **Аветисян П.С.** (д.ист.н., член кор. НАН РА), **Айрапетян А.С.** (к. ист.н, доцент), **Акопов А.А.** (к.ист.н., ответственный секретарь), **Арутюнян А.А.** (к.иск.), **Базян К.Р.** (к.ист.н., доцент), **Григорян (Айказун) А.А.** (д. архит., профессор), **Косян А.В.** (д.ист.н., профессор), **Мелконян А.А.** (д.ист.н., профессор, академик НАН РА), **Мкоян А.А.** (к.фил.н., д.пед.н., профессор), **Петросян С.Г.** (д. ист. н.), **Саакян К.А.** (к.псих.н., доцент), **Хачатрян Л.М.** (д.фил.н., профессор), **Хачикян Г.В.** (д.фил.н.)

“Научные труды” Ширакского центра арменоведческих исследований НАН РА

NN 1 (23) арменоведение и общественные науки// Национальная академия наук РА, Ширакский центр арменоведческих исследований/Ред. совет: С.Айрапетян и др.- Гюмри, ЧП “Р. Аветисян”, 2020.- 265 стр.

Editor-in –chief: Doctor of Philological Sciences **HAYRAPETYAN S. A.**

Editorial board: **Abrahamyan L.H.** (PhD in History, Corresponding Member of NAS RA), **Akopov A.A.** (PhD in History, Responsible Secretary), **Avetisyan P.S.** (Doctor of History, Corresponding Member of NAS RA), **Bazeyan K.R.** (PhD in History, associate professor), **Grigoryan (Haykazun) A.H.** (Doctor of Architecture, professor), **Khachatryan L.M.** (Doctor of Philology, professor), **Khachikyan G.V.** (Doctor of Philology), **Hayrapetyan A.S.** (PhD in History, associate professor), **Harutyunyan H.H.** (PhD in Art Studies), **Melqonyan A.A.** (Doctor of History, professor, Academician NAS RA), **Mkoyan A.A.** (PhD in Philosophy, Doctor of Pedagogy, professor), **Petrosyan S.G.** (Doctor of History), **Sahakyan K.A.** (PhD in Psychology, associate professor), **Qosyan A.V.** (Doctor of History, professor).

“Scientific Works” Shirak’s Center of Armenological Studies of NAS RA

NN 1 (23) Armenology and Social Sciences // National Academy of Sciences RA, Shirak Center for Armenological Studies/. Ed. Board:S.Hayrapetyan and others.-Gyumri, "R.Avetisyan PE", 2020,- 265p.

Адрес редакции: 3101, РА, Гюмри, ул. В. Саргсяна 5а

Address: 3101, 5a V. Sargsyan Street, Gyumri, RA

тел./tel.: +374 /312/6 94 77, +374/94/411-228

E-mail: scientific.works@shirakcenter.sci.am

hppt: www.shirakcenter.sci.am

ISSN 1829-4316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА, 2020

@ Shirak Center for Armenological Studies of NAS RA, 2020

ԱԶԱՏԱՆԻ ԲԱԶՄԱՆԻՍ ԱՊԱԿՅԱ ԿՆԻՔԻ
ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարիսա Եզանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ անտիկ ժամանակաշրջան, ձիու և թռչնի պաշտամունք, արև, ջուր, երկինք, ստորերկրայք, առասպելաբանություն, հավատալիք, ծես, գոհաբերություն:

2012թ. Ազատանի հնագիտական համալիրի հելլենիստական ժամանակաշրջանին վերաբերող մի դամբարանից հայտնաբերվեց կապույտ, անթափանց ապակուց բազմանիստ կնիք, որի վրա պատկերված են ձի և նրա առջև կանգնած արծիվ: Հոդվածում մանրամասն ներկայացված են կնիքի պատկերագրության ընդհանրությունները Հայաստանի, Անդրկովկասի, Իրանի և Փոքր Ասիայի համաժամանակյա նյութերի հետ: Բացահայտված է տարբեր ժողովուրդների հնագույն գրական հուշարձաններում փաստված, բանահյուսության և ոչ նյութական ժառանգության մեջ պահպանված արժվի և ձիու հնդեվրոպական ընդհանուր դիցաբանությունից սերված, պաշտամունքային և ծիսական բնույթը, նույնական պատկերագրությամբ կնիքների տարածվածությունը, դրանց օգտագործումը և՛ որպես պահպանակ հմայիլներ, և՛ որպես հանգուցյալների հոգիները տեղափոխողներ: Եզրակացվում է, որ թաղման ծեսում դրանց օգտագործման նպատակը հանգուցյալի հոգուն ուղեկցելը և նախնիների մոտ արագ հասցնելն էր:

Նախաբան. Ազատանի ամրոցը և բնակավայրը մ.թ.ա. 5-րդ դարում սկսում են լքվել: Ամենայն հավանականությամբ, բնակչության ստվար զանգվածը մ.թ.ա. 6-5-րդ դարերում տեղափոխվում է մոտ 2կմ հեռավորությամբ հիմնված Բենիամինի նորաստեղծ դաստակերտ: Ազատանի ամրոցը և բնակավայրը կորցնում են իրենց նշանակությունը, սակայն, ինչպես ցույց տվեցին վերին շերտերի պեղումները, կյանքը այստեղ շարունակվել է նաև անտիկ ժամանակաշրջանում: Ամրոցի և շրջակայքի վերին շերտը վերաբերում է հելլենիստական ժամանակաշրջանին: Այդ շերտի պեղումների ընթացքում համարյա մակերեսին հայտնաբերվեցին անտիկ շրջանի մի քանի դամբարաններ: Այստեղ հայտնաբերված թաղումները խիստ մակերեսային են, և ընթերցվում էին դամբարանների կողասալերը: Դրանք դիաթաղմամբ սալարկղային թաղումներ էին: Պեղված ոչ մի դամբարան ծածկասալ չունեք: Ամրոցի արևմտյան կողմում՝ տափարակի վրա, իրարից ոչ հեռու հայտնաբերվեցին սալարկղային 2 թաղումներ: Առաջինն ուներ հյուսիս-հարավ կողմնորոշում, կմախքը կծկված պառկած էր ձախ կողքին՝ դեմքով դեպի արևելք (նկ.1,2): Գլխի մոտ դրված էր մեկ պուլիկ, կրծքին՝ ոսկրից նախշազարդ իրի բեկոր (տախ.1, նկ.5): Դամբարանի կողքից՝ հյուսիսային կողասալի հիմքի մակարդակից, հայտնաբերվեց կապույտ, անթափանց ապակուց, երկայնակի միջանցիկ անցքով բազմանիստ կնիք (երկ.՝ 1,5 սմ, լայն.՝ 0,8սմ, հաստ.՝ 0,5սմ), (նկ. 3): Այն հավանաբար այդտեղ էր ընկել հուղարկավորության ժամանակ: Դամբարանը, ըստ հայտնաբերված նյութերի, թվագրվում է մ.թ.ա. 1-մ.թ. 1-ին դարերով¹:

Ապակու մեջ տեղ-տեղ սպիտակավուն զանգված է, մակերեսի ձախ հատվածում՝ հավանաբար լարի թողած նեղ, խորակոս կորագիծ: Կնիքի աջ եզրը քիչ թերի է, ճակատային ուղղանկյուն մակերեսին՝ ձախ կողմում պատկերված է ձի, որի առջև կանգնած է թռչուն: Պատկերը սխեմատիկ է: Աջ ոտքն առաջ դրած ձիու իրանն անշարժ է, կուրծքը՝ քիչ դուրս ցցած, ուղիղ գծով դրած ոտքերը չեն դիպչում գետնին: Երկար վիզը գրեթե ուղղահայաց դիրք ունի, երկարավուն գլուխը քիչ կախ է, կարճ պոչը՝ վեր բարձրացրած: Թռչունը պատկերված է առջևից, գլուխը փոքր է, թևերը՝ կախված դիրքով: Գլխից վեր զիզգազաձև նշան է (տախ. I, նկ. 1, գունավոր):

Բրզանման բազմանիստ կնիքների այս ձևը փոքրասիական ծագում ունի²: Մ.թ.ա. V-IV դդ. նման կնիքներ արտադրվել են միայն Փոքր Ասիայում, հետա-

¹ Եզանյան Լ., Խաչատրյան Հ., Անտիկ ժամանակաշրջանի նորահայտ դամբարանների պեղումներ Շիրակում 2008-2016թթ.//«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի 2019թ., էջ 28-31:

² Максимова М. И. Стекланные многогранные печати найденные на территории Грузии. Изв. Института языка и истории материальной культуры Грузии. АН ГССР, 1941, № 10, стр. 89 (ebook).

գայում լայն տարածում ստացել Հայաստանում³, Վրաստանում⁴, Ադրբեջանում⁵: Կնիքների վաղ օրինակները փորագրված են քարի վրա, իսկ ավելի ուշ տարբերակները՝ գունավոր ապակու: Անդրկովկասում այդ կնիքները փորագրող և ընդօրինակող կենտրոնների մեծ մասը եղել է Պարսկաստանի և փոքրասիական երկրների հետ ավելի սերտ կապերի մեջ գտնված Հայաստանում⁶: Տեղական ապակյա կնիքները ձուլվել են քարե կնիքից հանված կաղապարում և չափերով ավելի երկար են⁷: Ազատանի կնիքը անփույթ արված, տեղական նմուշ է: Այն նյութով, ձևով վերաբերում է մ.թ.ա. II-մ.թ. I. դ. թվագրվող բազմանիստ ապակյա կնիքների խմբին⁸, իսկ հորինվածքով համադրելի է Գեղադիրի (մ.թ.ա. IV վերջ)⁹, Լենինականի (տախ. I, նկ. 3), Օշականի (տախ. I, նկ. 2)¹⁰, Գորիսի (տախ. I, նկ. 4)¹¹ մ.թ.ա. II-մ.թ. I. դ. թվագրվող տարբերակներին: Նշված կնիքների հորինվածքում նաև զիզգագ կամ ալիքաձև նշան կա: Երբ ձին կանգնած է թռչնի դիմաց, նշանը թռչնի գլխավերևում է (տախտ. I, նկ. 1, 3), երբ թռչունը վազող ձիու գավակին է, նշանը ձիու գլխին է (տախ. I, նկ. 2, 4):

³ **Аракелян Б. Н.** Очерки по истории искусства Древней Армении (VI в до н.э. – III в. н.э.), Изд-во АН Арм. ССР, Ер., 1976, стр. 33.

⁴ **Максимова М. И.**, նշվ. աշխ., էջ 77; **Аракелян Б. Н.**, նշվ. աշխ., էջ 33; **Лордкипанидзе М. Н.** Геммы государственного музея Грузии, III, Тбилиси, Изд-во государственного музея Грузии, 1961, стр. 72 (ebook).

⁵ **Бабаев И. А.** О трех стеклянных многогранных печатях, найденных в Мингечауре. Археологические исследования в Азербайджане. Сборник статей. Баку. Изд-во АН Азерб. ССР, 1965, стр. 12 (ebook).

⁶ **Խաչատրյան Ժ.**, Դիտողություններ Հայաստանի հելլենիստական շրջանի գլխավորակալի մասին // ՀՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 7, էջ 104:

⁷ **Խաչատրյան Ժ.**, Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները // Պատմա-բանասիրական հանդես, 1965, № 1, էջ 272-277:

⁸ Տե՛ս **Максимова М. И.** Стеклянные многогранные печати найденные на территории Грузии. Изв. Института языка и истории материальной культуры Грузии. АН ГССР, 1941, № 10, стр. 89 (ebook); **Аракелян Б. Н.** Очерки по истории искусства Древней Армении (VI в до н.э. – III в. н.э.), Изд-во АН Арм. ССР, Ер., 1976, стр. 33; **Лордкипанидзе М. Н.** Геммы государственного музея Грузии, III, Тбилиси, Изд-во государственного музея Грузии, 1961, стр. 72 (ebook); **Бабаев И. А.** О трех стеклянных многогранных печатях, найденных в Мингечауре. Археологические исследования в Азербайджане. Сборник статей. Баку. Изд-во АН Азерб. ССР, 1965, стр. 128 (ebook). **Խաչատրյան Ժ.** 1965, նշվ. աշխ., էջ 274-276); **Նույնի՝** Դիտողություններ Հայաստանի հելլենիստական շրջանի գլխավորակալի մասին // (ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, N 7, էջ 98, 102); **Есаян С. А., Калантарян А. А.** Ошакан I. Основные результаты раскопок 1971-1983 гг., Ер., Изд. АН Арм. ССР, 1988, с. 52, 58, 65-66, табл. XLI/6; XLII,2; XLVII/11; **Խնկիկյան Օ. Ս.**, Նորահայտ հուշարձան Գորիսում (Պատմա-բանասիրական հանդես, 1981, N 4, էջ 312-314, նկ. 3,1); **Եզանյան Լ. Գ.** Շիրակի անտիկ դամբարանադաշտերը // Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ, 1, Գյումրի-Երևան, «Գիտություն» հրատ, 2010, էջ 77, տախտ. XV/13; **Քոչարյան Գ. Գ.**, Դվինի տարածքում հայտնաբերված բազմանիստ կնիքը // Լրաբեր հասարակական գիտությունների, 2012, N 2-3, էջ 353-355:

⁹ **Խաչատրյան Ժ.**, 1965, նշվ. աշխ., էջ 276:

¹⁰ **Խաչատրյան Ժ.**, 1965, նշվ. աշխ., էջ 275, նկ. 3:

¹¹ **Խնկիկյան Օ.**, Նորահայտ հուշարձան Գորիսում // Պատմա-բանասիրական հանդես, 1981, №4, էջ 313, նկ. 3:

Հին Արևելքում, մ.թ.ա. III հազարամյակից սկսած, կնիքները ծիսական գործառույթ ունեին և օգտագործվում էին ծիսակարգերում¹²: Կնիքների հորինվածքը յուրօրինակ գաղափարագրի իմաստ ուներ¹³, ժամանակակիցների համար դրանք խոսուն էին, իմաստը՝ հասկանալի: Անտիկ շրջանում և՛ կնիք են, և՛ զարդ, իսկ երբեմն ավելի շատ զարդ են, քան կնիք, առավելապես պահպանակ-հմայիլներ են: Նման կնիքները *«դրոշմիչ և վավերացման գործառույթ չեն կատարել»*¹⁴:

Փոքրասիական բազմանիստ կնիքների շարքում Ն.Նիկուլինայի գնահատմամբ՝ ապակյա տարատեսակի ստեղծման համար հիմք են ծառայել տեղական ավանդույթները¹⁵: Բազմանիստ կնիքների թեմատիկան, ըստ Մ.Խաչատրյանի, *«վերցված է պարսկական կյանքից, Պարսկաստանի ու Փոքր Ասիայի կենդանական աշխարհից...»*¹⁶:

Որևէ տարածաշրջանում պաշտամունքի աստիճանի է բարձրացվում տվյալ բնաշխարհի կենդանին: Մենդել-ռիսյան ժամանակաշրջանով թվագրվող վայրի ձիու ոսկորներ գտնվել են Լենինականում, իսկ Նալբանդ կայարանում, վյուրմյան նստվածքներում՝ ձիու ատամ¹⁷: Հայկական լեռնաշխարհում ձիաբուծությանը ծանոթացել են մ.թ.ա. IV-III հազարամյակներում¹⁸: Ձիու (ենթադրվում է՝ ընտելացված) ոսկորներ գտնվել են Էլարից¹⁹, Շենգավիթից, Գառնիից²⁰, Կարազից, Կվաջիսեյեբից²¹, Մեծ Սեպասարից*։ Մ.թ.ա.III հազ. ձիաբուծությամբ

¹² Փրիլյաույան Ա. Ս., Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, Ե., 1998, էջ 86-91: Քոչարյան Գ. 2012, նշվ. աշխ., էջ 353:

¹³ Կնիքները սերում են դրոշմ-խարաններից: Ծիսական բնույթ ունեւն տոհմի անդամների մարմնի վրա տոտեմ կենդանու նմանությամբ խարան դնելը (Մնացականյան Ա., Հայկական զարդարվեստ, Եր., ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1955, էջ 269), հեքիաթներում նվիրագործման ծեսի դժվարություններն ու արգելքները հաղթահարող հերոսների մարմնի տարբեր մասերին անջնջելի դաջվածք-դրոշմները (Հայրապետյան Թ., Ծիսական մրցության մշակույթը հայկական հրաշապատում հեքիաթներում//Պատմա-բանասիրական հանդես, 2012, 1, էջ 159), իսկ հետնագույն վկայությունը թոնդրակեցիների ճակատին խարանվող աղվեսադրոշմ է (տե՛ս Գր.Մագիստրոսի Թղթերը, ի լույս ընծայեց Կ. Կոստանյան, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 162):

¹⁴ Քոչարյան Գ. 2012, նշվ. աշխ., էջ 353:

¹⁵ Никулина Н. М. К вопросу о «восточногреческом» и «греко-персидском» искусстве (по материалам глиптики VI вв. до н. э.)// Вестник древней истории, М., Изд-во «Наука», 1969, N 3, с. 119.

¹⁶ Խաչատրյան Մ., 1965, նշվ. աշխ., էջ 276:

¹⁷ Авакян Л. А. Четвертичные ископаемые млекопитающие, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1959, стр. 53. (ebook); Сардарян С. Палеолит Армении, Изд-во АН Арм.ССР, Ер., 1954, стр. 37; Եսայան Ս.Ա., Ձիւ Ուրարտուի ռազմական գործում//ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1962, 2, էջ 77:

¹⁸ Եսայան Ս. Ա., 1962, նշվ. աշխ., էջ 77:

¹⁹ Пиотровский Б. Б., նշվ. աշխ., էջ 6:

²⁰ Есаян С. А. Оружие и военное дело древней Армении, Изд-во АН Арм. ССР, Ер., 1966, стр. 119 (ebook).

²¹ Кузьмина Н. 1973, № 2, նշվ. աշխ., էջ 185:

զարգացած Կովկասից²² և Իրանից ձիեր էին արտահանվում՝ մատակարարելով ասորական զորքերին²³: Հայաստանից ձիեր արտահանվում էին նաև Աքեմենյան տիրապետության շրջանում: Պարսից արքային տարեկան 20 հազար մտրուկ միհրական տոների համար Արմենիայի սատրապի կողմից ուղարկելու մասին վկայում է Ստրաբոնը²⁴:

Հնդեվրոպացիների համար սմբակավոր կենդանիների մեջ ձին մարդուն ամենամոտն է: Ձիու ծիսական առանձնակի կարգավիճակի վկայությունը խեթական տեքստերում ձին ստրկուհի գերիներին հավասարեցնելն է²⁵: Հնդեվրոպական դիցաբանության մեջ ձին կապվում է ն՝ արևի, ն՝ ջրի հետ: Հին հնդկական և լիտվական դիցերում ձին ստեղծվում է արևից²⁶: «Ռիզվեդայում» աստվածներին նվիրված հիմների մեջ ներառված են «աստվածացվող ձիերին» ձոնված հիմներ²⁷: «Ռիզվեդայում» աստվածային Էտաշա ձին արևի տեքրով է, արևն անվանվում է ձի²⁸, իսկ Ավեստայում՝ «արագածի»²⁹: Արևին հաճախ ձի էին անվանում գերմանները և հին հույները³⁰: Սկանդինավյան հավատալիքներում արևն անձնավորվում էր ձիու կերպարում, կելտերի³¹ և սլավոնների համար ձին արևի խորհրդանիշ էր³²: Ձին տեղափոխում է արև աստծուն, իսկ երբեմն էլ՝ համադրվում արևի հետ: Ձիու ծածանվող բաշը համեմատվում էր արևի ճառագայթների հետ³³: Ձի-արև համադրումը ամպրոպի և որոտի աստ-

* Թյուրինգեյի համալսարանի պրոֆեսոր, հնակենդանաբան Հանս Պիտեր Ուերփմանի բանավոր փոխանցմամբ:

²² **Пиотровский Б. Б.** Развитие скотоводства в древнейшем Закавказье.//СА, XXIII, 1955, стр. 6 (ebook); **Есаян С. А.** Оружие и военное дело древней Армении, Ер., Изд.АН Арм СС, 1966, стр. 19; **Кушнарера К. Х. Чубунишвили Т. В.** Древние культуры Южного Кавказа. Ленинград, Изд. «Наука», 1970, стр. 110; **Цалкин В. И.** Древнейшие домашние животные Восточной Европы, Москва, Изд. «Наука», 1970, стр. 185 (ebook); **Кузьмина Е. Е.** Навершие со всадниками из Дагестана//Советская Археология, № 2, 1973, стр. 185; **Кузьмина Е. Е.** 1973, № 2, стр. 185.

²³ **Янковская Н.Б.** Некоторые вопросы экономики ассирийской державы//Вестник древней истории, Москва, Изд. «Наука». 1956, №1, схема, 4, стр. 45; (ebook) Кузьмина. 1973, № 2, նշվ. աշխ., էջ 185:

²⁴ **Ստրաբոն.** Քաղեց և թարգմանեց **Հր. Աճառյանը**, Եր., Յերեւանի պետական համալսարանի հրատ., 1940, էջ 61:

²⁵ **Иванов Вяч. Вс.** Избранные труды по семантике истории культуры. Том V, Мифология и фольклор. М. Изд. «Знак». 2009. стр. 247 (ebook).

²⁶ **Müller F. M.** Contributions to the science of mytology. L.N. Y., 1897, v.1, 728 (ebook).

²⁷ **Гамкрелидзе Т. В. Иванов Вяч. Вс.,** նշվ. աշխ., էջ 548:

²⁸ **Schroder L.** Arische Religion. Lpz., 1923, Bd.2. p.17 (ebook).

²⁹ **Müller F. M.,** նշվ. աշխ., էջ 127:

³⁰ **Mannhardt W.** Die Iettischen Sonnemythen, ZE, 1875, Bd. 7, 93 (ebook).

³¹ **König M. E.** Die Symbolik der urchichtlichen Menschen. „Symbolon,, Bd. 5 Basel, 1966, 154 (ebook).

³² **Рыбаков Б. А.** Прикладное искусство и скульптура. В кн: История Древней Руси. Т. 2, Москва-Ленинград, Изд.АН СССР, 1951, стр. 204-233 (ebook).

³³ **Խաչատրյան Ճ.,** Արծվի տարբեր հորինվածքներով կնքադրոշմներ, գեմաներ և քանդակներ, Պատմա-բանասիրական հանդես, 2003, № 2, էջ 172 (ebook).

ված Բնդրայի կերպարում է: Բնդրան ձիերի տիրակալ է³⁴, Բնդրան է արևը քարձրացնում երկինք³⁵:

Ըստ հին հնդկական ավանդության՝ ձին ծնվում է օվկիանոսից և հայտնվում Բնդրային³⁶: Ջրերում ծնված, ջրում ապրող և ջրից ակնթարթորեն երկինք՝ արևին հասնող հրեղեն ձիերը կապված են քտոնիկ աստվածների, մահվան, դժոխքի տիրակալի հետ: Հայոց հավատալիքներում հրեղեն ձիերը լճերի մեջ ապրող առասպելական կենդանակերպ էակներ են, որոնք հաճախ դուրս են գալիս ջրից և նույն տեսակի այլ կենդանիների հետ խաչասերվում: Դրանցից ծնվում են ճեփ-ճերմակ անբիծ մտրուկներ³⁷: Հրեղեն ձիերը ջրից դուրս են գալիս՝ կայծակնային արագությամբ հերոսին տեղափոխելով մի վայրից մյուսը, հասցնելով երկինք ու արևին³⁸: Հայ վիպական ավանդության մեջ հրեղեն է Քուրկիկ Ջալալին, որին «Սասնա ծռեր-»ի ծովածին Սանասարը ձեռք է բերում ծովից³⁹: Հրեղեն է ս. Սարգսի ձին, որի «...պնչներից անպեր են ցայտում..., ոտների տրոփյունից աշխարհը թնդում, նիզակը խաղացնելուց սաստիկ բուք է բարձրանում»⁴⁰: Հրեղեն ձիերն ապրում են նաև երկնքում: Ժողովրդական հավատալիքներում փայլակը անձնավորող⁴¹, «փայլակ-կայծակ»⁴², Հրաչք⁴³, Ծովյան-Ծովինար ամպրոպային աստվածուհին խաղում և պարում է կայծակեղեն, աչքերից կրակ ցայտող հրեղեն ձիու վրա⁴⁴:

Ըստ հայոց հավատալիքների՝ ջրից ծնված հրեղեն ձիերն ապրում են դևերի քարանձավներում⁴⁵: Դևերը հեթանոսական պաշտամունքի դիցաբանական կերպարներն են, որոնց ծնունդն ու կյանքը կապված էին քարանձավի հետ⁴⁶: Ջրից ծնվելն ու քարանձավում ապրելը առասպելաբանական մակարդակում անդրաշխարհի հետ կապի վկայություն են: Ջուրը և անդրաշխարհը նաև

³⁴ Ригведа, Мандалы I-IV. Издание второе, исправленное. Издание подготовила Елизаренкова Т.Я. М., Изд. «Наука»).1999, I, 2, 6.

³⁵ Ригведа, I, 7, 3

³⁶ Топоров В. Н. Индра, Мифы народов мира. М., Изд. Советская энциклопедия, т.1, 1991, стр. 534.

³⁷ Աբեղյան Մ., Երկեր, հ. է, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1975, էջ 83:

³⁸ «Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոս, Եր., «Հայպետհրատ», 1961, էջ IX:

³⁹ Աբեղյան Մ., 1975, նշվ. աշխ., էջ 83: «Սասնա ծռեր» Եր., 1936, էջ 560:

⁴⁰ Ա.Հ., II, Թիֆլիս, 1897, էջ 251-252: Աբեղյան Մ., 1975, նշվ. աշխ., էջ 81:

⁴¹ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1964, էջ 31-32:

⁴² Մարտիրոսյան Հ., Գիտությունն սկսվում է նախնադարում, Եր., «Մովեսական գրող» հրատ., 1978, էջ 69 :

⁴³ Աբեղյան Մ., 1975, նշվ. աշխ., էջ 70 :

⁴⁴ Նույն տեղում, էջ 70:

⁴⁵ Աբեղյան Մ., 1975, նշվ. աշխ., էջ 83:

⁴⁶ Հայ առասպելաբանության մեջ քարանձավում են փակված Արտավազդը (Մովսես Խորենացի, Գ, II, ԿԱ), Երուանդը (Եզնիկ Կողբացի, 25), «Ագառավու քար» քարանձավում է փակված Մհերը (տե՛ս Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 39-40): Քարանձավի հետ կապված է նաև Տիրը (Նույն տեղում, էջ 74):

ծնունդ են տալիս ու պտղաբերում ապահովում: Ձիու սմբակի տեղից ջուր խմելուց է Շովինարը հղիանում և ծնում Սանասարին ու Բաղդասարին⁴⁷: Մատակ ձիու սմբակի տեղում ջուր էին լցնում և խմեցնում ծննդկանին⁴⁸: Սլավոնական ավանդույթներում գոքանչը նորափեսային դիմավորում էր ջրով լի ամանով, որը փեսան դատարկում էր ձիու բաշին⁴⁹: Հնդիրանական պատկերացումներում մտրուկը մարմնավորում է ջրի և բուսականության աստվածույանը⁵⁰: Ձիու պաշտամունքը ջրի և պտղաբերության հետ էին կապում Միջին Ասիայի իրանական ցեղերը⁵¹: Խորեզմում հավատում էին, որ «ջրային ձին» ապրում էր լճում և ժամանակ առ ժամանակ դուրս է գալիս ցամաք⁵²: Սասանյան Հազկերտ I արքայի մահվան պատճառը լճից դուրս եկած և լիճ վերադարձած հրաշալի ձին էր⁵³:

Ձին հանդերձյալ աշխարհի տիրակալ Յամայի նվերն էր և նախատեսված էր երկինք ուղարկելու համար⁵⁴: Ձին նաև հունական Հադեսի և դժոխքի բաբելոնյան աստվածուհու՝ Էրեշկիգալի ուղեկիցներից է⁵⁵: Կարմիրը նույնացվում է արևմուտքի, անդրաշխարհի և դժոխքի աստծու կամ տիրակալի հետ⁵⁶: Յաման պատկերվում էր կարմիր հագուստով⁵⁷: Անդրաշխարհի հետ ձիու ունեցած կապի մասին սլավոնների պատկերացումներից է բխում երազին կարմիր ձի տեսնելը՝ որպես մոտալուտ մահվան նշան ընկալելը⁵⁸: Կարմիրը նաև ծագող արևի գույնն է, ու դժվար է տարբերակել՝ կախարդական ձիերը խորհրդանշել են գեհենի կրակը, թե արևին հասնելով են դառնում՝ հրեղեն⁵⁹: Կարմիրը կապվում է ն՝ կյանքի, և՛ մահվան հետ՝ զուգադրվելով ծագող ու մայր մտնող արևին, խորհրդանշում է մահ և վերածնունդ: Անիում՝ «փոքրիկ իշխանուհու» դամբարա-

⁴⁷ Ժողովրդական բանահյուսություն, Ա, Ժողովրդական վեպ, ընդհանուր խմբագրությամբ պրոֆ. Մ.Աբեղյանի, Ա հատոր, «Մասնա ծոեր», խմբագրեց պրոֆ. Մ.Աբեղյան, աշխատակցությամբ Կ.Ոհանջանյանի, Յերեւան, «Պետական հրատարակչություն», 1936, պատում ԻԴ, էջ 1029, էջ 3, էջ 1031-1032, 6:

⁴⁸ ԱՀ, Գիրք, XXVI, Թիֆլիս, 1916, էջ 178:

⁴⁹ **Потебня А.А.** Собрание трудов. Символ и миф в народной культуре. Составление, подготовка текста, статья, комментарии А.Л.Топоркова, М., Изд. «Лабиринт», 2000, стр. 146 (ebook).

⁵⁰ **Жирмунский В. М., Зарифов Х. Т.** Узбекский народный героический эпос. М., Изд. Гослитиздат, 1947, стр. 169.

⁵¹ **Кузьмина Е. Е.** Распространение коневодства и культя коня у иранских племен Средней Азии и других народов Старого Света. В кн: Средняя Азия в древности и средневековье; история и культура (под редакцией Б. Гафурова и Б. Литвинского), Изд. «Наука», М., 1977, стр. 42 (ebook).

⁵² **Беленицкий А. М.** Хуттальская лошадь в легенде и историческом предании//Советская этнография, Изд. АН СССР. 1948. № 4. стр. 164 (ebook).

⁵³ Նույնը:

⁵⁴ **Голан А.**, նշվ. աշխ., էջ 49:

⁵⁵ **Клингер Х.**, նշվ. աշխ., էջ 109:

⁵⁶ **Голан А.**, նշվ. աշխ., էջ 44:

⁵⁷ **Гринцер П. А.** Яма. МНМ, т.2. М., Изд.«Советская энциклопедия»,1992, стр. 683.

⁵⁸ **Клингер Х.** Животные в античном и современном суеверии. Киев, 1911, стр. 107, 116, 172 (ebook).

⁵⁹ **Голан А.**, նշվ. աշխ., էջ 49-50:

նում, աճյունը դրված է եղել ասեղնագործ մետաքսյա կարմիր կտորի վրա⁶⁰: Դամբարանում կարմիր կտորը, երազին կարմիր ձի տեսնելը՝ նույն խորհուրդն ունեն: Ջուրը, երկինքը (արշալույսը) և ձին կապված են⁶¹:

Ձին ոչ միայն կապվում է արևի, այլ նաև ստորերկրայքի հետ, իսկ արևն ու ստորերկրայքը միասնական աշխարհի երկու հակադիր կողմերն են: Այդ կապը կյանքի և մահվան, առավոտի և երեկոյի, սպիտակի և սևի հակադրության մարմնավորում է միաժամանակ հանգուցյալների և պտղաբերության հետ կապված երկվորյակների պաշտամունքում: Երկվորյակների սանսկրիտական անունը՝ Աշվին (Aśvinau), նշանակում է «ձի ունեցող կամ ձիուց սերված»⁶²: Հնդկական դիցաբանության մեջ երկվորյակ Աշվինները՝ Ագնին (կրակ, կայծակ) և Ինդրան (լուսավոր երկինք), ծնվում են Վիվասվաթա ձիուց և Սարանից⁶³: Նրանք ծնվել են երկնքից⁶⁴, կապվում են արևային աստվածությունների հետ, համեմատվում թռչունների հետ, պանում ձիերով և թռչուններով լծված ոսկյա կառքով⁶⁵: Հետվեդայական դարաշրջանում Աշվիններն անվանվում են Աշվինիկումար, այսինքն՝ ձիու գավակներ⁶⁶: Աշվինները մեռածներին կյանք են վերադարձնում⁶⁷: Նրանցից մեկը գիշերվա գավակն է, մյուսը՝ արշալույսի⁶⁸: Հունական սպիտակ ձիեր ունեցող Դիոսկուրները մեկ օր անցկացնում են ստորերկրայքում, մեկ օր՝ Օլիմպոսում (երբ նրանցից մեկը գտնվում էր Օլիմպոսում, մյուսն իջնում էր Հադես) ⁶⁹:

Ջրի, քարանձավի և արևի հետ կապով ձին միավորում է ստորերկրայքը, երկիրն ու երկինքը՝ ներկայացնելով տիեզերքի միասնական կենդանակերպ կերպարը: Ձին աստվածության կենդանակերպ մարմնավորում է: Աստվածների մարդակերպ դառնալու հետ ձին դառնում է հնդիրանական պանթեոնի տարբեր աստվածների ինկորնացիա: Ձիու պատկերին զոհեր են մատուցում, նրա պատվին ճրագ վառում, կերակրում հատուկ ուտելիքով⁷⁰, զոհեր մատու-

⁶⁰ **Орбели И. А.** Избранные труды. Ер., Изд. АН Арм ССР, 1963, стр. 44-46.

⁶¹ **Март Н. Я.** Приволжские и соседящие с ними народности в яфетическом освещении их племенных названий. Избранные работы, т. V, М.-Л., изд. ГСЭИ, 1935. стр. 239 (ebook).

⁶² **Кузьмина Е. Е.** 1973, նշվ. աշխ., էջ 188; **Топоров В.Н.** Ашвины. Мифы народов мира (այսուհետև՝ МНМ), т.1, М. Изд. Советская энциклопедия, стр. 144; **Штернберг Л.Я.**, նշվ. աշխ., էջ 142:

⁶³ **Штернберг Л. Я.** Античный культ близнецов при свете этнографии, Съ приложениемъ заметки: «Культовые домики близнецовъ у гильяковъ». Сборникъ Музея Антропологии и этнографии имени Петра Великого приимператорской академии. Наука Томъ III, Петроградъ, 1916. стр. 142 (ebook).

⁶⁴ Նույն տեղում, էջ 134:

⁶⁵ **Топоров В. Н.** Ашвины. МНМ, т.1, М., Изд. «Советская энциклопедия», 1991, стр. 144.

⁶⁶ Նույնը:

⁶⁷ Ригведа, I, 117, 7,24; X,65, 12; **Штернберг Л.Я.**, նշվ. աշխ., էջ 140; **Топоров В.Н.** Ашвины. նշվ. աշխ., էջ 144:

⁶⁸ Ригведа, I, 181,4.

⁶⁹ **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 83:

⁷⁰ **Борозова Н. Г.** Некоторые материалы об амулетах-украшениях населения Средней Азии в кн: Домусульманские верования и обряды в Средней Азии. М., Изд. «Наука», 1978, стр. 40 (ebook).

ցում⁷¹: Ձիու են փոխակերպվում Դեմետրան և Պոսեյդոնը: Արքայիկ Արկադիայում երկվորյակ Դիոսկուրների տիրակալ կամ մայր Սև Դեմետրային պատկերում էին ձիու գլխով և բաշով⁷²: Հունաստանում ձիերը սերված էին անմահներից⁷³: Ձիու փոխակերպված Դեմետրայի և Պոսեյդոնի ամուսնությունից ծնում է Արեոն ձին: Գորգոն Մեդուզան Պոսեյդոնից ծնում է Խրիսաորին (ոսկյա սուր, կայծակ) և թևավոր ձի Պեգասին, որը, ըստ Հեսիոդոսի, Ջեսին կայծակ էր մատուցում⁷⁴:

Հնդեվրոպական ավանդույթներում ձին միջնորդ է երկու աշխարհների միջև և համարժեք է Կենսոց ծառին⁷⁵:

Ձիու զոհաբերությունը: Պաշտամունքի բարձրակետը զոհաբերությունն է: «Ռիզվեդայում» ձին ծիսական կենդանիներից մեկն է, և հատուկ հիմներ են նվիրված զոհաբերությանը⁷⁶: Չոհաբերվող կենդանու հետ նշվում են նաև վեդայական պանթեոնի աստվածների անունները՝ Միթրա, Վարունա, Ինդրա: Ձիու զոհաբերությունը հզորության և իշխանության հաստատման գրավական էր: Ինդրան, վախենալով Մագարի որդիներից, որ հզորությամբ կգերազանցեն իրեն և կզրկեն իշխանությունից, հափշտակում է նրանց զոհաբերության ձին⁷⁷: Ամուրիայի մեջ ձիեր էին նետում⁷⁸(զոհաբերում): Աստվածության մարմնավորում ձին զոհաբերում էին արևին (արևի աստծուն)⁷⁹: Քսենոֆոնի վկայությամբ՝ արևին ձիեր էին զոհաբերում նաև Հայաստանում⁸⁰:

Անիվի հայտնագործմամբ ձի-արև համադրումը փոխանցվում է նաև անիվին և ձիերով լծված փոխադրամիջոցին: Արևը պատկերվում է ձիու, մարտակառքի կամ անիվի ձևով: Դիցաբանական կերպարները փոխադրվում են ձիեր լծված երկանիվով կամ մարտակառքով: «Ռիզվեդայում» աստվածային Էտաշա ձին

⁷¹ Кузьмина Е. Е. Скифское искусство как отражение мировоззрения одной из групп индоиранцев // Скифо-сибирский звериный стиль в искусстве народов Евразии. М., Изд. «Наука», 1976, стр. 55 (ebook).

⁷² Նույնը:

⁷³ Հովերոս, Իլիական, էջ 426:

⁷⁴ Потебня А. А., նշվ. աշխ., էջ 243:

⁷⁵ Иванов Вяч. Вс. Опыт истолкования древнеиндейских ритуальных и мифологических терминов, образованных от «asva-конь». В сб.: «Предметы истории языков и культуры народов Индии». М., Изд. «Наука», 1974, стр. 94-95 (ebook).

⁷⁶ Ригведа, IV, 38-40; VII 44; X 178.

⁷⁷ Топоров В. Н., Индра, նշվ. աշխ., էջ 534 :

⁷⁸ Беленицкий А. М., նշվ. աշխ., էջ 164:

⁷⁹ Гамкрелидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., էջ 548: Фрай Р. Наследие Ирана. Изд. Главная редакция восточной литературы, М. Изд. «Наука», 1982, стр. 273 (ebook); Аюбов А. Р. Элементы культа животных у народов Устрашаны в древности. РАН, Лавровский сборник. Материалы XXXVI я XXXVII среднеазиатско-кавказских чтений 2012-2013гг. Этнология, история, археология, культурология, СПб, 2013, стр. 20 (ebook); Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Թարգմանությունը Ս. Կրկաշարյանի, Եր., ՀՍՍՀ ԳՍ հրատ., 1986, Գ I, 216:

⁸⁰ Քսենոֆոն Անաբասիս. Թարգմ.՝ Ս. Կրկաշարյանի, Եր. ՀՍՍՀ ԳՍ հրատ., 1970, Գ IV, 35 (ebook).

տանում է Արևի կառքը⁸¹: Խեթական ծիսակարգում ձիեր լծված երկանիվ մարտասայերն աշխարհի չորս կողմերը արևի պտույտի միջոց էին⁸²: Մահվան ու քնի աստվածուհի Գիշեր-Նյուկտեն երկնքով սահում էր սևաթույր ձիեր լծած երկանիվով⁸³: Ձիերով լծված փոխադրամիջոցը դառնում է զոհաբերության առարկա: Արևի տաճարին մարտակառքեր նվիրաբերելու ավանդույթ կար Փոքր Ասիայում⁸⁴: Հ. Իսրայելյանը ենթադրում է, որ ձիերով մարտակառքեր էին նվիրում Արմավիրի տաճարին⁸⁵: Վաղարշակ թագավորը «...*Արմավիրում մեծիցան շինելով՝ արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիներին*», -վկայում է Խորենացին⁸⁶ (արձան՝ այսինքն կոթող, զոհասյուն): Ըստ ընդունված ծիսակարգի՝ կանգնեցված արձաններին⁸⁷ նվիրաբերումներ և զոհեր էին մատուցվելու, արեգակի արձանին՝ ձիեր կամ մարտակառքին լծված ձիեր: Ծովերի տիրակալ Պոսեյդոնին կառքին լծված ձիեր էին զոհաբերում⁸⁸: Ձի-արև, ձի-ջուր պաշտամունքային կապի մեջ ներառվում է նոր տարր: Ձի-արև-անիվ համադրումը հնդկական «աշվամեդհա» (սպիտակ ձիու սպանություն) ծեսում է: Թագավորի կառքին աջ կողմում լծված լավագույն սպիտակ ձիուն կապում էին արևի խորհրդանիշ անիվով պսակված, արևի հենարան կենաց ծառի խորհրդանիշ պանը և սպանում՝ առանձնացնելով գլուխն ու ոտքերը: Սպիտակ ձիու սպանությունը պատշաճում էր միայն գերագույն սյուզերենին (ավատիշխանին)⁸⁹: Չոհաբերության ծեսը կատարում էր թագավորը, կամ նրա ներկայությամբ՝ կառավարիչը⁹⁰: Ծեսին մասնակցող թագավորի երեք տարբեր կաստաների կանանցից առաջինը դյուրանքի խոսքերով զարդարում էր ձիու գլուխը,

⁸¹ Гамкрелидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., էջ 549:

⁸² Гамкрелидзе Т. В., Иванов В. В. Индоевропейский язык и индоевропейцы. т. I. Тбилиси, Изд. Тбилисского университета, 1984, стр. 725.

⁸³ Կուն Ն., Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., «Հայպետհրատ», 1956, էջ 87:

⁸⁴ Իսրայելյան Հ., Պաշտամունքն ու հավատալիքը ուշբրոնզիդարյան Հայաստանում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 66:

⁸⁵ Նույնը:

⁸⁶ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Եր., «Հայաստան» հրատ., 1990, Գիրք Բ, ք:

⁸⁷ Արձան նշանակում է քար: Ըստ Բ. Առաքելյանի՝ արձան է կոչվել նաև «քարե սյունը», որ կանգնեցվել է որպես հաղթանակի նշան (տե՛ս Բ. Առաքելյան, Հայկական պատկերաբանականները IV-VII դարերում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1949, էջ 35): Բուզանդի վկայությամբ՝ Ներսես կաթողիկոսի մահից հետո շատերը «...դարձան նախկին կռապաշտության, շատ արձաններ էին կանգնեցրել և նրանց երկրպագում էին» (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանի, «Հայաստան» հրատ. Եր., 1968, Գլուխ IԱ):

⁸⁸ Лосев А. Ф. Посейдон, Мифы народов мира, т. 2, М., Изд. Советская Энциклопедия, 1992, стр. 323-324; Դիցարանական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 1985, էջ 206-207:

⁸⁹ Кузьмина Е. Е. 1976, СА, № 3, նշվ. աշխ., էջ 74:

⁹⁰ Темкин Э. Н., Эрман В. Г. Мифы древней Индии. М., Изд «Наука». 2-е издание, 1982. стр. 155-157, 261; Кузьмина Е. Е. 1976, № 3, նշվ. աշխ., էջ 72:

քանի որ մարմնից անջատված գլուխը պիտի թագավորին հոգեկան էներգիա տար, երկրորդը՝ ձիու մարմինը, որպեսզի փոխանցեր ֆիզիկական ուժը, իսկ երրորդը՝ հարստություն և պտղաբերություն ապահովող ձիու գավակը⁹¹: Ծեսն ավարտվում էր համընդհանուր խրախճանքով, որի համար սպանում էին հարյուրավոր ձիեր և ցուլեր: Նույն ակունքից է սերում սպանված ձիու հետ թագավորի ծիսական ամուսնության իռլանդական ծեսը⁹²: Հնդկականին զուգադիր է սկյութական ծեսը, երբ ձիեր էին զոհաբերում բոլոր յոթ աստվածներին, նաև հիսուն լավագույն ձիեր խեղդամահ անում թագավորի թաղման ծեսին⁹³: Հնդկական «աշվամեդիա» ծեսի համար ընտրում էին միայն հասուն տարիքի մտրուկներ⁹⁴: Սկյութական ծեսում միայն հասունության հասած ձիեր⁹⁵ զոհաբերելը փաստված է սկյութական թագավորական կուրգանների պեղումներով⁹⁶: Երկու ծեսերի նպատակը նույնն է. սպանված ձիու ֆիզիկական, սեքսուալ, մոզայկան ու գերբնական ուժերը փոխանցել թագավորին՝ նրան դարձնելով անմահ⁹⁷: Հնդեվրոպական այլ ժողովուրդներ նման ծես կատարում էին թագադրման ժամանակ. կելտերի մոտ՝ Հիպամիդուա, հռոմեացիների՝ Էկվուս Օկտոբեր⁹⁸: Բերվածներին համադրելի է ի պատիվ պատերազմից թագավորի հաղթական վերադարձի սպիտակ ձիեր զոհաբերելու մասին Ազաթանգեղոսի վկայությունը. Հայոց Խոսրով թագավորը «... զօրսն Պարսից...ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ և ցնծալից ուրախութեամբ...» վերադառնալով, հրաման է տալիս «...յեօթն բազինս մեհենիցն ուխտաւոր լինել...սպիտակ ձիովք և սպիտակ ջորուովք ...զիր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր»⁹⁹:

Ձիու զոհաբերությունն ուղեկցում էր թաղման ծեսին, բնորոշ է հին հույներին, հնդիկներին, իրանցիներին և հնդեվրոպական այլ ժողովուրդների: Ձի զոհաբերում էին նաև պատերազմում ընկած հերոսների թաղման ծեսի ժամանակ¹⁰⁰: Չոհաբերությունները ձոն էին աստվածներին և հանգուցյալի հոգուն¹⁰¹:

⁹¹ Кузьмина Е. Е. 1976, СА, № 3, նշվ.աշխ., էջ 73:

⁹² Schroder F. Ein aitrischer Kronungstritus und das indigermanische Rossopfer (Zeitschrift für Celtisch Philologie) 1927, p. 310-312. (ebook)

⁹³ Հերոդոտոս, IV, 72:

⁹⁴ Кузьмина Е. Е. 1976, СА, № 3, նշվ.աշխ., էջ 73:

⁹⁵ Հերոդոտոս, IV, 60-62:

⁹⁶ Кузьмина Е. Е. 1976, СА, № 3, նշվ.աշխ., էջ 73:

⁹⁷ Նույն տեղում, էջ 73-74:

⁹⁸ Dumont P., նշվ. աշխ., էջ 93:

⁹⁹ Ազաթանգեղոս, Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ս. Տեր-Ղևոնդյանի), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1983, 22:

¹⁰⁰ Աբիլլեսը «Փայտակոյտի վրա նետեց հսկա ուժով հանկարծակի//Ահիպարամբ չորս նժույգներ, հառաչելով հոգու խորքից»։ Հոմերոս, Իլիական, նշվ.աշխ., էջ 423:

«Մահաբհարաթում» նշվում է, որ նվիրաբերում էին արագընթաց, արշալույսի գույնի վայրի ձիեր¹⁰²: Ծեսը հաստատում են հնագիտական փաստումներ: Այն դեպքերում, երբ հնարավոր է եղել պարզել թաղման ծեսում զոհաբերված ձիերի տեսակը, դրանք եղել են հրաշեկ¹⁰³(հմմտ. հանդերձյալ աշխարհի տիրակալ Յամայի կարմիր հագուստ կրելու և կարմիրը մահվան խորհրդանիշ լինելու հետ): Կելտերը հավատում էին, որ հանգուցյալների հոգիներն այն աշխարհ է տեղափոխում ձիերի¹⁰⁴: Ծիսական նույն իմաստն ունեն սուերի և Հյուսիսային Կովկասի այլ ժողովուրդների կողմից կատարվող «*հանգուցյալին ձիու նվիրաբերում*» ծեսը¹⁰⁵: Ձիու պաշտամունքի և թաղման ծեսում նրա ունեցած դերի վկայություն են անարյուն զոհաբերության համար նախատեսված ձիազուխ եղջրագավաթները¹⁰⁶ և ձիակերպ անոթը¹⁰⁷: Հանդերձյալ աշխարհի հետ ձիու կապի ու հանգուցյալին արագ տեղ հասցնելու հավատալիքի վկայություն է Շիրակում հանգուցյալի դին տանող ֆուրգոնին լծված ձիու ականջին «շուտ-շուտ գնա, մեռել է» բղավելը¹⁰⁸:

Հնդեվրոպական թաղման ծեսում կատարվում էին ձիերով մրցումներ¹⁰⁹: Աշվինները և Դիոսկուրոսները նաև ձիերի մրցումների հովանավորներ են¹¹⁰: Հույները Դիոսկուրոսներին պաշտում էին որպես հեծյալների կամ ձիուկների¹¹¹ և համոզված էին, որ նրանք կարող էին հայտնվել սև ձիու վրա՝ հեծյալների տեսքով¹¹²: Ի պատիվ Մարսի ծննդի՝ կազմակերպվում էին ձիերի վազք, ինչպես նաև հանգուցյալների պաշտամունքին նվիրված ձիերով մրցումներ: Հռոմեական ձիերի վազքը (equiria) կատարվում էր փետրվարի 27-ին, իսկ երկրորդը՝ մարտի 14-ին՝ կատարում էին ի պատիվ նոր ծնվող Մարս-Արևի¹¹³: Ծեսի կատարման ժամանակն արդեն իսկ ցույց է տալիս, որ նպատակը ձիերի արագ

¹⁰¹ Герни Оливер Р. Хетты. Перевод с англ. Н.Лозинской и Н. Толстого. М. Изд. «Наука». 1987. стр. 147 (ebook).

¹⁰² Беленицкий А. М., նշվ. աշխ., էջ 163:

¹⁰³ Кузьмина Е. Е., նշվ. աշխ., էջ 74;

¹⁰⁴ Malten L. Das Pferd im Totenglauben.-Jahrbuch des Deutschen Archeologisschen Instituts. 1914. p. 196-214 (ebook).

¹⁰⁵ Ригведа, Мандалы IX-X. X, 56 .

¹⁰⁶ Armenie, Trezors d'Armenie ancienne, Paris, 1996, p. 205, fig. 186:

¹⁰⁷ Dans les montagnes d'Arménie, 500 000 ans d'histoire avant notre ere. Rouen, France.2007.p.202, fig. 23

¹⁰⁸ Եգանյան Լ.Պ., Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), 2010, Շիրակ, Բաշգյուղ:

¹⁰⁹ Топоров В. Н. Конные состязания на похоронах. Исследования в области балто-славянской духовной культуры. Погребальный обряд. Москва, Изд-во «Наука», 1990, стр. 12-37; ebook» Миллер В.Ф., նշվ. աշխ., էջ 16:

¹¹⁰ Штернберг Л. Я., նշվ. աշխ., էջ 142:

¹¹¹ Клейн Л. С. Древние миграции и происхождение индоевропейских народов. СПб, Изд-во «Санкт-Петербург», 2007, стр. 77 (ebook).

¹¹² Նույն տեղում, էջ 140:

¹¹³ Топоров В. Н. 1990, նշվ. աշխ., 12-37; Русская масленица и Западно-европейский карнаваль. Вс. Миллера. Москва Въ Унижерситетской типографий, 1884. стр.16 (ebook).

վազքն արևին փոխանցելն է, գարնան գալուստն արագացնելը, միաժամանակ արևի անխափան շրջապտույտը ապահովելը: Ծեսը կատարվում էր Հունաստանում¹¹⁴, Հռոմում¹¹⁵: Հավանաբար նույն նպատակն ունեին թաղման ծեսում տեղ գտած ձիերին նվիրված ձոներն ու ձիերով մրցումները: Մեր ենթադրությունը հաստատում են վեդայական հիմները: Վեդայական թաղման հիմներից մեկում ձիարշավում հաղթած ձիուն նվիրված ձոնին հաջորդում է երկնային ձիերին ուղղված ձոնը¹¹⁶: Թաղման ժամանակ ձիարշավներ էին կազմակերպում Արխազիայում: Հանգուցյալի ձիու առջև աքաղաղ էին զոհաբերում և կաշին կախում ծառից¹¹⁷: Ջավախքում գերեզմանոցի մոտ գտնվող «*Գերեզմանի դուռ*» կոչվող տարածքում անցկացվում էին ձիերով մրցումներ¹¹⁸: Թաղման ծեսում ձիու ծիսական դերով է պայմանավորված Աղձնիքում անդրանիկ որդու հուղարկավորության ժամանակ զարդարված ձիու վրա մահացածի հագուստը, զենքերը տանելը¹¹⁹: Ծեսի մեկ այլ տարբերակ կատարվում էր երիտասարդի մահվան դեպքում: Վայոց ձորում երիտասարդ ննջեցյալի ձին հակառակ կողմից թամբած, հանգուցյալի հագուստներով և զենքերով տանում էին գերեզմանոց¹²⁰: Ձին հակառակ կողմից թամբելը ոչ միայն անժամանակ մահն էր շեշտում, այլ նաև հոգին անդրաշխարհ ուղեկցող ձիուն աղերս էր՝ հանգուցյալին կյանք վերադարձնելու: Քանի որ ձին կապվում էր անդրաշխարհի տիրակալի հետ, նրան վերագրվում էր նաև կանխագուշակելու ունակություն¹²¹: Ղարաբաղում, եթե տան անդամի մահվանից հետո տնեցիներից մեկը հիվանդանում էր, հավատում էին, որ հանգուցյալը դեռ ողջ է և կարոտում է: Նման դեպքերում գարի էին լցնում գերեզմանին ու ձիուն մոտեցնում: Եթե ձին սկսում էր հանգիստ ուտել, նշանակում էր, որ հանգուցյալն իրոք մեռած է¹²²: Գարին (հատիկը, հացը) հոգեհացի պարտադիր տարրերից է, գարի ուտելն ընկալվել է որպես ձիու մասնակցություն թաղման ծեսին և հանգուցյալին նախնիների մոտ ուղեկցելու, նաև հանգուցյալից ողջերին սպասվող վտանգը կանխող գործողություն: Ձիերը կապվում են վերածնության հետ, այդ թվում նաև՝ մարդու:

¹¹⁴ **Հովերոս**, Իլիական, Գրաբարից թարգմանեց **Մ. Խերանյան**, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1987, Երգ քսաներեքերորդ, էջ 423, 426:

¹¹⁵ **Миллер В. Ф.**, նշվ. աշխ., էջ 16:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 549:

¹¹⁷ **Кузьмина Е. Е.** 1977, նշվ. աշխ., էջ 43:

¹¹⁸ **Петросян Э.** Боги и ритуалы древней Армении. Ер., Изд. «Зангак-97», 2004, стр. 53.

¹¹⁹ **Լալայան Ե.**, Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում//«Տեղեկագիր» ՀՄԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտ, Եր., 1928, № 9, էջ 116 (ebook):

¹²⁰ **Սրվանձտյանց Գ.**, Մանանա, Կ.Պօլիս, Թիւ 13, 1876, էջ 114 (ebook):

¹²¹ **Клингер Х.**, նշվ. աշխ., էջ 111:

¹²² **Լիսիցյան Ստ.**, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ)//Հայ ազգագրություն և րանահյուսություն, 12, Երևան, «Գիտություն» հրատ., 1981, էջ 52:

Խեթերը ձիու գլուխը թագավորի հետ դնում էին դամբարանում¹²³, որը բխում է գլխի ծիսական առանձնակի կարևոր դերից¹²⁴, նաև մասի՝ ամբողջին փոխարինելուց: Հավանաբար հանգուցյալին անդրաշխարհ ուղեկցող ձիու գործառույթը փոխանցվել է Հայաստանի, Վրաստանի, Դաղստանի, Հունաստանի ձիակերպ¹²⁵ և Լիտվայի ձիագլուխ տապաններին¹²⁶: Ծեսի արձագանքները պահպանված են ազգագրական նյութերում: Երաշտի ժամանակ սատկած ձիու ոլորը (սրունքոսկր) թաղում էին երեք ճանապարհների վրա¹²⁷, կառույցը կանգուն մնալու համար ձի էին զոհաբերում և գլուխը թաղում հիմքի տակ¹²⁸: Երեք ճանապարհները Կենաց ծառի հորիզոնական պատկերն է, ձիու սրունքոսկրը՝ որպես մաս, փոխարինում է ամբողջին: Ծիսական նույն գործառույթն ունի նաև ձիու մազը: Ինդրան փոխակերպվում է ձիու մազի¹²⁹: Ձիուն կանչելու համար պետք էր մազ վառել¹³⁰: Հեքիաթներում հրեղեն ձիերի պոչից երեք մազ դնելով ծոցը¹³¹՝ հերոսը հաղթահարում է փորձությունները¹³²: Ս. Սարգսի պասին՝ եկեղեցուց վերադառնալիս, ճանապարհին ժամավորներն ազատ էին արձակում իրենց մազերն ու քամուն տալիս, որպեսզի սուրբը դրանց հետ տաներ իրենց ցավերն ու հիվանդությունները¹³³: Սարդկանց արձակ մազերը համադրվել են երկինք թռչող ձիու բաշի հետ:

Թռչունը. Կնիքի մակերեսի աջ կողմում պատկերված է թռչուն: Արծիվն առանձին կամ այլ կենդանիների հետ պատկերելը տարածված թեմա է վաղ շրջանի

¹²³ Кузьмина Е. Е. 1977, նշվ. աշխ., էջ 28:

¹²⁴ Հայաստանում հանգուցյալի հետ թաղված ձիու գլուխ բացվել է մ.թ.ա 8-7-րդ դդ. Տիրաշենում (Հարությունյան Ս., 1990, 38), Ոսկեհասկի թիվ 2 դամբարանում՝ զարդարված բրոնզյա զարդերով և լծասարքի մասերով (Петросян Л. А. Раскопки памятников Кети и Воскеаска. Ер. Изд. АН Арм. ССР, 1989, 69-70), Վարդգրադի թիվ 44 դամբարանում (Տեր-Սարգսյան Ստ. Կումայրու «Վարդգրադ» տարածքի անտիկ դամբարանադաշտերի պեղումները // ՀՀ ԳԱԱ ՀԱԻ 1989-90թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Եր., 1991, 94): Ազատանի մ.թ.ա. 8-7-րդ դդ. թվագրվող դամբարանադաշտի թիվ 4, Շիրակավանի մ.թ.ա. VIII դ., Գյումրու Շիրակացի փողոցի հողային աշխատանքների հետևանքով բացված մ.թ.ա. VIII դ. դամբարաններում (փրկարարական պեղումները Լ. Եգանյան, Հ. Խաչատրյան, Նյութերը հրատարակված չեն):

¹²⁵ Голан А., նշվ. աշխ., էջ 50:

¹²⁶ Gimbutas M. Ancient symbolism in Lithuanian folk art. (Memoirs of the American Folklore Society, v. 49), Philadelphia, 1958. (ebook).

¹²⁷ Ազգագրական հանդես, Գիրք X, Թիֆլիս, 1903, էջ 201-202:

¹²⁸ Голан А. Миф и символ. М., Изд. «Русский», 1993, стр. 49.

¹²⁹ Ригведа, I, 32, 12.

¹³⁰ Пропп В. Исторические корни волшебной сказки. Л., Изд. «Лабиринт», 2000, стр. 166.

¹³¹ Կարմիր եզն ու Հուշապ, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XII, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1984, էջ 533 (ebook).

¹³² Քյալ Օզլան, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. IV, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1963, էջ 309:

¹³³ Ազգագրական հանդես, Գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 251-252:

կնիքների պատկերագրման մեջ¹³⁴: Կնիքների վրա արծիվը կանգնած է եղջերուի¹³⁵ կամ այծեղջյուրի գավակին¹³⁶: Թռչունները պաշտամունքի առարկա են հնուց ի վեր, համարվել են աստվածային էակներ: Երկինքն ու երկիրը կապող առասպելական թռչունը կարող էր ներկայացվել տարբեր թռչնատեսակներով*: Դիցաբանության մեջ երկնքի և երկրի տիրակալի է վերաճել արծիվը՝ թռչուններից ամենահզորը: Հնդեվրոպական բոլոր ժողովուրդների կրոնում կենաց ծառի վրա նստած թռչունների մասին պատկերացում կար¹³⁷: Խեթական ավանդույթներում, ամենավաղ տեքստերից սկսած, արծիվը՝ որպես ծիսական գլխավոր թռչուն, նշանակությամբ համադրվում է առուծի հետ: Հին խեթական ծիսակարգում նշվում է, ինչպես «*թագավորին արծվի աչքեր արեցին...*»¹³⁸: Արծիվը երկու աշխարհները կապող է (երկինք և անդրաշխարհ) և աղերսվում է ջրի (ծովի) հետ, հաճախ ծառայում է աստվածներին, թռչում է ծով և այնտեղից լուրեր բերում¹³⁹:

Հնդկական և իրանական առասպելաբանություններում արական հատկանիշ կրող աստվածությունը երբեմն արծվի կերպարանքով է¹⁴⁰: Արծվի է փոխակերպվում Ինդրան¹⁴¹: Հին հնդկական և հին իսլանդական դիցերում արծիվը

¹³⁴ Wiseman D. L. Gotter und Menschen.Im Rollsiegel Westasiens. Prague.1958, S.11,12 (ebook):.

Խաչատրյան Ճ., 2003, նշվ. աշխ., էջ 169:

¹³⁵ Խաչատրյան Ճ., 2003, նշվ. աշխ., աղ. I,14:

¹³⁶ Նույն տեղում, աղ. I,13:

* Հնդեվրոպական որոշ ավանդույթներում, հատկապես գերմանական, ագրավն իր ծիսական նշանակությամբ մոտենում է արծվին (Гамкрелидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., էջ 540): Ագրավը եղել է Միհրի-Միթրայի հավատարիմ ուղեկիցներից մեկը, որը միթրայական պատկերագրության մեջ սերտորեն կապված է արևի խորհրդանիշի հետ (Քոչարյան Գ., Անտիկ դարաշրջանի գոհասեղան Դվինից//Պատմա-բանասիրական հանդես, 1977, № 2, էջ 282): Ագրավը նաև Միերի մշտական ուղեկիցն է (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, նշվ. աշխ., էջ 269): Նոր տարվա հաջորդ օրը «բախտ-փորձուկ» էր. երիտասարդները և աղջիկները նախընթաց օրը պատրաստած «ղառողի կլիկներ» կոչվող կլոր, փոքրիկ հացերը դնում են կտուրին կամ դեզի վրա և դիտում, թե ագրավները որ կողմ են տանում հացը՝ հավատալով, որ կողմից էլ գալու է հարսը կամ փեսան (Ազգագրական հանդես, Գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 250): Ագրավը չեխների և սլավոնների մոտ երեխաների հոգիներ է աշխարհ բերում, նրանց կերակրում է շիլայով, հոգ է տանում նրանց մասին մինչև ծնվելը, նաև աշխարհ գալուց հետո նրանց իր մոտ է վերցնում, երբ նրանք մեռնում են (Потебня А. А. Труды. Символ и миф в народной культуре. М., Изд. Лабиринт, 2000, стр. 165 (ebook).): Ամռան սկզբին գերմանացիները տնից տուն էին գնում սատկած ագրավով՝ ձմռանը հաղթողի խորհրդանշանով (Նույն տեղում, էջ 170):

¹³⁷ Иванов В. В. 1974. նշվ. աշխ., էջ 94-95:

¹³⁸ Ардзинба В.Г. Ритуалы и мифы древней Анатолии. М., Изд. «Наука», 1982, стр. 109; Гамкрелидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., էջ 538:

¹³⁹ Ардзинба В. Г., նշվ. աշխ., էջ 88-90; Բարսեղյան Հ., 1973, նշվ. աշխ., էջ 101-114: Մարտիրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 41-42; Иванов В. В., Топоров В. Н., նշվ. աշխ., էջ 258-260: Гамкрелидзе Т.В., Иванов В.В., նշվ. աշխ., էջ 538:

¹⁴⁰ Առաքելյան Բ., Հայկական պատկերաբանականները IV-VII դարերում, Եր., ՀՄՍՌ ԳԱ հրատ., 1949, էջ 93:

¹⁴¹ Топоров В. Н. Индра, նշվ. աշխ., էջ 534:

միշտ գտնվում է Կենաց ծառի ամենավերևում, հին գերմանականում ներկայացվում է սրբազան կենդանիների՝ գայլի և արջի հետ և հանդերձյալ աշխարհի երեք սրբազան կենդանիներից մեկն է¹⁴²: Արծիվը Ջևսի և Յուպիտերի խորհրդանիշ թռչունն էր¹⁴³: Ջևսը պատկերվում էր գահավորակին բազմաձև՝ աջ ձեռքին նստած արծվով: «Թռչուններից գերիզորը»¹⁴⁴ աստվածացված թռչուններից ամենատարածվածն աստվածների խորհրդանշանն է, Ջևսի կայծակներ տեղափոխողն ու սուրհանդակն է, աշխարհներ կապողը¹⁴⁵:

Արծիվը համարվում էր դժոխքի աստված: Արծիվն է ծվատում տիտան Պրոմեթևսի լյարդը¹⁴⁶: Ջևսի կանխանշանով երկնքում հայտնված, միմյանց կուրծք ծվատած և անհետացած արնաշաղախ երկու արծիվները են խորհրդանշում Պենելոպեի փեսացուների վախճանը¹⁴⁷: Թագավորն աստված էր,¹⁴⁸ և արծիվը դառնում է նաև արքաների խորհրդանիշ թռչուն: Արծիվը Երվանդունիների զինանշան է, որոնցից ժառանգել են Արտաշեսյանները: Տիգրան II-ի և Արտավազդ II-ի դրամների պատկերագրության մեջ թագերի վրա արև խորհրդանշող վարդյակի երկու կողմերում իրար թիկունքով կանգնած, գլուխները դեպի արևը շրջած արծիվներ են¹⁴⁹: Արծիվը խորհրդանշում է երկինքը, արևը և անդրաշխարհը: Ճախրող արծվի և արևի սերտ կապը դրոշմված է Գեղամա լեռների ժայռապատկերներում՝ թռչունը արևի ճառագայթավոր սկավառակի մոտ¹⁵⁰: Թռչնի դերը հեքիաթներում և առասպելներում մեկն է. նա հերոսին տեղափոխում է մեկ այլ աշխարհ¹⁵¹, և այդ դերն ունի նաև արծիվը, որը՝ որպես հարության և ուժի խորհրդանիշ, պահպանվել է քրիստոնեական կրոնում¹⁵²: Հայ բանահյուսության մեջ արծիվը կապված է նաև գարնանամուտի հետ՝ խորհրդանշելով զարթոնք և վերածնունդ: Աղթարքներից մեկում մարտի 15-ի առթիվ աս-

¹⁴² Гамкредидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., էջ 538:

¹⁴³ Фоминицын А. С. Божества древних славян. СПб, 1884, с. 129; Голан А., նշվ. աշխ., էջ 172; Иванов В. В., Топоров В.Н. Орел. նշվ. աշխ., էջ 258-260:

¹⁴⁴ Հովերոս, նշվ. աշխ., Երգ ութերորդ, տող 249:

¹⁴⁵ Иванов В. В., Топоров В. Н. Орел. նշվ. աշխ., էջ 258-260; Брашинский И. В. Экономические связи Синопы в IV-Пвв. до.н.э., В кн: «Античный город». М., Изд. АН СССР, 1963, стр. 88 (ebook).

¹⁴⁶ Կոն Լ., նշվ. աշխ., էջ 127:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 506:

¹⁴⁸ Թագավորն աստված էր դառնում ոչ միայն մահից հետո, այլ նաև աստծու դեր ուներ կյանքում, հատկապես ծիսակարգում (Kammenhuber Die hethitischen Vorstellungen von Seele und Leibesinnerem, Kopf und Person, 1-2. 1964-1965, 199) (ebook):

¹⁴⁹ Тирациян Г. Культура древней Армении. Ер., Изд. АН Армянской ССР, 1988, табл. XXV-XXVIII; Хачатрян Ж. Отражение ахеменидских традиций в эллинистическом и позднеантичном периодах//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 3, 2000, էջ 42-43:

¹⁵⁰ Մարտիրոսյան Հ. Հ., Իսրայելյան Հ. Ռ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, տախտ. 61, նկ. 3:

¹⁵¹ Пропи В. Я., նշվ. աշխ., էջ 140:

¹⁵² Առաքելյան Բ., 1949, նշվ. աշխ., էջ 93:

վում է. «Այսօր քարքազն (արծիվը) ի Հոռոմոց երկիրն գայ»¹⁵³: Մահվան և հարության գաղափարի հետ է կապված Անիում բացված դամբարանում բազմաթիվ թռչունների պատկերներով կարմիր մետաքսաթելով ասեղնագործ կտորը՝ փռված աղջնակի գլխի տակ ¹⁵⁴:

Այսպիսով, ձին և թռչունը կապված են արևի, ջրի, երկնքի, ստորերկրայքի հետ: Երկուսի միավորումից ստեղծվել է դիցաբանական մեկ այլ կերպար՝ թևավոր ձին, որի դիցաբանական կերպարի ձևավորման ակունքները բացահայտվում են լեզվաբանության մեջ: Ըստ Վ. Պրոպի՝ տնտեսության նոր ձևը նոր կերպարներ է մտցնում, որոնք ստեղծում են նոր կրոն: Լեզվում նույնպես փոփոխություն է տեղի ունենում, հին բառը անցնում է նոր կերպարին, և ձիուն անվանում են թռչուն, իսկ բանահյուսության մեջ ձին ստանում է թռչնի կերպ, և ստեղծվում է թևավոր ձիու կերպարը¹⁵⁵: Ն.Մատի կարծիքով՝ նախապատմական շրջանում ձին նշանակում էր թռչուն: Իմաստաբանորեն թռչունը կապված է երկրնքի հետ և մարդու կենցաղում իհարկե չէր կարող փոխարինել ձիուն¹⁵⁶: Ձիու մարմնով և թռչնի թևերով թևավոր ձիու կերպարը մտնում է դիցաբանության մեջ:

Հայաստանում հայտնի են մ.թ.ա. XIII-VI դդ. լայն կիրառություն ունեցած ձիերի պատկերներով բազմաթիվ բրոնզե գոտիներ¹⁵⁷, որոնց մեջ կան նաև հրեղեն ձիու գավակին թռչնով օրինակներ¹⁵⁸: Թևավոր ձիերի մասին պատկերացումներ կան իրանալեզու ժողովուրդների դիցերում: Երկնային ձիերի մասին լեգենդներ կան Բակտրիայում և Ֆերգանայում: Տաջիկները հավատում են, որ գիշերը ձիերը բաց են թողնում թևերը¹⁵⁹: Նարթական պատումներում էպիկական հերոսին օգնող և ուղեկցող ձիերը ճախրում են ինչպես թռչուններ¹⁶⁰: «Ռիգվեդայում»՝ ձիուն նվիրված հիմնում, ձիուն խնդրում են թռչել և հանգուցյալին բարեհաջող հասցնել նախնիների մոտ¹⁶¹, իսկ ձիերով լծված արևի կառքի շար-

¹⁵³ Նույն տեղում, էջ 92:

¹⁵⁴ **Орбели И. А.** Избранные труды. Ер., Изд.АН Арм ССР, 1963, стр. 44-46.

¹⁵⁵ **Пропп В. Я.**, նշվ. աշխ., էջ 142:

¹⁵⁶ **Март Н. Я.** Избранные работы. Т. 3, М.-Л., «ГСЭ изд.», 1934, стр. 125 (ebook).

¹⁵⁷ **Пиотровский Б. Б.** История и культура Урарту, Ер.,Изд. АН Арм. ССР,1944, стр. 275.

¹⁵⁸ **Գրայեյան Հ. Ռ.**, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզիդարյան Հայաստանում, Եր., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1973, նկ. 26, 35

¹⁵⁹ **Литвинский Б. А.** Кангюйско-сарматский фарн (к историко-культурным связям племен южной России и Средней Азии). Душанбе, Изд.«Дониш»,1968, с. 148 (ebook).

¹⁶⁰ **Кузьмина Е. Е.** 1976, նշվ. աշխ., էջ 71:

¹⁶¹ Ригведа, Мандалы IX-X. Издание второе. Издание подготовила **Т. Я. Елизаренкова**, М., Изд. «Наука» 1999, X, 56 (ebook).

ժուռը երկնքում բազմիցս համեմատվում է թռչնի թռիչքի հետ¹⁶²: Ձի-թռչունները համադրվում են Սուրյաի, Բնդրայի, Ազնիի և Աշվինների հետ¹⁶³:

Հնդիրանական ժողովուրդների հավատալիքներում ձին ոչ միայն ինկորնացիա է, արև-աստծու ատրիբուտ և զոհաբերության կենդանի, այլ նաև մայր աստվածուհու, աստվածների ու աստվածային հերոսների, մասնավորապես, Ազնիի ուղեկից¹⁶⁴: Ազնիի թևավոր ձիերը ծառայում էին միջնորդ երկնքի և երկրի միջև, զոհաբերությունները հասցնում էին աստվածներին ու հանգուցյալների հոգիները տեղափոխում վերին երկինք՝ նախնիների մոտ՝ հավերժական արոտավայրեր¹⁶⁵: Թևավոր ձին ակնթարթորեն հերոսին տեղափոխում է մի տեղից մյուսը: «Սասնա ծռեր»-ում Ձենով Հովանին «ձին եսաց, Հովհա՛ն, քու աչքիր խփիր-Խփեց://Մըկել եսաց.-Հովհա՛ն, քու աչքիր բաց...»¹⁶⁶: Մի գրույցում ս. Սարգիսն անմիջապես հայտնվում է օգնություն կանչող տղային, նրան առնում իր ձիու գավակին ու մի ակնթարթում հասցնում սիրած աղջկան¹⁶⁷:

Երկվորյակները սլանում են ձիերով և թռչուններով լծված ոսկյա կառքով¹⁶⁸: Հունական դիցաբանության մեջ թևավոր ձիուն մարմնավորում է Պեգասուրը: Ենթադրվում է, որ Պեգասուր եղել է տոտեմական աստվածություն, որին պաշտել են ձիու կերպարանքով, որից էլ՝ նրա Հիպպիոս մականունը¹⁶⁹: Պեգասուս անունը նաև մոտ է հունարեն «pege-աղբյուր, ակունք» իմաստներին և այս պատճառով էլ կարող է կապվել անդրաշխարհի հետ: Թևավոր էին Հելիոսի ձիերը¹⁷⁰: Իրանական հավատալիքներում ձիերն ունեն մարդկանց համար անտեսանելի թևեր: Թևավոր ձին բնորոշ է հյուսիսկովկասյան ազգություններին և ռուսական ժողովրդական արվեստին¹⁷¹: Դիցաբանական թռչնի և ձիու հատկանիշները արտացոլված են հայկական ավանդույթներում, ծեսերում ու հավատալիքներում, փոխանցվել են քրիստոնեությանը՝ դրանցով օժտելով սրբերին: Ձիով անցնելիս ս. Սարգիսը ոտքը սեղմում է արժանավոր անձանց փոխնդի վրա: Այդ խաշիլից մի գդալ դնում են բարձր տեղ և ծածուկ հսկում, թե ինչ

¹⁶² Նույն տեղում, IX, 71, 9; IX, 97, 33; X, 30, 2 : X, 55, 6:

¹⁶³ Кузьмина Е. Е. 1976, նշվ. աշխ., էջ 71:

¹⁶⁴ Նույնը:

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 72 :

¹⁶⁶ «Սասնա ծռեր», 1936, Թ պատում, էջ 429, §24 :

¹⁶⁷ Աբեղյան Մ., 1975, նշվ. աշխ., էջ 81-82:

¹⁶⁸ Топоров В. Н. Ашвины. МНМ, т.1, М. Изд. «Советская энциклопедия», 1991, стр. 144.

¹⁶⁹ Նույնը:

¹⁷⁰ Գուն Ն., նշվ. աշխ., էջ 90:

¹⁷¹ Динцес Л. А. Русская глиняная игрушка. М.-Л., Изд. АН СССР, 1936. стр. 475 (ebook); Шангина И. И. Изображение коня и птицы в русской народной вышивке 19-начало 20в//. Советская этнография, 1972, № 3, стр. 117 (ebook).

թռչուն կամ կենդանի կգա ու ուր կտանի իր բաժինը¹⁷²: Ջրի և արևի հետ կապված ձիուն ու թռչնին միավորել է այս և այն աշխարհների հետ ունեցած կապը:

Եզրահանգում. Ազատանի կնիքի հորինվածքում ձին պատկերված է ձախ կողմում, սակայն աջ գնացող դիրքով, ոտքերը հպված չեն գետնին, պոչը վեր բարձրացրած և կարճ կապած (հանգուցված), թռչունը աջ կողմում է, կանգնած է թռիչքի պատրաստ դիրքով, գլխավերևում՝ զիզգագաձև նշան: Ինչպես ձին, այնպես էլ թռչունը աստվածության կենդանակերպ մարմնավորում են, դիցաբանական ընկալումներում ծիսական որոշակի իմաստաբանության կրողներ, որոնցով էլ պայմանավորված է պատկերման ձևը: Հնդեվրոպական ծիսակարգերում պահպանվում է աջի և ձախի հակադրությունը: Ծիսակարգում այն արտահայտվում է զոհ մատուցվող աստվածությունների տարբերակիչ հատկանիշներում,¹⁷³ և նույնիսկ գլխավոր աստծու հետ հիշատակվող կենդանիները բաժանվում էին աջ և ձախ կանգնողների¹⁷⁴:

Կնիքի հորինվածքում ոտքերը գետնից բարձր ձին միջանկյալ դիրք ունի երկրի և երկնքի միջև, աջ ոտքն առաջ դրած, աջ գնացող ձին (հմմտ. «աշիվամեդհա» ծեսում աջ կողմում լծված ձին զոհաբերելը) հավանաբար շեշտում է կենդանու՝ արու լինելը, իսկ փոքր մարմինը ենթադրում է, որ զոհաբերության համար ընտրվածը մտրուկ է¹⁷⁵ (հմմտ.՝ հնդկական և սկյութական ծեսերում հասունության հասած մտրուկներ զոհաբերելը): Ձիու պոչի կարճ, վրձնի նման ձևը ենթադրում է, որ այն հանգուցված է, կենդանին վայրի է և, ըստ հնագույն պատկերացումների, պատկանում է աստվածներին¹⁷⁶: Հավելենք, որ վեր բարձրացրած պոչը «զուգավորմանը պատրաստ» դիրք է¹⁷⁷: Արծիվը, որպես գլխավոր կերպար, աջ կողմում է՝ գլխից վեր առանձնակի դերը շեշտող զիզգագով, որը հավանաբար կայծակի խորհրդանիշ է:

Հնդիրանական պատկերացումներում մտրուկը ջրից ծնված կայծակի խորհրդանիշ է¹⁷⁸: Ենթադրվում է, որ ականջներից ծուխ, իսկ ոունգերից կրակ ժայթքող ձիերը կայծակ են¹⁷⁹ (հմմտ.՝ ս. Սարգսի ձին): Հայոց հավատալիքնե-

¹⁷² Մխիթարյանց Աղ., Փռանքներ Շիրակի ամբարներից, Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկվա-Ալեքսոլ, 1901, էջ 264 (ebook):

¹⁷³ Ардзинба В. Г., նշվ. աշխ., էջ 133:

¹⁷⁴ Ардзинба В. Г., նշվ. աշխ., տողատակ 207, էջ 220:

¹⁷⁵ Չոհ մատուցում էին առաջնածին, չզուգավորված կենդանուն: Խեթական որոշ ծեսերում ընդգծվում է կենդանու ծիսականորեն մաքուր, այսինքն՝ զուգավորված չլինելը (տե՛ս Ардзинба В. Г., նշվ. աշխ., էջ 66):

¹⁷⁶ Максимова М. И., նշվ. աշխ., էջ 80; Гамкрелидзе Т. В., Иванов В. В. 1984, նշվ. աշխ., էջ 488:

¹⁷⁷ Խաչատրյան Հ. Հին հայկական օրացույցի մասին//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. I, Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 1998, էջ 12:

¹⁷⁸ Жирмунский В. М., Зарифов Х. Т. Узбекский народный героический эпос. М., Изд. Гослитиздат, 1947, стр. 169.

¹⁷⁹ Потебня А. А., նշվ. աշխ., էջ 242-243:

րում «...կէծական Աստծու (հրեշտակների) ձեռքի թուրն է (գավազանը)»¹⁸⁰, ամպրոպային աստծու հրեղեն նետը¹⁸¹: «Սասնա ծռեր-ի պատումներից մեկում Քուռկիկ Ջալալին Դավթին հուշում է, թե «քու թուրն որ կա, կայծակից ա»¹⁸²: Կայծակը համադրվում է ճախարակի շյուղերի հետ¹⁸³: Բերված համադրումները ենթադրում են, որ արծվի գլխից վեր արված զիզգազը կարող է խորհրդանշել կայծակ՝ շեշտելով ամպրոպի աստծու սուրհանդակի նրա առաջնային դերը, նաև՝ ձիուն երկինք հասցնելու հանգամանքը:

Փոքրասիական բազմանիստների ձևի ընդօրինակություն ունեցող Ագատանի կնիքի հորինվածքում արտացոլված են ծիսական իմաստով ու դերով զուգադիր թռչնի ու ձիու՝ արևի և անդրաշխարհի պաշտամունքի հետ կապված հավատալիքները: Հնդեվրոպական նախնական ընկալումներից սերված հայոց հավատալիքներն ու ծեսերը հիմք են պնդելու, որ հայերի համար ևս ձին կյանք պարզևող է, մուրազատուր, թռչնային արագությամբ հերոսին նպատակին հասցնող, իսկ թաղման ծեսում՝ հանգուցյալին նախնիների մոտ տեղափոխող: Եվ կնիքի հորինվածքը ուղղակի վերջիններիս պատկերային դրսևորումն է:

Ձիու և թռչնի հորինվածքով կնիքը դամբարանում դրվել է հանգուցյալին ուղեկցելու և նախնիների մոտ արագ հասցնելու նպատակով և հավանաբար փոխարինել է ձիու զոհաբերությանը, ինչպես ձիակերպ տապանները: Կարևորվել է նաև գույնը: Ընտրվել է լաջվարդին մոտ կապույտը՝ հավանաբար ոչ միայն քարին վերագրվող բուժիչ զորությունը¹⁸⁴ ապակուն փոխանցելու համար, այլ նաև՝ երկնքի կապույտին հասցնելու:

¹⁸⁰ Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.12, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 66:

¹⁸¹ Մատիկյան Հ., Կրօնի ծագումը եւ դիցաբանություն, ըստ համեմատական կրօնագիտության, Վիեննա, 1920, էջ 271 (ebook):


¹⁸² Սասնա ծռեր, հ. Բ, մ. Բ, ԺԳ պատում, էջ 275:

¹⁸³ Кушнарева К. X. Древнейшие памятники Двина. Ер., Изд. АН Арм. ССР, 1973, стр. 90.


¹⁸⁴ Патканов К. П. Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке, Изд. Восточного отделения Императорского археологического общества, Типография академии наук, СПб., 1873, с. 43-44 (ebook).



Նկ. 1




Նկ. 2



Նկ. 3

Տախտակ I



ИКОНОГРАФИЯ И СЕМАНТИКА МНОГОГРАННОЙ СТЕКЛЯННОЙ ГЕММЫ ИЗ АЗАТАНА

Еганиян Л. Г.

Ключевые слова: *античная эпоха, почитание коня и птицы, солнце, вода, небо, мифология, верования, ритуал, жертвоприношение*

Найденная в погребение №2 в раскопках Азатана 2012г. стеклянная гемма - многогранник из синего стекла с стилизованным изображением коня и стоящей перед ним птицы. Имеет форму параллелепипеда, переходящего в верхней части в усеченную пирамиду. По продольной оси проделано круглое сквозное отверстие для надевания на нитку. Гемма датируется Пв. до н.э.- I в. н.э. и использовалась в качестве амулета.

Конь - олицетворение божества. Сложившееся в глубокой древности обожествление коня сохранилось в мифах и верованиях индоевропейских народов. Конь перевозит солнечного бога, а иногда сам ассоциируется с солнцем, выступает в качестве образа солнца, само солнце называется конем. По своему происхождению, конь является существом преисподней. связан со смертью, с хтоническим божеством, с владыкой преисподней. Конь не только переносил умершего в загробный мир, он мыслился представителем загробного мира.

В мифах разных народов зафиксирован образ птицы, сотворяющий мир. Орел был самым обожествленным существом являлся символом и вестником неба и богов. Культ орла еще более распространяется и приобретает дополнительные свойства и функции солнечного божества. Конь и птица олицетворяют характерные для индоевропейской концепции мира противопоставления жизни и смерти. Это и основой смысл изображения коня и птицы на гемме-амулете из Азатана.

ICONOGRAPHY AND SEMANTICS OF VERSATIL GLASS GEMMA FROM AZATAN

Yeganyan L. G.

Key words: *ancient era, veneration of horse and bird, sun, water, sky, mythology, beliefs, ritual, sacrifice.*

The upper layer of the Azatan fortification and its surroundings dating back to 12-6 BC refers to the Hellenistic period. During the excavations of the fortification and the upper layer of the settlement some tombs were discovered of antique origin on the surface. Next to the first tomb, from the level of the north side of the ridge, a large seal was found, which probably fell there during the funeral. The tomb, according to the discovered materials, is dated BC I to the 1st century BC. There will be a rectangular facade on the left, depicting a horse in front of the bird. This form of polygamous

polygon seals has a minor origin. BC V-IV centuries. Such seals were produced only in Asia Minor, and later became widely distributed in the Transcaucasia. The horse and eagle depicted on the seal have the role of mediator between the worlds of the living and the dead and the carriers of the deceased souls in general Indo-European mythology. A horse-and-bird composition was put in the tomb to accompany the deceased and to bring the ancestors up to speed.

References

1. **Yeganyan L., Khachatryan H.** Antic zhamanakachrdjani norahayt dambaranneri peggumner Shirakum, 2008-2016 t.t., «Shiraki patmamshakutayn zharangutyune, hayagitutyun ardi himnahartser» 10-rd midjazgayin gitazhoghovi nyuter, Gyumri 2019 t., edj 28-31 **(In Armenian)**.
2. **Arakelyan B. N.** Osherki po istorii iskusstva Drevney Armenii, Yerevan, (Izd. AN Arm. SSR).1976 **(In Russian)**.
3. **Ardzinba G. V.** Ritualy i mifi drevney Anatolii. «Isd.Nauka», Moskva, 1982 **(In Russian)**.
4. **Aubov A. P.** Elementi kulta jivotnikh u nrodov Ustarshani v drevnosti. St. Peterburg Isd. «Nauka» **(In Russian)**.
5. **Avakyan L. A.** Tsetvertitshniye ikopaemiye mlekopitayutsisya, Yerevna, Izd. AN Arm. SSR, 1959 **(In Russian)**.
6. **Babaev I. A.** O trekh mnogogranikh petshatakh naidenukh v Mingetshaure// «Sbornik sta tei», Baku, 1965 **(In Russian)**.
7. **Belov A.** Pokloneniye Perunu... V kn : Mifi i magiya indoevropyceyev. Vipusk 2. Podredakciey A. Platova. Izd.«Menedjer», 1997 **(In Russian)**.
8. **Belenitskiy A. M.** Khutalskaya loshad v legende i istoritseskom predanii. Sovetskaya etnografiya. Izd. AN SSSR. 1948, № 4 **(In Russian)**.
9. **Brashinskij I. V.** Economitheskie sviazi Sinopi v IV-IIvv. do n.e. v kn: «Antitshni gorod» (Izd. AN SSSR) Moskva, 1963 **(In Russian)**.
10. **Borozova N.** Nekotorie materialy ob amuletakh-ukrachenikh naselenia Srednei Azii v sb.: «Domusilmanskie veriwanian I obriadi v Srednei Azii. Moskva, (izd. «Nauka») 1978 **(In Russian)**.
11. **Gamkrelidze T. V., Ivanov V. V.** Indoevropayski yazik i indoevropaysci II, Tbilissi, (Izd.Tbilisski universitet), 1984 **(In Russian)**.
12. **Gerni Oliver.** Hetti. Moskva, Izd. «Nauka», 1987 **(In Russian)**.
13. **Golan A.** Mif i simvol. Moskva, Izd.Russlit, 1993 **(In Russian)**.
14. **Dinces L.A.** Russkaya glinyanaya igrushka. M.-L.,Izd. AN SSSR,1936**(In Russian)**.
15. **Esayan S. A.** Dzin Urartui razmakan gorcum. Yerevan, Izd. HSSH GA// Tekhekagir hasrakakan gitutunneri,1962. 2 **(In Armenian)**.
16. **Esayan S. A.** Orujiye i voyennoe delo drevney Armenii. Yerevan,Izd. AN Arm.SSR, 1966. **(In Russian)**.

17. **Esayan S. A., Kalantaryan A. A., Oshakan I.** Osnovniye rezultati raskopok 1971-1983 gg. Yerevan, Izd. AN Arm SSR, 1988 **(In Russian)**.
18. **Jirmunskiy V. M., Zarifov Kh. T.** Uzbekskiy narodniy geroitsheskiy epos. Moskva, Izd. Gos litizdat, 1947 **(In Russian)**.
19. **Petrosyan L. A.** Raskopki pamyatnikov Keti i Voskeaska. Yerevan, Izd. AN Arm. SSR, 1989 **(In Russian)**.
20. **Petrosyan E.** Bogi i rituali dreney Armenii. Yerevan, (Izd. «Zangak-97») 2004 **(In Russian)**.
21. **Patkanow K. P.** Dragocenniekamni, ikh nazvaniya i soystva po ponyatiyam armyan XVII veka. Izd.-vo Vostotsnogootdeleniya Imperatorskogo obshestva. Tipografiya AN SPb, 1873 **(In Russian)**.
22. **Piotrovskiy B. B.** Razvitiye skotovodstva v drevneyshem Zakavkazye. Sovetskaya arkheologiya. XXIII, 1955 **(In Russian)**.
23. **Piotrovskiy B. B.** Istoriya i kultura Urartu. Yerevan, Izd. AN Arm SSR, 1944 **(In Russian)**.
24. **Potebnya A. A.** Sobranie trudov. Simvol i mif v narodnoj kulture. M., (Izd. labirint), 2000 **(In Russian)**.
25. **Propp V.** Istoricheskiye korni volshebnoy skazki. L., (Izd. labirint), 1986 **(In Russian)**.
26. **Ivanov V. V.** Opit istolkovaniya drevneindeiskikh ritualnikh i mifologicheskikh ritualnikh terminov, obrazovanikh ot «asva-kon». v sb. «Predmeti istorii yazikov I kulturi narodov Indii». M., Izd. Nauka, 1974 **(In Russian)**.
27. **Ivanov V. V., Toporov V. N.** Orel. Mify narodov mira, T.2 Moskva, (Izd. Sovetskaya enciklo-pediya), 1992 **(In Russian)**.
28. **Ivanov V. V.** Izbrannie trudi po semantike i istorii kulturi. T. V, Mifologiya i folklor. M., (Izd. Znak), 2009 **(In Russian)**.
29. **Klein L. S.** Drevniye migratsii i proiskhojdenie indoevropiyskikh narodov. St. Peterburg, (Izd. St. Peterburg) 2007 **(In Russian)**.
30. **Klinger K. H.** Jivotnie v antichnom i sovremennom sueverii. Kiev, (Izd. Universiteta St. Vladimira), 1911 **(In Russian)**.
31. **Kuzmina E. E.** Navershie so vsadnikami iz Dagestana // Sovetskaya arkheologiya, №2, M., Izd. AN SSSR, 1973 **(In Russian)**.
32. **Kuzmina E. E.** O semantike izobrajeniy Chertomlickoy vase // Sovetskaya arkheologiya, M., 1976, №3 **(In Russian)**.
33. **Kuzmina E. E.** Rasprostraneniye konevodstva i kulta konya u iranskikh plemen Sredney Azii i drugikh narodov Starogo Sweta. V kn: «Srednaya Aziya v drevnosti i srednevekoviye». M., (Izd. Nauka), 1977 **(In Russian)**.
34. **Kushnareva K. Kh., Tshubinshvili T. V.** Drebneyshie kulturi yujnogo Kavkaza. L., Izd. «Nauka», 1970 **(In Russian)**.
35. **Litvinskiy B. A.** Kangyuysko-sarmatskiy farn. Dushanbe (k istoriko-kulturnim svyazam plemen yujnoy Rossii i Sredney Azii). Izd. «Donish», 1968 **(In Russian)**.

36. **Lordkipanidze M. N.** Gemmi gosudarstvennogo muzeya Gruzii.III, Tbilisi, 1961 **(In Russian)**.
37. **Losev A. F.** Poseydon. Mify narodov mira, M., Izd. Sovetskaya enciklopediya, T 2,1992 **(In Russian)**.
38. **Maksimova M. I.** Steklyanie mnogogrannie petshati najdennye na territorii Gruzii. Tbilisi, Izd. Akademia Nauk Gruzii, 1948 **(In Russian)**.
39. **Marr N.Ya.** Izbrannie raboti. T. 3, M.-L., Gosudarstvennoe socialno-ekonomitskieskoe izd. 1934 **(In Russian)**.
40. **Muiller V.** Russkaya maslenica i zapadnoevropeyski karanaval. M., Izd. Universitetskaya tipografia, 1884 **(In Russian)**.
41. **Orbeli I.A.** Izbranniye trudi. Yerevan, Izd. Akademii Nauk Arm. SSR.1963. **(In Russian)**.
42. Rigveda Mandali I-IV, Izdaniye podgotovila T.Elizarenkova. M., Izd «Nauka», 1999 **(In Russian)**.
43. **Rubakov B. A.** Prikladnoe iskusstvo I skulptura. V kn: Istoriya Drevney Rusi. T.2, M.-L., Izd. AN SSSR, 1951 **(In Russian)**.
44. **Sardaryan S.** Paleolit Armenii. Yerevan, Izd.AN Arm.SSR, 1954 **(In Russian)**.
45. **Shangina I. I.** Izobrajeniya koya i ptici v russkoi narodnoi vishivke 19-nathsalo 20v. //«Sovetskaya Etnografia». №3, M., 1972 **(In Russian)**.
46. **Skrjinskaya M. V.** Sostyazaniya na drevnegrecheskikh prazdnikakh v Severnom Pritcherno morya.// Possiskya arheologiya, 2004, 2 **(In Russian)**.
47. **Temkin E.N., Erman B.G.** Mifi drevney Indii. M., Izd. «Nauka», 1982 **(In Russian)**.
48. **Tiratsyan G.** Kultura drevney Armenii. Yerevan, Izd. AN Arm. SSR, 1988 **(In Russian)**.
49. **Toporov V. N.** Ashvini. Mify narodov mira, M., Izd. Sovetskaya enciklopediya, T.1, 1991 **(In Russian)**.
50. **Toporov V. N.** Pup zemli. Mify narodov mira, M., Izd. Sovetskaya enciklopediya, T.2, 1992 **(In Russian)**.
51. **Toporov V. N.** Konnie sostyazaniya na pokhonorakh. Issledovaniya v oblasti baltoslavjanskoi dukhovnoi kulturi. M., Izd. «Nauka», 1990 **(In Russian)**.
52. **Tsalkin V. I.** Drevneyshiye domachnie jivotniye Vostochnoy Yevropi. M., Izd. «Nauka», 1996 **(In Russian)**.
53. **Fray R.** Nasledie Irana. M., Izd.Nauka AN, 1982 **(In Russian)**.
54. **Fomicin A. S.** Bojestva drevnikh slavyan. M., izd. SPb, 1884 **(In Russian)**.
55. **Yankovskaya N. B.** Nekotoriye voprosi ekonomiki assiriyskoy derjavi/Vestnik drevny istorii. 1956, №1 **(In Russian)**.
56. **Abegyan M.** Erker. h. E. Yerevan, HSSH GA hrat., 1975 **(In Armenian)**.
57. **Agatangelos,** Hayoc patmutun. Yerevan, (YePH hrat.), 1983 **(In Armenian)**.
58. Azgagrakan handes. X, Tiflis. 1903 **(In Armenian)**.
59. **Araqelyan B.** Haykakan patkeraqandakner IV-VIIDarerum. Yerevan, HSSR GA hrat., 1949 **(In Armenian)**.

60. Grigor Magistrosi Tkhter.i luys intsaec K.Kostanyan, Aleqsandrapol, 1910 **(In Armenian)**.
61. Dicabanakan bararan, Yerevan, «Luys» hrat., 1985 **(In Armenian)**.
62. Eganyan L. Shun@ ev dzin antik Beniamini taghman tsesum. HH GAA CHH Kentroni «Gitakan ashkhatuthunner» h. I, Gyumry, 1998 **(In Armenian)**.
63. Hayrapetyan T. Tsisakan mrcutyany mshakyth@ haykakan hrashapatum heqiatnerum //Patma-banasirakan handes, 1, 2012 **(In Armenian)**.
64. Israyelyan H. Pashtamunq@ yev havataliq@ ush bronzidaryan Hayastanum, Yerevan, HSSH GA hrat., 1973 **(In Armenian)**.
65. Israyelyan H. Erkvoryakneri pashtamunqi hetqer hin Hayastanum//Patma-banasirakan handes, 3, 1980 **(In Armenian)**.
66. Lalayan E. Hugharkavorutyany yev gerezmanneri zargacum@ Hayastanum. Yerevan, «Tekhegagir» HGKH Gitutyany ev arvesti instituti, 1928 **(In Armenian)**.
67. Lisicyan St. Lernain Kharabakhi hayer@. Hay azgagrutun yev banahyusuthyun. h. 12, Yerevan, 1981 **(In Armenian)**.
68. Khatsatryan J. Ditoghuthyunner Hayastani hellenistakan shrjani gliptikai masin.// HSSH GA Lraber hasarakakan gitutunneri, Yerevan, 1974, №7 **(In Armenian)**.
69. Khatsatryan J. Hayastanum haytnabervats bazmanist kniqner.//HSSH GA «Patma-banasirakan handes», №1, Yerevan, 1965 **(In Armenian)**.
70. Khatsatryan J. Artsvi tarber horinvatsqnerov knqadroshmner, gemaner yev qandakner.//«Patma-banasirakan handes», №2, Yerevan, 2003 **(In Armenian)**.
71. Khatsatryan A. Hin haykakan oratsytsi masin// HH GAA SHHHK «Gitakan ashkhatutyunner», I, Gyumri, «Gitutyany», 1998 **(In Armenian)**.
72. Khnkikyan O. Norahayt hushardzan Gorisum.//HSSH GA «Patma-banasirakan handes», Yerevan, 1981, №4 **(In Armenian)**.
73. Khorenaci M. Hayots patmutun. Yerevan, «Hayastan» hrat., 1990 **(In Armenian)**.
74. Kun N. Hin Hunastani legendner yev araspelner. Yerevan, «Haypethrat», 1956, **(In Armenian)**.
75. Hay joghovrdi patmuthun, h.I, Yerevan, GA hrat., 1971 **(In Armenian)**.
76. Hay jogovrdakan heqiatner, hh.IV, XIII, Yerevan, GA hrat.), 1963, 1984 **(In Armenian)**.
77. Herodotos. Yerevan, (GA hrat.), 1986 **(In Armenian)**.
78. Homeros. Iliakan. Yerevan, (Yerevani hamalsarani hrat.), 1987 **(In Armenian)**.
79. Mnacakanyan A. Haykakan zardarvest, Yerevan, (GA hrat.), 1955 **(In Armenian)**.
80. Martorosyan H. Gitutun stedhevum e nakhnadarum. Yerevan, Sovetakan grogh hrat., 1978 **(In Armenian)**.
81. Matikyan H. Kroni tsagum@ yev dicabanuthun@ @st hamematakan kronagitutyany, Vienna, 1920 **(In Armenian)**.
82. Mkrtshyants Ag. Pshranqner Shiraki ambarnerits.Eminyan azgagrakan joghovatcu, h. A, Moskwa-Alekpól, 1901 **(In Armenian)**.
83. Qosharyan G. G. Antik darashrdjani zohasegan Dvinitis.// HSSH GA «Patma-banasirakan handes», №2, Yerevan, 1977 **(In Armenian)**.

84. **Khsenofon**. Anabasis. Yerevan, GAA hrat., 1970 **(In Armenian)**.
85. **Srvandztyan G.** Manana, K.Polis, 1876 **(In Armenian)**.
86. **Strabo**. Yerevan, YePH hrat., 1940 **(In Armenian)**.
87. «Sasuntsi Davit» haykakan joghovrdakan epos. Yerevan, Haypethrat hrat., 1961 **(In Armenian)**.
88. Sasna Tsrer. H.A, Yerevan, Pet. hrat., 1936, patum ID **(In Armenian)**.
89. **Ter-Margaryan St.** «Vardbag» taratski antik dambaranadashteri pegumner. HH GAA HAI, 1989-90tt. Dashtayin hnagitakan askhatangneri ardyunqnerin nvirvats gitakan nstashrdjan, Yerevan, 1991 **(In Armenian)**.

Ընդունվել է՝ 05.03.2020

Գրախոսվել է՝ 20. 04. 2020

Հանձնվել է սպ. 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ՝ պատմ.գիտ. թեկնածու,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի առաջատար գիտաշխատող

ՀՏԴ՝ 902/903

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՎԱԾ ԵՂՋՅՈՒՐԻ ԵՎ ՄԻԵՂՋՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ

Մարգիս Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ ժայռապատկեր, հեքիաթ, քարայծ, համաստեղություն, լույս, առասպելաբանություն, քարիդարյան, հնդեվրոպական, արմատ:

Հայաստանի ժայռապատկերները լի են քարայծերի, դրանց թվում և առասպելաբանված այծերի պատկերներով: Հոդվածում հեղինակի ուշադրության կենտրոնում են նրանք, որոնք նախատիպ են ծառայել առասպելաբանական միեղջյուրի համար: Ինչպես հայ, այնպես էլ եվրոպական ժողովուրդների առասպելաբանություններին բնորոշ այս կերպարի համար Աս. Մնացականյանը գրում է, որ դրանց «...ամենատարածված տեսակները կապ ունեն եղջերուի կամ այծի հետ»¹, և որ «միեղջյուրը կամ միեղջերուն ոչ միայն հզոր ու երևակայական գազան է, այլև դիցաբանական կույսերի հոմանիս»²:

Նախաբան. Քարիդարյան առասպելաբանական մտածելակերպով՝ մեր երկրի լեռները քարացած եղջերավորներ, իսկ լեռնագագաթները նրանց եղջյուրներ են ընկալվել: Դրանց արտացոլումներին հանդիպում ենք դեռևս համահնդեվրոպական մակարդակով: Լուսաբացը դիտող մեր հեռավոր նախնիները տեսնում էին, որ նախ լուսավորվում են լեռնագագաթներն ու քարափների կատարներին կանգնած քարայծերի եղջյուրները: Այս երևույթը «լեռ»/«եղջերավոր» զուգադրման հետ միասին հիմք են դարձել «լեռնագագաթ»/«լույս» և «եղ-

¹ Բանբեր Մատենադարանի, 1998, թիվ 12, էջ 27:

² Նույն տեղում, էջ 29:

ջուր»/«լույս» զուգորդված հասկացությունների համադրման: Դրանց առասպելաբանական զուգորդումները հասու էին նաև նեանդերթալյան մարդուն: Ուզբեկստանի Թեշիկ-թաշ քարանձավում պեղված 8-9 տարեկան նեանդերթալցի տղայի գերեզմանի ուսումնասիրությունը հնարավոր էր դարձրել պարզելու նեանդերթալյան թաղման կարգը: Ննջեցյալի թաղումն իրականացվել է արևելք-արևմուտք, այսինքն՝ արեգակի շարժման ուղղությամբ, իսկ գերեզմանի շուրջ որոշակի կարգով շարվել են տեղացիների որսի հիմնական կենդանու՝ կիլիկ-քարայծի եղջուրները: Ա. Օկլադնիկովը դրանց և զուգահեռ այլ նյութերի համադրմամբ եկել էր այն եզրակացությանը, որ տվյալ դեպքում գործ ունենք արևի պաշտամունքի սաղմնավորման երևույթի հետ³: Ավելացնենք, նաև՝ «արեգակնային լույս»/«քարայծի եղջուր» առասպելաբանական զուգորդման հետ:

1. «Լեռ/եղջերավոր» և «եղջուր/լույս» առասպելաբանական զուգորդումները

Արագածի գագաթին կախված Լուսավորչի մշտավառ կանթեղի հանրահայտ ավանդազրույցը հնադարյան արմատներ ունի: Դրա մասին է խոսում լեռան հյուսիսարևելյան լանջերն ու ստորոտը զբաղեցրած հին հայկական Նիզ գավառի անունը: Սրա հիմք *նիզ* բառը գրաբարում ուներ երկու հիմնական նշանակություն. «ծանր բաներ տեղահան անելու՝ շարժելու լծակ, լինգ» և «ձողաձև կամ գերանաձև լույս, որ երևում է ամպերում»: Ընդ որում, այս բառը ծագած է համարվում հ.-ե. «հենվել», «ծռել, թեքել» նշանակող արմատից⁴: Անշուշտ, սովորական լինգը չէր կարող երկնային լույսին համադրվել, բայց դա կարող էր տեղի ունենալ լինգի տեսքով այնպիսի առարկայի հետ, որին մեր նախնիների առասպելաբանական մտածողությունը լուսառաք է համարել: Դա եղել է Հայկական լեռնաշխարհի բնիկ քարայծի (բեզուարյան այծ) մինչև 130 սմ երկարությամբ կոր եղջուրը, որը բազմակի կիրառություն է ունեցել և մեր քարիդարյան նախնիների համար նաև լինգի դեր է կատարել:

Հ.-ե. *ker- արմատի ստորին *kʷr- ձայնդարձից է ծագում հայերեն *սար* «լեռ» բառը⁵, բայց արմատի վերին ձայնդարձից էլ ունենք *սիրամ* (-ամ վերջածանցով) բառը, որը «ճակատին սպիտակ նշանով եզ» է նշանակում⁶: «Եղջերավոր»/«լեռ» առասպելաբանական զուգորդման երբեմնի կիրառման հետքերը պահպանված են հայ ժողովրդական հանելուկներում: Դրանցից «եղջերու» պատասխանն ակնկալող հանելուկում ասվում է. «Ըորչքներենը *սար* ա./Գըլխներենս բար

³ **Першиц А.И., Монгайт А. Л., Алексеев В. П.** История первобытного общества, М. 1982. стр. 67-69.

⁴ **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. III, Եր., 1977, էջ 450-451:

⁵ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 182:

⁶ ՀԱԲ, հ. IV, էջ 219: Հմմտ. նաև սեռ «լեռան ողնը, այն բարձրագույն գիծը, որից սկսվում է թեքումը դեպի այս և այն կողմը, ջրբաժանք» (տե՛ս **Մայիսայանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, այսուհետև՝ ՀԲԲ, հ. IV, Եր., 1945, էջ 202):

ա./Ճղներ կտա, տերև չի տալ./Եկեք տեսնենք էս հի՞նչ ծառ ա»⁷: Այսպիսի առասպելաբանական գուգորդման շնորհիվ է վաղ նախնադարում ստեղծվել այնպիսի լեռնանուն, ինչպիսին *Արագած*-ն է. *Ա-րագ-ած*, որում նախաձայն *ա-*ն հավելվածական ձայնավոր է (*ր-*ի պատճառով), *-ած*-ը *-ատ* «ունեցող, կրող» վերջածանցի հնչյունական տարբերակն է, իսկ *-րագ* (հ.-ե. *ragh «եղջյուր») արմատն⁸ է:

Հայ իրականությունից բազմաթիվ փաստեր են հայտնի՝ եղջյուրը չարխափան ըմբռնվելու վերաբերյալ: Եղջյուրը, կենդանու գանգի հետ միասին կամ առանց դրա, խփում էին տան մուտքի վերևում կամ ցցում որևէ աչքի ընկնող տեղ⁹: Թե ինչքան վաղ ժամանակներից է գալիս եղջյուրին, առհասարակ եղջերավորին վերագրված լուսատու լինելու հատկությունը, կարելի է դատել հետևյալ օրինակից: Վաղ հնդեվրոպական *DY* արմատից ծագած բառերը հնդեվրոպական լեզուներում ոչ միայն «լույս» և «լուսավոր երևույթներ» («երկինք», «աստված» և այլն) են նշանակում, այլև «այծ»¹⁰: Նրանից ունենք *տի* «օրվա լույս մասը» և *տիկ* «տկճոր, պարկապզուկ» (նախապես «այծ»)՝¹¹: Իմաստի նույնպիսի տարբերակվածություն ունենք նաև *բուծ* «կաթնակեր գառնուկ, ուլիկ» (մանկ. թոթ. *բրժո*) և *բուզի* «արեգակ»¹² (մանկ. թոթ. *բրժո* «ճրագ»)՝¹³ նույնարմատ բառերի միջև: Հին իրանական սուրբ գրքում՝ «Ավեստա»-ում, առասպելաբանված լույսը՝ *Ֆարր* (որից՝ *փառք*) հանդես է գալիս ինչպես արծվի, այնպես էլ այծի տեսքով¹⁴: Այս երկվությունը հետևանքն է լինելու առասպելական թևավոր այծի մասին պատկերացման, որի երբեմնի գոյության մասին են խոսում ինչպես թևավոր այծ պատկերող պոյակները, այնպես էլ «թռչի էլ՝ այծ է» հայկական ասացվածքը¹⁵: Սեմական նախալեզվի *karn «եղջյուր» բառը նաև «լույսի ճա-

⁷ **Հարությունյան Ս.**, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 61:

⁸ **Պետրոսյան Ս.**, «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ.թ.ա. VI-V դդ.) «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, թիվ 12, էջ 69-70: Արագած լեռնանվան *-ած*-ատ բաղադրիչի համար հմմտ. *-ատ* վերջածանցը արմատ, խորխորատ, հաստատ, հրատ և այլ բառերում, իսկ որպես տեղանվանակերտ՝ Լմբատ, Հաղբատ, Որթուատ, Պաշատ, Տամբատ և այլ տեղանուններում: Հայ. *-ատ*-ած հնչյունական անցման տեսանկյունից ուշագրավ է հատկապես Արարատ լեռնանվան Արարած տարբերակը՝ բերված որպես Մասեայ / Մասսեայ (այսինքն՝ Մասիս) լեռնանվան բացատրություն /Տե՛ս «Բառգիրք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Հ. Ամալյանի**, Եր., 1975, էջ 209, 405 ծան. 154:

⁹ **Լալայան Ե.**, Երկեր. հինգ հատորով, հ. II, Եր., 1988, էջ 190:

¹⁰ **Андреев Н. Д.** Ранне-индоевропейский проязык, Ленинград, 1986, стр. 86-87.

¹¹ ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 482:

¹² «Բառգիրք հայոց», էջ 58:

¹³ **Գրիգորյան Ռ.**, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Եր., 1970, էջ 411:

¹⁴ **Бертельс Е. Э.** История персидско-таджикской литературы, М., 1960, стр. 215, пр. 61.

¹⁵ **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., 1969, էջ 402:

ռազայթ» է նշանակել (փոխառյալ է հնդեվրոպական նախալեզվից)¹⁶: Նույն իմաստներով այն *keren* ձևով առկա է եբրայերենում: Ըստ այսմ, հասկանալի է, թե ինչու Մովսես նահապետի հանրահայտ քանդակում Միքելանջելոն նրան օժտել է զույգ եղջյուրներով, երբ Ֆրա Անջելիկոյի և Ռաֆայելի կտավներում դրանց փոխարեն տեսնում ենք փնջաձև ճառագայթներ¹⁷:

Ժայռապատկերներում, բրոնզիդարյան խեցեղենի և մետաղյա արվեստի գործերի վրա այժապատկերները հաճախ ուղեկցվում են արևի և մյուս լուսատուների պատկերներով կամ դրանց խորհրդանիշերով ու խորհրդանշաններով: Ս. Դևեյանը, նշելով, որ դրանցում շատ ընդհանուր գծեր կարելի է գտնել այժի և արևի աստվածությունների միջև, ավելացնում է, որ «Լոռու բերդի շերտ-փի վրա նույնպես համադրվում են այժը, մարդակերպ աստվածությունն ու արևի խորհրդանշան ճանկախաչը»¹⁸: Ուրարտուի պաշտոնական դիցարանը Իշպուհիի թագավորից (մ.թ.ա. 825-810 թթ.) սկսած գլխավորող Խալդի աստվածը «Մեթի դռան» դիցարանում հիշատակված է երկիցս, որոնցից առաջինում նրան պետք է զոհաբերվեր 6 ուլ, երկրորդում՝ 17 ցուլ և 34 ոչխար¹⁹: Ս. Բարայեյանի կարծիքով, եթե երկրորդ դեպքում խոսքը Խալդիի՝ որպես զերագույն աստծու մասին է, «ապա առաջին դեպքում Խալդին ընդգծված է որպես միակ առաջնորդող աստվածը, և իզուր չէ, որ այս դեպքում նրան է նվիրաբերվել ուլը. այժը այսօր էլ առաջնորդության խորհրդանիշն է»²⁰: Սրանից հետո անսպասելիորեն նա Կարմիր բլուրից պեղված բրոնզե գլանաձև պատվանդանի արձանագրության մեջ հիշատակված եղջյուրը համարում է Թեյշեբա աստծու խորհրդանիշը, երբ արձանագրությունը՝ իր իսկ թարգմանությամբ, խոսում է ոչ թե Թեյշեբայի, այլ Խալդիի մասին. ահա դա. «Խալդիին՝ տիրոջն-իր այս նվիրական եղջյուր-ուղերձը (որպես) հատուցում, Արգիշտին Մինուայան պատրաստեց, երբ Էրեբունին կառուցեց»²¹: Ս. Բարայեյանը շարունակում է. «Մեզ հասած հույակապ պատվանդանը, ըստ երևույթին, իր վրա կրել է ցուլը խորհրդանշող եղջյուր...»²²:

¹⁶ Гамкрелидзе Т. В., Иванов В. В. Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, стр. 876.

¹⁷ Мурьянов М. К семантическим закономерностям в лексике старославянского языка (рогъ и его связи)//«Вопросы языкознания», 1979, № 2, стр. 103, 106.

¹⁸ Դևեյան Ս., Լոռու բերդի քրմի դամբարանը. «Պատմա-բանասիրական հանդես», 1986, թիվ 3, էջ 114-115:

¹⁹ Меликишвили Г. А. Урартские клинообразные надписи, М., 1960, надп. № 27.

²⁰ Բարայեյան Ս., Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (ըստ արձանագրական և հնագիտական տվյալների), Եր., 1971, էջ 68:

²¹ Նույն տեղում, էջ 70:

²² Նույնը:

Հայկական հեքիաթները բազմաթիվ վկայություններ են պահպանել առասպելաբանված եղջյուրների և եղջերավորների մասին: Դրանցից մեկում առասպելաբանված այծը և նրա լուսատու եղջյուրները նկարագրվում են հետևյալ կերպ. «Էտ էծին աշկերը հենց ար լիա ծովին ճուրը, պոզերն էլ հենց ար լիա կրեռ-կրեռ թորը, լիա պողվատ, լիա ավմաստ, հենց շողշողըմ ար»²³: Մեկ ուրիշ հեքիաթում անհետացած կովն ի վերջո հայտնաբերվում է՝ իր ծնած երկու արջառի և մի հորթի հետ միասին: «Էտ ըչունուն պոզերը անկյին քարերից ա ինում: Կավն ասում ա.-Փլագավ պտատե... Էտ պոզերը լուս ըն տամ»²⁴: Ժողովրդի կողմից եղջյուրին վերագրված լուսատու և չարխափան հատկանիշները հետագայում վերագրվել են նաև քրիստոնեական խաչին, որը լույսի, մանավանդ արեգակնային լույսի խորհրդանիշն ու խորհրդանշանն է համարվել մինչքրիստոնեական հազարամյակներում ևս: Գր. Նարեկացու «Հարության տաղ»-ում կարդում ենք.

«Եթէ եզինք են սաթ ու սպիտակ,
Ծաղկախայտուցք, արագաքայք, ընթացականք,
Եղջիրն ամէն խաչանման եւ մագն ամէն հոյլ մարգարիտ»²⁵:

Անտարակույս, եզան եղջյուրը խաչանման է որակվել լուսառաք համարվելու պատճառով: Ավելին, հայ միջնադարյան հանելուկներից մեկում, որն ակնկալում է «եզն» պատասխանը, ասվում է. «Եւ Քրիստոսի ինքն օրինակ»²⁶: Հանրահայտ է Քրիստոս/Լույս համադրումը, իսկ այստեղ Քրիստոս/Եզն համադրման հետ գործ ունենք, որի սկզբնապատճառը եզան «սաթ ու սպիտակ» լինելու և «խաչանման-լուսառաք» եղջյուր ունենալու մեջ է:

Աս. Մնացականյանը, մեր միջնադարյան երգերից մեկի՝ «Կէս գիշերին մէջ էրածիս...Հայոց տեառն նշանը տեսա...Պիտի մեռնեմ էսօր-վաղը, Մահուս տեառն նշանը տեսա» տողերը համեմատելով փոքրասիական հույների էպոսի հերոս Դիգենիս Ակրիտասի վախճանը կանխատեսող հատվածի հետ, ավելացնում է. «Նա հալածել է դիցաբանական եղջերուին և հանկարծ սթափվել՝ նրա եղջյուրների միջև տեսնելով խաչի, իսկ թիկնամեջին՝ Աստվածամոր պատկերը:

²³ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. V, Եր., 1966, էջ 144:

²⁴ Նույն տեղում, հ. V, էջ 541: Եղջյուրը լուսատու և կախարդական գործությամբ օժտված է համարվել անգամ օձի գլխին հայտնված ժամանակ: Ե. Լալայանի հաղորդմամբ՝ Վարանդայի Քառասնի գյուղի մոտակա ժայռում «ասպրում է մի ոսկեղջյուր օձ, որ երբեմն յուր լուսաճաճանչ գլուխը դուրս է ցցում ժայռից» (Տե՛ս Լալայան Ե., Երկեր, հ. II, Եր., 1988, էջ 171):

²⁵ Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Եր., 1972, էջ 40:

²⁶ Մնացականյան Ա., Հայ միջնադարյան հանելուկներ (V-XVIII դդ.), Եր., 1980, էջ 286:

Այդ մասին է, ահա, որ մահամերձ Դիզենիսը պատմում է... Հովանավորված էր այդ եղջերուն, իսկ մեղքն ինձ մոլորեցրեց: Եվ ահա ես պիտի մեռնեմ»²⁷:

Հեթանոսական դարերում եղջերավոր կենդանիների եղջյուրների միջև էին տեղադրում ինչպես արեգակնային լույսը խորհրդանշող խաչը, այնպես էլ նրա մյուս խորհրդանշանները՝ սկավառակը, օղակը, գունդը: Հին եգիպտացիների պաշտամունքի գլխավոր կուռքերից մեկի՝ Ապիս եզան կուռքի ոսկեգոծ եղջյուրների միջև էր տեղադրված արևի խորհրդանիշ ոսկե շրջանակը²⁸: Բասենցի Գ. Հակոբյանը, նկարագրելով իր հայրենի գավառի շրջակա լեռներում եղջերուների ու վայրի այծերի (քոշեր) առատությունը, ավելացնում է, որ «անգամ գենք (իմա՝ հրագեն - Ս.Պ.) ունենալու դեպքում էլ այստեղ ընդունված չէր եղջերու կամ քարայծ խփել, մեղք էր համարվում»²⁹: Իսկ պատճառն այն էր լինելու, որ դրանց եղջյուրների մեջտեղում Խաչ էր պատկերացվում: Այդպիսին էին պատկերացվելու նաև հայկական հեքիաթների ինքնագոհաբերվող և մեռնող-հառնող այծերի նախատիպերը: «Իմաստուն իծի հեքիաթ»-ում այծը ինքնամորթվում, ինքնաքերթվում, ինքնաեփվում, կերակուր է դառնում, բայց երբ ուտել-խամելուց լիացած հյուրերը վեր են կենում, թե գնան, «տեհան էձը մկրկալով դենը գնաց»³⁰: Այս այծը պատժում է իրեն հարվածելու պատրաստ ամուսնադավ տիրուհուն. «Էտ կնիկը փետը վե կալավ, դրա պոզերի մեջտեղումը սվուց: Փետը կպավ իծի պոզերից, ետ կնիկն էլ կպավ փետիցը»³¹: Նույնպիսի վիճակի ականատեսն ենք նաև մեկ ուրիշ՝ «Խորհրդավոր այծը» նույնաբնույթ հեքիաթում: Այստեղ էլ. «Կնիկը բարկանըմ ա, անթրոցով զարկըմ ա էծին, անթրոցը կպնըմ ա էծից, կնիկն էլ կպնըմ ա անթրոցից»³²: Պարզ է, որ այս այծերի առասպելաբանական նախատիպը արևաբնույթ այծ աստվածություն է եղել (արևի պես մեռնող-հառնող), իսկ նրա պոզերի միջև գտնվող տեղը՝ արևի խորհրդանշանի տեղը, ուրեմն, նաև՝ սրբազան ու պաշտելի:

Ուրացող ու դավաճան Մերուժանի մասին Փավստոս Բուզանդի պատմածում հանդիպում ենք նման մի ակնարկի³³: Պարսկական բանակի հիմնական ուժերը Կորճայքում թողած Մերուժան Արծրունին մի գնդով հասել էր Կոզովիտ՝ այնտեղից Բագրևանդ մտնելու մտադրությամբ: «Եւ էին ի վայրսն, ընդ

²⁷ Մնացականյան Ա., Դիցաբանական եղջերուն միջնադարյան հայ արվեստում// «Բանբեր մատենադարանի», թիվ 12, Եր., 1977, էջ 19:

²⁸ Herod. II, 132 (Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 138):

²⁹ Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 84:

³⁰ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. I, Եր., 1959, էջ 491:

³¹ Նույնը:

³² Նույն տեղում, հ. I, էջ 574:

³³ Փաւստոսի Բիւզանդացոյ պատմութիւն Հայոց, Բնագիրը Ք. Պատկանյանի, Եր., 1987, գիրք Ե, գլ. խգ:

որ գալ էր գնդին (Մերուժանայ) ընդ ճանապարհին լերինք ինչ, որում ի բնակչացն Եղջերք կոչեն: Եւ մինչդեռ գայր Մերուժանն ի ճանապարհի գնդան իւրով, դիպեցան նմա ուղեւորք, յորս հարցանէր Մերուժանն եւ ասէր. «Ճանապարհս ի Բագրաւանդ ընդ ո՞ր երթայ»: Եւ ուղեւորացն տուեալ պատասխանի ասացին. «Ճանապարհ ընդ Եղջերս է»: Եւ մեծապէս խտրեաց Մերուժանն ընդ միտս իւր, տրտմեցաւ ընդ բանսն, սակայն տայր հրաման չարաչար քարշէլ գուղեւորսն եւ ծեծել»³⁴:

Ըստ Ստ. Մալխասյանցի՝ Մերուժանը շփոթվում է և տրտմում ուղևորների տված պատասխանից, որովհետև տեղի *Եղջյուրներ* անունը համարել է ձախորդության գուշակություն, վտանգի սպառնալիք³⁵: Ոչ լրիվ, այդուհանդերձ, ընդունելի մեկնաբանություն է: Շարունակության մեջ, սակայն, նա հեռանում է դրանից՝ ենթադրելով, «որ այս բառը Մերուժանը համարել է գործածված նաև գոեհիկ արտահայտությամբ՝ արհամարհելու և վիրավորելու նպատակով, որի պատճառով և ծեծել է տալիս ուղևորներին»³⁶: Այդ ո՞ր հայ գեղջուկը կարող էր իրեն նման բան թույլ տալ, երբ նրա դիմաց հայ իշխան էր իր հեծյալ գնդով: Անհավատալի է:

Թ. Ավդալբեգյանը մերժում է այն «զավեշտական բացատրությունը», թե Մերուժանին հասկացրել են, որ կինն անհավատարիմ է իրեն³⁷ և առաջարկում է *Եղջերք* լեռնանունը համարել աղճատված ձևը նույն կողմերում հետագայում հիշատակված *Եղբարք* լեռնանվան³⁸: Իբրև թե գեղջուկներն ուզեցել են Մերուժան Արծրունուն հասկացնել, որ «նրա ուղիղ ճանապարհը ոչ թե պարսիկների հետ լինելն է, այլ յուրայինների, հայրենակիցների, հայ եղբայրների հետ լինելն է... - Ճանապարհ ընդ եղբա՛րս է»³⁹: Անհավատալի է, որ IV դ. հայ գեղջուկը XIX-XXդդ. հայ մտավորականին վայել քաղաքական իմաստություն ունենար և ուրացյալ իշխանի խրատատուն դառնար: Կամ այդ իշխանը իրեն ուղղված երկու բառում, ինչպես Թ. Ավդալբեգյանն էր կարծում, ինչո՞ւ պետք է տեսներ թաքնված «քաղաքական խրատ, հանդիմանություն, նախատինք»⁴⁰: Ինչ վերաբերում է *Եղջերք* լեռնանունը *Եղբարք*-ի աղճատումը համարելուն, ապա պետք է հիշել, որ «եղջերավոր» ստուգաբանությամբ լեռնանունները սովորական էին Հայաստանում և դժվար թե ենթարկվեին աղճատման. հմմտ. *Արտին*, *Արտոս* և

³⁴ Փաստոսի Բիզանդացոյ պատմութիւն Հայոց, Բնագիրը Ք. Պատկանյանի, Եր., 1987, գիրք Ե, գլ. խգ:

³⁵ Նույն տեղում, էջ 444, ծան. 215:

³⁶ Նույն տեղում, Ե, խգ:

³⁷ Ավդալբեգյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 133:

³⁸ Նույն տեղում, էջ 134:

³⁹ Նույնը:

⁴⁰ Նույնը:

արտի, արտիկ «վայրի մաքի», Առնու և առն «վայրի խոյ», Պախրայ և պախրայ, պախրե, Մրմանց և սիրամ, Յուլ, Յլու գլուխ և այլն: Եթե ընդունենք, որ Մերուժանի ժամանակ լեռը *Եղբարք* է կոչվել և հետո է աղավաղվելով դարձել *Եղջերք*, ապա անհասկանալի կմնա, թե ինչու «ընդ եղբարս» պատասխանը լսելուց հետո Մերուժան Արծրունին ոչ միայն հրամայել է ծեծել գեղջուկներին, այլև վերահաս փորձանքից խուսափելու հույսով այնուհետև դիմել է հմայության. «Եւ ինքն անցեալ ըստ ուղին՝ իջանէր ի հմայս քաղղէութեան, զբուէս հարցանէր. Եւ ոչ գոյր նմա յաջողակ յուռութ կախարդանացն՝ յոր յուսայրն»⁴¹:

Աս. Մնացականյանը փոքր-ինչ այլ բացատրություն է տալիս իրողությամբ: Նրա բացատրությունը մասամբ ընդունելի է, իսկ մասամբ՝ ոչ: Նա գրում է. «Մենք կարող ենք ասել, որ Մերուժանին «ընդ եղջերս», այսինքն՝ եղջուրների միջից ճանապարհ ցույց տվողները՝ աստվածային պատժի և մահվան սպառնալիք են հիշեցրել, հասկացնելով, որ նա հավատքն ուրանալով բռնել է անխուսափելի մահվան ճանապարհը»⁴²: Այո՛, Մերուժանը մտածել է, որ եթե «ընդ Եղջերս» ճանապարհով գնա, կհանդիպի աստվածային պատժի (բայց ոչ քրիստոնյայի պատկերացրած աստծու պատժին. չէ՞ որ նա ուրացել էր քրիստոնեությունը և դարձել զրադաշտական) և մահվան սպառնալիքի, որովհետև «եղջուրների միջև» արեգակնային լույսի անձնավորում աստծու խորհրդանիշն էր, իսկ այդ աստվածը Բագրևանդի պահապան աստվածն էր, գավառը ձոնված էր նրան և հանուն նրա կոչվում էր *Բագ-րեւ-անդ* «աստված արևի տեղ, վայր»⁴³. - *անդ* տեղանվանակերտ վերջածանցի համար հմմտ. *Եռանդ, Հաբանդ, Մարանդ* և այլն, իսկ **րեւ//արեւ* <հ.-ե. **rey*⁴⁴: Ինչ վերաբերում է ուղևորների «հիշեցմանը», թե Մերուժանը «հավատքն ուրանալով բռնել է անխուսափելի մահվան ճանապարհը», ապա նման բան տեղի ունենալ չէր կարող: Ի՞նչ է, գեղջուկները ճանաչո՞ւմ էին Մերուժանին և գիտեին նրա ուրացության մասին: Դժվար թե: Նրանց դիմաց զինված հեծյալ գնդի հրամանատար իշխան էր, որի տված հարցին նրանք չէին հանդգնի այլաբանորեն պատասխանել: Նրանք տրված հարցին ուղիղ պատասխան են տվել. Բագրևանդ տանող ճանապարհն «ընդ Եղջերս» է: Մերուժան Արծրունին ինքն է այլաբանություն համարել այն, հավանաբար վերոբերյալ հեքիաթների անհավատարիմ չար կանանց՝ այժի եղջուրների միջև հարվածողների վախճանը հիշեցնող ինչ-որ բան երևակայելով:

⁴¹ Բուզանդ, Ե, խգ:

⁴² Մնացականյան Ա., Դիցաբանական եղջերուն միջնադարյան հայ արվեստում, էջ 20:

⁴³ Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 101-103:

⁴⁴ ՀԱԲ, հ. I, էջ 310-311:

2. Երկվորյակ աստվածությունների նախատիպերի մասին

Ո՞ւմ էին նախապես խորհրդանշում Երկվորյակներ համաստեղության զույգ պայծառ աստղերը: Կարծում ենք, թե ոչ երկվորյակ մարդակերպ աստվածությունների, որովհետև *Կենդանակերպ* (հուն. Ζωδιακός «գազանային») կոչված համաստեղությունների շրջանակում մարդակերպ երկվորյակների առկայությունը ի սկզբանե բացառված էր: Այդ զույգ աստղերը նախապես չէին կարող խորհրդանշել նաև պաշտելի երկվորյակ ցլիկներ կամ մտրուկներ, որովհետև կովն ու զամբիկը երկվորյակներ չեն ծնում, դրանք միաձին են: Ուրեմն, դրանք՝ այդ զույգ աստղերը, կարող էին խորհրդանշել մայր այծի ծնած երկվորյակ ուլերին: Մարդը ևս երկվորյակներ է ծնում, բայց որպես բացառություն: Մեր կարծիքով, այդպիսի դեպքերն են առիթ տվել, որ մեր հեռավոր նախնիների մտապատկերում զուգադրվեն «մայր այծ» / «կին» հասկացությունները: Սրա հետքերը պահպանված են ինչպես մեր մի շարք հեքիաթներում առկա լքված նորածինն այծի (այծյամի, եղնիկի) կողմից սնելու դրվագում, այնպես էլ *Հծե* բառում: Այս բարբառային բառը «մեծ մայր, մամ, տատ» է նշանակում⁴⁵ և, անշուշտ, ծագում է նույնպես բարբառային *Հծ* «այծ» բառից:



նկ. 1ա



նկ. 1բ

Երկվորյակ ուլերի մարդակերպ աստվածությունների փոխակերպման տեսանկյունից ուշագրավ են ժայռապատկերներում դրանց դրսևորումները: Գեղամա լեռների ժայռապատկերներից մեկում (նկ.1ա)⁴⁶ արևն ու ամպրոպը խորհրդանշող երկվորյակները դեռևս այժեր են, բայց Ուղտասարի մի ժայռապատկերում մայր այծի ծնած դրանց համարժեք աստվածություններն արդեն

⁴⁵ ՀԲԲ, հ. II, Եր., 1944, էջ 46:

⁴⁶ **Կարախանյան Գ., Սաֆյան Պ.**, Սյունիքի ժայռապատկերները // «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 4, Ժայռապատկերներ, պրակ 4, Եր., 1970 (Ուղտասար, աղ. 90, նկ 4):

մարդակերպ են (նկ. 1^F)⁴⁷, թեև նրանց ստորին վերջույթների փոխարեն շրջանակներ են պատկերված: Դրանցով ժայռապատկերներ կերտողը կամեցել է ընդգծել նրանց աստվածություններ լինելու հանգամանքը, որովհետև շրջանակը՝ օղակը, ժայռապատկերում խորհրդանշում էր լուսատուներին⁴⁸: Մայր այժից ծնված՝ արևը և ամպրոպը խորհրդանշող էակներ են համարվել նաև առասպելաբանական (ոչ պատմական) Երվազն ու Երվանդը: Ըստ Մովսես Խորենացու՝ «Կին ոմն յազգէ Արշակունեաց, անձամբ հարստի և խոշորագեղ, վարար... ծնանի երկուս մանկունս յանկարգ խառնակութենէ՝ որպէս Պարսիփայէ զՄինոտավրոս: Եւ ի զարգանալ մանկանցն կոչեն անուանս Երուանդ և Երուազ»⁴⁹: Պասիփայեի և Մինոտավրոսի հիշատակումից բխեցվել է այն կարծիքը, թե այս երկվորյակների մայրը ցուլից է ունեցել իր զավակներին: Բայց Խորենացին նրանց հիշատակում է որպէս «խառնակության» օրինակ: Եթե նրանք զույգ ծնունդ են, ուրեմն, նրանց հայրը ցուլ լինել չէր կարող, այլ միայն արու այծ: Իսկ քանի որ նրանք «ամպրոպային» և «արևային» երկվորյակներ են⁵⁰, ուրեմն նաև «այծային» էին ըմբռնվելու (հմմտ. վաղ -h.-ե. DY արմատի այդ նույն իմաստները):

Նախնադարից եկած արցախյան հեքիաթներից մեկի համաձայն՝ Լույս ու Մութ աշխարհների սահմանագլխին «մին ախպուր կա, մին սև էծ, մինգյել մին սիպտակ էծ միշտ կյամ ըն էտ ըխպըրան ճուր խմում»⁵¹: Սև այծը Մութ աշխարհի և խավար-ամպրոպային, իսկ սպիտակ այծը՝ Լույս աշխարհի և լուսավորարևային երևույթների մարմնավորումներն են⁵²: Հնդեվրոպական ժողովուրդների առասպելներում առկա երկու կամակոր (հաճախ՝ սպիտակ և սև) այծերի նեղ կամրջի (զերանի) վրա բախման մեջ մտնելու մոտիվը սերտ առնչություն ունի հակոտնյա երկվորյակների պայքարը նկարագրող առասպելների, ավանդազրույցների, վիպական ստեղծագործությունների հետ: Ավելի ուշ դրանց փոխարինում են հակոտնյա նախնիներ, հակամարտ աստվածություններ և այլն: Անվանի հնդեվրոպաբան Ժ. Դյումեզիլը նշում էր, որ հնդեվրոպական ժողո-

⁴⁷ Լիսիցյան Ս., [Գեղամա լեռների ժայռապատկերներից], Գերմաներենից թարգմանեց Գ. Տիրացյան // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, թիվ 1, էջ 53:

⁴⁸ Մարտիրոսյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 11, Եր., 1981, էջ 78:

⁴⁹ Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, Եր., 1981, գիրք Բ, գլ. 1է:

⁵⁰ Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 37, 43-45, 64-66, 333-337:

⁵¹ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. VII, Եր., 1979, էջ 13:

⁵² Պետրոսյան Ս., Երկզույն-երկհարկ տիեզերքի առասպելաբանական պատկերացումը Հայկական լեռնաշխարհում // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, թիվ 2, էջ 126-131:

վուրդների առասպելներից հայտնի Աստծու և չարքերի մարտը արտացոլում է առասպելաբանված երկնային-ամպրոպային երևույթները⁵³:

Երկվորյակները հակոտնյա էին համարվում նաև նրանով, որ անձնավորումներն են համարվում օրվա և գիշերվա, լույսի և խավարի, արևոտ և ամպամած երկնքի և այլն: Ըստ երևույթին, հնդեվրոպացիների հեռավոր անցյալում, դրանցից մեկը անձնավորում էր «անամպ օր», «լավ օր», այսինքն՝ արևոտ օր, իսկ մյուսը՝ «ամպամած օր», «վատ օր», այսինքն՝ անձրևային օր, երևույթներ⁵⁴: Հասկանալի է, որ այդ պատկերացումները կարող էին ձևավորվել վերջին Սառցապատմանը հաջորդած Հալոցքի (մ.թ.ա. X հազարամյակից սկսած) պայմաններում: Այդպիսով, հնդեվրոպացիների ձևավորվող դիցարանն ունեցավ իր առաջատար գույգը: Նրա առաջին անդամը համատեղում էր այս գործառույթները.

ա. Գերագույն աստվածություն,

բ. Անամպ երկնքի և Արևի աստվածություն,

գ. Քրմական գործառույթներն իրականացնող աստվածություն,

դ. Պտղաբերության հովանավոր աստվածություն:

Հնագույն հնդեվրոպացիների գլխավոր դիցական գույգի երկրորդ անդամը համատեղում էր հետևյալ գործառույթները.

ա. ոչ գերագույն աստվածություն,

բ. երկնամերձ ամպրոպային ժայռի և կայծակի աստվածություն,

գ. ռազմական գործառույթներ իրականացնող և զինվորական դասի հետ համադրվող աստվածություն,

դ. պտղաբերության հովանավոր աստվածություն⁵⁵:

3. Միեղջյուրի առասպելաբանական կերպարի երկնային և երկրային նախատիպերի մասին

Միեղջյուրի առասպելաբանական կերպարը ձևավորվել է շատ հազարամյակներ առաջ խոտաճարակ կենդանու կամարածն եղջյուրի և լուսեղեն ծիածանի մտացի գուգադրման և համադրման հետևանքով: Ըստ երևույթին, այս դեպքում իր դերն է ունեցել նաև այն հանգամանքը, որ ծիածանը երբեմն կրկնակի կամար է կապում, դրանով իսկ նմանվելով արու քարայծի գույգ եղջյուրներին: Կրկնակի ծիածանի և քարայծի կամարածն եղջյուրների համադրման հիմքում եղել է նաև առասպելաբանական այն պատկերացումը, թե ծիածանը կամուրջ է տիեզերքի երեք գոտիների՝ Երկնքի, Երկրի և ընդերքի

⁵³ Dumézil G. Legendes sur les Nartes, suivies de cinq notes mythologiques, «Institut d'Études Slaves», Paris, 1930, p. 180.


⁵⁴ Гамкрелидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., հ. II, էջ 793:

⁵⁵ Նույն տեղում:

միջև: Ժայռապատկերներից մի քանիսը այդ դերում ներկայացնում են հենց քարայծի զույգ եղջյուրները, որոնք պատկերված են միջակա աստիճաններով՝ որպես սանդուղք (նկ.2^ա)⁵⁶: Արմատացած այդ պատկերացման հետքերը պահպանված են ժողովրդական հեքիաթներում: Դրանցից մեկում ասվում է. «Ճամփին մի էծ տեհա, պոզերն էնդդար վենձացել են, որ երգնքին դեմ են էլալ, էլ կարում չի գլուխը կռացնել ու խոտ բածել...Էծը չորում, մարդը նրա մեջքն ա ըլում, պոզերովը բծրանում, գնում աստծու կուշտը»⁵⁷:



նկ. 2ա



նկ. 2բ

Ծիածանը հաճախ ոչ թե երկկամար, այլ միակամար է լինում, ուստի միակամար ծիածանի հետ առասպելաբանորեն համադրված կենդանու եղջյուրն էլ մեկն էր լինելու, բայց օժտված երկու եղջյուրի զորությամբ (նկ. 2բ): Քանի որ եղջյուրին առասպելաբանական զորություն էին վերագրում, հասկանալի է, թե ինչու հայ միջնադարյան հանելուկներից մեկում միեղջյուրի վերաբերյալ ասվում է, թե «Առիւծ ու փիղ իւր է գերի»⁵⁸ (հմմտ. նաև «*Հարոս*-միեղջերու. թարգմանի օձահալած») ⁵⁹: Նախնադարյան մարդու համար եղջյուրը, հոգևոր զորությունից (լուսառաք էր) բացի, առօրյա գործածության առարկա էր՝ ճրագ (դատարկված եղջյուրը երբ լցված էր ճարպով և ուներ պատրույզ), չոր սննդամթերքի տարբեր տեսակներ պահելու աման (հմմտ. հունական առասպելի Ամալթեա այծի եղջյուրը՝ «Առատության եղջյուրը»), հեղուկներ ըմպելու անոթ (որից ոգելից ըմպելիքի համար նախատեսված եղջյուրներն ու դրանց մետաղե կրկնակները՝ պոյակները), կախիչ (պատին ամրացնելիս), աշխատանքային

⁵⁶ Կարախանյան Գ., Մաֆյան Պ., նշվ. աշխ., աղ. 127, 303:

⁵⁷ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. VIII, Եր., 1977, էջ 66:

⁵⁸ Մնացականյան Ա., Հայ միջնադարյան հանելուկներ, էջ 284:

⁵⁹ «Բարոգիրք հայոց», էջ 132:

գործիք (լինգ, բրիչ), բայց որ ավելի կարևոր էր՝ խոցող զենք (թուր) և զենքի մաս (աղեղ):

Ժողովրդական վերոհիշյալ հեքիաթներից մեկում հանդիպող այժի «պոզերն էլ հենց ար լիա կրեո-կրեո թորը»⁶⁰ որակումը շատ ավելի հեռվից եկած համադրման իրական հենքի մասին է խոսում, քան կարող է առաջին հայացքից թվալ: Թուրն ընդհանրապես ընկալվում է թե՛ խոցող և թե՛ կտրող զենք: Նախապես, սակայն, այն եղել է միայն խոցող զենք՝ «որ է ծակելու գործիք, սուր»⁶¹: Այս իմաստով է այն ընկած նաև *թրթուր* (<*թուր-թուր) բառի հիմքում՝ այդպես կոչված, «բույսերի տերևները ուտելով ծակծկելու պատճառով»⁶²: Ըստ այսմ, *թուր* բառի հիմքում ընկած հ.-ե *tōr-արմատի «մաշեցնել, ծակել» իմաստներից⁶³ նախնականը լինելու է «ծակել»-ը՝ որպես եղջյուրին բնորոշ հատկություն:

Նախապես քարայծի եղջյուրներից էր պատրաստվում նաև նետուաղեղ զենքի նետող մասը՝ աղեղը: Դրա վերաբերյալ հստակ վկայություն ենք գտնում «Իլիական»-ում: Ըստ Հոմերոսի՝ Իլիական պատերազմի վերսկսումը տեղի է ունենում այն բանից հետո, երբ Աթենաս դիցուհին տրոյացի Պանդարոսին համոզում է դուրս գալ հույն Մենելաոսի դեմ: Եվ «Հանեց իսկույն նա աղեղն իր ողորկաշեն. կերտված էր դա եղջյուրներից ժիր այծյամի...Այդ այծյամի գլխից ելնող եղջյուրների երկարությունը տասանվեց թիզ էր ուղիղ»⁶⁴: Աղեղ զենքը եղջյուրե լինելու վերհուշը Հայաստանում պահպանվում էր անգամ Միջին դարերում: Դրա արձագանքն ենք գտնում միջնադարյան հետևյալ հանելուկում.«Յորժամ գկովն քաշէին /Յորթըն լիներ խիստ դիրածին,/ Բայց նա չուտեր զիր մոր ստին, /Փութով երթայր յարեան տեղին»⁶⁵: Հանելուկն ակնկալում է «աղեղ» պատասխանը (ավելի ճիշտը կլիներ՝ «աղեղ և նետ»), որտեղ աղեղը այլաբանորեն «կով»/«խոշոր եղջերավոր կենդանի» է դարձել, իսկ նրանից արձակված նետը՝ «կովի հորթ»:

⁶⁰ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. V, էջ 144:

⁶¹ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 214:

⁶² Նույնը:

⁶³ Նույն տեղում:

⁶⁴ **Հոմերոս**, Իլիական, IV, 105-109 (հին հունարեն բնագրից թարգմանեց Հ. Համբարձումյանը), Եր., 1955, էջ 92:

⁶⁵ **Մնացականյան Ա.**, Հայ միջնադարյան հանելուկներ, էջ 309-310: Միայն նշվածներով չէին սահմանափակվում եղջյուրի կիրառության ոլորտները: Բնչպես Է. Խանգաղյանն էր նշում, մեր նախնիները «Վայրի այծերի և եղջերուների եղջյուրներից պատրաստում էին աշխատանքային զանազան գործիքներ և զենքեր: Եղջյուրներից պատրաստված գործիքներն օգտագործելի են եղել հատկապես երկրագործության մեջ» (**Խանգաղյան Է.**, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Եր., 1967, էջ 43): Ավելացնենք նաև շատ ավելի վաղ ժամանակներից կիրառություն ունեցած քարե մուրճը, որն «ամրացվում էր փայտե, երբեմն էլ եղջյուրե կոթին» (Տե՛ս **Սամուելյան Խ.**, Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, Եր., 1941, էջ 50) և որպես զենք էլ էր կիրառվում:

Հայերենն ունի *արնգել* «աղեղի լարի շառաչելը» և «սրնգի ձայն հանել» իմաստներով բառը⁶⁶: Վերջինը բացահայտում է թե՛ *արնգել* և *սրինգ* «շեփոք, նվագափող» բառերի լեզվաբանական կապը և թե՛ դրանց իմաստաբանական կապի հենքը: Ինչպես նախնական աղեղն է եղել եղջյուրից (դեռևս Մառցապատման ժամանակաշրջանից), այնպես էլ նրանից մարդու պատրաստած առաջին սրինգը՝ ավելի ուշ փոխարինված եղեգով կամ փայտանյութով: Իմաստային զարգացման համար հմմտ. *շեփոք/շեփոքայ* բառի ծագումը սեմական լեզուների «եղջյուր» նշանակող արմատից⁶⁷: Ըստ այսմ, *սրինգ* < *սիր-ինգ (կամ *սէր-ինգ) բառի հիմքում պետք է տեսնել հ.-ե. *ker -«եղջյուր» արմատը, որից ունենք նաև վերոհիշյալ *սիրամ* < *սիր-ամ (կամ *սէր-ամ) բառը:

Ասվեց, որ նախնական աղեղը եղջյուրից է լինում, իսկ հայտնի է նաև, որ աղեղ կոչվել է երկնային այնպիսի մի երևույթ, ինչպիսին ծիածանն է: Աստվածաշնչում կարդում ենք. «Եւ ասէ տէր Աստուած ցՆոյն... *Ջաղեղն* իմ եղից յամպս. եւ եղիցի ի նշանակ Յաւիտենական Ուխտին ընդ Իս եւ ընդ ամենայն Երկիր»⁶⁸: Մեր միջնադարյան հանելուկներից «ծիածան» պատասխանն ակնկալող մեկում ասվում է. «Չանուն *աղեղ* ասեն ի Գրոց/Բայց ինքն վառի որպէս զրոց/, Անճառ փայլուն առնէ գունոց/Եւ հաշտութեան նշան ամպոց»⁶⁹: Մինչև XIX-XX դդ. սահմանագլուխը պահպանված ժողովրդական հավատալիքներում ծիածանը համարվում էր Գաբրիել հրեշտակի, այսինքն՝ Ամպրոպի հեթանոսական աստծու ժառանգորդներից մեկի աղեղը, իսկ կայծակն ու փայլակն էլ համարվում էին նրա նետը և սրի շողքը⁷⁰: Շատ ավելի վաղ, հավանաբար, այդ երևույթները վերաբերել են միեղջյուրին, ավելի ճիշտ՝ նրա միակ եղջյուրին: Միեղջյուրի հայտնի անունը պատճեն-թարգմանությունն է նրա հունարեն *μονόκερος* անվան: Կարծում ենք, թե նրա բուն հայերեն անունը (հետագայում թաքուսցված, ապա՝ Հնդկաստանում ապրած ինչ-որ կենդանու վերագրված) եղել է *գրտապոզ*-ը: Հստակ է, որ սրա վերջնամասը հայերեն *պոզ* «եղջյուր» բառն է, իսկ առաջին մասը՝ *գրտ*-, պետք է լինի *գիրթ* «միանգամից, հանկարծ» արմատի⁷¹ շեշտափոխված ձևը. **գիրթ-ա-պոզ* < *գրտապոզ* (*թ-պ-տ-պ* մասնակի առնմանությամբ): *Գիրթ* արմատն է առկա նաև *գորթոդ* «եղջյուրներով զարնող (ոչխար, խոյ)», *գորթել* «հրել, մշտել, կոնակով զարնել», *գորթահարել* «ջարդել, ջարդուրդուրդ անել», *գորթանալ* «ամեհանալ, կատաղել» բառերում⁷²:

⁶⁶ ՀԲԲ, հ. IV, էջ 279:

⁶⁷ ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 512:

⁶⁸ Աստուածաշունչ, Ծննդոց, Թ, 13-16:

⁶⁹ Մնացականյան Ա., Հայ միջնադարյան հանելուկներ, էջ 368:

⁷⁰ Սրվանձոյանց Գ., Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 77:

⁷¹ ՀԲԲ, հ. I, Եր., 1944, էջ 442:

⁷² ՀԱԲ, հ. I, էջ 605-606, 607:

Առասպելաբանական մտածողությանը ծիածանը համարվել է Ամպրոպի աստծու և Արևի դիցուհու ծնունդը: Հայ ժողովրդական ծիածան պատասխանն ակնկալող հանելուկում ասվում է. «Անձրևը խերն (հայր) ա./Արևը մերն ա./Երկինքը սեյրանատեղն (զբոսատեղ) ա»⁷³: Արևի իգական պատկերացումն ավելի հին է, ուստի հայկական հինավուրց ավանդազրույցներում և հանելուկներում նա համարվում է լուսնի քույրը⁷⁴: Նույնպիսի պատկերացում գոյություն ունեցել է նաև Հայկական լեռնաշխարհի հարևան Փոքր Ասիայում, որտեղ Խեթական թագավորության աստվածային գլխավոր զույգի դերում հանդես էին գալիս Արիննա քաղաքի Արևի դիցուհին և Ամպրոպի աստվածը⁷⁵: Մեր նախնիների պատկերացմամբ՝ ծիածանը ծնվել էր ոչ թե երկնքում, որը պարզապես նրա զբոսատեղին էր, այլ խոր ընդերքում: Այդ պատկերացման արտացոլումն ենք տեսնում հետևյալ հանելուկում. «Անանա՛ (ծիածան) բեզան (զարդարված), չանանա՛ բեզան, որտե՞ղից են գալիս:/-Ծովից են գալիս:/-Բա խի՞ (ինչու) չես թրջված:/-Տակիցն են գալիս»⁷⁶: Եթե նրա կենդանական դրսևորումն է միեղջյուրը, ուրեմն, նա պետք է խոր ընդերքային ուժերի (հրաբուխ, երկրաշարժ, փոթորիկ) նման ահռելի զորությամբ օժտված լիներ:

Գոյություն ունեցող կարծիքի համաձայն՝ Ասիայի և Եվրոպայի հին ժողովուրդների առասպելաբանություններից հայտնի միեղջյուրի վաղ օրինակները ցլակերպ էին, որովհետև մ.թ.ա. III հազարամյակի հնդկական Մոհենջոդարոյի և Հարապպայի կնիքներին նրանք այդպիսին են պատկերված⁷⁷: Ավելի հին են Ուղտասարի ժայռապատկերները (նկ.2^բ)⁷⁸, որոնցում միեղջյուրի դերում արու քարայծերն են: Ավելի ուշ միեղջյուրը համարվել է հեռաբնակ խառնածին մի ամեհի գազան, որին ձեռնաստուն կարող էր դարձնել միայն կույս աղջիկը⁷⁹: Աս. Մնացականյանը նշում է, որ միեղջյուրը «ոչ միայն հզոր ու երևակայական գազան է, այլև դիցաբանական կույսերի հոմանին, եղնիկների ու կիստարների անբաժան ընկերը և ցեղակիցը: Գլխավորը մեզ համար նրա արական, բեղմնա-

⁷³ Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 16:

⁷⁴ Ղանալանյան Ա., Ավանդապատում, էջ 5-7: Լալայան Ե., նշվ. աշխ., հ. II, էջ 430: Հակոբյան Գ., նշվ. աշխ., էջ 274: Ջվի վերաբերյալ հանելուկներից երեքում եթե ձվի դեղնուցի անձնավորում կերպարը արական սեռի է՝ *Դավիթ, Գափրրյել* (Գաբրիել) է կոչվում, ապա մյուս չորսում իգական սեռի է՝ *խաթուն*, «տիկին», *խարս*, *հատինը* «հարս» է կոչվում (Տե՛ս *Մրվանձտյանց Գ.*, նշվ. աշխ., հ. I, էջ 278: **Հարությունյան Ս.**, նշվ. աշխ., էջ 72, «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը», Գրառումը, բնագրի պատրաստումը և ծանոթագրությունները **Մ. Գրիգորյան-Սպանդարյանի**, Եր., 1971, էջ 404, 411): Իսկ հայտնի է, որ ձվի դեղնուցը իր ձևի և գույնի պատճառով արևի խորհրդանիշերից մեկն էր:

⁷⁵ Герни О. Р. Хетты. М., 1987, стр. 125.

⁷⁶ Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 15-16:

⁷⁷ Иванов В. В. Единорог, «Мифология. Золотой фонд. Энциклопедия», М., 2003, стр. 205-206.

⁷⁸ Կարախանյան Գ., Սաֆյան Պ., նշվ. աշխ., աղ. I (տե՛ս նաև աղ. 20, 31, 32, 108, 114):

⁷⁹ Иванов В. В., նշվ. աշխ., էջ 205-206, ՀԲԲ, հ. III, Եր., 1944, էջ 329:

վորող ուժի ներկայացուցիչ լինելու պարագան է»⁸⁰: Հիշենք, որ կույս աղջկա միջոցով էր Գիլգամեշը հնազանդեցրել մարդացուլ Էնկիդուին: Մեր հավատալիքներում, ըստ երևույթին, հանդես են եկել գերագույն աստվածը և նման մի կույս:

4. Միեղջյուրի կերպարը ժողովրդական հավատալիքներում և ուրարտական կրոնում

Հնազանդեցված վիթխարի միեղջյուրն էր լինելու այն եզր, որ ժողովրդական միտքը համարում էր աշխարհի հենարանը: Ջավախքի հայերը հավատում էին, թե «Հողագունդը... մի կլոր բան է, մի կարմիր եզի եղջյուրին անշարժ կանգնած: Եզի մոտ կա և մի ճանճ, երբ սա... կանգնում է եզան պոչին, եզր շարժում է գլուխը, որից և երկրաշարժ է լինում»⁸¹: Երկրաշարժի և «զետնի տակի» եզան շարժումի միջև կապ էին տեսնում նաև Վարանդա գավառում⁸²: Այս միեղջյուրի հնազանդեցման և երկրազնդի հենարանի դերն ստանձնելու գործում իր դերն ունենալու էր հենց Արևի աստվածը, որովհետև նա էր ամեն երեկո իջնում ընդերք և այնտեղից առավոտյան հաղթական վերադառնում:



նկ. 3

Այս «զետնի տակի» միեղջյուրն է պատկերված ուրարտական ընծայական մի թիթեղի (նկ.3) ստորին ձախ անկյունում (պահվում է Բուդինի մասնավոր հավաքածուում, Ժնև)⁸³: Այստեղ նա գերագույն աստծու գահի պատվանդանն է, ասել է՝ տիեզերքի պատվանդանը, որովհետև այդ գահը համարվում էր տիեզերքի առանցքն ու կենտրոնը: Դեռևս նախնադարում մարդիկ տիեզերքը պատ-

⁸⁰ Մնացականյան Ա., Դիցաբանական եղջերուն միջնադարյան հայ արվեստում, էջ 27, 29:

⁸¹ Լալայան Ե., նշվ. աշխ., հ. I, Եր., 1983, էջ 240:

⁸² Նույն տեղում, հ. II, էջ 176:

⁸³ Barnett R. The hieroglyphic writing of Urartu, «Anatolian Studies presented to H. G. Güterbock», Istanbul, 1974, p. 43-55.

կերացնում էին եռահարկ՝ երկինք, երկիր, ընդերք ամբողջության տեսքով: Եթե տիեզերքի այդ երեք գոտիները մտովի տեղադրենք Բուդինի հավաքածուի բրոնզե թիթեղին, ապա կպարզենք, որ թիթեղի ձախ կողմում պատկերված, գահին բազմած գերագույն աստծու թագակիր գլուխը համապատասխանում է երկնքին, մարմինն ու գահը՝ երկրին, իսկ միեղջյուր պատկերող գահի պատվանդանը՝ ընդերքին⁸⁴: Առաջին տպավորությանը հակառակ՝ գահին բազմած գերագույն աստվածը հողմ-ամպրոպային բնույթի Թեյշեբա աստվածը չէ, որովհետև պատվանդանի ցուլը (եզը) Թեյշեբայի երկեղջյուր ցուլը չէ. մեկ եղջյուր ունի: Գահին բազմածը Արևի աստվածն է, որովհետև իր թագի գագաթնամասին ունի արևի (մեծ օղակը) և նրա զույգ ուղեկիցներ Լուսաբերի ու Գիշերավարի (երկու փոքր օղակները) խորհրդանշանները⁸⁵, իսկ ձեռքին երեք փետուրներ՝ համապատասխան արևի ցերեկային ընթացքի երեք հիմնադիրքերի՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան⁸⁶: Հմնտ. Վարանդայում գրի առնված հավատալիքը. «Երկնքում կա երեք թռչուն: Երբ նրանցից առաջինը ձայն է հանում, բացվում է առավոտը, երկրորդի ձայն հանելիս դառնում է կեսօր, իսկ երբ երրորդ թռչունն է ձայնում, մութը պատում է աշխարհը»⁸⁷:

Արծկեի (Ադիլջևագ) պեղումներից հայտնաբերված մեկ այլ աստծու բեկորային պատկեր Թեյշեբաին են համարել ցուլի վրա կանգնած լինելու պատճառով (նկ. 4^ա)⁸⁸: Սակայն, ճիշտ չէ ցուլը բացառապես Թեյշեբա աստծու խորհրդանիշը համարելը, երբ դեռևս տասնամյակներ առաջ Պ. Կալմայերը ուշադրություն էր հրավիրում այն իրողության վրա, որ ուրարտական պատկերագրության մեջ միևնույն աստվածությունների ֆիգուրները պատկերված են տարբեր կենդանիների վրա, իսկ տարբեր աստվածությունների ֆիգուրները՝ միևնույն կենդանիների վրա⁸⁹: Օրինակ, Վանի շրջանի Անձավ բերդի ավերակներից պեղված ուրարտական վահանի բեկորին ցուլի վրա պատկերված թռչնաթևերի հետ միասին արևի շրջանակը կրող աստվածը լինելու է Արևի աստվածը (ՊՄՄՄ, Տիւնի), իսկ ամպրոպ-կայծակի խորհրդանիշերը զույգ ձեռքերին ունեցող, առյուծի վրա պատկերված աստվածը՝ Ամպրոպի աստվածը (ՊՄՄ, ՊՏեիշեբա)⁹⁰: Ի դեպ, Արծկեի աստծու՝ Թեյշեբան լինելու հանգամանքը բացառ-

⁸⁴ Պետրոսյան Ս., Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 33-34:

⁸⁵ Նույն տեղում, էջ 36:

⁸⁶ Նույն տեղում, էջ 34-35:

⁸⁷ Լալայան Ե., նշվ. աշխ., հ. II, էջ 175:

⁸⁸ Пиотровский Б. Б. Искусство Урарту, Ленинград, 1962, стр. 96-97, рис.61.


⁸⁹ Кальмейер П. Символ Халди, «Древний Восток», 4, Ер., 1983, стр. 182.

⁹⁰ Belli O. The Anzaf Fortresses and Gods of Urartu, Istanbul, 1999, p. 37-47: Նույնի՝ Anzaf kaleleri ve Urartu tavrileri, Istanbul, 1998, էջ 38-50 և նկարը: Հեղինակի կարծիքով, վահանի վրա պատկերված աստվածների շքերթը գլխավորող աստվածը Խալդին է: Բայց վահանի աստվածն իր աչքի ընկնող հատկանիշներով հսկա է, հետիոտն է կռվում, աղեղնավոր է, բոցարձակ է թե՛ ինքը և

վում է նրանով, որ նա ամպրոպային որևէ խորհրդանշան չի կրում, երբ նրա թագի գագաթն ավարտվում է ճիշտ նույն կերպ, ինչ և Բուդինի հավաքածուի ընծայական թիթեղի Արևի աստծու թագի գագաթը՝ մեկ մեծ և երկու փոքր օղակներով: Ճիշտ է, Թեյշեբան ևս ցույի վրա է պատկերվում, բայց երկեղջուր մարտական ցույի: Իսկ Արծկեի աստծու ցույը երկեղջուրը չէ, միեղջուրն է:



նկ. 4ա



նկ. 4բ

Սրա հետ աղերս ունի նաև Արևմտյան Հայաստանից հայտնաբերված ձիու բրոնզե այն ճակատակալը, որ պատկերում է արևի խորհրդանիշ թևավոր մեծ սկավառակը աջ ձեռքով գոտկատեղի շուրջ բռնած, իսկ ձախ ձեռքը օրհնելու համար բարձրացրած մի աստված (նկ. 4բ)⁹¹: Քանի այս աստվածը ևս կանգնած է ցույի վրա, ենթադրել են, որ սա ևս Թեյշեբան է, երբ հստակ երևում է, որ այս ցույը մեկ եղջուր ունի, այսինքն՝ միեղջուրն է: Այս աստվածը քրմական գործառույթներով օժտված աստված է, որովհետև օրհնողի կեցվածքով է պատկերված և անզեն է (Թեյշեբան սովորաբար զինված է պատկերվում): Իսկ քրմական գործառույթներով օժտված լինում էր նախևառաջ Արևի աստվածը: Որ ձիու ճակատակալին պատկերված այս աստվածը Արևի աստվածն է, երևում է նաև հետևյալ հանգամանքներից: 1. Սրա թագը ևս ավարտվում է գագաթին պատկերված երեք օղակներով (արևի՝ մեծը, Լուսաբերի ու Գիշերավարի՝ փոքրերը, խորհրդանշաններով): 2. Սրա հենարան ցույը կանգնած է Կենաց ծառի վրա, որով

թե՛ իր նետը, հիշեցնում է հայության անվանադիր նախահայր Հայկին (Տե՛ս Պետրոսյան Ս., Հայոց մեհենագրության ակունքներում, էջ 10-11, 22-23, 25-26):

⁹¹ Հնայական Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 41-42:

ամենավերևում հայտնվել է ցուլի վրա կանգնած աստվածը, իսկ արվեստի կրոնական գործերից հայտնի է, որ Կենաց ծառից վերև պատկերվում էին միայն արևի խորհրդանշաններն ու Արևի աստվածը: 3. Այս ամենը պատկերված է ձիու ճակատակալին, իսկ ձին ևս Արևի աստծու սրբազան կենդանին էր Ուրարտուում⁹²: Իշպուիի արքայի կանոնակարգած դիցարանում գերագույն աստծու կարգավիճակ ստացած Խալդին հանդես էր գալիս նաև մինչ այդ Արևի աստծուն խորհրդանշող արևի թևավոր սկավառակը գլխավերևին⁹³: Ըստ երևույթին, Արևի աստծու (ՍՄՄՄ, Սիսինի) փոխարեն Խալդին որպես գերագույն աստված հանդես է եկել նաև միեղջյուրին հնագանդեցնողի և նրա տիրոջ դերում:



նկ. 5ա




նկ. 5բ

⁹² Բարայեյան Մ., նշվ. աշխ., էջ 72-73:

⁹³ Հնայակյան Մ., նշվ. աշխ., էջ 21:

Արևմտյան Հայաստանից հայտնաբերված ուրարտական վերոբերյալ բրոնզե ընծայական թիթեղներին (նկ. 5ա, 5բ) պատկերված գահին բազմած աստվածը լինելու է Խալդին: Առաջին թիթեղին պատկերված են նաև դեմքով դեպի նա կանգնած ևս երկու աստվածներ, դեպի նա շարժվող միեղջյուր այծը և նրա արձակած արծիվը: Ամեն ինչ այստեղ երկնային է, որը երևում է շրջապատն զբաղեցրած աստղերի առատությունից: Ընծայական այս բրոնզե թիթեղի լուսանկարը հրապարակվել է «Բրոնզե ընծայական թիթեղ, արծիվ աստծու և ուրիշ աստվածությունների պատկերներով» բացատրությամբ (նկ. 5^ա)⁹⁴: Երկրորդ թիթեղին (նկ. 5^բ) դարձյալ աստվածությունների եռյակ է՝ նույնպես աստղազարդ երկինք պատկերող միջավայրում: Թիթեղը հրապարակվել է «Թեյշեբա աստծու պատկերով բրոնզե ընծայական թիթեղ բացատրությամբ»⁹⁵: Գահին բազմած աստվածը ոչ թե Խալդին է համարվել, այլ Թեյշեբան՝ ըստ երևույթին այն պատճառով, որ նրանից ներքև պատկերված կենդանի արարածը կովի կամ ցուլի պոչ հիշեցնող երկար պոչ ունի՝ ի տարբերություն մյուս երկուսի, որոնք բացահայտ այծեր են: Բայց գահին բազմած աստծուց ներքև պատկերված արարածը, ինչպես նաև նրանից ձախ՝ կենտրոնում պատկերվածը միեղջյուրներ են: Երկեղջյուր է միայն ձախակողմյան այծը: Մեր կարծիքով, սա միեղջյուրների մայրն է, թեպետև ավելի փոքր չափեր ունի, քան կենտրոնի միեղջյուր այծը, բայց թե իր չափերով գրեթե հավասար է աջակողմյան՝ կովակերպ միեղջյուրին:



նկ. 5ա



նկ. 5բ

⁹⁴ Հմայակյան Ս., նշվ. աշխ., էջ 148 և աղ. 29:

⁹⁵ Նույն տեղում, էջ 147 և աղ. 17:

Ուղտասարի մեկ ուրիշ ժայռապատկերում (նկ. 6^ա)⁹⁶ տեսնում ենք իրական՝ երկեղջյուր այծի և նրա երկվորյակ ուլերի պատկերը: Ի տարբերություն իրենց մոր՝ վերջինները դիցաբանված միեղջյուրներ են: Անշուշտ, գոյություն է ունեցել հավատալիք միեղջյուր ուլերի՝ երկեղջյուր մայր այծից ծնվելու վերաբերյալ: Եթե այդպես է, ապա նրանք ևս երկեղջյուր երկվորյակ այծերի նման լինելու էին հակոտնյա և հակամարտ: Այդուհանդերձ, միեղջյուր հակոտնյա երկվորյակների կերպարները այդպես էլ չհասան ծագումնաբանորեն իրենց հետ կապված Արևի և Ամպրոպի աստվածների մակարդակին և մնացին առասպելաբանության ստորին շերտում՝ այնտեղ շարունակելով իրենց հավերժական հակամարտությունը: Դրա վկայությունն է, օրինակ, Երվանդ Լալայանի՝ Վարանդայում գրի առած հետևյալ առասպելը. «...Երկու հրեշ կա, որ կովում են միմյանց հետ սրերով, այս սրերի փայլից առաջանում է փայլակը, միմյանց ընդհարումից՝ կայծակն ու որոտը: Եվ կամ երկու վիթխարի գազաններ միմյանց հետ «դոչի են տալիս»՝ պոզերը միմյանց խփելով կովում են, որոնց պոզերի ընդհարումից առաջանում է կայծակը»⁹⁷: Այս պայքարի պատկերումը կարելի է համարել մեր միջնադարյան ձեռագրերից մեկի խորանագարդը, որը ներկայացնում է երկու միեղջյուր-այծերի հակադիր կողմեր նայող գլուխներ՝ իրար ազուցված եղջյուրներով (նկ. 6^բ)⁹⁸: Այդպիսի միեղջյուր-այծերից մեկը կարող էր պատկերացվել սպիտակ և բարի, իսկ մյուսը սև և չար, որովհետև վերոհիշյալ արցախյան հեքիաթը ցույց է տալիս, որ հայոց հնագույն հավատալիքներում Մութ և Լույս աշխարհների խորհրդանիշ կենդանիները եղել են «մին սև էծ, մինգլել մին սիպտակ էծ»⁹⁹:



նկ. 7

⁹⁶ Կարախանյան Գ., Մաֆյան Պ., նշվ. աշխ., աղ. 114, նկ. 5:

⁹⁷ Լալայան Ե., նշվ. աշխ., հ. II, էջ 176:

⁹⁸ Մնացականյան Ա., Դիցաբանական եղջերուն միջնադարյան հայ արվեստում, էջ 26, 28, նկ. 7:

⁹⁹ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. VII, էջ 13:

Չար, գազանացած միեղջյուր է պատկերված Սյունիքի Ուղտասարի ժայռապատկերներից մեկում (նկ.7)¹⁰⁰: Մա ունի գիշատիչ գազաններին բնորոշ մռուր, վերջույթներ և պոչ, բայց նաև գազաթից ելած հսկայական եղջյուր: Նա պատկերված է *երեք ընձառյուծների, երեք քարայծերի և յոթ կարճ* (ձեռքով նետվող) *նիզակների* միջավայրում: Նիզակներից յոթերորդը մխրձված է միեղջյուրի մարմնի մեջ՝ ողնաշարի կողմից: «3»-ը և «7»-ը խորհրդանշային թվեր են: Մրանցից առաջինը սերտ կապի մեջ է նաև արևի¹⁰¹, իսկ երկրորդը նաև ծիածանի պաշտամունքի (հիշենք ծիածանի յոթ գույները) հետ: Չար միեղջյուրին մահացու վիրավորած աստվածը թեև ժայռապատկերում չի երևում (ըմբռնվել է աներևո՞ւյթ կերպով ներկա), բայց կասկած չկա, որ նա եղել է բարձրակարգ որսորդ աստվածություն: Այլ կերպ նա չէր կարողանա երեք քարայծերին պաշտպանել գազանացած միեղջյուրից և նրա պես չար երեք ընձառյուծներից: Նա ոչ միայն պաշտպանել է նրանց, այլև հաղթել է չար միեղջյուրին՝ մահացու վիրավորելով նրան: Ըստ այդմ, առասպելական նիզակավորն ըմբռնվելու էր մարդակերպ և բարի մի աստվածություն:

Եզրահանգում. Քննարկման ու վերլուծության առարկա ամբողջ նյութը՝ ժայռապատկերներից սկսած մինչև ազգագրականը, ցույց է տալիս, որ մեր նախնիների առասպելաբանական պատկերացումներում եղջյուրի լուսավոր-լուսառաք հատկությունը սերտ կապի մեջ է դիտվել լեռնագազաթներին վերագրված նույնպիսի հատկանիշների հետ: Դրան նպաստող հանգամանքներն էին.

1. Հայոց լեռների բարձունքները քարայծերի (բեզոարյան այծ) բնակատեղիներն էին:
2. Լեռները առասպելաբանական մտածողությամբ դիտվել են քարացած եղջերավոր կենդանիներ, իսկ նրանց գազաթները՝ եղջյուրներ:
3. Լուսաբացին առաջինը լուսավորվող լեռնագազաթներն ու քարափի կատարին «արձանացած» արու քարայծի եղջյուրները համարվել են լուսավոր-լուսառաք օբյեկտներ:
4. Հայկական քարայծի (բեզոարյան այծ) 130 սմ-անոց եղջյուրն է, որ առասպելաբանորեն զուգորդվել-համադրվել է ծիածանի հետ:
5. Միեղջյուրի առասպելաբանական կերպարի ձևավորման օջախներից մեկը գտնվել է Հայկական լեռնաշխարհում, իսկ նրա ամենավաղ նախատիպը այծ-միեղջյուրն է:

¹⁰⁰ Կարախանյան Գ., Մաֆյան Պ., նշվ. աշխ., աղ. 32, նկ. 2:

¹⁰¹ Պետրոսյան Ս., «Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ// «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, թիվ 4, էջ 78-88:

О МИФОЛОГИЧЕСКОМ РОГЕ И ЕДИНОРОГЕ

Петросян С. Г.

Ключевые слова: *пиктограмма, сказка, безоаровый козел, созвездие, свет, мифология, каменный век, индоевропейский, корень.*

Многие знают легенду о священном свете над горой Арагац. О древних корнях легенды гласит имя древнеармянского гавара Ниг, который занимал северо-восточные склоны горы и его предгорья. Основа этого имени слово ниг в грабаре имела два основных значения: «рычаг для перемещения тяжелых предметов, лом» и «стержневидный или бревновидный свет, который виден в облаках». Это слово считается возникшим от индоевропейского корня обозначающим «опираться», «кривить, згибать, наклонять». Конечно, обычный лом не мог ассоциироваться с небесным светом, но этомо быть ломообразный такой объект, которого мифологическое мышление наших предков считало светопересылающим, светоотражающим.

Это был изогнутый длинный рог туземного горного козла (безоаровый козел) Армянского нагорья. Это и должно быть первым ломом наших предков каменного века. В их воображениях наши горы воспринимались окаменевшими рогатыми животными. На рассвете сначала освещались горы и роги вожаков горных коз стоящих на макушке скал. Было впечатление, что свет распространяется от их рогов. Соответственно, в мышлении наших предков произошло ассоциирование мифологических понятий вершина горы-рог-свет.

В насколько раннем периоде это происходило, показывают слова происходящие из индоевропейского корня DY, которые в родственных языках обозначают и «козел», и «свет», «бог», «небо». В пиктограммах Армении полны изображения горных коз, среди которых есть и мифологические козлы. В данном случае в центре нашего внимания те изображения, которые служили прототипом для мифологического единорога. Про единорога, который характерен как армянской мифологии, так и европейской, А. Мнацаканян пишет, что самые распространенные виды связаны с оленем или с козлом, что единорог не только могучий и фантастический зверь, но и возлюбленный мифологический дев. Единороги, встречающиеся в искусстве Урарту, скорее всего изображают зооморфное проявление бога Халди.

ABOUT THE MYTHOLOGICAL HORN AND THE UNICORN

Petrosyan S. G.

Key words: *rock image, fairy tale, horn, bezoar goat, constellation, light, mythology, stone-age, Indo-European, root.*

The legend of holy light hanging above Aragats is widely known. The legend's ancient roots are stated by Old Armenian state Nig, which occupied northeastern slopes

of the mountain and its foothill. The stem of the word “Nig” in Grabar had two main meanings "lever for transfer the heavy subjects, crowbar" and "a light seen in the clouds having form of kernel or beam". This word is considered to have been originated from Indo-European root meaning "to lean", "to twist, to bend, to tilt". Certainly, average crowbar cannot be associated with heavenly light, but it could have been an crowbar-like object, which the mythological mindset of our ancestors presumed to be light-reflecting. It was a long curved horn of aboriginal goat (bezoar goat) of Armenian highland. It should have been the first crowbar of our Stone Age ancestors. In their imagination our mountains were perceived as petrified horned animals. During sunrise first to be illuminated were the mountains and the horns of montane bellwethers standing on the mountain peaks. It gave an impression of light flow from their horns. Accordingly, in our ancestor's mindset took place a processing of mythological mountains-horn-light association.

To note how far period did it take we can observe words originating from Indo-European stem DY meaning "goat", and "light", "god", "heaven". In Armenian pictographs there are many images of jaal goats, among which also mythological ones. In this case we observe images serving as prototypes for mythological unicorn. About the unicorn which is typical both for Armenian and European culture, A. Mnatsakanyan states, that they are related to a deer or a goat, and that unicorn is not only mighty and fantastic creature, but also a mythological virgins' lover. Unicorns found in art of Urartu, most likely are images of zoomorphic manifestation of god Haldi.

References

1. **Ac'ar'yan H.** Hayeren armatakan bararan, h. I-IV, Yerevan, 1971-1979 (**In Armenian**).
2. **Andreyev N. D.** Ranne-indojeuropejskij prajazyk, Leningrad, 1986 (**In Russian**).
3. Astuacash'unch', C'ndoc, T', 13-16 (**In Armenian**).
4. **Avdalbegyan T'.** Hayagitakan hetazotut'yunner, Yerevan, 1969 (**In Armenian**).
5. «Bar'girq hayoc», Qnnakan bnagirə, ar'ajabanə yev c'anot'agrut'yunnerə H. Amalyani, Yerevan, 1975 (**In Armenian**).
6. **Bertel's Ye.E.** Istorija persidsko-tadzhikskoj literatury, M., 1960, str. 215 pr.61 (**In Russian**).
7. **Devejyan S.** Loru berdi qrmı dambaranə, «Patma-banasirakan handes», 1986, 3 (**In Armenian**).
8. **Gamkrelidze T.V., Ivanov V. V.** Indojeuropejskij jazyk i indojeuropejey, t.II., Tbilisi, 1984 (**In Russian**).
9. **Gerni O. R.** Xetty, Moskva, 1987 (**In Russian**).
10. **Gh'analanyan A.** Avandapatum, Yerevan, 1969 (**In Armenian**).
11. **Grigor Narekaci Tagh'er,** Yerevan, 1972 (**In Armenian**).

12. **Grigoryan R.** Hay zh'ogh'ovrdakan ororocayin yev mankakan yerger, Yerevan, 1970 **(In Armenian)**.
13. **Hakobyan G.** Nerqin Baseni azgagrut'yunə yev' banahyusut'yunə, Yerevan, 1974 **(In Armenian)**.
14. **Harut'yunyan S.** Hay zh'ogh'ovrdakan hanelukner, Yerevan, 1965 **(In Armenian)**.
15. «Hay zh'ogh'ovrdakan heqiat'ner», h. I., Yerevan, 1959, h. V., Yerevan 1966, h.VII, Yerevan, 1979, h.VIII, Yerevan, 1977 **(In Armenian)**.
16. **Herodotos,** Patmut'yun inə grqic, t'argmanut'yunə Simon Krkyash'aryani, Yerevan, 1986 **(In Armenian)**.
17. **Hmayakyan S.** Vani t'agavorut'yan petakan kronə, Yerevan, 1990 **(In Armenian)**.
18. **Hmeros,** Iliakan (hin hunaren bnagric t'argmanec H. Hambarcumyan), Yerevan, 1955 **(In Armenian)**.
19. **Israyelyan M.** Erebuni berd-qagh'aqi patmut'yun (əst ardz'anagrakan yev hnagitakan tyalneri), Yerevan, 1971 **(In Armenian)**.
20. **Ivanov V.V.** Yedinorog, «Mifologija. Zolotoj fond. Enciklopedija», Moskva, 2003 **(In Russian)**.
21. **Karaxanyan G., Safyan P.** Syuniqi zh'ayr'apatkernerə, «Hayastani hnagitakan hush'ar-dzannerə», 4, Zh'ayr'apatkerner, prak I, Yerevan, 1970 **(In Armenian)**.
22. **Kel'mejer P.** Simvol Xaldi, «Drevnij Vostok», 4, Yerevan, 1983 **(In Russian)**.
23. **Lalayan Ye'.** Ye'rker, h. I., Yerevan, 1983, h. II, Yerevan 1988 **(In Armenian)**.
24. «Ler'nayin Gh'arabagh'i banahyusut'yunə», Grar'umə, bnagri patrastumə yev c'anot'agru-t'yunnerə M. Grigoryan-Spandaryani, Yerevan, 1971 **(In Armenian)**.
25. **Lisicyan S.** [Gegh'ama ler'neri zh'ayr'apatkerneric], «Lraber hasarakakan gitut'yunneri», 1972, tiv 1 **(In Armenian)**.
26. **Malxasyanc S.** Hayeren bacatrakan bar'aran, h. I-IV, Yerevan, 1944-1945 **(In Armenian)**.
27. **Martirosyan H.** Gegh'ama ler'neri zh'ayr'apatkernerə, «Hayastani hnagitakan hush' - ardz'annerə», 11, Yerevan, 1981 **(In Armenian)**.
28. **Melikishvili G.A.** Urartskiye klinoobraznyje nadpisi, Moskva, 1960 **(In Russian)**.
29. **Mnacakanyan A.** Hay mijnadaryan hanelukner (V-XVIII dd.), Yerevan, 1980 **(In Armenian)**.
30. **Mnacakanyan A.** Dicabanakan yegh'jerun mijnadaryan hay arvestum, «Banber Matenadaranani», t'iv 12, Yerevan, 1977 **(In Armenian)**.
31. **Movsisi Xorenacvov** patmut'yun Hayoc, Yerevan, 1981 **(In Armenian)**.
32. **Mur'janov M.** K semanticheskim zakonomernostjam v leksike staroslavjanskogo jazyka (rog" i yego svyazi), «Voprosy jazikoznanija», 1979, №2 **(In Russian)**.
33. **P'avstosi Byuzandacvov** patmut'yun Hayoc, Bnagirə Q. Patkanyani, Yerevan, 1987 **(In Armenian)**.
34. **Persh'ic A. I., Mongajt A. L. Aleksejev V.P.,** Istorija pervobytnogo obsh'estva, Moskva, 1982 **(In Russian)**.
35. **Petrosyan S. G.** Daserə yev er'adasut'yan drsevorumnerə hin Hayastanum, Yerevan, 2006 **(In Armenian)**.

36. **Petrosyan S.G.** Hayoc mehenagrut'yan akunqnerum, Gyumri, 2008 **(In Armenian)**.
37. **Petrosyan S.G.** «Տարայի cegh'amiut'yunə» Haykakan ler'nash'xarhi hyusis-arevel-qum (m.t.'a. VI-V dd), «Lraber hasarakakan gitut'yunneri», 1979, t'iv 12 **(In Armenian)**.
38. **Petrosyan S. G.** Yerkguyn-yerkhark tiezerqi ar'aspelabanakan patkeracumə Haykakan ler'nash'xarhum, «Lraber hasarakakan gitut'yunneri», 1991, tiv 2 **(In Armenian)**.
39. **Piotrovksij B. B.** Iskusstvo Urartu, Leningrad, 1962 **(in Russian)**.
40. **Samuelyan X.** Hin Hayastani kulturani, h. II, Yerevan, 1941 **(In Armenian)**.
41. **Srvandz'tyanc G.** Yerker, h. I, Yerevan, 1978 **(In Armenian)**.
42. **Xanzadyan E.** Haykakan ler'nash'xarhi msh'akuyt'ə m.t.'a. III hazaramyakum, Yerevan, 1967 **(In Armenian)**.

Ընդունվել է՝ 24.02.2020
Գրախոսվել է՝ 15. 04. 2020
Հանձնվել է տպ. 27.05.2020՝

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ vahe1996@mail.ru

ՀՏԴ՝ 93.94

ԽՈՏՈՐՁՈՒՐՑԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐՆ ԱՎԱԶԱԿԱԽՄԲԵՐԻ ԴԵՄ
XIX ԴԱՐԻ II ԿԵՍԻՆ

Արկաղի Ակոպով

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր` *Հյուսեին բեգ, Դուրսուն բեգ, լազեր, մեծավոր, տեր
Կարապետ Չախայյան, Տայք, հայ կաթոլիկներ:*

Ուսումնասիրությունը նվիրված է պատմական Տայք աշխարհի արևմտյան հատվածում՝ Ճորոխ գետի ձախ ափին ընկած Խոտորջուր կոչվող գյուղախմբի՝ օսմանյան կառավարության հովանավորությամբ գործող ավագակախմբերի դեմ պայքարին: Ավագակախմբերը, որոնք Խոտորջուրի դեմ գործել էին դեռևս XVIII դարից սկսած, նոր թափ են հավաքում XIX դարի II կեսին: Միմյանց հաջորդում են Շարիֆօղլի Հյուսեին բեգի, Թույլօղլի Դուրսուն բեգի ավագակախմբերը, որոնց դեմ պայքարում խոտորջուրցիները ստիպված են լինում դիմել ինչպես խորամանկ քայլերի, այնպես էլ բացառիկ անձնագոհության:

Նախաբան. Ճորոխի ձախ ափին գտնվող Խոտորջուր¹ կոչվող գյուղախումբը առաջին անգամ հիշատակվում է XVI դարի սկզբնաղբյուրներում²: XIXդ.

¹ Խոտորջուրի տարածքը մինչև VIII դարը պատկանել է Մամիկոնյաններին, այնուհետև՝ Բագրատունիներին, իսկ XIII-XVI դարերում ընդգրկված է եղել Սամցխեի աթաբեկության կազմի մեջ: Ղ. Բնճիճյանն այսպես է նկարագրում Խոտորջուրը. «Ցրտուի օդոյ սրա ի լեռնային վայրս, գրեթե նման է գաւառին Էրզիռումայ, իսկ ի ձորավայրս առաւել ջերմ է քան գնորայն: Երկիրն լեռնային և ապարածուտ, ունի և ձոր բազում և լերինս հողայինս, յորս բազում աղբերակունք գտանին քաղցր և պատուական ջուրց. այլ և խոտաւէտ արօտս անասնոց. ի տեղիս տեղիս ունի և անտառ

երկրորդ կեսին այն ընդգրկված էր Օսմանյան կայսրության Էրզրումի նահանգի Կիսկիմի (Բերդագրակի) գավառակի մեջ, բաղկացած էր ինը հիմնական գյուղերից՝ Ճիճապաղ, Կրման, Կիսակ, Միջինթաղ, Խնդաձոր, Սունինց, Կախմուխուտ, Վահնա, Քեղուտ-Ցուցուլա և երկու փոքր թաղամասերից՝ Արեզի ու Մասրուտ: Գյուղախմբին էին պատկանում նաև 33 բարեշեն ամառանոցները և 10 ձմեռանոցները³:

Շնորհիվ Խոտորջուրի հայ կաթուղիկ բնակչության՝ Կիսկիմի և հարևան գավառների կրոնափոխ հայերը՝ կեսկեսները, տևական ժամանակ չէին խզում քրիստոնեության հետ հոգևոր կապը և գաղտնի գալիս էին Խոտորջուր՝ ծեսեր կատարելու: Ինչպես խոտորջուրցին էր ասում. «Նրանց մի ոտքը ժամի մեջ էր, մյուսը ջամին (մզկիթ) էր մտել»⁴:

Խոտորջուրի վարչական և հոգևոր ղեկավարները միշտ եղել են ընտրովի և անպայման խոտորջուրցի: Ընդհանուր ժողովը համարվում էր Խոտորջուրի համայնքի գերագույն մարմինը, որտեղ քննության էին առնվում Խոտորջուրի 9 գյուղերին վերաբերող առավել կարևոր հարցերը: Խոտորջուրի կառավարչական գործառույթ իրականացնելու համար ժողովն ընտրում էր մի հոգևորականի, որին անվանում էին «մեծավոր»⁵:

Խոտորջուրի բնակչության թվի վերաբերյալ կան տարբեր վկայություններ: Համաձայն Ղ.Ալիշանի՝ XIX դ. կեսերին գյուղախմբի բնակչության թիվը կազմում էր «400 տունք եւ 2000 կամ անելի ոգիք»⁶: Երեք տասնամյակ անց՝ 1878թ., Գ.Սրվանձտյանի հաղորդմամբ, Խոտորջուրում ընդհանուր առմամբ կար 642 տուն՝ 5650 բնակչով⁷: Իրենց կենցաղով խոտորջուրցիները շատ ավելի բարձր էին կանգնած հարևան գյուղերի բնակիչներից, չնայած այն հանգամանքին, որ Խոտորջուրի հողը հազիվ կբավարարեր 200 տուն բնակչությանը

զանազան ծառոց: Բաց ի Հայոց օտար ազգ ոչ գտանի ի Խոտորջուր...» (Տե՛ս **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս Ա, հ. Ա, Ասիա, Վենետիկ, 1806, էջ 133):

² *ოსმალური ვრცელი და მოკლე დავთრები ტაო-კლარჯეთის შესახებ (XVI-XVIII საუკუნეები)*, *ოსმალური ტექსტი ქართული თარგმანით, შესავლით, მცირე შენიშვნებითა და ფაქსიმილეებით გამოსაცემად მოამზადა პროფ. ნოდარ შენგელიამ*, თბ., 2013, გვ. 308.

³ Տե՛ս **Գևորգյան Թ.**, «Խոտորջուր», Բանբեր Երևանի համալսարանի, 1971, № 3, էջ 205:

⁴ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1407, ց. 1, գ. 24, թ. 4:

⁵ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 22, թ. 1-3: Մեծավորն անպայման պիտի լիներ հոգևորական, քանի որ ոչ մահմեդական ազգային փոքրամասնությունները համարվում էին կրոնական համայնքներ, իսկ կրոնական առաջնորդը՝ նրանց օրինական ներկայացուցիչը: Մեծավորի աշխարհիկ իշխանությունը սահմանափակվում էր միայն «Ժողովայնով» /գյուղերի բնակիչների ընդհանուր ժողով/, իսկ կրոնաեկեղեցական հարցերում՝ Կարնո հայ կաթուղիկների առաջնորդով (Տե՛ս **Գևորգյան Թ.**, նշվ. աշխ., էջ 208):

⁶ **Ալիշան Ղ.**, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1856, էջ 39:

⁷ Տե՛ս **Կոստանդյան Է.**, Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերի վերաբերյալ Գ.Սրվանձտյանի կազմած վիճակագրություններից //«Բանբեր Հայաստանի արխիվների», 1976, № 2, էջ 85:

գյուղական հանգիստ կյանք վարելու համար: Այդ պատճառով գրեթե բոլոր խոտորջուրցի տղամարդիկ, պատանեկությունից սկսած մինչև ծերություն, կյանքի մեծագույն մասն անցկացնում էին պանդխտության մեջ⁸:

Խոտորջուրը նշանակալի դեր է խաղացել նաև հարևան մահմեդական գյուղերի քաղաքական և մշակութային կյանքում: Կիսկիմի գավառի միակ թուրքական դպրոցը կառուցված էր խոտորջուրցիների ծախսերով: Գավառի փաստացի կենտրոն Արսիս խմելու ջուր բերելու համար էլ տեղացի մահմեդականները դիմել էին Խոտորջուրի նյութական օգնությանը⁹:

Խոտորջուրի պատմությանը կարևորագույն մի հատված նվիրված է ավագակախմբերի դեմ մղած համառ պայքարին՝ լի անձնագոհության, նյութական զրկանքների և խիզախության դրվագներով: Այդ պայքարում խոտորջուրցին թեպետ չի ենթարկվել զանգվածային կոտորածների, սակայն հույժ ծանր է եղել նրա համար: Դեռևս XVIII դ. սկսված ավագակախմբի ասպատակությունները շարունակվում են նաև XIX դ. առաջին կեսին: Ծանր պայքարի արդյունքում մեծավոր տեր Կարապետ Ա Չախալյանին հաջողվում է մինչև 1840թ. շոշափելի առավելության հասնել ավագակապետեր Կիսլանչու, Կրճելի, Կարա-դերելի Օնրաշու նկատմամբ և 1840-1860-ական թթ. Խոտորջուրի բնակչության համար բարենպաստ պայմաններ ապահովել¹⁰:

Խոտորջուրի դեմ գործող ավագակախմբերը գլխավորապես կազմված էին լազերից, որոնք, սակայն, այնքան արյունարբու չէին, որքան Արևմտյան Հայաստանի մյուս շրջանները կեղեքող թուրքերը և քրդերը¹¹:

Հունուսցի Հյուսեին բեկի ավագակախումբը

1870-ական թթ. վերջերին՝ Արդուլ Համիդ II-ի գահակալության առաջին իսկ տարիներից սկսած, ակտիվացավ ավագակախմբերի գործունեությունը Խոտորջուրի դեմ: Այդ ժամանակաշրջանում Ճորոխի հովտում սկսեց գործել Շարիֆօղլի Հյուսեին բեգը, որի ավագակախումբը բաղկացած էր ավելի քան հարյուր հիսուն անդամներից՝ մեծամասամբ բանտերից փախած ոճրագործներից և դասալիք զինվորականներից: Ինքը՝ Հյուսեին բեգը, Խոտորջուրի հարավարևմտյան հարևան Հունուտ գյուղից էր¹²:

Հետզհետե Շարիֆօղլու ավագակախումբը կատարյալ չարիք է դառնում Էրզրումի նահանգի Սպերի, Թորթումի և Կիսկիմի գավառների գյուղերի քրիստոնյաների գլխին: Կարինի Մելքիսեդեկ եպիսկոպոսին գրած նամակ-խնդրա-

⁸ «Տեղագրություն Խոտորջուր», Բազմավեպ հանդիսարան, Վենետիկ, 1875, հ. ԼԳ, էջ 334:

⁹ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 24, թ. 3:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 2, գ. 17, թ. 2:

¹¹ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 2, գ. 17, թ. 1:

¹² ՀԱԱ, ֆ. 1407, ց. 2, գ. 17, թ. 4:

գրում խոտորջուրցիները հայտնում են, որ «աւագակները կողոպտել են և վիրաւորել Խանթաձորի տէր Անտօն քահանային և այնուհետև բոլոր ճանապարհները բռնելով, անցնող եկողներին կողոպտում են. մանավանդ սիրում են թալանել Թիֆլիսից եկողներին, որովհետև սոքա շատ փողով են գալիս»¹³: Անհրաժեշտ է փաստել, որ ավագակախումբը չէր խնայում նաև մահմեդականներին: Հյուսէին բեգի ասպատակություններից գերծ չէր մնում նաև իր հայրենի Հունուտ գյուղը, որտեղ իր խմբով հանգստանում էր ավագակային հարձակումներից հետո, ինչպես նաև ձմռան ամիսներին: Վերջապես թալանի մեծ մասը Հունուտում և հունուտցիների միջոցով էր պարտակվում կամ գնում հեռավոր շուկաներում իրացվելու: Հաջող «արշավանքներից» հետո Հյուսէին բեգը սիրում էր անգուսպ խրախճանքներ սարքել Հունուտի անտառներում, անգամ Էրզրումից անառակներ էր բերել տալիս և օրերով անձնատուր լինում վայելքներին¹⁴: Հայտնի կնամուրը 1878 թ. ամռանը որոշում է ավագակային հարձակումը զուգակցել Խոտորջուրում իր գեղեցկությամբ հայտնի խանդաձորցի մի երիտասարդ կնոջ՝ Մարիամի առևանգմամբ: Վերջինիս ամուսինը Ռուսաստանի Ստավրոպոլ քաղաքում հացագործությամբ էր զբաղվում: Ավագակապետն իմանում է, որ գեղեցկուհին տանը մենակ է: Իր մի խումբ հանցակիցների հետ Հյուսէինը օգոստոսի 29-ի գիշերը փորձում է իրականացնել իր շնաբարո ծրագիրը, սակայն երիտասարդ հայուհին, ավագակների համար անսպասելիորեն, դիմադրություն է ցուցաբերում: Ավագակներից երկուսի կացնահար ընկնելուց հետո ավագակապետը ասորճանակով դիմահար կրակում և սպանում է Մարիամին¹⁵: Այս ամենից հետո ավագակախումբը թալանում է Խանդաձորը, այրում ավելի քան 150 տուն՝ զույքով հանդերձ, որից հետո հեռանում Հունուտ¹⁶:

Խոտորջուրցիներն այս հանցագործության մասին Էրզրումում գտնվող մեծավոր տեր Կարապետ Բ Չախալյանին լուր են հասցնում արագոտն ճիճապաղցի Բաղդասար Փիրազյանի միջոցով, որը երկու օրում հասնում է Էրզրում: Մեծավորը, իր հերթին, բողոքում է Կ.Պոլիս: Աբդուլ-Համիդի հրամանով Էրզրումի նահանգապետին տրվում են լայն լիազորություններ ավագակախումբը վնասագերծելու համար: Շատ շուտով Շարիֆօղլին իր հանցակիցների հետ ձերբակալվում է¹⁷: Հյուսէին բեգը իր հրոսակների հետ 101 տարվա ազատա-

¹³ Երիցյան Ա., Մի երես Կարնոյ նորագոյն պատմութիւնից // Փորձ, Տիֆլիս, 1878, N 1, էջ 194:

¹⁴ ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 5:

¹⁵ ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 7-8: Հմմտ. Երիցյան Ա., նշվ. աշխ., էջ 193- 194:

¹⁶ Երիցյան Ա., նշվ. աշխ., էջ 194: Մեքիսեղեկ եպիսկոպոսին ուղղված նամակից իմանում ենք, որ Հյուսէին բեգի խմբի կազմում են եղել նրա եղբայր Խաչիկը, Ռիզեցի Թույլօղլիները, Կարադերելի Օնբաշին իր արբանյակներով: Վերջինս իր ավագակային գործունեությամբ աչքի էր ընկնում դեռևս 1860-ական թթ.:

¹⁷ ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 9:

գրկման է դատապարտվում, սակայն պատիժը կրելու վայր՝ Մինոպ փոխադրվելիս, Բաբերդի մոտակայքում Հյուսեին բեգը իր 14 արբանյակների հետ փախչում է և ամբողջ խմբով դիմում դեպի Հունուտ, որտեղ պահվում էին նրա զենքերի պաշարները և տնտեսության մեծ մասը¹⁸: Կարելի է ենթադրել, որ ավագակապետի ձեռքակալությունը և դատավարությունը լուրջ լավ կազմակերպված բեմադրություն էր, քանի որ փախուստից հետո Հյուսեին բեգը շարունակում է անպատիժ թալանել Ճորոխի ավագանի գյուղերը:

Իմանալով Հյուսեին բեգի փախուստի մասին՝ մեծավորը համոզում է նրանից դժգոհ մահմեդականներին՝ ցուցադրաբար քոչեն՝ ընդհանուր անապահովության և ավագակախմբերի սիստեմատիկ ասպատակությունների հետևանքով այլևս Օսմանյան կայսրությունում մնալու անկարողության պատրվակով: Ընդ որում՝ մահմեդականների վերաբնակեցման համար ընտրվում են Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսական կայսրությանն անցած Օլթիի և Նարիմանի շրջանները: Մեծավորի այս խորամանկ քայլը կատարյալ հաջողություն է ունենում: Տեղական պաշտոնյաները վախենում են բանտից փախած ոճրագործներին այլևս բացահայտ աջակցություն ցուցաբերելուց: Էրզրումի նահանգապետի ներկայացուցիչների հետ ունեցած զրույցից հետո Շարիֆօղլին հակվում է իր գործունեությունը Վանի կամ Բիթլիսի նահանգներ տեղափոխելու: Սակայն քոչելուց առաջ որոշում է մի վերջին անգամ էլ հարձակվել Խոտորչուրի վրա¹⁹:

Մեծավորը, իմանալով Հյուսեինի պլանների մասին, անմիջապես հրավիրում է ընդհանուր ժողով և հանգամանորեն զեկուցում ժողովրդին ավագակապետի ծրագրերի մասին²⁰: Տեսնելով, որ բոլոր օրինական միջոցներն այլևս ի գործու չեն լուծելու Հյուսեին բեգի ավագակախմբի խնդիրը և վերականգնելու անողորմը՝ մեծավորը կաշառում է ավագակապետի մերձավորներին, որոնցից մեկը՝ Չերքեզ օմբաշին, իր ձեռքով կտրում է Հյուսեին բեգի գլուխն ու հանձնում տեղ Կարապետ Բ Չախալյանին²¹:

Այսպիսով, Շարիֆօղլի Հյուսեին բեգի ավագակախմբի դեմ պայքարն ավարտվեց խոտորչուրցիների հաղթանակով և բեգի վնասագերծմամբ: Այն ցույց տվեց, որ հայտնվելով բարդ կացության մեջ և օգնություն չստանալով ավագակներին բացահայտ կամ գաղտնի աջակցող իշխանական վերնախավից՝

¹⁸ ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 14:

¹⁹ ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 15-16:

²⁰ ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 18: Վերոնշյալ ժողովից հետո մի քանի տասնյակ ընտանիք Խոտորչուրից անցնում է Կարսի մարզ և այնտեղ հիմնում Ղարախաչ գյուղը:

²¹ ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 20-21:

խոտորջուրցին կարողացել է արդյունավետ օգտագործել պայքարի այլ ընտրանքային եղանակները:

Թույլօղի Դուրսուն բեգի ավագակախումբը

Հյուսեին բեգի վնասագերծումից հետո չնայած այն հանգամանքին, որ Խոտորջուրը որոշ ժամանակ օգտվում էր հարաբերական խաղաղությունից, այսուհանդերձ ավագակախումբը չէր ցրվել, այլ ղեկավար կազմի մեջ վերադասավորումների գործընթացին զուգահեռ, հայերի հարստահարման նոր ուղիներ էր որոնում: 1880-ական թթ. սկզբին Էրզրումի նահանգի ղեկավարության համաձայնությամբ Հյուսեին բեգի ավագակախմբի գլուխ կանգնեց ազգությամբ լազ ռիզեցի Թույլօղի Դուրսուն բեգը: Վերջինս օրենքից դուրս էր հայտարարված Տրապիզոնում, սակայն Հյուսեին բեգի միջնորդությամբ Էրզրումի վիլայեթի ղեկավարության հովանավորությանն էր արժանացել և իր ելուզակների հետ տեղափոխվել էր Ճորոխի ավազան՝ դառնալով Հյուսեին բեգի արքայակը, իսկ նրա մահից հետո՝ ավագակախմբի պարագլուխը:

Դուրսուն բեգը, «ավանդական եղանակով» ասպատակելով քրիստոնյա և մահմեդական գյուղերը, Խոտորջուրի նկատմամբ սկսում է կիրառել թալանի ուրույն ձև, այն է՝ «վրա ձգած» ապրանքներ պարտադրել: Առաջին անգամ նա իր հետ է բերում 500 նոխազ՝ խոտորջուրցիներին խնդրելով իրար մեջ դրանք բաժանել՝ աշնանը գումարը վճարելու պայմանով, իսկ երկրորդ անգամ՝ ակցիզը չվճարած ծխախոտ է պարտադրում²²: Այս խնդրին լուծում տալու համար խոտորջուրցիները դիմում են Կարին՝ իրենց նշանավոր հայրենակից՝ օսմանյան ֆինանսական բարձրաստիճան պաշտոնյա Գրիգոր Շարանյանին և հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդին: Պատասխանը լինում է՝ «Ի սեր Աստծո, զենքի չդիմել...», քանի որ կաթոլիկ հայության նկատմամբ հանդուրժող Օսմանյան կայսրությունը չի հանդուրժի հայերի զինված ելույթ՝ թեկուզ ավագակների դեմ²³: Նույնը հորդորում են նաև խոտորջուրցիների բարձրաստիճան բարեկամները Կ.Պոլսից²⁴:

Սակայն Դուրսուն բեգը դրանով չի բավարարվում: 1886 թ. նա վերջնագիր է ներկայացնում Խոտորջուրին՝ պահանջելով, որ իրեն ճանաչեն Խոտորջուրի ավատական իշխան և հարևանների նման վճարեն բեգական տուրք՝ դրա դիմաց խոստանալով հաղորդակցության ապահով միջոցներ²⁵: Ակնհայտ է, որ այս առաջարկը բխում էր ոչ միայն ավագակապետի շահերից: Ըստ էության,

²² Տե՛ս Գևորգյան Թ., նշվ. աշխ., էջ 211: Հմմտ. ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 30: Ակցիզը չվճարած ծխախոտի գործածությունն Օսմանյան կայսրությունում խստիվ արգելված էր:

²³ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 31:

²⁴ Տե՛ս Գևորգյան Թ., նշվ. աշխ., էջ 211

²⁵ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 32:

այս առաջարկից բխող իրավիճակի՝ այն է Խոտորջուրի կիսանկախ վիճակի վերացման գլխավոր շահառուն էին դառնալու Օսմանյան կայսրությունը և մասնավորապես Էրզրումի նահանգապետը: Դրանով է պայմանավորված նաև այն հանդուրժողականությունը, որը դրսևորվում էր անձամբ Դուրսուն բեգի նկատմամբ: Բացի այդ, Դուրսուն բեգն իր հեռատեսությամբ և դիվանագիտական կարողություններով, ժուժկալությամբ, մաքրակենցաղ և մոլորություններից հեռու կենսակերպով²⁶ վստահելի գործընկեր էր ընկալվում Էրզրումի նահանգի ղեկավարության մոտ:

Դուրսուն բեգի պահանջին պատասխանելու համար Խոտորջուրի թաղերի ընդհանուր ժողով է գումարվում, որը որոշում է մերժել ավագակապետի պահանջը: Հասկանալի էր, որ Դուրսուն բեգը հանգիստ չէր թողնելու գյուղախումբը, ուստի որոշվում է դիմադրություն կազմակերպել: Խոտորջուրում կովի ժամանակ բոլոր տղամարդիկ, ներառյալ պատանիները, երեք օրվա պաշարով և զենքերով կանգնում են ընդհանուր հրամանատարի՝ մեծավորի դրոշի տակ: Առաջին հերթին պահակակետեր են դրվում բոլոր կարևոր լեռնանցքներում՝ Սբ Խաչ, Մեծ լեռ, Հողմասարեր, Կարմիր Հովիտ, Ջաֆրանափոս, Երևանող, Ջիաբակ, Սրբերի Վարդանաց գորավարաց մատուռ և այլն: Ուժեղացվում է Ձոր դրան մշտական պահականոցը: Ոտքի են հանվում նաև մեծավորի գաղտնի գործակալները, որոնք օպերատիվ կերպով իրազեկ էին պահում նրան Դուրսուն բեգի նույնիսկ աննշան տեղաշարժերի մասին²⁷:

Դուրսուն բեգի դեմ պատերազմի մասին տեր Կարապետ Չախալյանը հունուսցի Յաֆուգայի միջոցով լուր է ուղարկում Թիֆլիսում գտնվող խոտորջուրցիներին, որոնք Բերդագրակ-Արդահան-Ախալքալաք-Մանգլիս ճանապարհով 5 օրում հասնում են Թիֆլիս: Թիֆլիսի խոտորջուրցի հացագործների «ուստաբաշին», ստանալով նամակը, ժողով է գումարում 300 հացագործների մասնակցությամբ, որոնք հավանություն են տալիս ընդհանուր ժողովի որոշմանը: Չնայած, որ մեծավորի նամակի մեջ հստակ ասվում էր, որ օգնության կարիք չկա, այսուհանդերձ խոտորջուրցի հացթուխներից Քերոբ Ոսկանյանը և մի քանի այլ երիտասարդներ հայտնում են գյուղ վերադառնալու և ինքնապաշտպանությանը մասնակցելու որոշման մասին²⁸:

1886 թ. ամռանը Դուրսուն բեգը սկսում է իր արշավանքը: Նա առաջին հերթին արշավում է Խոտորջուրի անմիջական հարևանների՝ Կարմիրք, Կուդրաշեն, Ծետկունց և Մոխրկուտ գյուղերի վրա, պարտադրում նրանց ընդունել իր իշխանությունը: Պատանդ վերցնելով մի քանի հայտնի ծերունիների՝ նա

²⁶ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 36:

²⁷ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 34-35:

²⁸ Նույնը:

շարժվում է դեպի Խոտորջուր: Տեղեկանալով հայության ինքնապաշտպանական միջոցառումներին և հասկանալով, որ բաց կռվում պարտություն է կրելու, քանի որ Խոտորջուրի մահմեդական հարևաններ Հունգամեքը, Քարեկամուրջը և Իսաձորը հրաժարվել են իրեն աջակցելուց՝ Դուրսուն բեգը դիմում է խորամանկության²⁹: Խորհրդակցելով իր օգնական լազ Աբդուլահ Մամուշօղլիի հետ՝ նրանք որոշում են գաղտագողի սողոսկել մեծավորի տուն, գերել նրա հարազատներին և այդպիսով առավելություն ստանալով՝ նոր միայն բանակցել խոտորջուրցիների հետ: Աբդուլահը պատկերավոր ասում էր. «Պատրաստվում ենք առյուծի բերանից ասամ քաշել»³⁰:

Խոտորջուրի ղեկավարությանը մոլորեցնելու համար Դուրսուն բեգը Աբդուլահի հարազատ եղբորը՝ Սուլթանին, հարևան գյուղերի հայ պատանդների հետ հրամայում է ներկայանալ մեծավոր տեր Կարապետին՝ իբր խնդրելու, որ բոլոր հարցերը լուծվեն բացառապես խաղաղ ճանապարհով: Ինքը՝ Դուրսուն բեգը, Աբդուլահի և 16 ավագակների հետ դուրս է գալիս Մոխորկուտից և որոշում մտնել Միջին թաղ՝ մեծավորի հայրենի գյուղը: Դուրսունին հայտնի էր, որ մեծավորը գտնվում է Ճիճապաղում, ուստի նրանց հաջողվում է գաղտագողի շարժվել առաջ՝ առանց բացահայտվելու, հասկանալով նաև, որ իր գործողության հաջողությունը կախված է անաղմուկ և աննկատ տեղ հասնելուց: Սակայն մեծավորի տուն չհասած՝ նրա դեմն է կտրում Թիֆլիսից վերադարձած Քերոբ Ոսկանյանը: Բեգը փորձում է Քերոբի հետ գրույցի բռնվել, իսկ ուղեկիցներին հրամայում շրջապատել նրան: Քերոբը կանխում է նրանց ու առաջին իսկ կրակոցով սպանում Դուրսուն բեգին, և ապա անհավասար կռվում ինքն էլ նահատակվում³¹: Այդ միջոցին վրա են հասնում Միջինթաղի պաշտպանական ուժերի մարտիկները³²: Առանց հրամանատարի մնացած ավագակները, օգտվելով մթությունից, փախչում են Մոխորկուտ՝ ավագակապետի դիակը թողնելով Միջինթաղում:

Մեծավորը հրամայում է Դուրսուն բեգի դիակը հանձնել հարազատներին: Երբ ամեն բան խաղաղվում է, Դուրսունի հայրը Աբդուլահ Մամուշօղլիի ուղեկցությամբ գալիս, տեր Կարապետից ստանում է որդու դին, որը տանում և հուղարկավորում է Ռիզեյում³³:

Այսպիսով, Դուրսուն բեգի ավագակախմբի թալանիչ գործունեությունը ևս դադարեցվում է ավագակապետի ֆիզիկական ոչնչացմամբ: Պայքարի այս

²⁹ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 39:

³⁰ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 40:

³¹ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 41-44:

³² Տե՛ս **Գևորգյան Թ.**, նշվ. աշխ., էջ 212:

³³ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 44:

դրվագը ևս ցույց է տալիս, որ հանուն խաղաղության մեծամեծ նյութական զրկանքներ կրելով՝ խոտորջուրցին պատրաստ չէր զոհաբերելու իր ազատությունը և ամեն ինչ կաներ հանուն այդ ազատության պահպանման:

Եզրահանգում. Էրզրումի վերնախավը փորձում է նոր ավազակախմբեր հանել Խոտորջուրի դեմ, սակայն Աբդուլահ Մամուշօղլին, Հյուսեին բեգի արբանյակներից Կակալօղլին և ուրիշ հայտնի ավազակներ մերժում են: Աբդուլահը սերտ բարեկամական հարաբերություններ է հաստատում Խոտորջուրի հետ, դառնում հայերի անդավաճան բարեկամը, իրեն հավատարիմ լազերի գլուխ անցած որոշ վարձատրությամբ ապահովում Ռուսաստան մեկնող խոտորջուրցիների անվտանգությունը: Չնայած լինում էին նաև դեպքեր, երբ լազերից կազմված մանր ավազակախմբեր խանգարում են Խոտորջուրի անդորրը: Մասնավորապես, 1890թ. ապրիլի 22-ին 7 լազ ավազակ պաշարում են Խոտորջուրի Կաղմխուս գյուղի եկեղեցին, սպանում քահանա տեր Պետրոսին, ապա, թալանելով գյուղը, հեռանում Պարխարյան լեռների ուղղությամբ³⁴: Այսուհանդերձ, նշված միջադեպը բացառություն էր, և Դուրսուն բեգի ջախջախումից հետո Խոտորջուրում խաղաղություն էր տիրում: Անգամ 1895-1896թթ. Արհավիրքների օրերին Աբդուլահ Մամուշօղլին և իր ընկերները՝ համշենցի Կոպալօղլիները, զինված ջոկատով գալիս են Խոտորջուր և արգելում Սպերում հավաքված թուրք խուժանին մտնել գյուղախումբ, ինչի շնորհիվ Խոտորջուրը նյութական կորուստներ չի ունենում:

БОРЬБА ХОТОРДЖУРЦЕВ ПРОТИВ РАЗБОЙНИЧЬИХ ГРУПП ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА

Акопов А. А.

Ключевые слова: *Хюсейн бег, Дурсун бег, лазы, староста, Тер Карапет Чахалянц, Тайк, армяне-католики.*

Хоторджур, или Хоторджурская община – группа сел с армяно-католическим населением, которая во второй половине XIX века входила в состав Кискимской казы (округ) Эрзурумского вилайета Османской империи. С согласия Эрзурумского губернатора, в 1878г. против Хоторджура был брошен известный разбойник Шарифогли Хуссейн бек, который терроризировал не только Хоторджурцев, а также население всего Кискимского района. Хоторджурцам никак не удавалось законным путем ликвидировать банду Хуссейн бека. Даже после того,

³⁴ Տե՛ս «Նոր դար», Թիֆլիս, 1890, N 73, էջ 3:

как его арестовали и осудили, армянскому населению не стало легче, так как ему с подельниками удалось сбежать и вновь заняться разбоем и грабежом. Исчерпав все законные пути, хоторджурцы пошли не традиционным путем. Мецавор подкупил одного из ближайших сподвижников Хуссейн бека, который отрубил голову бека и передал Мецавору.

В 1880-х Эрзурумский губернатор против Хоторджура отправил помощника Хуссейн бека - Туйлоглы Дурсун бека. Он нашел новый путь грабежа Хоторджура, принуждая армян покупать у него контрабандные товары – безакцизные сигареты и тп.. В 1886 г. Дурсун бек потребовал у Хоторджура признать его правителем общины. Однако армяне решают начать сопротивление. Дурсун бек решает взять в заложники членов семьи Мецавора, для того чтобы в переговорах с армянами иметь перевес. Однако его план срывается. На пути к дому Мецавора он натывается на члена самообороны Хоторджура – Кероба Восканяна, который застреливает Дурсун бека, после чего сам погибает в неравном бою. Группировка Дурсун бека, лишившись предводителя, оставляет Хоторджур в покое. Эрзурумский губернатор обращается к помощнику Дурсун бека – Абдулле Мамушоглы, чтобы тот возглавил группировку Дурсун бека против Хоторджура, однако Мамушоглы отказывается. Вместо этого он устанавливает дружеские отношения с армянами, всячески поддерживает их своей дружиной состоящей из лазов. Во время резни армян 1895- 1896 гг. Мамушоглы совместно с Копалоглы из Амшена защищает Хоторджур от турецких бандитов.

THE STRUGGLE OF KHOTORJOURIANS AGAINST THE ROBBER GROUPS IN THE SECOND HALF OF THE 19TH CENTURY

Akopov A. A.

Key words: *Hussein Bey, Dursun Bey, the Lazes, metsavor, Ter Karapet Chakhalyants, Tayk, Catholic Armenians.*

Khotorjour, a group of villages with Armenian-Catholic population, in the second half of the 19th century was part of the Kiskim kaza (district) of the Erzurum vilayet of the Ottoman Empire. With the consent of the governor of Erzurum, in 1878 a famous criminal Sharifogli Hussein Bey was thrown against Khotorjour. His group terrorized not only the Armenians, but also the population of the whole Kiskim district. The Khotorjourians could not in any legally way succeed in the liquidating

the Hussein Bey gang. Even after he was arrested and convicted, the Armenian population did not feel any better, since he and his accomplices managed to escape and again get engaged in robbery. Having exhausted all legal ways, Khotorjourian Metsavor bribed one of the closest associates of Hussein Bey, who cut off the head of Hussein Bey and gaved it to Metsavor.

In the 1880s Hussein Bey's assistant Tuylogli Dursun Bey was sent by the Governor of Erzurum against Khotorjour. He found a new way of plundering Armenians, compelling them to buy smuggled goods. In 1886, Dursun Bey demanded that Khotorjour should be recognized as the ruler of the community. However, Armenians make a decision for resisting. Dursun Bey decides to take hostages the members of the family of Metsavor, in order to have an advantage in negotiations with the Armenians. However, his plan fails. On the way to Metsavor's house, he stumbles upon a member of the Khotorjour self-defense - Kerob Voskanyan, who shoots Dursun Bey, after which he dies in an unequal battle. The grouping of Dursun Bey, having lost his leader, leaves Khotorjour alone. The governor of Erzurum appeals to the assistant of Dursun bey, Abdulla Mamushogli, to head the group of Dursun bey against Khotorjour, but Mamushogli refuses. In the place of this, he establishes friendly relations with the Armenians, in every possible way supports them with his team composed of Laz. During the massacre of Armenians in 1895-1896, Mamushogli, together with Kopalogly from Hamshen had protected Khotorjour from Turkish gangs, which were concentrated in the neighboring Ispir and were preparing to invade Khotorjour.

References

1. **Alishan GH.** Teghagir Hayots' metsats', Venetik, 1856 (**In Armenian**).
2. **Gevorgyan T.** Khotorjur, Banber Yerevani hamalsarani, 1971, № 3 (**In Armenian**).
3. Hayastani azgayin arkhiv, f: 1407 (**In Armenian**).
4. **Inchichean Gh.** Ashkharhagrut'iwn ch'orits' masants' ashkharhi, mas A, h. A, Asia, Venetik, 1806 (**In Armenian**).
5. **Kostandyan E.** Arevmtyan Hayastani hayabnak vayreri veraberyal G.Srvandztyani kazmats vicha-kagrut'yunnerits', «Banber Hayastani arkhivneri», 1976, № 2 (**In Armenian**).
6. Nor dar, T'iflis, 1890, N 73 (**In Armenian**).

7. Osmaluri vrtseli da mok'le davtrebi tao-klarjetis shesakheb (XVI-XVIII saukuneebi), osmaluri teksti kartuli targmanit, shesavlit, mtsire shenishvnebita da paksimileebit gamosatsemad moamzada prop'. Nodar Shengeliam, Tb., 2013 (In Georgian).
8. Teghagrut'iun Khotrjroy, Bazmavep handisaran, Venetik, 1875, h. LG (In Armenian).
9. Yerits'yan A. Mi yeres Karnoy noragoyn patmut'iunits', P'ordz, Tp'khis, 1878, N 1 (In Armenian).

Ընդունվել է՝ 18.03.2020

Գրախոսվել է՝ 04. 05. 2020

Հանձնվել է տպ.՝ 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Արկաղի ԱԿՈՂՈՎ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտքարտուղար,
Էլ. հասցե՝ arkadone@mail.ru

ՀՏԴ՝ 93.94

ԴՐՎԱԳՆԵՐ 1918Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. ՇԻՐԱԿԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ¹

Արմեն Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

*Բանալի բառեր՝ դիմադրություն, ինքնապաշտպանություն, Սոգոթի-
լի, Շիրվանջուղ, Սարդարապատ, թուրք, Ալեքսանդրապոլի գավառ,
Պանդուխտ, Սոլլա Գյոկչա, փախստական, մայիս, Ձիթհանքով:*

Հոդվածի շրջանակներում արխիվային նորահայտ վավերագրերի, գիտական գրականության, ժամանակակիցների հուշերի և պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ՝ առանձին ուսումնասիրության առարկա է դարձել թուրք գավթիչների դեմ 1918թ. մայիսին Արևելյան Շիրակի գյուղերում ծավալված դիմադրական պայքարի՝ «Շիրակի գոյամարտի» պատմությունը, ներկայացվել է Սոգոթիլում և հարակից գյուղերում թուրքական կանոնավոր զորքերի ու տեղական մահմեդական խուժանի դեմ ձևավորված ճակատի նշանակությունը, լուսաբանվել են ռազմական գործողությունների ընթացքն ու արդյունքները, արժևորվել է գոյապայքարի նշանակությունը Մայիսյան հերոսամարտերի պատմության մեջ:

Նախաբան. Մայիսյան հերոսամարտերը բախտորոշ նշանակություն ունեցան հայ ժողովրդի կյանքում: Հայկական զորամասերի և աշխարհագրայինների հերոսական պայքարի շնորհիվ ոչ միայն կանխվեց թուրքական սրընթաց գրոհը դեպի Անդրկովկաս, այլև հաստատվեց հայ ժողովրդի գոյատևելու պատմական իրավունքը, նախադրյալներ ստեղծվեցին պետականությունից

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18SH-6A007 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

գուրկ հայությանը վերակերտելու իր պետությունը: Այդ հաղթանակներն արդյունք էին ոչ միայն հայ ժողովրդի արիության և ինքնագոհության, այլև այն ներդաշնակ միաբանության, որ օրհասական պահին հաստատվեց հայության տարբեր հատվածների միջև:

Անցած հարյուրամյակի ընթացքում հայ պատմագիտությունը բազմիցս անդրադարձել է 1918թ. մայիսյան հերոսամարտերի պատմությանը: Հայրենիքում և սփյուռքում հրատարակված տասնյակ հուշագրություններում ու գիտական մենագրություններում լուսաբանվել են ռազմական գործողությունները, ներկայացվել են հերոսամարտերի արդյունքներն ու հետևանքները: Հրապարակի վրա առկա է նաև փաստավավերագրական բնույթի հսկայական տպագիր նյութ: Այդուհանդերձ որոշ հիմնահարցեր, ինչպես օրինակ՝ թուրք զավթիչների դեմ Շիրակի գյուղերում ծավալված դիմադրական պայքարի պատմությունն առայսօր լուրջ ուսումնասիրության ենթարկված չէ: Մինչդեռ Արևելյան Շիրակի և Արագածոտնի միաձուլման հատվածում ձևավորված ճակատը կարևոր իրադարձություն էր Մայիսյան հերոսամարտերի պատմության մեջ:

Դեպքերին հաջորդած ժամանակահատվածում և հատկապես խորհրդային տարիներին Շիրակի գոյամարտի ուսումնասիրությունը դուրս մնաց պատմաբանների ուշադրությունից: Կռիվների անմիջական մասնակիցների վկայությունները գրի չառնվեցին, չուսումնասիրվեցին ու չհրատարակվեցին: Մեկ դար առաջ թույլ տրված սխալն այսօր լրջագույն խնդիրների առաջ է կանգնեցնում ժամանակակից հետազոտողին:

Նպատակ ունենալով էական քայլ կատարելու այս ուղղությամբ՝ արխիվային նորահայտ վավերագրերի, գիտական գրականության և ժամանակակիցների հուշերի համադրմամբ ստորև առանձին ուսումնասիրության առարկա կդարձնենք Շիրակի 1918թ. գոյապայքարի պատմությունը, դրանով իսկ կփորձենք ամբողջացնել Մայիսյան հերոսամարտերի պատմության փառապանծ էջը:

Շիրակի 1918թ. մայիսյան գոյամարտը

1918թ. գարնանն աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռազմաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխվեց ի վնաս հայ ժողովրդի: Խորհրդային Ռուսաստանի՝ պատերազմից դուրս գալուց հետո Անդրկովկասյան սեյմը փորձեց Օսմանյան կայսրության հետ փոխհամաձայնության եզրեր գտնել, սակայն հաջողության չհասավ: Ապրիլի 1-ին վերսկսված թուրք-անդրկովկասյան պատերազմը շուտով վերածվեց թուրքական զորքերի հաղթարշավի: Կարսի ուխտադրուժ հանձնմանը² մայիսի 15-ին հաջորդեց Ալեքսանդրապոլի

² Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, док. 103, с.225:

անակնկալ անկումը³: Թուրքական հարձակումն ուղղակիորեն կազմալուծեց հայկական զորամասերի շարքերը: Ալեքսանդրապոլի ջոկատի հրամանատարի հավաստմամբ՝ քաղաքը հանձնելուց հետո սկսված զանգվածային դասալքության պատճառով ճակատը մնաց բաց⁴:

Գիտակցելով իրենց հաջողության ժամանակավոր բնույթը՝ թուրքերը ձեռնամուխ եղան զինագրավված գավառի հայ ազգաբնակչության ֆիզիկական բնաջնջմանը: Սակայն, արևելահայությունից «ազատվելու» թշնամու մոլուցքը մի շարք բնակավայրերում դիմադրության տարերային պոռթկումներ առաջ բերեց: Ալեքսանդրապոլում ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի հավաստմամբ, Սոգոթլի, Մահմուդջուղ, Շիրվանջուղ և Արթիկ գյուղերում զինված երիտասարդությունն ամրացավ սարերում և դիմադրություն կազմակերպեց⁵: Արևելյան Շիրակի տարբեր գյուղերում կազմակերպած դիմադրության հանդիպելու փաստը վկայում է նաև Կարաբեքիր փաշան: «Ալեքսանդրապոլից դեպի հարավ՝ Շիրվանջուղի ու Մահմուդջուղի շրջաններում,-գրում է նա,-գյուղական բնակչությունը, ոչնչացնելով մեր (թուրքական-Ա.Ն.) պահեստները և սպանելով դրանք հսկող զինվորներին, զենքը ձեռքին անցավ սարերը»⁶:

Ըստ Ալեքսանդրապոլի շրջանի պարետ Մեհմեդ Թեջիրի՝ «թուրքական կանոնավոր զորքերին դիմադրություն ցույց տված գյուղերը պատժվեցին զինվորական օրենքների ամենայն խստությամբ»⁷: Իրականում՝ ավելի քան 50 գյուղեր թալանվեցին ու հիմնահատակ ավերվեցին, դրանց բնակչությունը գերվեց, բռնաբարվեց ու հոշոտվեց⁸: Այդուհանդերձ, դիմադրական մարտերն իրենց հիմնական առաքելությունը կատարեցին. տարբեր հաշվումներով մոտ 100.000 փախստական-գաղթական հնարավորություն ստացավ անվնաս հեռանալու:

Շիրակում դիմադրություն կազմակերպելու նախերգանքը տրվեց Ներքին Թալինում (Դաշտաղեմ) մայիսի 5-ին: 1918թ. փետրվար-ապրիլյան թուրքական հարձակումից հետո մոտ 70.000 տարոնցիներ, միանալով Անդրանիկի Ալեքսանդրապոլ նահանջող ջոկատին, շարժվեցին դեպի Սարդարապատ⁹:

³ **Հարությունյան Ա.**, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Եր., 1984, էջ 171:

⁴ Հայաստանի ազգային արխիվ /այսուհետև՝ ՀԱԱ/, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 19, թ. 19, 44-48:

⁵ ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 38, թ. 85-95:

⁶ **Karabekir Paşa**, Birinci Kafkas kolordusunun 334 senesinde ki harekâti ve meşhudatı hakkında general Harbord riyasetindeki Amerika heyetine takdim edilen rapor süreti, Erzurum, 1335 (1919), s. 9.

⁷ **Մարգսյան Ե.**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918թթ., Եր., 1964, էջ 445:

⁸ Մանրամասն տե՛ս **Հայրապետյան Ա.**, Ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին //ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2018, հ. 21, էջ 113-127:

⁹ **Մինասեան Է.** Մայիսեան հերոսամարտեր. հայերի Հայրենականը//«Ալիք» օրաթերթ, Թեհրան, 2019, 2 յունարի, թիւ 1 (23198), էջ 5:

Երևանի ազգային խորհուրդը որոշեց գաղթականությանը տեղավորել Արագածից Երևան ընկած հատվածում¹⁰: Սակայն Ներքին Թափնի և շրջակա գյուղերի մահմեդական բնակչությունը խոչընդոտեց այդ: Ներքին Թափնի բերդի գրավումն իրագործվեց Փեթարա Մանուկի, Սասունցի Մուշեղի, Մորուք Կարոյի և Չոլոյի գլխավորած սասունցի կամավորականների կողմից: Եռօրյա մարտերում Արագածի փեշերից մինչև Ուջան՝ մոտ 70 կմ, մաքրվեց մահմեդականներից¹¹: Դրանով ոչ միայն լուծվեց տարոնցիների տեղավորման խնդիրը, այլև վերացվեց Երևանի վրա կախված վտանգը, որն ավելի ակնառու էր դարձել Սարդարապատի ու Բաշ-Ապարանի կռիվների ժամանակ:

Հաջորդ քայլը լինելու էր Արևելյան Շիրակում կուտակված գաղթականության տարահանումը: Նախապատրաստական աշխատանքներն այս ուղղությամբ սկսվեցին մայիսի 14-ին՝ այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ հայկական «Այագյազ» զորաջոկատը Ալեքսանդրապոլ-Երևան ճանապարհի Արփաչայի հատվածի պաշտպանությունն ապահովելու փոխարեն թուրքերի գերակշռող ուժերի ճնշման տակ նահանջել է Ղարաբուռուն¹²:

Ականատեսների վկայությամբ՝ այդ օրերին Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից ու Արևելյան Շիրակի գյուղերից մոտ 100.000 գաղթականներ իրենց սայլերով, ունեցվածքով ու անասուններով կուտակվել էին Սոգութլիում (Սառնաղբյուր): Անհրաժեշտ էր կոնկրետ քայլեր ձեռնարկել մարդկանց այդ հսկայական բազմությունը փրկելու համար:

Ինքնապաշտպանության կազմակերպման և գաղթականության տարահանման աշխատանքները գլխավորեցին Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում մարտնչած սառնաղբյուրցի սպաներ Նոյի Սարգիսը (Գեորգիկյան Խաչի կրկնակի շքանշանակիր), Աթաշի Եղիշը, Խչոյի Սերոբը, շարքայիններ՝ Մնելի Սմբատը, Հարութի Մարալովը, Կարոյի Տոնոն, Կարոյի Հարութը, Նոյի Նահապետը, Քոչոյի Թորոսը, Բոչոյի Հարութը, գյուղացիներ՝ Խաչոյի Քերոբը, Շարաֆի Բարսեղը, Նիկոյի Հովսեփը, տեր Գևորգը (քահանա), Քոչոյի Հարութը և Դիլանի Հարութը:

Խորհրդակցությունը կայացավ գյուղի «Հովեյ օղա» կոչված վայրում: Հաշվի առնելով գյուղի աշխարհագրական դիրքը, որ վերին աստիճանի հարմար էր ինքնապաշտպանության համար, որոշվեց Սոգութլի (Սառնաղբյուր)-Մաստարա-Մուսլուխլի (Լանջիկ)-Բողազքեսան (Ձորակապ)-Տաշղալա (Քարաբերդ)-Մոլլա Գյոկչա (Մարալիկ)-Շիրվանջուղ (Լեռնակերտ) գյուղերի շրջանում ստեղծել երեք տեղամասերից բաղկացած 14կմ երկարությամբ պաշտպա-

¹⁰ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակարանները, հ. է. Թեհրան, 1983, էջ 106:

¹¹ Ներսիսյան Ա., Ռուբեն, Եր., 2007, էջ 275:

¹² ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 82, թ. 2:

նական գիծ և ճակատը պահել այնքան ժամանակ, մինչև գաղթականներն ապահով կհեռանային:

Պաշտպանական առաջին տեղամասը ձգվելու էր Գունի բարձունքներից մինչև Շիշթեփե: Այս հատվածի հրամանատարությունը հանձնվեց Նհոյ Սարգսին: Նրան օգնականներ նշանակվեցին Մնեյի Սմբատը, Հարութի Սարալովը, Նհոյի Նահապետը, Սրբեյի Սուկուչը, Նաջրի Սիմիզը, Հենցու Տիգրանը և Ասլանի Քերոբը:

Պաշտպանական երկրորդ տեղամասն ընդգրկում էր Վանքի ձորի երկու բարձրադիր մասերը և ապահովում էր Մուլա Գյոկչա-Սոգութլի ճանապարհի հսկողությունը: Այս հատվածի ղեկավարությունը հանձնվեց Աթաշի Եղիշին: Նրա օգնականներն էին Խաչոյի Քերոբը, Կարոյի Տոնոն, Քոչոյի Թորոսը, Ղուրջուղի Արմենակը, Քոչոյի Հարութը և Սեփանի Շաբոն:

Պաշտպանական երրորդ տեղամասն ընդգրկում էր լեռնանցքից մինչև Տաշղալա ընկած հատվածը: Այս տեղամասի հրամանատարն էր Շարաֆի Բարսեղը, իսկ օգնականներն էին՝ Կարոյի Հարութը, Բղդոյի Հարութը և Դիլանի Սարալովը¹³:

Մշակվեց նաև մարտական գործողությունների ծրագիր. ավելորդ զոհերից խուսափելու համար սոգութլեցիները տարհանվեցին, փոխարենը՝ թշնամուն ապակողմնորոշելու՝ աշխատանքային առօրյայի պատրանք ստեղծելու նպատակով առավել քաջերի մի խումբ (այդ թվում՝ նաև կանայք) մնաց գյուղում: Երբ մայիսի 16-ին թուրքական 13-հոգանոց ջոկատն Ալլա փաշայի զլխավորությամբ մտավ Սոգութլի՝ Հենցու Տիգրանը, Բղդոյի Հարութը և Ասլանի Քերոբը աղ ու հացով դիմավորեցին նրանց և տեղավորեցին՝ հրամանատարին «Հովեյ օթախում», իսկ զինվորներին՝ «Հովեյ օդայում»: Գիշերը սարերից իջած Հարութի Սարալովը, Նհոյի Սարգիսը և Մնեյի Սմբատը թուրքերին կոտորեցին: Նույն ճակատագրին արժանացավ նաև հաջորդ առավոտյան գյուղ մտած թուրքական 40-հոգանոց ջոկատը: Զորահրամանատարի կտրված գլուխը սոգութլեցիները կապեցին ձիու թամբին և ձին քշեցին Մուլա Գյոկչայի ուղղությամբ¹⁴:

Սոգութլեցիների «հանդգնության» մասին լուրը կայծակնային արագությամբ հասավ Ալեքսանդրապոլ: Մայիսի 18-ին թուրքական կանոնավոր զորքը Շիրվանջուղի ուղղությամբ ձեռնարկեց նոր՝ առավել մեծամասշտաբ գրոհ: Այն, ինչ տեղի ունեցավ հաջորդ 4-5 օրերին, վեր է ամեն տեսակի երևակայությունից: Թուրքի նկատմամբ խոր ատելությունը, վրեժխնդրության մոլուցքն ու

¹³ Սարգսյան Խ., Սարգսյան Ա., Սոգութլուի գոյամարտը 1918թ. մայիսի 14-22-ին // 1918թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Եր., 2005, էջ 49-51:

¹⁴ Գևորգյան Ռ., 1918թ. մայիսյան հերոսամարտերի մի նոր էջ // «Հայկական բանակ», Եր., 2003, N 2, էջ 32-33:

թշնամուն նսեմացնելու վճռականությունը տվեցին իրենց արդյունքները: Ամայի սարերում հանդիպելով դիմային հզոր կրակահերթի և կրելով մարդկային մեծ կորուստներ՝ թշնամին խուճապահար փախավ՝ մարտի դաշտում թողնելով մեծ քանակությամբ ռազմավար (նաև թնդանոթ):

«Սոգութլվա պատերազմի» օրերին իրենց եղբայրների ու ամուսինների հետ կողք կողքի կովեցին նաև գյուղի կանայք՝ Ղուրշուղյան Ջեյրանը (Ջեյրո), Սարգսյան Թարգյուրը, Ենոյի Վարսիկը, Հովեյի Նոյեմը, Մալխասի Շուշիկը, Գրիգորյան Նուբարը և այլք: Սառնաղբյուրում հատկապես հպարտությամբ են հիշում վանեցի Նուբարին: Ծնունդով նա Արճեշից էր (1883թ.): Վանի ջարդերի ժամանակ թուրքերը տղամարդկանց լցրել էին մարագներն ու այրել: Հորն ու չորս եղբայրներին կորցրած Նուբարը դիակների տակից գտել էր ծանր վիրավոր ամուսնուն (առաջին ամուսնուն) և կանացի շորեր հագցրած տարել տուն: Մի քանի օր անց թուրքերը հայտնաբերել էին վիրավորին և տան շեմին կտրել գլուխը: Անկոտրում կնոջն այդքանից հետո հաջողվել էր զենք գողանալ ու կովելով հասնել Կարս, որտեղ էլ երկրորդ անգամ ամուսնացել էր Շաբո Եկմալյանի հետ և հաստատվել Սոգութլիում¹⁵:

Դիմադրական մարտերը Սոգութլիում դադարեցին միայն այն բանից հետո, երբ կապավորները գեկուցեցին գաղթականների բարեհաջող Էջմիածին հասնելու մասին: Իրենց պարտքը համարելով կատարած՝ ինքնապաշտպանության մասնակիցները մայիսի 22-ի գիշերը թողեցին դիրքերն ու կազմակերպված նահանջեցին: Սրանցից մոտ 1000 հոգի, ըստ Երևանյան ջոկատի շտաբի պետի տեղակալ Ալեքսանդր Շնեուրի, հետո միացավ Պանդուխտի (Միքայել Սեֆերյան) հեծյալ մշեցիների ջոկատին և շարունակեց հետապնդել թշնամուն¹⁶ (Այդ մասին իր գեկուցագրերում խոսում է նաև գեներալ Մ. Սիլիկյանը)¹⁷:

Սոգութլիից չհեռացան միայն Ավոյի Նիկոլը (12 տ.), Պողոսի Վարազը (10 տ.), Սարգսյան Բարկենը (10 տ.), Պողոսի Նախշունը, Հարեյի Ալեքը և Դիլանի Հարութը: Սրանց պատմելով՝ սարսափած թշնամին գյուղ մտավ միայն երեք օր անց՝ Ադիյամանի (Գառնահովիտ) կողմից:

Ինքնապաշտպանության հաջորդ օջախը Շիրվանջուղն էր (Լեռնակերտ): Դիմադրական մարտերն այստեղ սկսվեցին այն բանից հետո, երբ գյուղ մտած թուրքերը պահանջեցին իրենց հանձնել գեղեցիկ կանանց ու աղջիկներ:

¹⁵ Գևորգյան Ռ., 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերի պատմության մի նոր էջ՝ Սոգութլուի գոյամարտը // 1918թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Եր., 2005, էջ 37:

¹⁶ ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 84, թ. 28, գ. 82, թ. 15-17: Մանասերյան Մ., Հիշողություններ Սարդարապատի հերոսամարտից (1918թ. մայիսի 22-29) // Հայկական բանակ, Եր., 1998, N 2 (16) էջ 91, 95:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 18, թ. 11-12: Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը: 1918 թվականի մայիս, Եր., 1998, էջ 105-106:

րին: Շիրվանջուղցիները հրաժարվեցին հրամանը կատարելուց, իսկ զինված ընդհարման ժամանակ 6 թուրք սպանեցին: Ըմբոստներին պատժելու համար թուրքական հրամանատարությունը պատժիչ զորաջոկատ ուղարկեց, որը, սակայն, կազմակերպված հակահարված ստանալով դիմեց փախուստի¹⁸: Այս դեպքերից անմիջապես հետո շիրվանջուղցի 26 երիտասարդներ՝ զինված «Մոսի» և «Բերդանկա» տեսակի հրացաններով, 19-ամյա Ալեքսանդր Այվազյանի գլխավորությամբ միացան Սոգոթլիի դիմադրության մասնակիցներին: Խրամատներ փորելով Ջոջ-կող բլուրի երկարությամբ՝ նրանք ուժեղ դիմադրություն կազմակերպեցին՝ թշնամուն պատճառելով մարդկային մեծ կորուստներ, ապա սոգոթլեցիների հետ միասին նահանջեցին: Չկարողանալով ճնշել մի խումբ երիտասարդների դիմադրությունը՝ թուրքերը հավաքեցին գյուղում մնացած բնակիչներին (հիմնականում ծերեր, կանայք և երեխաներ)՝ թվով 302 հոգի, և լցնելով մարազը՝ ողջակիզեցին: Այդ ոճրագործությունից փրկվեց միայն 11-ամյա մի երեխա¹⁹:

Կազմակերպված ինքնապաշտպանության վերջին օջախը չորրորդ գավառամասի կենտրոն Մոլլա Գյոկչան էր: Ըստ ժամանակակիցների՝ գյուղ մտած թուրքերն անխնա թալանեցին բոլորին՝ մոտ 40 մարդու քշեցին Էրզրումի ուղղությամբ, տարան անասունների մեծ մասը, խոտի դեզերը, սայլերը, գյուղատնտեսական գործիքներն ու մեղվափեթակները: Այստեղ ևս ընդհարումները սկսվեցին այն բանից հետո, երբ թշնամին պահանջեց իրեն հանձնել զեղեցիկ կանանց ու աղջիկներին: Տանուտեր Ալեք Գևորգյանը (Տերտերանց գերդաստանից) մերժեց այդ պահանջը²⁰: Թուրքերը պաշտոնանկ արեցին նրան և տանուտեր նշանակեցին Կարո Բզնատոսյանին: Ոգևորված սոգոթլեցիների հաջողված ինքնապաշտպանությամբ՝ վերջինս ոչ միայն մերժեց թուրքերին, այլև վճռեց դիմադրություն կազմակերպել: Դաշնակցականներ Առաքել Միմոնյանի և Ադանիկ Աղբալյանի գլխավորությամբ մոլլագոկչեցիներից ու փախստական-կամավորականներից կազմված 50-60 - հոգանոց ջոկատը գյուղի հյուսիսարևելյան կողմում՝ «Գող մաղարա» կոչված հանդամասում, հարձակվեց թշնամու վրա²¹: Չկարողանալով ծնկի բերել գյուղացիներին՝ թուրքերը հրաժարվեցին հետագա գործողություններից:

Դիմադրական այդ մարտերում աչքի ընկան Բոգոյենց Մելիքը, Մեսրոպը, Մերգոն, Աբաջոնց Տիգրանը, Տերտերանց Ալեքը, Վահանը, Չարչոլունց

¹⁸ ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 95, թ. 104:

¹⁹ Գևորգյան Ռ., Ակունք, Եր., 2008, էջ 446-447:

²⁰ Մելիքյան Հ., Մարալիկի հնագույն գերդաստաններից մեկի պատմությունը, Եր., 2006, էջ 115:

²¹ Մելիքյան Հ., 1918 թ. Շիրակի մայիսյան գոյամարտը // 1918 թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Եր., 2005, էջ 56:

Սերգոն ու Հովհաննեսը, Իգնատիոսյան Կարոն, Բոզիկյան Սիրեկանը, Ավդայան Սկրտիչը և ուրիշներ: Տղամարդկանց հետ ուս ուսի տված թշնամու դեմ կռվեցին նաև գյուղի կանայք: Մարալիկում այժմ էլ հպարտությամբ են պատմում, թե ինչպես Բոզիկյան Այվազի կինը՝ Պետոնեց Սիրունը, խեղդեց տունը թալանել ցանկացող թուրք զինվորին²²:

Սոգութլում, Շիրվանջուղում, Մուլա Գյոկչայում և այլուր կազմակերպված դիմադրության հանդիպելուց, ապա Սարդարապատում և Բաշ Ապարանում խայտառակ պարտություն կրելուց հետո թուրքական հրամանատարությունն իր ուշադրությունը սևեռեց Ալեքսանդրապոլի շրջակա գյուղերի վրա և թիկունքն ապահովելու նպատակով ձեռնամուխ եղավ Շիրակի դաշտի հայության բնաջնջմանը:

Թուրքական «Որսորդ» կոչված զորաջոկատը՝ կազմված գերազանցապես տեղի քրդերից ու թաթարներից, հավաքելով Թալին-Մաստարա-Ադիյաման-Փիրթիքյան-Մուսլուղլի-Սոգութլի ճանապարհներին պատահած մոտ 3000 տեղացի ու գաղթական հայերի, տեղափոխեց գլխավոր ճանապարհներից հեռու ընկած Ձիթհանքով (Բազիրխանա) և ամենաբարբարոս եղանակներով մայիսի 25-ին կոտորեց: Այդ եղեռնագործությունից փրկվեցին միայն սոգութլեցի Նեոյ Գասպարն ու ադիյամանցի Գյոն: Թուրքերի հեռանալուց հետո պատմաբան Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի (Ա.-Դո) և ՀՀ խորհրդարանի անդամ Հակոբ Տեր-Հակոբյանի (Իրազեկ) կողմից նրանց հիշողությունները գրի առնվեցին և 1919թ. հրատարակվեցին «Յառաջ» օրաթերթում՝ «Տաճկական վայրագությունը Ալեքսանդրապոլի գաւառում» խորագրով հոդվածաշարում:

Գերիներից 500-ին թուրքերը փակեցին Շահբազյան եղբայրների մարագներում, ապա պատուհաններից նոնակներ նետելով, գնդացիներից ու հրացաններից կրակելով՝ սպանեցին, իսկ հետքերը վերացնելու համար մարագներն այրեցին: Մյուսներին (մոտ 2500 մարդ) կոտորեցին գյուղի հյուսիսարևելյան կողմի սարերում: Շուրջ 200 հայ օրիորդներ փրկելով իրենց պատիվը՝ խեղդվելով ինքնասպան եղանակով Ձիթհանքովի լճերում²³: Ականատեսների վկայությամբ՝ «մի քանի օր յետոյ, երբ խեղդուածների դիակները ջրի երես բարձրացան, լճի բովանդակ մակերևույթը պատուեց գոյնզգոյն հագուստներով»²⁴:

²² Դավթյան Ա., Ճանաչիր արմատները քո//«Անի» շաբաթաթերթ, Մարալիկ, 1987, 22 օգոստոս, էջ 2:

²³ ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 82, թ. 17:

²⁴ Իրազեկ, Տաճկական վայրագությունը Ալեքսանդրապոլի գաւառում // «Յառաջ» օրաթերթ, Երևան, 1919, N 24, 19 հոկտեմբերի, էջ 2:

Թուրքական զորքերին դիմադրություն ցույց տալուց հետո անմարդաբնակ դարձան նաև Ալեքսանդրապոլի գավառի Մահմուդջուղ և Ղըլիջ-Յաթաղ գյուղերը (1916 թ. դրությամբ միասին ունեին մոտ 2570 բնակիչ երկու սեռերից²⁵):

Իրազեկի պնդմամբ՝ տեղի ունեցած ոճրագործության իրական մեղավորները տեղի քրդերն ու թաթարներն էին, որ ղեկավարվելով զանազան բեկերից ու աղաներից, ամենագործուն մասնակցությունն ունեցան Արևելյան Շիրակի հայ ազգաբնակչության կոտորածին, իսկ հետո անցան Կարս: «Աւելորդ չենք համարում,-գրում է նա,-հրապարակել զոնե ամենազլխավորների անունները. Բուդուբլեցի Քոռ Նամեի տղա Զոռբէն, Սույսըզցի Շամիլ Մամէ օղլին, նոյնտեղացի Խուդո Բշար օղլին, Քրդի Ղլիջյաթաղցի Զալալ Սուեի Ամարը և Այիբ Քյալալ օղլին, Հըկօցի Սայեադ Բրո օղլին, Ղարադուլեցի Դարեժ օղլին, Ալտջեցի երկու եղբայրները՝ Տայո և Հասան բեկերը և Ղըզըլմադարեցի Ամար Հասան Ադա օղլին»²⁶:

Եզրահանգում. Ամփոփելով 1918թ. մայիսին Արևելյան Շիրակի գյուղերում ծավալված դիմադրական պայքարի պատմության համառոտ քննությունը՝ նշենք հետևյալը. Շիրակի գոյամարտը կամ, ինչպես սիրում են տեղացիներն այն կոչել, «Սոգութիվա պատերազմը» առանձնահատուկ տեղ ունի հայ ժողովրդի Մայիսյան հերոսամարտերի պատմության մեջ: Արևելյան Շիրակն ու Արագածոտնը միաձուլող հատվածում՝ տեղացիներից, արևմտահայ կամավորներից, փասխտականներից ու նահանջող հայկական զորամասերից հետ մնացած զինվորներով ձևավորված ճակատը թուլացրեց դեպի Սարդարապատ շարժվող թուրքական «անպարտելի» թվացող զորքերի թիկունքը: Սոգութիում և հարակից գյուղերում թուրքական կանոնավոր զորքերին ու տեղական զինված մահմեդական խուժանին հասցված հարվածը եղավ թշնամու դեմ հայ ժողովրդի երկու հատվածների առաջին համատեղ հաղթանակը Մարդարապատի ու Բաշ Ապարանի նախօրեին: Այստեղ ձևավորված ջոկատները Պանդուխտի հետ հետապնդեցին ու Ախուրյանից արևմուտք քշեցին թշնամուն: Շիրակի գոյամարտը անխուսափելի կոտորածից փրկեց նաև տասնյակ հազարավոր փասխտական-գաղթականների՝ հնարավորություն տալով վերջիններիս անարգել հասնելու Էջմիածին և Երևան:

²⁵ Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Եր., 1932, էջ 111, 119:

²⁶ Իրազեկ, Նույնը:

ЭПИЗОДЫ ИЗ ИСТОРИИ МАЙСКИХ ГЕРОИЧЕСКИХ СРАЖЕНИЙ 1918г.: ШИРАКСКАЯ БИТВА

Այրապետյան Ա. Ս.

Ключевые слова: *сопротивление, самооборона, Согутли, Ширванджуг, Сардарapat, турок, Александропольский уезд, Пандухт, Молла-Гёкча, беженец, май, Дзитанков.*

Майские героические сражения имели решающее значение в жизни армянского народа. Они не только предотвратили продвижение турок, но и создали предпосылки для восстановления утраченной столетиями государственности.

За прошедшее столетие армянская историография много раз возвращалась к истории героических сражений, были изданы десятки мемуаров и научных монографий, но все же такие определенные вопросы как история оборонительной борьбы, оказанная туркам в селах Ширака исследована недостаточно, хотя и является важнейшим событием в истории Майских героических сражений. Фронт, сформированный на месте соединения Восточного Ширака и Арагацотна из местного населения, западноармянских добровольцев, беженцев и отставших солдат отступающих армянских войск, ослабил тыл турецких войск, продвигающихся к Сардарapatу. Удар, нанесенный турецким войскам и местным мусульманским группировкам в Согутли и окружающих селах, стал первой совместной победой над врагом двух частей армянского народа в преддверии Сардарapата и Баш Апарана. Сформированные тут отряды под начальством Пандухта преследовали и отбросили врага на запад от Ахуряна. Ширакская битва спасла также от неизбежной гибели десятки тысяч беженцев, дав им возможность беспрепятственно дойти до Эджмиадзина и Еревана.

EPISODES FROM THE HISTORY OF HEROIC BATTLES IN MAY 1918: THE BATTLE OF SHIRAK

Hayrapetyan A. S.

Key words: *resistance, self-defense, Sogutli, Shirvanjugh, Sardarapat, Turks, Province of Alexandrapol, Pandukht, Molla Gyokcha, refugee, May, Dzithankov.*

The heroic battles in May were crucial to the life of the Armenian people. They not only prevented the advancement of the Turks, but created preconditions for recreating the statehood lost centuries ago as well.

Armenian historiography has repeatedly touched upon the history of heroic battles, published dozens of memoirs and scholarly monographs over the past century, yet some issues, such as the history of resistance struggles against the Turks in the villages of Shirak, have not been seriously studied. Meanwhile, it is a major event in the history of the heroic battles in May. The front formed with locals, Western Armenian volunteers,

refugees, and retreating Armenian troops in the merging section of eastern Shirak and Aragatsotn weakened the rear of Turkish troops moving to Sardarapat. The blow to Turkish troops and local Muslim rebels in Sogutli and neighboring villages was the first joint victory of the two Armenian segments against the enemy on the eve of Sardarapat and Bash Aparan. The detachments formed here, along with Pandukht, pursued and drove the enemy west of Akhuryan. The battle of Shirak also saved tens of thousands of refugees from the inevitable massacre, enabling them to reach Etchmiadzin and Yerevan without difficulty.

References

1. **Avetisyan H.** Hayots azgayin miasnuthyan haghtanaky: 1918 tvakani mayis, Yerevan, HH GAA «Gitutyun» hrat. 1998 **(In Armenian)**.
2. **Davtyan A.**, Chanachir armatnery qo, «Ani» shabatatert, Maralik, 1987, 22 ogostos, ej 2 **(In Armenian)**.
3. Dokumenty i materialy po vneshney politike Zakavkaz'ya i Gruzii, Tiflis, Tipografiya Pravitelstva Gruzinskoy Respubliki, 1919 **(In Russian)**.
4. **Gevorgyan R.** Akunk', Yerevan, «Areg» hrat., 2008 **(In Armenian)**.
5. **Gevorgyan R.** 1918 t. mayisyan herosamarteri mi nor ej, «Haykakan banak», Yerevan, 2003, N 2, ej 31-35 **(In Armenian)**.
6. **Gevorgyan R.** 1918 tvakani Mayisyan herosamarteri patmutyan mi nor ej. Sogyutlui goyamarty, Mayisyan goyapaykari patmutyan nor ej, Yerevan, Rus-haykakan Slavonakan hamalsaran, 2005, ej 30-41 **(In Armenian)**.
7. **Harutyunyan A.** Turkakan interventsian Andrkovkas 1918t. yev inknashtpanakan krrivnery, Yerevan, HSSH GA hratarakchutyun, 1984 **(In Armenian)**.
8. Hayastani azgayin arkhiv, fond 45, tsutsak 1, gorts 18 **(In Armenian)**.
9. Hayastani azgayin arkhiv, fond 121, tsutsak 2, gorts 82, 84 **(In Armenian)**.
10. Hayastani azgayin arkhiv, fond 200, tsutsak 1, gorts 19, 38, 95 **(In Armenian)**.
11. **Hayrapetyan A.** Zhoghovrdagrakan gortsyntatsnem Aleksandrapoli gavarrum 1918t. mayis-noyember amisnerin, HH GAA SHHH kentroni «Gitakan ashkhatutyunner», Gyumri, 2018, h. 21, ej 113-127 **(In Armenian)**.
12. **Irazek** Tachkakan vayragutivny Aleksandrapoli gavarrum, «Yaraj» oratert, Yerevan, 1919, N 26, 22 hoktemberi, ej 2 **(In Armenian)**.
13. **Irazek** Tachkakan vayragutivny Aleksandrapoli gavarrum, «Yaraj» oratert, Yerevan, 1919, N 24, 19 hoktemberi, ej 2 **(In Armenian)**.
14. **Karabekir-pasha** doklad Pervogo kavkazskogo korpusa, predstavlenyy amerikanskoy delegatsii v tsitadeli generala Kharborda ob operatsii i legitimnosti Erzuruma, 1335 (1919) **(in Turkish)**.
15. **Korkotyan Z.** Khorhrdayin Hayastani bnakchutyuny verjin haryuramyakum (1831-1931), Yerevan, HSKHH Luszoghkomat, 1932 **(In Armenian)**.

16. **Manaseryan M.** Hishoghut'yunner Sardarapati herosamartits' (1918t'. mayisi 22-29), Haykakan banak, Yerevan, 1998, N 2 (16) ej 78-103 **(In Armenian)**.
17. **Melikyan H.** Maraliki hnaguyn gerdastannerits meki patmutyuny, Yerevan, «Areg» hrat., 2006 **(In Armenian)**.
18. **Melikyan H.** 1918 t. Shiraki mayisyan goyamarty, Mayisyan goyapaykari patmutyan nor ej, Yerevan, Rus-haykakan Slavonakan hamalsaran, 2005, ej 54-85 **(In Armenian)**.
19. **Minasean E.** Mayisean herosamarter. hayeri Hayrenakany, «Alik» oratert, Tehran, 2019, 2 yunwari, tiv 1 (23198), ej 5 **(In Armenian)**.
20. **Nersisyan A.** Rruben, Yerevan, Edit Print, 2007 **(In Armenian)**.
21. **Rruben,** Hay yeghapvokhakani my yishatakanery, h. e, Tehran, 1983 **(In Armenian)**.
22. **Sargsyan Kh., Sargsyan A.** Sogyutlui goyamarty 1918t. mayisi 14-22-in, 1918t. Mayisyan goyapaykari patmutyan nor ej, Yerevan, Rus-haykakan Slavonakan hamalsaran, 2005, ej 42-53 **(In Armenian)**.
23. **Sargsyan Ye.** Turkian yev nra nvachoghakan kaghakakanutyuny Andrkovkasum 1914-1918 tt., Yerevan, «Hayastan» hrat. 1964 **(In Armenian)**.

Ընդունվել է՝ 16.03.2020

Գրախոսվել է՝ 01. 05. 2020

Հանձնվել է տպ.՝ 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն,

Էլ. հասցե՝ a.hayrapetyan@shirakcenter.sci.am

УДК 93/94 (093)

**НЕСКОЛЬКО АРХИВНЫХ ДОКУМЕНТОВ ИЗ ИСТОРИИ
ГРУЗИНО-АРМЯНСКИХ ОТНОШЕНИЙ
(12.02.1920 – 01.12.1920 г.)**

Роин Каврелишвили

Самцхе-Джавахетский государственный университет, Грузия

Ключевые слова: *Грузия, Армения, Санаин, Борчалы, Ардаган, документ, национальные интересы, соглашение, военный союз, дипломатические перетиски.*

Рассмотренные в статье архивные документы из информационной бюллетени дипломатической миссии Армении в Грузии 1918-1920 гг. Они хранятся в центральном историческом архиве Грузии, содержат интересную информацию по поводу грузино-армянских отношений того времени, являются копиями подлинников, составлены на армянском и русском языках. Заверены делопроизводителем миссии¹.

Введение. В документах из центрального исторического архива Грузии рассматриваются вопросы по поводу заключения военного союза между Грузией и Арменией. При этом, предпосылкой к названному союзу должно было являться полное территориальное соглашение между Грузией и Арменией. Указываются позиции обеих сторон исходя из своих национальных интересов. В одном из документов говорится, что армянская сторона рассматривала это соглашение, как уступку Арменией в Алавердском вопросе. Высказывается опасение, не продиктовано ли указанное предложение со стороны Грузии желанием вызвать с армянской стороны уступки в территориальном вопросе, а так же дать Грузии возможность ввести дополнительные войска в Ардаган. Представленная инструкция министра иностранных дел Армении, которое он дал представителю Армении при правительстве Грузии с целью обсуждения с Грузинским правительством возможного военного союза с Грузией, состояла из 3-х пунктов. Основные послания этих инструкций состояли

¹ ЦИАГ, Фонд №1868, опись №1.

в следующем: Армения считала полезным военный союз с Грузией, при этом не намеревалась идти на территориальные уступки, исключала сепаратистские соглашения по поводу усиления грузинского гарнизона в Ардагане, требовала выхода грузинских военных из южной части Ардагана. Некоторые документы являются дипломатическими переписками между высшими представителями обеих стран по поводу обстоятельств, созданной в Борчалинском уезде и вне его.

В рассмотренных газетных публикациях того времени указывается на подход грузинской и армянской сторон к пока ещё нерешённым дипломатическим вопросам и на опасение, в случае не решения указанных вопросов вмешательства в дело третьей стороны. Надо отметить, что обе стороны, при объяснении сложившихся обстоятельств, указывают на некоторые вынужденные меры исключительно стратегического характера и мирное разрешение всех спорных вопросов.

Дискуссия. Документ от 12-го февраля 1920 года² является совершенно секретным и личным письмом министра иностранных дел Армении представителю Республики Армения в Грузии. Составлен на русском языке. Подлинность копии заверяет делопроизводитель миссии А. Мелик. В документе, армянский министр говорит о переговорах с министром иностранных дел Грузии Гегечкори и военным министром Лорткипанидзе, который состоялся во время его последнего визита в Тбилиси. В нём говорится о предложениях грузинских министров по поводу заключения военного союза между Грузией и Арменией перед лицом турецкой опасности. При этом, предпосылкой к названному союзу должно было являться полное территориальное соглашение между Грузией и Арменией. По мнению армянского министра, само же соглашение, мыслилось, как уступка Арменией в Алавердском вопросе. В документе указывается, что вопрос об указанном союзе стал предметом обсуждения в правительстве и парламентской фракции “Дашнакцутюн”. Большая часть этой фракции /25 против 3/ вынесло заключение как руководство правительству в переговорах с Грузией. Там же отмечается, что при всем ораторами высказывалось опасение: не продиктовано ли указанное предложение со стороны Грузии желанием вызвать с армянской стороны уступки в территориальном вопросе, а также дать Грузии возможность ввести свои войска в количестве 300 солдат в Ардаган. Если опасения эти верны, то подрывается доверие к идее союза. Из документа видно, что фракция “Дашнакцутюн” принципиально относилась к Ардаганскому вопросу. Она обязала правительство добиться от Грузинского правительства перевода грузинской военной роты из южной части Ардагана в северную часть. Сама инструкция министра иностранных дел в адрес представителю Армении по поводу возможного военного союза с Грузией, состоит в двух комбинациях. В первом – указывается на снабжение Грузией Армении вагонами, мазутом и прочими средствами с целью усиления Армянской армии учитывая возможные военные действия турецкой армии против обеих государств. Во втором – предлагается обоюдные услуги военно-хозяйственного характера. Документ содержит инструкции министра

² ЦИАГ, Фонд №1868, опись №1, Д. №904.

иностранных дел Армении, которые он дал представителю Армении с целью обсуждения с Грузинским правительством. Они состоят из 3-х пунктов. Основные послания этих инструкций состояли в следующем: Армения считала полезным военный союз с Грузией, при этом не намеревалась идти на территориальные уступки, исключала сепаратные соглашения по поводу усиления грузинского гарнизона в Ардагане, требовала выхода грузинских военных из южной части Ардагана.

Документ от 23-го ноября 1920 года³, составлен на армянском языке. В конце документа указано – специальный представитель Г. Хатисеан. Заверяется подписью делопроизводителя миссии. В документе специальный уполномоченный представитель Армении в Санаин доводит сведения представителю дипломатической миссии Армении в Грузии по поводу передвижения грузинских военных на поезде от Санаина в сторону Бамбак. Представителем отмечается, что он заявил протест командиру грузинских войск, дислоцировавшихся в этом районе, по поводу которого он уведомил представителя телеграммой. Специальный уполномоченный передвижение грузинских военных связывает с приездом в регион члена парламента Грузии Нодия. Документ от 13 ноября 1920-го года⁴ является копией циркуляра. Он составлен на русском языке. Верность его удостоверяется подписью делопроизводителя миссии Армении в Грузии. Документ является информационным письмом от комиссариата нейтральной зоны Борчалинского уезда в адрес участковым комиссариатам нейтральной зоны того же уезда. В нём указывается на приказ председателя правительства Грузии и в связи с этим на прибытие в нейтральную зону войсковой части Грузинской армии для охраны жителей в случае наступления турок, по поводу объявления в указанной зоне военного положения и подчинении всей администрации вверенному губернатору. По документу от участковых требуется распространение этой информации и подчинение ко всем распоряжениям генерал-губернатора. Там же указывается, что подлинный циркуляр подписан комиссаром нейтральной зоны Глonti.

Документ от 21 ноября 1920-го года⁵ является копией письма особоуполномоченного Армении в нейтральной зоне начальнику отряда войск Грузии в Санаин. В письме, на основе соглашений между Грузией и Арменией от 16 ноября 1920 г., особоуполномоченный считает назначение Грузией в нейтральной зоне генерал-губернатора неправомерным и просит сообщить, продолжает ли своё существование указанная должность и если она не упразднена, то сделать зависящее распоряжение и в последующем уведомить его. Копия заверяется делопроизводителем миссии Армении в Грузии. Документ от 23 ноября 1920-го года⁶ является ответом министерства иностранных дел Грузии на ноту от 19-го ноября дипломатическому представителю Армении при правительстве Грузии. За министра иностранных дел подписывается К. Сабахтаришвили. В нём указывается, что грузинское правитель-

³ ЦИАГ, Фонд №1868, опись №1, Д. №10.

⁴ ЦИАГ, Фонд №1868, опись №1, Д. №586.

⁵ ЦИАГ, Фонд №1868, опись №1, Д. №3.

⁶ ЦИАГ, Фонд №1868, опись №1, Д. №10249.

ство никакого генерал-губернатора в нейтральной зоне не учреждало и что оно неуклонно стоит на позиции точного соблюдения условий соглашения 13-го ноября 1920-го года. Один из документов⁷, на котором не имеется дата и номер, является письмом дипломатического представителя Армении министру иностранных дел Грузии. В нём представитель заявляет протест министру по поводу передвижения грузинских военных в нейтральной зоне и перехода их на территорию Армянской республики. Кроме того, он находит совершенно необъяснимым несоответствие официальных заявлений грузинского министра, так как в полученной от министра письме от 23 ноября указывается, что грузинская сторона неуклонно стоит на позиции точного соблюдения условий соглашения 13 ноября, касающихся временного ввода грузинских войск в пределы лишь нейтральной зоны.

Документ от 25-го ноября 1920 года⁸ является письмом от министра иностранных дел Грузии К. Сабахтаришвили в адрес дипломатическому представителю Армении при правительстве Грузии. Письмо заверяется делопроизводителем миссии Армении. В письме, К. Сабахтаришвили напоминает представителю, что он ещё не получил ответ на свою ноту от 23-го ноября по поводу соглашения Армении с Турцией. В продолжении сказано, что в результате фактического выполнения Арменией условия перемирия в Борчалинском уезде создалось новое обстоятельство, осложнённое введением в него третьей силы. В связи с этим, по поручению правительства, Гегечкори заявляет категорический протест против предпринятого Армянским правительством шага, которое вынудило правительство Грузии принять необходимые меры для охраны своих границ. По заявлению Гегечкори эти мероприятия несколько не могут быть рассмотрены, как действия, направленные против интересов Армении.

Документ от 26 ноября 1920-го года⁹ является копией телеграммы из Каракилиса от представителя контрольной комиссии ротмистра Меликова представителю Армении в Грузии Бекзадяну. Он содержит информацию о переходе грузинских войск 23-го ноября через границы нейтральной зоны и занятии Армянской территории до станции Шагали. Такое действие со стороны Меликова оценивается нарушением договора между двумя республиками от 13-го ноября и вредным для искренних и дружественных отношений между соседними республиками. Меликов требует отвода войск на границы, установленные от 13 ноября 1920-года.

Документ от 1-го декабря 1920-го года¹⁰ является копией телеграммы председателя революционного комитета Армении Касьяна к полномочному представительству РСФСР в Грузии по поводу провозглашения советской власти в Армении. Телеграмма отослана из Дилижана 30-го ноября 22 часа 15 минут. В документе указаны имена и фамилии членов ревкома: Авись Нуриджанян, Бекзадян, Довлатян, Мравян, Тер-Габриелян. Ещё в одной копии документа без даты и номера от дипло-

⁷ ЦИАГ, Фонд №1868, опись №1.

⁸ ЦИАГ, Фонд №1868, опись №1, Д.№253.

⁹ ЦИАГ, Фонд №1868, опись №1, Д. №920.

¹⁰ ЦИАГ, Фонд №1868, опись №1, Д. №147, л. 16.

матической миссии Армении упоминается по поводу нового правительства Армении. Там же отмечается, что Приказом №1 до приезда ревкома советской власти в г. Ереван правительственная власть передана начальнику военного командования товарищу Дро и комиссару РСФСР товарищу Силину.

Документ от 1-го декабря 1920-года¹¹ является телеграммой К. Сабахтаришвили к дипломатическому представителю республики Армения при правительстве Грузии. Заверяется делопроизводителем миссии. В нём отмечается, что выполнение правительством Армении Турецкого ультиматума, существенно нарушающие права и интересы Грузии, создало в Борчалинском уезде новые обстоятельства, решительно изменившие там существующие до сего времени обстоятельства, которые вынудили правительство Грузии принять некоторые меры исключительно стратегического характера, имеющие цель охраны границы Грузии и его права и интересы в Борчалинском уезде. Там же сказано, что правительство Грузии строго стоит на принятой им позиции мирного разрешения всех спорных вопросов путём соглашения или арбитража и отнюдь не рассматривает свои мероприятия в Борчалинском уезде как действия, создающие для Грузии новые права в этом уезде и как рассчитанное на использование временного тяжёлого положения дружественной Грузии для республики Армения.

Следует отметить, что в грузинской печати того времени мало, но всё-таки, имеются газетные публикации, в которых выражаются свои отношения к событиям указанным в документах. В них отражены как эмоциональные, так и прагматичные стороны. Надо отметить, что лейтмотивом большинства статей является желание безболезненного и быстрого решения всех спорных вопросов между новопровозглашёнными республиками и недопущение вмешательства третьей стороны.

Статья “картвелта да сомехта дамокидебулеба (Отношение грузин и армян)”, опубликованная в газете “Сакартвелос республика (Республик Грузия)” от 11 августа 1920-го года¹² является кратким анализом выступления премьера Армении. В нём, со стороны премьера оценивается текущая конференция между правительствами двух республик и отмечается, что уже подписан договор по юридическим вопросам и идут переговоры по территориальным вопросам. Он выражает надежду, что переговоры с Грузией завершатся с желаемым результатом и постоянные друзья, которые разделяют общую культуру и имеют общих врагов, поймут друг друга.

Статья “Чвен да Сомхети (Мы и Армения)” из газеты “Эртоба (Единство)” от 24-го августа 1920-года¹³ касается действий третьей силы в Закавказье и его негативного влияния на новопровозглашённые республики. В нём отмечается, что вступление Красной армии в Азербайджан и его движение в сторону турецкой армии поставила кверху дном вопрос солидарности народов Закавказья. Там же указано, что такое обстоятельство должно было ещё больше сблизить Грузию и Ар-

¹¹ ЦИАГ, Фонд №1868, опись №1, Д. №10471.

¹² Сакартвелос республика, 11 Августа, 1920, N 179.

¹³ Эртоба, 24 Августа, 1920, N 191.

мению, ибо обе стороны столкнулись перед одинаковой угрозой и все нерешённые вопросы, насколько важными бы они не показались, были относительно незначительными по сравнению с угрозой извне. Газета призывает руководство обеих республик предпринять всё необходимое для решения всех спорных вопросов с целью ликвидации той атмосферы, которая сложилась после вхождения англичан на Кавказ и Борчалинского конфликта. Выражается надежда, что мирный договор Армении с Турцией и присвоение Арменией определенной территории в районах Битлиса, Эрзерума и Трабзона усилит его ход на пути к независимости и такое решение вопроса станет открытием основного узла для возрождения и процветания Армении. При решении этой проблемы, вопросы грузино-армянской государственной границы не должны были оставаться такими острыми, сильно противоречивыми и неприемлемыми как это имело место по сей день.

Газета “Сакартвело”¹⁴ отзывается по поводу мирного договора между Арменией и Турцией в статье “Сакартвелос мисалмеба сомхетс (Приветствие Грузии к Армении)”. В нём отмечается, что заместитель председателя правительства Грузии Гр. Лорткипанидзе отправил телеграмму председателю правительства Армении Оганджяну и выразил своё удовлетворение по поводу соглашения о прекращении огня между Арменией и Турцией при участии т.н. “государств соглашения”. Лорткипанидзе, от имени грузинского народа поздравляет армянский народ в связи с этим событием и называет это историческим актом.

В статье и из газеты “Эртоба” от 8-го сентября 1920-года¹⁵ “Кидев эртхел сомхеттан хелшекрулебазе (Ещё раз по поводу договора с Арменией)” оцениваются текущие переговоры между Грузией и Арменией по поводу упразднения нейтральной зоны. В нём отмечается, что первый этап для урегулирования вопроса между сторонами закончился и было принято решение об упразднении нейтральной зоны, созданной посредничеством англичан, которое повредило оба государства. Также выражается надежда, что это станет реальным шагом к сближению соседей и для ликвидации последствия печальных следов войны. В статье указывается, что вышеуказанное соглашение не имеет окончательную силу в деле определения границ и что грузинская сторона разработала приемлемую формулу для обеих сторон, которая даёт возможность сторонам урегулировать этот вопрос путём соглашения или арбитража. В таких обстоятельствах, вопрос упразднения нейтральной зоны было бы легко решить, а её задержка является пустой тратой времени.

Статья “Грузия и Армения”, которая опубликована в газете “Эртоба (Единство)” от 28 ноября 1920-го года¹⁶, носит эмоциональный характер и является своеобразным ответом на позицию, опубликованную в армянской прессе. Статья касается вхождения грузинских войск в нейтральную зону после того, как армянские войска покинули Гюмри и занятия им районов Борчалинского уезда, в связи с чем между Грузией и Арменией велись длительные переговоры до той поры, пока

¹⁴ Сакартвело, 3 Сентября, 1920, N 199.

¹⁵ Эртоба, 8 Сентября, 1920, N 204.

¹⁶ Эртоба, 28 Ноября, 1920, N 272.

турецкие войска не перешли границу Армении. Согласно статье, армянская пресса тогда этот шаг Грузии оценила как удар ножом в спину. Там же отмечается, что впоследствии тон армянской прессы стал более умеренным. Таким образом, газета сочла необходимым отреагировать на сложившуюся ситуацию и обсудить вопросы грузино-армянских отношений. Газета укрепляет свои позиции договором, заключенным между Грузией и Советской Россией 7 мая 1920 года и указывает, что в силу этого договора вся территория бывшей Тбилисской губернии была включена в состав территории Грузии. Однако, Грузия не стремилась овладеть теми районами Борчалинского уезда, которые Армения посчитала спорным до тех пор пока она не была бы согласована с Арменией. По поводу этого велись долгие переговоры с Арменией. Однако, они были прерваны с началом армяно-турецкой войны. Там же обсуждается статья армяно-турецкого соглашения, в силу чего контрольная комиссия турецкой стороны была допущена в Санаин, действие которой должно было распространяться по всей железной дороге от Александрополя до Сайнана. В статье говорится, что Санаин не принадлежал Армении и находился в нейтральной зоне, а часть железной дороги Санаина принадлежала Грузии и никакой контрольной комиссии там не должно было иметь место. Также указывается, что в этом случае армянская сторона пренебрегла этим вопросом и заключила соглашение, без разрешения Грузии.

Заключение. Документы и газетные материалы, рассмотренные в статье дают нам некоторое представление о продолжающихся переговорах между демократической республикой Грузия и демократической Республикой Армения по отношению существующих в то время некоторых нерешённых вопросов, об интересах третьих держав в Закавказье и их последствиях. На данный момент мы ограничились материалами, доступными нам в Грузии.

ՄԻ ՔԱՆԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(12.02.1920-01.12.1920թ.)

Գալբելիշվիլի Ռ. Ա.

Բանալի քառեր՝ Վրաստան, Հայաստան, Սանահին, Բարչալու, Արդահան, փաստաթուղթ, ազգային հետաքրքրություններ, համաձայնություն, ռազմական միություն, դիվանագիտական գրություններ:

Հոդվածում քննարկվում են մի քանի արխիվային փաստաթղթեր, որոնք պատկանում են Վրաստանում Հայաստանի դիվանագիտական առաքելությանը՝ 1918-1920 թվականներին: Փաստաթղթերը պահված են Վրաստանի պատմության կենտրոնական արխիվում և պարունակում են հետաքրքիր փաստեր այդ ժամանակաշրջանի հայ-վրացական հարաբերությունների մասին, բնօրի-

նակների պատճենները հայերեն և ռուսերեն են՝ հաստատված առաքելության աշխատակցի կողմից: Փաստաթղթերում քննարկվում են հարցեր Հայաստանի և Վրաստանի միջև ռազմական դաշինքի վերաբերյալ: Միննույն ժամանակ, անհրաժեշտ էր հստակեցնել Հայաստանի և Վրաստանի միջև լիարժեք տարածքային համաձայնությունը: Ներկայացվում է երկու կողմերի դիրքորոշումները՝ ելնելով ազգային շահերից:

Հայաստանի արտաքին գործերի նախարարի հանձնարարականում, ուղղված Վրաստանում Հայաստանի ներկայացուցչին, առաջարկվում էր քննարկել երկու երկրների միջև հնարավոր ռազմական համագործակցությունը երեք կետի շուրջ: Դրանց հիմնական գաղափարը հետևյալն էր. Հայաստանը Վրաստանի հետ ռազմական համագործակցությունը համարում էր օգտակար, միննույն ժամանակ չցանկանալով գնալ տարածքային զիջումների՝ բացառում էր անջատողական համաձայնագիրը Արդահանում վրացական կայսրի ուժեղացման օգտին և պահանջում էր Արդահանի հարավային մասից դուրս բերել վրացական զորքը: Որոշ փաստաթղթեր հանդիսանում են դիվանագիտական նամակագրություն երկու երկրների բարձրաստիճան ներկայացուցիչների միջև, որոնցում քննարկվում է Բորչալիի շրջանի և դրանից դուրս ստեղծված իրավիճակը:

Ժամանակի մամուլի քննությունը բացահայտում է կողմերի մոտեցումները դեռևս չլուծված հարցերի վերաբերյալ և անհանգստություն արտահայտում այդ հարցերի չլուծման պարագայում երրորդ ուժի հայտվելու հնարավորության վերաբերյալ: Պետք է նշել, որ երկու կողմերն էլ ստեղծված իրավիճակը պայմանավորում են բացառապես ստրատեգիական նշանակություն ունեցող հանգամանքներով՝ փորձելով խաղաղ լուծումներ գտնել վիճելի հարցերի համար:

**SEVERAL ARCHIVAL DOCUMENTS FROM
THE GEORGIAN-ARMENIAN RELATIONS
(12.02.1920 - 01.12. 1920)**

Kavrelishvili R. A.

Key words: *Georgia, Armenia, Sanahin, Borchaly, Ardahan. document, national interests, agreement, military unity, diplomatic messages.*

The report touches upon the issues of archival documents that belong to the diplomatic missionary of Armenia in Georgia in 1918-1920. The documents are in the central Georgian historical archive and include interesting information on the Georgian-Armenian relations of that time, the copies of the original versions are in the Armenian and Russian languages. They are certified by the missionary diplomat. The documents examine the issue of the occupation of the armed forces between Georgia and Armenia.

At the same time, it was high time to fully clarify the territorial agreement between Georgia and Armenia.

The positions of both parties are presented in the national interest. The recommendation of the Armenian Foreign Minister to the Armenian envoy to Georgia suggested to discuss possible military cooperation between the two countries on three points. Their main idea was: Armenia considered military cooperation with Georgia to be useful, while not wishing to make territorial concessions, excluding a secession agreement in favor of strengthening the Georgian garrison in Ardahan, and demanding that Georgian troops be withdrawn from southern Ardahan. Some of the documents are diplomatic correspondence between senior officials of both countries discussing the situation in and around Borchali.

The timing of the press release reveals the parties' approaches to the issues that have not yet been resolved and expresses concern about the possibility of a third force if these issues are not resolved. It should be mentioned that both sides condition the situation exclusively of strategic importance, trying to find peaceful solutions to disputable issues.

References

1. Centralniy istoricheckiy arkhiv Gruzii /CIAG/, f: 1868 **(In Georgian)**.
2. Ertoba, 24 Agvisto, 1920, N191 **(In Georgian)**.
3. Ertoba, 8 Sektemberi, 1920, N204 **(In Georgian)**.
4. Ertoba, 28 Noemberi, 1920, N272 **(In Georgian)**.
5. Sakartvelos respublika, 11 Agvisto, 1920, N 179 **(In Georgian)**.
6. Sakartvelo, 3 Sektemberi, 1920, N 199 **(In Georgian)**.

Принята: 01.03.2020

Рецензирована: 13. 04. 2020

Сдана в пч.: 27. 05. 2020

Информация об авторе:

Роин КАВРЕЛИШВИЛИ, доктор ист. наук, профессор
Самцхе-Джавахетского государственного университета, Грузия,
E-mail: roinkav@gmail.com

ՀՏԴ՝ 93/94

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՄՆԵՐԸ
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲՈՒՆԱԶԱՎԹՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ՝
1918թ. ՄԱՅԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ¹

Կարինե Ալեքսանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ թուրքական արշավանք, վկայություններ, Առաջին համաշխարհային պատերազմ, վնասները որոշող բյուրո, ցեղասպանություն, ոճրագործություն, թալան, կոտորած, քաղաքային վարչություն:

Հոդվածը վերաբերում է 1918 թվականին Արևելյան Հայաստան թուրքական արշավանքի և Ալեքսանդրապոլի գավառի ռազմակալման շրջանում հայ բնակչության կրած սարսափելի տառապանքների վերհանմանն ու հանրայնացմանը: Ներկայացված են Առաջին համաշխարհային պատերազմի վնասները քննող հանձնաժողով ուղարկված Ալեքսանդրապոլի գավառի բնակչության վկայությունները մարդկային և նյութական կորուստների վերաբերյալ: Հոդվածը փաստում է, որ Ալեքսանդրապոլի գավառի հայ բնակչության նկատմամբ կատարված մարդկային կյանքին և արժանապատվությանն անհամատեղելի թուրքական գազանությունները ոչ միայն հայության, այլև համայն մարդկության դեմ կատարված հանցագործություններ են և պետք է հատուցվեն առանց վաղեմության ժամկետի:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18SH-6A009 ծածկագրով «1918-1921թթ. իրողությունները Շիրակի բնակչության պատմական հիշողության համատեքստում» գիտական թեմայի շրջանակներում:

Նախաբան. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովուրդը ենթարկվեց ահավոր փորձության. իր հայրենի բնօրրանում ցեղասպանվեց արևմտահայությունը:

Ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայ գաղթականները ապաստան գտան իրենց արևելահայ եղբայրների մոտ²: Մակայն թուրքական յաթաղանը հասավ նաև Արևելյան Հայաստան: 1918 թվականի մայիսին Ալեքսանդրապոլի գավառը գրավվեց և վեց ամիս ապրեց թուրքական ռազմակալման պայմաններում³: Թուրք ռճրագործները, շարունակելով հայոց ցեղասպանության քաղաքականությունը, այդ ընթացքում ոչ միայն ոչնչացրին արևմտահայության բեկորները, այլ նաև կոտորեցին արևելահայության մի ստվար գանգված՝ ուղեկցելով սպանություններն անօրինակ թալանով⁴: Մական սա չխանգարեց թուրքերին պատերազմի ավարտական փուլում բավականին լրջորեն պատրաստվել Առաջին համաշխարհային պատերազմից հետո գումարվելիք վեհաժողովին՝ ներկայացնելու հայերի գազանությունները «խեղճ» մահմեդականների նկատմամբ: Դա կանխելու և հայ ժողովրդի կորուստները վեհաժողովին ներկայացնելու նպատակով հայ մտավորականները Հ. Թումանյանի նախաձեռնությամբ ձեռնամուխ են լինում Առաջին համաշխարհային պատերազմից հայ բնակչության կորուստները քննող բյուրոյի ստեղծմանը⁵:

Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ռճրագործությունների արձանագրման հսկայական աշխատանքները իրականացվում են միջազգային աստիճաններում հատուցման ակնկալիքով, այն վստահությամբ, որ գալու է այն օրը, երբ հայ ժողովուրդն իր պահանջները պիտի կարողանա ներկայացնել միջազգային աստիճաններին և ստանա հատուցում: Թեև Բյուրոյին չի հաջողվում ավարտել աշխատանքները և դրանք ներկայացնել վեհաժողովին, սակայն այսօր էլ այդ վկայությունները չեն կորցրել այժմեականությունը: Այդ վկայություններն արժեքավոր են այնքանով, որ գրվել են դեպքերի անմիջական տպավորությամբ: Արևելահայության կրած անլուր տառապանքների իրական պատկերի վերհանումը և դրանց ուսումնասիրությունը ունեն թե՛ գիտական, թե՛ քաղաքական ու թե՛ ճանաչողական նշանակություն: Նախ՝ դրանք վկայում են Արևելյան Հայաս-

² Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1918թթ., կազմեց **Կ. Ալեքսանյան**, Եր., 2012թ., 512 էջ :

³ **Ալեքսանյան Կ. Վ.**, Արևմտահայ գաղթականներն Ալեքսանդրապոլի գավառում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին // Փաստաթղթերի հավաքածու, Բանբեր Հայաստանի արխիվների (այսուհետև՝ ԲՀԱ), թիվ 2, Եր., 2008, էջ 40-56:

⁴ **Ալեքսանյան Կ. Վ.**, Թուրքիայի ցեղասպանության քաղաքականության շարունակությունն Ալեքսանդրապոլի գավառում // Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 1, Եր., 2005, էջ 18-25:

⁵ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ.221, ց. 1, գ. 31, թ. 37:

տանում ծրագրված ցեղասպանության քաղաքականության շարունակականության մասին, որն այսօր ևս շարունակվում է ժխտողականության դրսևորմամբ: Երկրորդ՝ հրեշավոր զազանությունների ենթարկված մեր հայրենակիցները իրենց լուռ վկայություններով, զինելով համայն հայությանը, աջակցում են հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման համար արդարացի պայքարին: Երրորդ՝ մարդկության դեմ կատարած այդ հանցագործությունների վկայությունները յուրատեսակ կոչնակ են միջազգային հանրությանը՝ փրկելու մարդկության դեմքը՝ կանխելով դրանց կրկնվելու հավանականությունը:

Եվ վերջապես թուրք ժողովրդին հնարավորություն է տրվում ձեռքազատվելու մարդասպանի ծանր խարանից, աջակցելու համաշխարհային հանրությանը միջազգային իրավունքի ուժով դատապարտելու ռազմական հանցագործներին: Մանավանդ որ պատերազմի ավարտից հետո հաղթող պետությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի կողմից փորձ էր արվել պատժել պատերազմի ռազմական հանցագործներին, որոնք Մուդրոսի զինադադարից հետո օսմանյան ռազմական դատարանների կողմից ձերբակալված և մահվան էին դատապարտված: Դաշնակիցները ռազմական հանցագործներին արտորել էին Մալթա՝ նախատեսելով այստեղ պահել երեք տարի, մինչ որ Կոստանդնուպոլսի, Լոնդոնի, Փարիզի և Վաշինգտոնի արխիվներում կիրականացվեն արխիվային հետազոտություններ, կհավաքվեն անհրաժեշտ փաստաթղթեր և կորոշվեն նրանց պատժելու ուղիները: Մակայն օսմանյան մեռնող կայսրության փոքրասիական տարածքներում ծնունդ առած քեմալական շարժման ղեկավար Մուստաֆա Քեմալը, խիստ ընդդիմանալով այս որոշմանը, սպառնացել էր նրանց մահապատժի ենթարկելու դեպքում մահապատժի ենթարկել Կ. Պոլսի բանտերում գտնվող բոլոր բրիտանացիներին: Արդյունքում 1921թ. փետրվարից Կոստանդնուպոլսի ռազմական դատարանը բոլոր դատապարտյալներին ազատ է արձակում՝ առանց դատավարության:

Մի կողմից թուրքական շարունակվող ժխտողականության դեմ պայքարի, մյուս կողմից՝ հայոց ցեղասպանության ճանաչման և փոխհատուցման պահանջի պատմաիրավական հիմքերի ստեղծման համար ձեռնամուխ ենք եղել Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլում Արևելյան Հայաստանում շարունակվող ցեղասպանության վկայությունների, մասնավորապես Ալեքսանդրապոլի գավառում հայ բնակչության կոտորածի և անգուսպ թալանի իրական պատկերի վերհանմանը:



Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո նախատեսվող Խաղաղության վեհաժողովին հայ ժողովրդի կրած վնասների ու կորուստների վերաբերյալ փաստացի հուշագիր ներկայացնելու նպատակով 1918թ. նոյեմ-

բերի 21-ին Թիֆլիսում գործող Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի ընդհանուր ժողովում հիմնվում է «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով», որը զլխավորում է Հայ հայրենակցական միությունների նախագահ Հովհաննես Թումանյանը:⁶ Նախատեսվում էր, որ Քննիչ հանձնաժողովն իր աշխատանքները կներկայացներ Կառավարությանը, իսկ վերջինս իր պատվիրակության միջոցով՝ Փարիզի վեհաժողովին: Կարճ ժամանակ և սուղ ֆինանսական պայմաններ ունենալով հանդերձ՝ հանձնաժողովը ձեռնամուխ է լինում այդ ծանր գործին: Քննիչ հանձնաժողովը նախ դիմում է զանազան կազմակերպությունների, անհատների իր աշխատանքներին աջակցելու խնդրանքով, շրջաններ ուղարկում ներկայացուցիչներ՝ նյութեր հավաքելու նպատակով, միաժամանակ դիմումներ ստանում կողոպտված և անօթևան հազարավոր հայերից կրած կորուստների մասին: Քննիչ հանձնաժողովի նախագահ Հ. Թումանյանը, դիմելով թուրքական գազանությունների զոհերին և ականատեսներին, խնդրում է չզլանալ իրենց վկայությունները ներկայացնել քննիչներին: «Ամեն մի գիտակից հայ իր սրբազան պարտքը պիտի համարի այսօր ամեն ջանք թափիլ, որպեսզի հաշտության մոտալուտ վեհաժողովի սեղանի վրայ դրած լինի հայութեան կրած անլուր տառապանքների լիակատար պատկերը և տրւած իսկական զոհերի ճիշտ հաշիւը: Կրկնում ենք՝ մի վերջին ճիգ է հարկավոր հայ ժողովրդից: Թող ամեն մի հայ կատարի այդ սուրբ պարտականությունը և կատարի անյապաղ»⁷:

Բյուրոն ուներ չորս բաժին (պատմաքաղաքական, տնտեսական, քրեական-քննական, ռազմապատմական), որոնցից յուրաքանչյուրը ղեկավարում էր նրա անդամներից մեկը: Բյուրոյի նպատակների մեջ մտնում էր նաև կրթական և մշակութային հաստատությունների, պատմական հուշարձանների, եկեղեցիների, բնակելի տների և ընդհանրապես բոլոր տեսակի կորուստների արձանագրումը⁸:

Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը դեռևս 1918թ. նոյեմբերի 8-ին ձեռնամուխ էր եղել Փամբակի, Լոռիի և Ալեքսանդրապոլի շրջաններում օսմանյան զորքի և թաթար խուժանի պատճառած վնասների արձանագրություններին. այդ նպատակով գյուղերն են ուղարկվել առանձին գործակալներ պատրաստի բլանկներով⁹, որոնցից պարզ է դառնում, որ թուրքերն այստեղ կոտորել

⁶ Հայ ժողովրդի կորուստները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ. **Ա. Չաքարյան**, Եր., 2005, էջ 8:

⁷ ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.38, թթ.16-17:

⁸ ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.31, թթ.37:

⁹ ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.92, թթ.99:

են հայ բնակչությանը մարդկությանը հայտնի բոլոր սարսափելի մահերով և թալանել մինչև վերջին հնարավորությունը:

1918թ. դեկտեմբերին Քննիչ հանձնաժողովի նախագահ Թումանյանը, Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության պետ Լ. Սարգսյանին ուղղված նամակում տեղեկացնելով ստեղծված բյուրոյի մասին, առաջարկում է տեղում կազմակերպել գործը: «Մեզ հաստատ աղբյուրներից,- նշված էր Հ. Թումանյանի գրության մեջ, -հաղորդեցին, որ դուք Ալեքսանդրապոլ քաղաքի և գաւառի համար պատրաստել եք նիւթեր: Ի նկատի ունենալով, որ մեր նպատակները մի են, մենք ուղարկում ենք ձեզ մեր բլանկներից որպէս օրինակ և խնդրում ենք ձեզ յայտնել, թէ կարող եք արդէօք դուք տեղումնդ կազմակերպել այս գործը»¹⁰:

Հարկ է նշել, որ Քննիչ հանձնաժողովին ներկայացրած ցուցակները ինչպես մարդկային, այնպես էլ նյութական կորուստների վերաբերյալ չեն համընկնում լիազորների ցուցակներին: Այսպես օրինակ, ըստ Իրազեկի, որը լիազորված էր հավաքել տեղեկություններ Ալեքսանդրապոլի գավառի վնասների վերաբերյալ, Դարբանդ գյուղում սպանվածների թիվը 27 էր, գերի տարվածներինը՝ 14¹¹, իսկ Քննիչ հանձնաժողովին ներկայացրած տվյալներով՝ կային 5 սպանված և 20 գերի տարված դարբանդցիներ¹², Եգանլար գյուղում սպանվածների թիվը, ըստ Քննիչ հանձնաժողովին ուղարկված ցուցակի՝ 18 էր, գերի տարվածներինը՝ 40¹³, իսկ ըստ Իրազեկի՝ կային 7 սպանված և 72 գերի տարված, որոնցից ոչ մեկը չի վերադարձել, ընդամենը 80 հոգի¹⁴, 3-րդ Արխավալիում կորուստները, ըստ Իրազեկի ցուցակի, այսպիսին են՝ 1 սպանված և 35 գերեվարված¹⁵, իսկ ըստ Քննիչ հանձնաժողովին ներկայացրած ցուցակի՝ սպանված են 8-ը, և գերի են տարված 14-ը¹⁶:

Իրազեկը գրում է, որ ամեն մի գյուղում տվյալները հավաքել են բնակիչների ժողովներում, որտեղ բոլորի ներկայությամբ գյուղի գիտակից մարդիկ թվել են իրենց գյուղի տված զոհերի անունները: Ընդ որում, նա հավաստիացնում է, որ հատկապես փոքր գյուղերի տվյալները միանգամայն ստույգ են¹⁷: Մինչդեռ Քննիչ հանձնաժողովին ուղարկված ցուցակները, որոնք հաստատված են գյուղի քահանայի, բաշմուխթարի և մուխթարի ստորագրություններով,

¹⁰ ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.38, թթ.13:

¹¹ **Գրիգորյան Ռ.**, Թուրք մուսավաթական զորքերի ոճրագործությունները Անդրկովկասի հայաբնակ շրջաններում 1918-1920թթ.// ԲՀԱ, 1,Եր., 1996, էջ 107: «Իրազեկ», Տաճկական վայրագությունները Ալեքսանդրապոլի գավառում, 17 հոկտեմբերի, թիվ 22, Եր., 1919:

¹² ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.89, թ.63:

¹³ ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.89, թ.58:

¹⁴ **Գրիգորյան Ռ.**, Նույն տեղում, էջ107:

¹⁵ «Հառաջ», 17 հոկտեմբերի, թիվ 22, Եր., 1919:

¹⁶ ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.89, թ.66:

¹⁷ **Գրիգորյան Ռ.**, Նույնը:

առավել հավաստի են թվում մեզ: Մանավանդ որ Քննիչ հանձնաժողովի տնտեսական բաժնի վարիչ Ա. Աթանասյանն իր զեկուցման մեջ նշում է, որ իրենց աշխատանքում առաջնորդվել են հետևյալ սկզբունքով «... չտալ ոչ մի թիվ, որի դեմ բաժինս չունենայ իր փաստացի տուեալը, այդ կողմից գյուղացիական վնասները մշակած են ամենամոտաւոր ճշտութեամբ և արժանապատուութեամբ:»¹⁸

Երբեմն թվերը կարող էին չհամընկնել, սակայն իրողությունները գրեթե նույնն են: Բոլոր վկայություններում բնակիչներն ընդգծում են թուրքական արշավանքի հանկարծակի լինելը, որը խուճապի է մատնել իրենց, ստիպել արագ փախուսի դիմել՝ թողնելով նույնիսկ ամենաանհրաժեշտ իրերը: Ճիշտ է, այն գյուղերում, որտեղից բնակիչները փախել են, զոհերի թիվը համեմատաբար քիչ է եղել, բայց նրանցից շատերը մահացել են սովից ու հիվանդություններից, քանի որ թալանվելով մինչև վերջին շապիկը՝ գրեթե զրկվել են գոյատևելու հնարավորությունից և դատապարտվել անխուսափելի մահվան: Առավել թալանված գյուղերից Մեծ Դյուզքյանդի վնասը կազմել էր 6.571.000 ռուբլի: «Այժմ շէն Դիւզքեանդ գիւղը վերածուած է ուղիղ ավերակի,- գրում են գյուղի վնասները ներկայացնողները պատերազմի կորուստները քննող հանձնաժողովին,- շարժական գոյքի կողմանէ, մանաւանդ անասուն լծկանի ու հացի, որը բոլորովին սպառուած է: Եթէ իշխանութիւնը միջոցներ ձեռք չառնի, նշանակում է մեր Դիւզքեանդը կմնայ առանց լծկանի ու ցանկի, որը կգլորէ նրան յաւիտենական մահուան գիրկը, և գիշատիչ սովի ճիրաններում կքայքայի առանց մնացորդի»¹⁹:

Քաղաքային վարչության նախագահ Լ.Սարգսյանին ուղարկված զեկուցագրերից մեկով, որտեղ ներկայացվում է Արփաչայի մոտ գտնվող Տաշլանդշլախ, Դահարլի, Ալեքսանդրովկա, Բայանդուր, Ղափըլի և մի շարք այլ գյուղերի սարսափելի վիճակը, կարելի է պատկերացում կազմել թուրքական հայակեր քաղաքականության իրական պատկերի մասին. «Յիշածս բոլոր գիւղերը,- կարդում ենք զեկուցագրում, - Արփաչայի մօտ են: Մօտ երկու ամիս դատարկել, թողել փախել էին, վերադարձել, ոչինչ չէին գտել: Մնացած հորերը բաց են արել, տարել, եկեղեցում հաց են ամբարած եղել Ղափըլի, Տաշլանդշլախ, մի հատիկ ժողովրդին չեն տւել, բոլորը տարել են: Տաշլանդշլախ գիւղում 2 հատ փուռ են շինել զօրքի համար, հացը թխել են գիւղի ավիւրից, սուխարի շինել և գիւղացոց սայլապաններով կրել, բոլորը տարել են: Ահա այս ամենը պէտք է ներկայացնել Փաշային: Երևի նա կյիշէ իւր և Վեհիք փաշայի խոստումները, թէ ժողովրդի կարիքի չափով կտան: Աւելի սուր և բողոքող կարիք քան թէ այժմ չի կարող լինել»²⁰:

¹⁸ ՀԱԱ, Ֆ, 221, ց. 1, գ. 143, թ. 16:

¹⁹ ՀԱԱ, Ֆ, 221, ց. 1, գ. 89, թ. 60:

²⁰ ՀԱԱ, Ֆ. 221, ց. 1, գ. 92, թթ. 100:

Քննիչ հանձնաժողովին դիմում էին նաև առանձին անհատներ՝ իրենց վնասների ցուցակներով: Մասնավորապես Աշոտ Կարանյանը, որն ուներ զորանոցներ Ալեքսանդրապոլում, Քննիչ հանձնաժողովին ուղարկած նամակում գրում էր. «Տաճկաց զորքերը Ալեքսանդրապոլը գրավելիս, այն է՝ 1918թ. մինչև 4 դեկտեմբերի, տեղաւորւած են իմ անշարժ կայքերի /յատուկ շինած զորանոցների/ մէջ և այդ ժամանակամիջոցում քանդել և աւերել են այդ շէնքերը, որին իբրև աբացոյց ներկայացնելով ընդամին արձանագրութեան պատճեն, խնդրում եմ ի նկատի առնել նաև իմ այն մեծ վնասները, որ պատճառել են ինձ տաճկաց զորքերը: Ճիշտ տեղեակ չլինելով որքան հնարաւոր է սկզբնական ծախսերի համար ներկայացնել, խնդրում եմ նաև յայտնել ինձ, որ անմիջապէս կներկայացուի իմ կողմից»²¹: Նրանք, ովքեր, զգալով թուրքական վտանգը, փախել էին ավելի շուտ, վերցնելով նաև իրենց ապրուստը (հիմնականում առավել հարուստները), թալանվել են Ղարաքիլիսայում և հայտնվել չքավորության մեջ:

Բազմաթիվ վկայություններ կան գերիների և անհետ կորածների վերաբերյալ: Դրանց մեջ մեծ է բեզեառ գնացածների և հատկապես զինվորականների թիվը, որոնց հետ թուրքերը վարվում էին աներևակայելի դաժանությամբ²²: Բեզեառ գնացած 10-12 տարեկան երեխաների նստեցնում էին մթերքներով բեռնված սայլերը և ուղարկում կայսրության սահմանները, որտեղից վերադառնում էին քչերը միայն: Այսպես, ըստ Քննիչ հանձնաժողովին ուղարկած ցուցակի, Օրթաքիլիսա գյուղի 275 բեզեառ գնացածներից միայն 12-ն է հետ վերադարձել²³: Թոփառլի գյուղի 562 ից՝ ընդամենը՝ 2-ը²⁴:

Վկայությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վայրագությունները ղեկավարվել են թուրք զինվորական պաշտոնյաների կողմից և կրել են կազմակերպված բնույթ՝ նպատակ ունենալով հայ բնակչության լիակատար կոտորածը: Թուրք բարձրաստիճան պաշտոնյաները հայ բնակչության սպանություններն ու թալանը իրականացնում էին թուրք խուժանի միջոցով՝ վերջիններիս խրախուսելով և աջակցելով: Հետաքրքիր է, որ տուժածներից շատերը չեն էլ կասկածել թուրք պաշտոնյաների կողմից դրանք կազմակերպված լինելուն և իրենց վկայություններում երբեմն միամտորեն ակնարկում են հատկապես Շևքի փաշային՝ տեղեկացնելու կամ նրանցից ինչ-որ բան խնդրելու մասին:

Հայաստանի զինակալած շրջաններում 1918թ. թուրքերի վարած քաղաքականության նպատակը ոչ միայն հայ բնակչությանը կոտորելն էր, այլև թա-

²¹ ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 36, թ. 95:

²² ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 31, թթ. 6-8:

²³ ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 359, թթ. 61:

²⁴ ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 359, թ. 65:

լանելով նրա վերջին ունեցվածքը, խարխլել հայոց պետության տնտեսական հիմքերը և դրանով իսկ անհնար դարձնել նրա հետագա գոյությունը: Եվ, իսկապես, Հայաստանի Հանրապետությունն իր կարճատև գոյության ընթացքում մշտապես զգում էր այդ քաղաքականության ծանր հետևանքները: Մասնավորապես, վեց ամիս թուրքական ռազմակալման պայմաններում ապրած Ալեքսանդրապոլի գավառը, թուրքերի նահանջից հետո դեռ երկար ժամանակ գտնվում էր նրանց թողած ավերածությունների ծանր ազդեցության ներքո: «Օսմանցիները մաքրագարդել էին իրենց գրավված վայրերը, կողոպտել տեղական ազգաբնակչությանը, խլելով նրանց հունձի մեծ մասը, զրկելով նրան լծկաններից և կթաններից, թալանելով տան կահ-կարասիները և վերջապես գերի տանելով նրանց երիտասարդներին իրենց սայլերով, որոնցից ոչ մեկը ետ չէր վերադարձել: Իզուր էին Ալեքսանդրապոլում Հայաստանի կառավարության դիվանագիտական ներկայացուցիչ Գ.Խոյեցյանի միջնորդությունները այդ մարդկանց հետ վերադարձնելու մասին. օսմանցիները վերադարձրին միայն Լոռու ռուսական գյուղերի մի քանի սայլապանների, հայերից՝ ոչ ոքի»²⁵: Ալեքսանդրապոլի գավառում հայ բնակչության նկատմամբ թուրքերի իրականացրած թալանի ու կոտորածի քաղաքականության արդյունքում ամբողջ գավառը մարդագրկվել էր, հատկապես, զրկվել էր երիտասարդ ու կարող արական սեռից: Հայաստանի Հանրապետության կենտրոնական վիճակագրական բյուրոյի 1919 թվականի տվյալների համաձայն՝ Ալեքսանդրապոլի գավառն ուներ 152414 բնակչություն /ծխերի թիվը 18220 էր/, որից բնիկներ էին միայն 118053-ը, իսկ մնացածները գաղթականներ էին: Ալեքսանդրապոլի գավառի բոլոր գավառամասերում /123 գյուղ/, առանց Ալեքսանդրապոլ քաղաքի, սպանվել են ընդամենը 5086 հոգի, գերված են 4660 հոգի, որոնցից վերադարձել են միմիայն 257 հոգի (Այս դժբախտների մեծ մասը հայրենիքում մահացավ չափազանց հյուծված լինելու պատճառով): 483 հոգի անհետ կորածներ են համարվում: Այլ կերպ ասած՝ Ալեքսանդրապոլի գավառն իր փոքրացած սահմաններով, առանց քաղաքի, թուրքական տիրապետության շրջանում տվել էր 10300 զոհ²⁵: Սակայն, ինչպես վերը նշվեց, այս թվերը հաճախ չեն համընկնում Քննիչ հանձնաժողովին ուղարկված ցուցակների թվերին, և դրանց համեմատումն ու վերջանական պատկերի հստակեցումը առանձին ուսումնասիրության կարիք ունեն դեռևս:

1918թ. թուրքական զինակալման շրջանում Ալեքսանդրապոլ քաղաքը գավառի համեմատությամբ քիչ էր տուժել: Թուրքերն այստեղ հիմնական ուշադրությունը սևեռել էին ռուսական բանակի հսկայական ունեցվածքի վրա: Առավել տուժել էր Ալեքսանդրապոլի գավառը, որտեղ կատարված թալանի ու

²⁵ «Հառաջ», 17 հոկտեմբերի, թիվ 22, Եր., 1919:

վայրագությունների մասին կարելի է դատել նաև Գ. Խոյեցյանի զեկուցագրերով: Համաձայն դրանց՝ թուրքերն Ալեքսանդրապոլի շրջանից տեղափոխել էին սայլերի 80%-ը, զերի տարել 12000 հոգու, փախստականների թիվը հասել էր 45000-ի: Նրանք Ալեքսանդրապոլի շրջանից տարել էին 50000-ից ավելի խոշոր եղջերավոր անասուններ, 100000 գլուխ ոչխար, 5000-ից ավելի ձի, 2,5 մլն փութ ցորեն, 1մլն փութ գարի և զանազան մթերքներ: Թալանել ու տարել էին խանութների ապրանքները, մանուֆակտուրան, երկաթեղենը, երկրագործական գործիքներն ու պարագաները, կահ-կարասին, գորգերն ու կարպետները, տարել են նաև մեծ քանակությամբ ապակեղեն, նույնիսկ տանիքների թիթեղը²⁶:

1918թ. թուրքական արշավանքների արդյունքում Ալեքսանդրապոլի գավառի տնտեսության հիմնական ճյուղը՝ գյուղատնտեսությունը, հայտնվել էր անդունդի եզրին: «Ալեքսանդրապոլի գավառում կա 5000 խոշոր եղջերավոր անասուն,-նշված էր Հայաստանի Հանրապետության տարածքի ադմինիստրացիայի և միլիցիայի կոմիսարին ուղղված Ալեքսանդրապոլի գավառի կոմիսարի 1919թ. մարտի 20-ի զեկուցման մեջ,- անհրաժեշտ է ևս 50000-ը, հացի պաշարների ավելցուկ չկա, ընդհանրապես գավառի բնակչությունը գաղթականների հետ կազմում է 160000, որոնցից մինչև նոր բերքի ստացումը կարող են դիմանալ 12000-ը, մնացածը չունեն հաց, նրանց գոյատևման համար անհրաժեշտ է մինիմում 88800 փութ ցորեն: Գավառում ուժեղ տիֆի համաճարակ է, ոչ մի գյուղում չկա ֆելդշերական կետ և բժիշկ: Բժշկա-սանիտարական ջոկատի ուղարկված բժիշկներն աշխատում են քաղաքում, գավառի բնակչությունը կարիք ունի բժշկական օգնության»²⁷:

Թուրքական օկուպացիայի ամբողջական պատկերը երևում է Ալեքսանդրապոլում ՀՀ կառավարության ներկայացուցիչ Գ.Խոյեցյանի 1918թ. հոկտեմբերի 31-ին Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին ուղղված զեկուցման մեջ, որտեղ մասնավորապես ասվում է. «Այն, ինչ կատարվել է տաճիկների կողմից Ալեքսանդրապոլի շրջանում նրանց վեցամսյա տիրապետության շրջանում և այն, ինչ կատարվում է վերջին օրերս՝ նրանց այստեղից հնարավոր հեռացման զուգընթաց, ուրիշ անուն կրել չի կարող, քան հայ ժողովրդի սիստեմատիկ տնտեսական քայքայում և նրա ֆիզիկական բնաջնջում: Օսմանյան կառավարությունը իր նպատակին հասնելու համար անում էր այս ամենը անշեղ, համառ: Գյուղից տարվում էր ամեն ինչ՝ և՛ անասուն, և՛ բերք, տնային իրեր, և այդ հողի վրա զարգանում էր մահացությունը, որը սուկալի չափերի էր հասնում: Հարյուրհազարավոր փթերով տանում էին ցորենը,

²⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 85:

²⁷ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 135, թ. 29:

գարին, այլուրը, կարտոֆիլը, տասնյակ հազարներով քշում են անասունը, այն ժամանակ, երբ ժողովուրդը՝ այդ բոլորի տերը, կամաց-կամաց մեռնում է սովից: Աշխատող ձեռքեր էլ չկան, մոտ 10000 երիտասարդներ են ուղարկել (իրենց սայլերով), որ նրանց համար գերեզման է նշանակում, շատ քչերն են վերադառնում այնտեղից, վերադարձողներն էլ այնպիսի դրության մեջ են, որ ապրել չեն կարողանում: Գյուղերում հաճախացել են բռնաբարությունների, թալանի դեպքերը, շատացել են քրդերի ավազակային հարձակումները, իսկ քաղաքում կատարվում է թալան, ավելի «օրինական»: Տարվում են առանձին իրեր, հասարակական ու պետական գույք: Կայարանից ու դեպոյից տանում են, ծախում ու փչացնում ամեն ինչ, ու վաղը հաղորդակցության միջոցներից գուրկ պիտի դադարի երթնելությունը՝ իր հետ բերելով սուկալի հետևանքներ: Տեսնում եմ բոլորը, բողոքում, դիմումներ եմ անում, բայց իրական հետևանքի հասնել անհնարին է այստեղ:

Գերիների համար իմ բոլոր դիմումներին ստացա մի պատասխան, որ ավելի շատ ծաղր է այդ հազարավոր թշվառների ու հայ կառավարության հասցեին. «Հայաստանի կառավարության ներկայացուցիչը թող հանգիստ լինի՝ ձերբակալվածների վերաբերյալ արդարություն պիտի գործադրվի»: Արդարություն, որ շատ նշանակություններ կարող է ունենալ իր իսկական նշանակությունից շատ տարբեր, առանձնապես տաճիկների բերանում հայի նկատմամբ»:²⁸

Խոյեցյանը, նկարագրելով թուրքերի կատարած գործողությունները և այն իրավամբ համարելով հայերի սիստեմատիկ բնաջնջում, կարծում էր, թե դա թուրքական օկուպացիոն իշխանությունների կամայականության և հայատյացության հետևանք է, ուստի խնդրում է Հայաստանի կառավարությանը դիմել Կ.Պոլսին և դաշնակիցներին, որպեսզի նրանք հեռացնեն Շևքի փաշային: «Կարծում եմ, - գրում է նա, - որ հայ կառավարութիւնը պիտի շտապի դիմել Կ.Պոլսին և դաշնակից պետություններին, ամենից առաջ թույլ չտալու, որ այստեղից արտահանի ժողովրդի պետական ու հասարակական գույքը ու առանձնապես հացը, կենսամթերքը, վերադարձնի գերիներին ու սայլերի բեռը, հեռացնել տալ Շևքի փաշային, որ մասամբ հեղինակն է ու ուղղություն տվողը բոլոր այս խժոժությունների և սրա հետ միջոցներ ձեռնարկել, որ ժողովուրդը սովից չմեռնի: Հաց - ահա հրամայական ու անհետաձգելի պահանջը մոմենտի: Հաց ձեռք բերելու համար պիտի արվի կարելին ու նույնիսկ անկարելին, այլապես Ալեքսանդրապոլի շրջանի ժողովուրդը անպայման մահվան է դատապարտ-

²⁸ ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 89, թ. 60-61:

ում»²⁹ Սակայն բազմաթիվ փաստերը վկայում են, որ թուրքական զինակալման շրջանում Ալեքսանդրապոլի գավառում կատարված գործողությունները ոչ թե առանձին թուրքերի հայատյացության հետևանք էին, այլ՝ մշակված և վարպետորեն իրականացվող պետական քաղաքականություն:

Վերոհիշյալ քաղաքականության ուսումնասիրությունը հայությանը հնարավորություն է տալիս միջազգային ատյաններում բարձրացնելու հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման հարցը, մանավանդ որ 2015 թվականից սկսվել է ցեղասպանության ճանաչման խնդիրը քաղաքական դաշտից միջազգային իրավունքի և պահանջատիրության դաշտ տեղափոխելու գործընթացը:³⁰

Եզրահանգում. Հայոց ցեղասպանության պատմության ամբողջական ուսումնասիրության համար կարևոր է Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլում թուրքական ցեղասպան քաղաքականության բացահայտումը Արևելյան Հայաստանում: Այս առումով առանձնակի կարևորություն են ձեռք բերում թուրքական արշավանքներից անմիջապես հետո ականատեսների վկայությունները: Պատմաբաններիս խնդիրն է փաստաթղթերով ապացուցել հայ բնակչության կորուստները՝ հայերի թալանված ունեցվածքի և հարստության փոխհատուցման խնդիրները միջազգային ատյաններում բարձրացնելու նպատակով:

Արևելյան Հայաստանում հայ բնակչության նկատմամբ կատարված գազանությունների և անօրինակ թալանի մասին վկայությունները չեն կորցրել իրենց այժմեականությունը և թուրքական շարունակվող ժխտողականության պայմաններում հնարավորություն են ստեղծում Հայոց ցեղասպանության ճանաչման և փոխհատուցման պահանջի համար: Հայոց ցեղասպանության հարյուրամյակով սկիզբ է առել արդարության վերականգնման համար հայության պայքարի նոր փուլը, որի նշանաբանն է՝ ոչ միայն ճանաչում, այլև հատուցում:

ПОТЕРИ НАСЕЛЕНИЯ АЛЕКСАНДРОПОЛЬСКОГО УЕЗДА В ПЕРИОД ТУРЕЦКОЙ ОККУПАЦИИ (май-декабрь 1918 г.)

Александян К. В.

Ключевые слова: *турецкое вторжение, показания, Первая мировая война, следственный комитет, геноцид, преступление, мародерство, бойня, провинция Александрополь.*

²⁹ Նույնը:

³⁰ **Մինասյան Է.**, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արդի փուլի առանձնահատկությունները. Դատապարտում և հատուցում // Հայոց ցեղասպանություն-100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 2016, էջ 37-62:

В статье рассмотрены и преданы гласности ужасные страдания армянского населения во время турецкого вторжения в Восточную Армению и оккупации Александропольского уезда в 1918 году. Представлены показания жителей Александропольского уезда о людских и материальных потерях, которые были направлены в Комиссию по расследованию ущерба в Первой мировой войне.

Факты статьи утверждают, что несовместимые с жизнью и достоинством турецкие зверства в отношении армянского населения Александропольского уезда являются преступлениями не только против армян, но и против всего человечества и должны быть возмещены без срока ограничений.

LOSSES OF THE POPULATION OF ALEXANDRAPOL PROVINCE DURING THE TURKISH OCCUPATION (May-December 1918)

Aleqsanyan K. V.

Key words: *Turkish invasion, testimonies, First World War, Investigative Committee, Genocide, crime, looting, massacre, Alexandropol province.*

The article is about revealing and publicizing the terrible suffering by the Armenian population during the Turkish invasion of Eastern Armenia and the occupation of Alexandropol province in 1918. The testimonies of the population of Alexandropol sent to the World War I Bureau of Injury Investigation on human and material losses are presented. The article states that the Turkish atrocities incompatible with the human life and dignity of the Armenian population of Alexandropol are not only crimes against Armenians but against all mankind as well and should be reimbursed without limitation.

References

1. **Aleksanyan K. V.** Arevmtahay gaxtakanutjuny Aleksandrapoli gavarum 1914-1918, «Izd. Banber Hajastani arxivneri», Yerevan, 2012 (**In Armenian**).
2. **Aleksanyan K.V.** Arevmtahay gaxtakannern Aleksandrapoli gavarum Arajin hamashxarhayin paterazmi tarinerin, Pastatxteri havaqacu, «Banber Hayastani arxivneri», tiv 2, Yerevan, 2008 (**In Armenian**).
3. **Aleksanyan K.V.** Turqiayi cexaspan qaxaqakanutyann sharunakakanutyunn Aleksandrapoli gavarum, «Banber Hayastani arxivneri», tiv 1, Yerevan, 2005 (**In Armenian**).
4. **Grigoryan R.** Thurk musafatakan zorqeri vochrakorcutyunnery Andrkovkasi hayabnak shrjannerum 1918-1920/ Banber Hayastani arxivneri, 1, Yerevan, 1996 (**In Armenian**).
5. **Irazek** Tachkakan vayraguthyunnern Aleqsandrapoli gavarum, 17 hoktemberi, tiv 22, Yerevan, 1919 (**In Armenian**).

6. **Minasyan E.** Hayoc cexaspanuthyan mijazgayin chanac hman ardi phuli arancnahat-kyunner@: Datzpartum yev hatucum, Hayoc cexaspanuthyun-100//mijazgayin gitajoghovi nyutheri joghovatsu, Yerevan, «Gituthyun» hrat., 2016 (**In Armenian**).
7. Hayasatani azgayin arxivi fonder: 200, 201, 221 (**In Armenian**).
8. «Haraj», 17 hoktemberi, thiv 22, Yerevan, 1919 (**In Armenian**).
9. Hay joghovrdi korustner@ Aragin hamashxarhayin paterazmi tarinerin «Hamashxarhayin paterazmic hay jodhovrdi krac vnasneri qnnich hancnajokovi phastathghtheri yev nyutheri joghovatsu, kazmec A.Zaqaryan, Yerevan, 2005 (**In Armenian**).

Ընդունվել է՝ 09.03.2020

Գրախոսվել է՝ 05. 05 .2020

Հանձնվել է տպ.՝ 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների

կենտրոնի գիտաշխատող, էլ. հասցե՝ karineal@mail.ru

ՀՏԴ՝ 93.94 (093)

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՎԵՐԱՊՐԱԾ
ԱԼԽՈՐ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄԸ

Ինգա Ավագյան

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *Կարմիր Խաչ, գյուղ Ղազանչի, Հայոց ցեղասպանություն, հիշողություն, գերմանական գերություն, ջարդարար թուրք, Կարին, Խնուս:*

Մեծ եղեռնի 105-ամյակին ընդառաջ, երբ հայությունը թևակոխել է Հայոց ցեղասպանության ճանաչումից հատուցում անցման հիմնափուլը¹, էլ ավելի է արժևորվում Մեծ եղեռնի ականատեսների կրտսեր սերնդի ներկայացուցիչների վկայությունների հրատարակությունը, որոնք կարևոր են հայ ազգի պահանջատիրության հիմնահարցերի լուծման և թուրքական ժխտողական քաղաքականության դեմ պայքարի համար: Այս հուշապատումներից մեկն է գրող և

¹ Տեղին է մեջբերել Ա. Պետրոսյանի վերջերս առաջարկած ձևակերպումը. «Անկասկած է՝ ցեղասպանության թեմայի չարչրկումը կարող է հանգեցնել բարդությունների և հոգեկան վնասվածքների: Բայց բացասական հետևանքների կարող է հանգեցնել նաև մոռացումը: Մեր ժողովրդի և պետության առջև կանգնած ամենաեական խնդիրներից է այն, թե ինչ ձևերով և ինչպիսի ուղղվածությամբ պիտի Եղեռնի թեման արծարծվի ոչ միայն քաղաքականության, այլև գիտության մեջ, դպրոցում, հասարակական կյանքում և արվեստում: Նախնիների տառապանքը, անմեղ զոհերի հիշատակը և հերոսների սխրանքներն ամենուրեք արժևորվում են որպես հոգևոր ինքնամաքրման և վեհացման գործոններ: Անցյալի հիշողությունը, ճիշտ մոտեցման դեպքում, կարող է ոչ թե հոգեկան բարդությունների ու հասարակության հիվանդության պատճառ դառնալ, այլ վերածվել ազգապահպան հզոր գենքի՝ բարոյական ուժի աղբյուրի, որը ժողովրդին կօգնի դիմագրավելու զրկանքները և նոր բարձունքներ նվաճելու» (Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Ցեղասպանություն և ազգաձուլություն // Պատմաբանասիրական հանդես /այսուհետև՝ ՊԲՀ/, 2007, թիվ 3, էջ 36, 37):

բանաստեղծ Խորեն Ալեքսանյանի (ստեղծագործել է Ալխոր Շուշանյան գրական կեղծանվան ներքո) «Մանկությունս. թուրքական արշավանքների տարիներին» խորագրով անտիպ հուշապատումը, որը ընթերցողին ներկայացվում է սույն հրապարակումով:

Նախաբան. Վերջին տարիներին լույս տեսած գրականության մեջ կարևոր տեղ են գրավում պատմական հիշյալ իրադարձությունների անմիջական մասնակիցը դարձած ականատես վկաների և Մեծ եղեռնը վերապրածների պատմած կամ գրառած հիշողությունները: Հուշապատումները, անշուշտ, աչքի են ընկնում իրենց անհատականությամբ, բայց իրարից անկախ՝ գրեթե նույնությամբ պատկերում են պատմական միանման իրողություններ, դեպքեր, կերպարներ և իրադարձություններ, նույնպիսի ահասարսուռ տեսարաններ ու անմարդկային դաժանություններ, որոնք, զուգակցվելով, հաստատում, շարունակում, լրացնում են միմյանց՝ անձնականից վերածվելով համընդհանուր, համագգային ողբերգության՝ Մեծ եղեռնի կամ Հայոց ցեղասպանության: Ականատես վկաների պատմած կամ գրի առած հուշերն իրենց կառուցվածքով տարբեր են՝ սեղմ կամ ծավալուն, արձակ կամ չափածո: Այս դեպքում հիշողությունները ծավալուն ու երկարապատում են, ներառում են զանազան երկխոսություններ, մեջբերումներ, ժողովրդական բանահյուսություն՝ երգ, վիպերգ, զրույց, առածասացվածք, օրհնանք, անեծք, աղոթք, երգում, ավանդույթներ²:

Խորեն Ալեքսանյանը (Ալխոր Շուշանյան) ծնվել է Շիրակի Ղազանչի (այժմ՝ Մեղրաշատ)³ գյուղում 1914թ.: Ստացել է ուսուցչի որակավորում և աշխատել շրջանի դպրոցներից մեկում: Ստեղծագործել է տարբեր ժանրերում՝ արձակ, չափածո, կատարել թարգմանություններ գերմաներենից, անգլերենից: Հետպատերազմյան շրջանում Ստալինյան բռնաճնշումների հանդեպ ունեցած վախը ստիպել է նրան գերմանական գերությունից ազատվելուց հետո մեկնել ԱՄՆ, որտեղ էլ 1960-ական թթ. գրել է իր հուշապատումը՝ բաղկացած երկու մասից: Սակայն մեզ հասել է միայն հուշերի առաջին մասը: Ալխոր Շուշանյանի հուշապատումը եզակի է նրանով, որ իր հույզերը նա փոխանցում է արձակի ձևով՝ հաճախ դրանք համեմելով նաև բանաստեղծություններով:

Ա՛խ, իմ հուշեր, անուշ հուշեր,
Միրտս լի է ձեզանով,

Եկեք ամեն զօր ու գիշեր,
Ձեզ կընդունեմ սիրաբար:

² Ցեղասպանությանը վերաբերող հուշապատումների համապարփակ վերլուծություն կատարել է Վ. Սվազյանը, որի առաջադրած սկզբունքների մասին տե՛ս **Սվազյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը, Եր., 2003, էջ 14: **Սվազյան Վ.**, Հայոց ցեղասպանություն. ականատես վկաների վկայություններ, Երկրորդ՝ համալրված հրատարակություն Եր., 2011:

³ **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՀՏԲ), հ. 3, Եր., 1991, էջ 497:

Ծաղիկ կյանքիս վառ երազներ,
Անցաք անդարձ ու խռով:
Ոսկե շողեր, խաղաղ հուշեր,
Միրոս քաց է ձեզ համար,

Ա՛խ, իմ հուշեր, գարուն հուշեր,
Ձեզնով եմ արդ սփռվիվում,
Ներկաս տխուր, վաղը փշեր...
Հուշեր...հուշեր անհատնում:

(21.01.47 Մյունխեն)

Բանաստեղծությունների թվագրումից հասկանալի է դառնում, որ դրանց մեծ մասը գրվել է երիտասարդ տարիքում՝ 30-42 տարեկանում՝ Գերմանիայում և ԱՄՆ-ում ապրած տարիներին: Այդ երբեմն անհարթ չափածո տողերը Հայաստանի, Շիրակի, Արագածի, Ախուրյանի, «մեր դաշտերի», հայրենի տան՝ նկատմամբ անափ սիրո և անհագ կարոտի զեղումներ են.

Ա՛խ, կլինի նորից տեսնեմ
հայրենիքիս արևն անուշ,
Մեր դաշտերի խոտը փարթամ,
ցողաթաթախ տերևն անուշ,
Շրջեմ ազատ մեր դաշտերում, լսեմ
երգը հորովելի,
Տամ ու առնեմ հայի լեզվով՝ բարի
լույսն ու բարևն անուշ:

Ա՛խ, կլինի նորից լինեմ իմ
հայրենի հին հարկի տակ,
Հայր մերն ասեմ, ճաշի նստեմ
պատից կախված ճրագի տակ,
Գնամ պապիս ջրաղացը, վառեմ
թոնիքը հինավուրց,
Խմոր հունցեմ, բաղարջ թխեմ
մոխիրախառն կրակի տակ:

Ալիտր Շուշանյանն իր հուշապատումի առաջին տողերում նշում է. «Հպարտ եմ, որ հողագործի որդի եմ, այլ ոչ իշխանի»: Արագածին ձոնած իր բանաստեղծություններից մեկում նա գրում է, որ իր նախնիները գաղթել է Կարինից: Անշուշտ, այս տեղեկությունը վերաբերում է նաև գյուղի բնակչությանը ամբողջությամբ.

Հե՛յ Արագած, ջա՛ն Արագած, սրտով սիրած սարն ես սրտիս,
Կարնից գաղթած պապիս պապին տուն-տեղ տվող սարն ես ազիզ:

Հուշապատումը արժեքավոր պատմական, ազգագրական և բանահյուսական բնույթի տեղեկություններ է պարունակում (օր.՝ ներկայացնում է Զատկի տոնը, հարսանեկան արարողությունները գյուղում, XX-րդ դարասկզբի շիրակյան կենցաղի մանրամասները): Ա. Շուշանյանը երբեմն պատմում է իր երազներից, փորձում մեկնել դրանք, երբեմն մեջբերում է ասացվածքներ, ժողովրդական բանահյուսության այլ պատառիկներ:

Կարոտով է հիշում Առաջին աշխարհամարտի ընթացքում արևմտյան ռազմաճակատում զերի ընկած հորը, ռազմագերիների ճամբարից նրա գրած նամակները, որ ընտանիքը ստանում էր ամիսը մեկ անգամ, և այն, որ այս նամակների վրա կարմիր խաչ կար պատկերված, որը տատիկը և ինքը համբու-

րում էին ամեն անգամ: Հուշերը հստակ պատկերացում են տալիս XIX դ. վերջին ստեղծված «Կարմիր խաչ»⁴ հումանիտար կազմակերպության գործունեության մասին: Դրանց հեղինակը հիշում է, որ բանակում ծառայելուց խուսափելու համար ծնողները նորածին տղաների ծնվելուց հետո նրանց աջ ձեռքի ցուցամատը կտրում էին: Եվ միայն երջանիկ պատահականությամբ է Ալխորը խուսափում հաշմանդամ դառնալուց, տատը չի թողել, որ պապը կտրի իր ցուցամատը:

Հուշերում մի հատված կա՝ «Թուրքերը թալանեցին մեր գյուղը» խորագրով: Շուշանյանը ստույգ փաստարկներ է բերում թուրքական թալանի մասին, մանրամասն ներկայացնում այն ամիսները, երբ թուրքերը գրավել էին Ալեքսանդրապոլի գավառի Ղազանչի գյուղը: Անշուշտ, նրա խոսքը 1920թ. թուրքական արշավանքի մասին է, քանի որ Ալխորը ծնվել է 1914թ., և այսպիսի մանրամասնություններ երեխան կարող էր հիշել միայն բավականին տարիք ունենալու դեպքում: Կարծում ենք՝ հինգ-վեց տարեկան երեխան կարող էր այս ամենը մտապահել: Մանավանդ որ շատ լավ հիշում է, որ թուրքերի արշավանքը պատերազմի ավարտից հետո էր, իսկ հայրական գյուղը թուրքական խուժանը թողեց ողջ ձմեռը մնալուց հետո: Ասվածը հաստատ վերաբերում է 1920թ. թուրքական արշավանքին, երբ թուրքական բանակը Ալեքսանդրապոլի գավառի ռազմակալած տարածքները թողեց միայն խորհրդային իշխանության ճնշումներից հետո՝ 1921թ. ապրիլին: Ցավոք, մեզ անհայտ է մնում, թե ինչու Ալխորը չի հիշում թուրքական նախորդ՝ 1918թ. արշավանքը, որի ընթացքում նույնպես թալանվեցին Ալեքսանդրապոլի գավառի հայկական գյուղերը: Ամենայն հավանականությամբ, երեք-չորս տարեկան երեխան այդ ամենը հիշել չէր կարող, բայց Ալխորը չի հիշատակում նաև այդ մասին տանեցիների պատմածները:

«Առաջին համաշխարհային պատերազմը դեռ նոր էր վերջացել,-գրում է հուշերի հեղինակը,-հազարավոր մայրերի աչքերից արցունքի կաթիլները դեռ չէին չորացել, երբ սկսվեց թուրքական նոր արշավանքը շատ թե քիչ ազատ մնացած հայկական հողերի վրա, որի պատճառով նորից գաղթի, թալանի, ավեր-կոտորածի և արհավիրքի սև օրեր ապրեցինք: Փոքրիկ Հայաստանը՝ բոլորից լքված ու մերժված, առանձին չէր կարող ճակատել մեր դարավոր թշնամու հետ: ...մեր դարավոր թշնամին, ազատ ու անկաշկանդ հրի ու սրի մատնելով մեր ոստանները, կոտորելով արևմտահայության մեծ մասը, եկել ու հասել էր

⁴ Дюнан Жан Анри—человек, создавший «Красный Крест»/https://stoneforest.ru/look/allabout/health/zhan-anri-dyunan/ (վերջին դիտում 13.02.2020): Տե՛ս նաև՝ **Ավետիսյան Ս.**, Հայաստանի Կարմիր խաչի ընկերության և Ամերկումի փոխհարաբերությունները (1929–1931 թթ.) // ՊԲՀ, 2016, թիվ 1, էջ 212-213:

Կովկասի դռներին: Կուզեր, որ մի հարվածով կոտորեր նաև կովկասահայությունը, որպեսզի իրականացնի իր համաթուրանական դարավոր երազանքը»:

Նա մեկ առ մեկ հիշում է, թե ինչպես թուրքերը ոտքի կոխան արեցին գյուղը: Ամբողջ մի ձմեռ մնացին գյուղում՝ կոտորելով, ավերելով և թալանելով ամեն ինչ: Պատմում է, որ նախքան թուրքերի կողմից գյուղը գրավելը, մայրը և փոքր հորաքույրը գյուղի հարսների ու աղջիկների հետ փախել էին դեպի արևելք: Գյուղից տասը կիլոմետր դեպի արևելք թուրքեր չկային: Մայրը գնացել և մնացել էր փոքր մորաքրոջ տանը: Ուզեցել էր տղային էլ իր հետ տանել, բայց տղան նախընտրել էր մնալ պապի և տատի մոտ: «Երբ որ թուրքերը մտան մեր գյուղը, տանը մնացած մարդիկ փակեցին իրենց դռները: Մի քանի օր առաջ մեր տան մեջ եղած թանկագին առարկաներն ու բաները պապս ու տատս թաքցրել էին զոմի սալաքարերի տակ և ուրիշ ապահով տեղեր: Ամեն ինչ թաքցնել չէինք կարող, ո՛չ ժամանակ ու միջոց ունեինք և ո՛չ էլ թաքցնելու ապահով տեղեր:

Մեր տան դրսի պատերը, որոնք միացած էին հարևանների տների հետ, բոլորն էլ ունեին փոքրիկ անցքեր: Նույնն էր պարագան նաև մյուս տների համար: Այդ անցքերի միջոցով մենք կապ էինք պահում մեկս մյուսիս հետ: Այդ անցքերը մեր էն ժամանակվա կարևորագույն հաղորդակցության միջոցներն էին, ավելի ճիշտ՝ մեր անթել հեռախոսները: Մեր թաղում կար երեսունհինգ տուն, որոնք այդ անցքերի միջոցով կապված էին իրար հետ: Էդ անցքերի միջոցով նաև փոքրիկ իրեր և առարկաներ էինք տալիս և առնում մեկս մյուսիս: Այդ չարաբախտ թվականին ավելի կարևոր դարձավ այդ անցքերի դերը⁵:

Քառորդ ժամ հազիվ էր անցել, երբ գազազած թուրքերը թակեցին նաև Շուշանյանի հայրական օջախի դուռը: Տեսնելով, որ բաց չենք անում, սկսեցին ոտքերով և հրացանի խզակներով հարվածել: Տղայի պապը մեջքը դեմ էր տվել դռանը, որպեսզի դուռը չբացվեր: Թուրքերից մեկը դռան դրսի կողմի մի փոքրիկ բացվածքից ձեռքը ներս է խոթում, որպեսզի դուրս քաշի դռան հետնափակը (մալուխը): Նույն պահին երեխայի տատիկը զինված դանակով փորձում է կտրել այդ կեղտոտ ձեռքը, բայց պապը թույլ չի տալիս՝ պատճառաբանելով, որ հետևանքը շատ վատ կլինի: Այսպես կես ժամ չարչարվելուց հետո թուրքերը քարերով կոտրել էին դուռը և գազազած շների նման թափվել ներս:

«Ասկյար, ասկյար ասելով խուզարկեցին ամեն մի մութ անկյուն: Տեսնելով, որ ո՛չ զինվոր կա պահված և ո՛չ էլ զենք, ըստ թրքական սովորության՝ սկսեցին իրենց կողոպուտը: Բաց արին տատիս և մորս սնդուկները, ինչ-որ հարկավոր էր իրենց, լցրին պարկերի մեջ: Էդ զինվորներից մեկն էնքան ազահ

⁵ Այդպիսի անցքեր հանդիպում էին նաև այլ բնակավայրերում, մասնավորապես Բիթլիս քաղաքում (Տե՛ս Ավագյան Ի., Մեծ եղեռնը վերապրածները, 1915թ. Բիթլիսյան ողբերգություն. Միհրան Ղազարյանի հուշապատումը, Գյումրի, 2008, էջ 15:)

ու անխիղճ էր, որ վերցրեց անգամ կոճակները, թելերը և ասեղները: Այդ տարի մեր ընտանիքի վրա ավելացավ պապիս եղբոր ընտանիքը, որովհետև նրանց տունը զինվորները վերցրին իրենց բնակության համար»:

Փոքրիկ Ալխորը փորձում է վրեժ լուծել՝ այրելով ասկյարներից մեկի գլխարկը:

Այդ ձևեռ սառչում է գյուղի առուն, և պապն ու հորեղբայրը սահնակով ջուր էին բերում մոտակա գետակից, մեկ անգամ տան, մեկ անգամ էլ թուրքերի համար: Հաճախ էր պատահում, որ զինվորներից մեկն ու մեկը ուղեկցում էր նրանց, որպեսզի ուրիշ զինվորներ չգրավեն սահնակը: Մի անգամ ուրիշի տանն ապրող երկու զինվոր պահանջում են սահնակը քաշել իրենց դուռը: Մերժում ստանալով՝ սահնակն առնում և որպես պատիժ պապին նստեցնում են պաղ սառույցի վրա: Թուրք զինվորների կեղտոտ, անմարդկային արարքները տղայի մանուկ սրտում զգվանք ու ատելություն էին առաջ բերել: Նրա ապրումների ինքնատիպ դրսևորումներ են՝ «թուրքը ավերող է, թուրքը քանդող է, թուրքը վարպետ ջարդարար է: Թուրքիան արյան բաղնիք է, վերջապես Թուրքիան ոճրագործների հայրենիքն է» արտահայտությունները: Ձմեռվա վերջերին, երբ թուրքերը մտադիր էին հետ քաշվել, գյուղերում սկսվեց մի սոսկալի ու չտեսնըված թալան ու կոտորած: Գյուղի բնակիչներին, որոնք մեծ մասամբ ծերեր ու մանուկներ էին, թուրքերը հավաքել էին եկեղեցու մեջ հրդեհելու նպատակով: «Մա մի զարհուրելի և անմոռանալի տեսարան էր, խոստովանում է պատանի Ալխորը, - երեխաների ճիչն ու լացը, ծեր մամիկների աղոթքն ու խնդրանքը երկինք էին հասնում: Շատերը ինքնասպանություն կատարեցին, որպեսզի կրակի բոցերի մեջ այրվելով, չարաչար տանջվելով չմեռնեն: Տատս լաց էր լինում և աստծուն աղոթում, իսկ պապս էլ ինձ գրկած նստել էր՝ չզհտենալով իր անելիքը: Բոլորն էլ ապրում էին հուսակտուր՝ սպասելով չարաշուք վայրկյանին: ... Բայց այդ զգվելի հրամանը չգործադրվեց, թե ինչ պատճառով, ես էլ չզհտեմ: Բաց արին եկեղեցու դռները և պատվիրեցին, որ գնանք մեր տները: Փառք տվեցինք աստծուն, որ ազատվեցինք այս փորձությունից: Մակայն մեր գավառի յոթ գյուղերի բնակիչներին՝ ծծկեր մանուկներից մինչև ծեր մամիկները այրեցին ողջ-ողջ՝ արգելափակելով մարագների և եկեղեցիների մեջ⁶: Ազատվեցին միայն մի քանի մարդիկ, որոնք այդ օրերին պատահականորեն բացակայում էին գյուղից: Ես ականատես եմ եղել մի հրեշային դեպքի: Երկու զինվորներ վիճաբանելով ձեղքեցին հայ հարսի փորը, իմանալու համար՝ արգանդի երեխան աղջիկ է, թե տղա»: Պատմության մեջ չտեսնված ու չլսված քստմնելի հրեշավոր ոճիր, որը հատուկ է միայն թուրքերին:

⁶ Եվս մի ապացույց, որ դեպքերը վերաբերում են 1920 թ.:

Այդ տարի բերքը շատ առատ էր եղել, բացի ամբարներից հորեր էին փորել, որոնք բերնեբերան լիքն էին հացահատիկով: Թուրք գնդապետը, մի խումբ ավազակ զինվորների զլուխն անցած, տնետուն մտնելով, թալանում էր ամեն ինչ, բարձում սայլերին, ուղարկում այնտեղ, ուր որ հարկն էր: Այդ օրը ոչ ոք իրավունք չունեի տնից բացակայելու, մանավանդ տանտերերը: Շուտով հերթը հասնում է Ալիսին տանը. «Պապա ծխամորճը բերանը արագ-արագ անցուդարձ էր անում ցածի տան մեջ՝ կույ տալով ծխախոտի կծու ու լեղի ծուխը: Փոքր հորեղբայրս վախից բարձրացել էր կտուրը: Ես ու տատիկս սարսափահար սպասում էինք, թե ուր որ է հիմա շները (թուրքերը) կգան: Պապիս կամքը փորձելու համար տատիկս դիմեց նրան այս խոսքերով.

-Պ...., եթե շուները քեզ ծեծեն, հորերի տեղը ըսելու ես, թե ոչ:

-Ի՞նչ ես սարսաղ-սարսաղ դուրս տալիս, ավելի լավ է ես մեռնիմ, քան թե մեր գերդաստանը անոթի մնա»: Եվ իրավ, եթե պապը հորերի տեղն ասեր, գարունը սովից բոլորը կկոտորվեին, իսկ ընտանիքին պատկանող արտերը կմնային առանց սերմնացուի, անմշակ:

Հանկարծ մի խումբ զինված թուրքեր մի սպայի առաջնորդությամբ մտնում են տուն, նրանց հետ էր նաև գյուղացի Ա.Յ...անը, որը մատնություն էր անում թուրքերին՝ ցույց տալով թաքցրած ապրանքների տեղը:

Նախքան նրանց գալը Ալիսի տատը քուրսու վրա աղ ու հաց էր դրել, բայց թուրքն ինչ գիտե աղ ու հացի նշանակությունը: Սկզբից թուրքը տանում է ամբարների մեջ եղած հացահատիկը, հետո, հրացանների խզակներով թխկթխկացնելով գետինը, հորերն են փնտրում: Մի քանի տեղ կասկածանքով փորում են, բայց հոր չեն գտնում: «Սպան, դառնալով պապիս, ասաց.

- Գյավո՛ւր, ու՛ր են հորերը: Եթե չասես, հետևանքը շատ վատ է կլինի:

- Փաշա՛, ո՞վ է իմ հոր փորողը, որ հոր ունենամ: Ես ըխտիար (ծեր) մարդ եմ, ջահել էլ չկա:

Այս պատասխանն ստանալով՝ փաշան ապտակեց պապիս, զինվորների հրամայեց, որ պառկեցնեն ու ծեծեն: Բարեբախտություն էր, որ մեր տան անկողինների ծալքը զինվորները շուտ էին տվել, որն ընկել ու ծածկել էր ցորենի հորը: Զինվորներից մեկը թոկով ամուր կապեց պապիս ոտքերը, մեկն էլ՝ ձեռքերը: Պապիս պառկեցրին անկանոն թափված անկողինների վրա: Զինվորներից մեկը վեր բարձրացրեց պապիս կապված ոտքերը, իսկ մի զինվոր էլ մտրակով սկսեց հարվածել պապիս ներբաններին: Տեսարանը սրտաճմլիկ ու զարհուրելի էր: Գործի անցան նաև մյուս զինվորները: Փաշան հրամաններ էր տալիս, իսկ նրանք մտրակներով հարվածում էին պապիս: Զինվորները ծեծում էին, իսկ փաշան ծիծաղելով սպառնում էր, թե ծեծելով կսպանի.

Մեր գյուղացի դավաճան մատնիչ ու թրքասեր Ա.... Էս սպայի նման ծիծաղելով, համոզում էր. «Ասա՛ էլի, իմուդ Պ...., մի՞ թե ցորենը քո կյանքից թանկ է»:

Ճարահատյալ՝ տատիկը հորերից մեկի տեղն ասում է և համոզում, որ էլ ուրիշ հոր չկա: Ի վերջո դադարեցնում են ծեծը: Ամբարների պես՝ դատարկում են նաև հորի մեջ եղած ցորենը, հավաքում տան մեջ եղած կարևոր առարկաները, բարձում սայլերին ու տանում: Տանում են նաև ընտանիքի Ասլան և Ղափլան գեղեցիկ եզները: «Կյանքում շատ եզներ եմ տեսել, բայց այդ եզների նման գեղեցիկ ու ուժեղ եզներ դեռ տեսած չկամ», - ցավով գրում է Ալխորը:

Դու տանը չէիր, հա՛յր, կռիվ կար,
պայքար,
Թուրքերը եկան, մեր գյուղը մտան,
Պապիս ծեծեցին, տանջին չարաչար,
Ասլան ու Ղափլան եզները տարան,
Փոխարեն տվին երկու լղար եզ,
Ինչեր քաշեցինք արտը վարելիս,
Մի քիչ մաքրեցինք մոլախոտ ու սեզ,
Մեկ եզը սատկեց տափան անելիս...

Սատկածի տեղը լծեցինք մի կով,
Ուղը դրեցինք մեծ եզան վրա,
Խեղճ եզը ծեր էր, կույր էր,
դանդաղկոտ,
Հազիվ էր քաշում տափանը ցեխոտ...
Սով կար էն տարին, ցավ կար էն
տարին,
Խուլերը տարավ իմ սիրուն մամին,
Հունիսին քաղինք դեռ չհասած
գարին,
Կոպտոն խառնեցինք էն տարին
հացին...»:

Ալխորը հարմար առիթի էր սպասում, որ Ալիից վրեժ լուծի: Մի օր կտուրին նստած խաղում էր կոտրած ապակիներով, երբ տեսավ, որ փողոցով գալիս է Ալին: Կտուրից կոտրած կճուճի մի մեծ կտոր է գցում թուրքի գլխին ու փախչում է տուն: «Էդ ժամանակ ես հինգ տարեկան էի, սիրոս թայրտում էր ուրախությունից ու վախից: Լավ արեցի, եթե Ալին սատկի, մեր ոչխարներն էլ մորթող չի լինի: Ստիպված էի այդ բանն անելու, որովհետև նա վառեց գլխարկս, որը հայրս էր գնել, երբեմն էլ ապտակում էր ինձ, իսկ պապիս ծեծողներից մեկն էլ դարձյալ Ալին էր: Ես տեսա, թե ինչպես այդ շունը զինվորական կոշիկով խփեց պապիս քթին, որից առատորեն արյունը ծորում էր ցած: Այս մտածմունքի մեջ էի, երբ բակում լսեցի Ալու և պապիս փոքր եղբոր խոսակցությունը: Նրանք ինձ էին փնտրում:

-Փշացա՛ճ, մեր բախտի հետ ես խաղում, ուզում ես մեզ կոտորել տալ:

Ատելությամբ վառված աչքերով՝ արյունաբերու դահիճը կանգնել էր անգոր ու անպաշտպան հայ երեխայի դիմաց՝ ձեռքին մերկացրած սուրը: Տանեցիները տղային ստիպում են համբուրել Ալիի ձեռքերը: «Ինչպե՞ս կարելի էր համ-

բուրել այդ կեղտոտ ձեռքերը, որոնց վրա դեռ կային հազարավոր հայ մանուկների չորացած արյան հետքերը: Ինչպե՞ս համբուրել այն կեղտոտ ոտքերը, որոնք անոթի հայ նահատակների դիակների վրայով էին քայլել: ...Կարծես թե մի նոր Սասունցի Դավիթ էի դարձել: Ինչ արին-չարին, ո՛չ մոտեցա, ո՛չ հնազանդվեցա և ո՛չ էլ հաշտվեցի Ալու հետ»:

Այս դեպքից հետո Ալին միշտ հետապնդում էր տղային, տեսնելիս մուշի-մուշի ասում և թափահարում բռունցքը: «Մուշի ասելով,-գրում է Ալխորը,-թերևս նկատի ուներ մեր Մուշն ու հերոսական Սասունը, ուր հայ կտրիճները՝ Սերոբ փաշայի, Անդրանիկի, Գևորգ Չաուշի և շատ ուրիշների հետ դարբնեցին հայ ազատամարտի հերոսական կռիվները ընդդեմ հարստահարիչ թուրքերի՝ պաշտպանելով հայ շինականի պատիվն ու գույքը: Ամեն մի ազգ չափվում է իր արվեստի և մշակույթի մնայուն կոթողներով: ...եթե Թուրքիան չէ տված արվեստի գլուխգործոցներ, կոթողական գործեր, սակայն ապահովաբար արվեստի բարձրության է հասցրել իր միակ արձանիկը՝ ցեղասպանությունը»:

Հուշապատումի ավարտին Շուշանյանը խոսում ֆիդայական շարժման երևելիների՝ Աղբյուր Սերոբի, Անդրանիկի, Գևորգ Չաուշի մասին⁷: Չնայած հուշերը գրված են XX դ. կեսին, բայց Շուշանյանը շրջանառության մեջ է մտցնում «վերապրող» տերմինը⁸: Նա գրում է շիրակցու հյուրասիրության մասին, այն հոգատարության, որով Շիրակի բնակիչները ընդունում և օգնում էին գաղթական վերապրողներին: Պատմում է մի քանի գաղթական հայերից (սասունցի Մամո, խնուսցի Հզրո և Զարո), որ մազապուրծ էին եղել թուրքական յաթաղանից 1915թ.: «Տխուր էր Հզրոն, տխուր էր նաև Զարոն: Հայրենի տան կարոտն այրում էր նրանց մղկտացող սիրտը: Հրից ու սրից էր ազատվել Հզրոն, գուլումից հրաշքով փրկվել Զարոն... Երկուսն էլ հավասարապես տառապում էին Երկրի կարոտով: Այդ կարոտն օրեցօր հալում ու մաշում էր նրանց կիսամաշ սիրտը: Նրանք հույս ունեին, որ մի օր կվերադառնան իրենց հայրենի գյուղը՝ նորից ծխեցնելու հայրենի օջախը: Գլուխը կախ, խեղճ ու կրակ Հզրոն, խոր հառաչանք արձակելով, կասեր այս հայրենակարոտ խոսքերը.

-Ա՛խ, մըր վաթան, խորո՛տ վաթան, Մինչ ե՞րբ մնամ խեղճ գաղթական,
Մըր խող ու ջուր, քզի դուրբան, Սուրբ Կարապետ մզի պաշտպան:

Զարոն, լսելով Հզրոյի հայրենաբաղձ խոսքը, հույս էր տալիս ամուսնուն, որ վերևը Աստված կա, որն անշուշտ մեկ օր լույս ու ճար կանի:

⁷ Армянский вопрос, под редакцией К. Худавердяна, Ер., 1991, стр. 27, 68, 109:

⁸ Տե՛ս **Սվազյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը, էջ 14: **Սվազյան Վ.**, Հայոց ցեղասպանություն. ականատես վկայողների վկայություններ, էջ 3-10:

-Հզրո՛, դու սուս, Հզրո՛, դու սուս,
Ըմեն օր մենք չենք մնար դուրս,

Աստված կենե մեկ ճար ու լույս,
Էսօր-էգուց կերթանք Խնուս:

Խեղճ Հզրոն ու Չարոն՝ բոլորի կողմից լքված ու մերժված, անտանելի աղքատության մեջ փակեցին իրենց աչքերը՝ Խնուսի կարոտն ու սերը իրենց հետ տանելով սառը գերեզման: Արդյոք Աստված տեսա՞վ այդ ամենը: Եթե տեսավ, ինչու՞ օգնության չհասավ:

Կոտորածների մասին խոսելիս Շուշանյանը առաջ է քաշում հարցը Հայոց ցեղասպանության փոխհատուցման, «որը գալու է շուտով»: Հուշապատումի ձեռագիր տետրը բաղկացած է 106 էջից և կրում է «Ալխոր Շուշանյան՝ Մանկությունս»⁹ խորագիրը¹⁰: Ալխոր Շուշանյանը գիրքը ձոնել է «անմոռանալի հորն ու մորը», սակայն մանկության հուշերում մեծ տեղ են զբաղեցնում նաև տատն ու պապը: Նա առանձնահատուկ գործվանքով ու սիրով է արժևորել մեսրոպաշունչ մայրենին.

Հայր է եղել, մայր է եղել, իմ
թոթված բառն առաջին,
Մտքիս խոփան արտն է հերկել
մեսրոպաշունչ տառն առաջին,
Երկաթագիր գիրն է եղել, գիրքն
է եղել ինձ կաղապար,
Ինչպես կախարդ սիրտս է գերել
չարենցաշունչ տաղն առաջին:

Մարն է եղել ինձ մարգադաշտ,
ուլն ու գառը՝ վագրիս ընկեր,
Աղբյուրները լուսակարկաչ՝
ամենօրյա խաղիս ընկեր,
Մանկան ճիչով, ձեր աղմուկով,
խաղացել եմ՝ ազատ անհոգ,
Մարն է եղել, ձորն է եղել
մանկածիծաղ կյանքիս ընկեր:

Շուշանյանի հուշապատումը ներառում է նաև բանահյուսական արժեք ներկայացնող ժողովրդական ստեղծագործություններ, մասնավորապես Շիրակում երգվող մանիներից երկուսը, որոնք գյուղի բնակիչները երգել են ու երգի տակ պարել նրա պապենական ջրաղացում ցորեն աղալիս.

Աղջի՛, արի՛ պար խաղանք,
Ծանդր խաղանք, լավ խաղանք,
Հարսանիքիդ այլուրը
Կ...ի ջաղացն աղանք:

Կ...ի ջաղացն էս է,
Թեփն այլուրի կես է,
Կուզես աղա, կուզես ոչ,
Ճշմարտությունը էս է»:

Երիտասարդ աղջիկներն ու տղաները երգում էին ժողովրդական կատակ-երգեր¹¹, ահա դրանցից մեկը.

⁹ Բնագրում՝ «Ալխոր Շուշանյան՝ Մանկություն»:

¹⁰ Մեր շնորհակալություն ենք հայտնում Հասմիկին՝ Շուշանյանի եղբոր աղջկան, որը մեզ տրամադրեց հուշապատումը, լուսանկարներ, տոհմաձառը և այլ կարևոր տեղեկություններ:

¹¹ Երաժշտագետների հետ ճշտեցինք, որ քառյակները մինչ օրս մասնագետներին անծանոթ են – Է.Ա.:

<i>Տղաները</i> - Լուսնակ պատին դիպել է, Բաթալո, ջան բաթալո, Սերս քեզի կպել է, Շաքար է շատ, բաթալո:	<i>Ջուրը</i> բերնեդ կվազա, Բաթալո, ջան բաթալո: <i>Տղաները</i> – Դու մեր տունը հարսնացու, Բաթալո, ջան բաթալո, Ես էլ հորդ փեսացու, Բաթալո, ջան բաթալո:
<i>Աղջիկները</i> - Խնդրեմ, խոսքդ ետ առնես, Բաթալո, ջան բաթալո, Խոսքիդ պատասխան կառնես, Բաթալո, ջան բաթալո:	<i>Աղջիկները</i> - Թրիքը թափել կտամ, Բերանդ ծեփել կտամ, Կորի գնա, չա՛ր տղա, Եղբորս իմաց կտամ:
<i>Տղաները</i> – Չայիրները լակած է, Բաթալո, ջան բաթալո, Աղջի, թուշո պագած է, Բաթալո, ջան բաթալո:	<i>Տղաները</i> – Թրիք թափողը ես եմ, Բերան ծեփողը ես եմ, Եղբորիցդ չեմ վախնա, Թուշո կծողը ես եմ:
<i>Աղջիկները</i> - Հերիք խոսես գյավագա Բաթալո, ջան բաթալո,	

Զատկական տոնի մասին պատմելիս Շուշանյանը կարևոր մի սովորույթ է ներկայացնում, թե ինչպես ակլտիզից (ինքն անվանում է *խոխուջիկ*) պոկված փետուրները քարով մանրել, փշրել ու թաղել են հողի մեջ: «Հիշում եմ, թե ինչպես, փոքր հորեղբայրս, որն ինձանից մի քանի տարով էր մեծ,-գրում է նա,-մեր հավերից մի քանի գույնի յոթ փետուր էր պոկում: Այդ փետուրները շրջագծի ձևով ամրացնում էր մի սոխի, կամ էլ թե՛ մի գետնախնձորի վրա, վրան էլ մի փոքրիկ քար էր դնում ու մի հաստ թելով կախում մեր ցածի տան երդիկից: Շաբաթը լրանալիս հորեղբայրս դուրս էր քաշում մի սպիտակ փետուր, դնում քարի վրա, կոտրատում և հողի մեջ թաղում էր: Դրանով նախ պահպանվում էր շաբաթների հաշիվը, միևնույն ժամանակ սպիտակ փետուրները՝ որպես մեռնող ձմռան նշան, անհետանում էին ակլտիզի-խոխուջիկի վրայից»: Երբեմն, երբ Ալխորը տատիկից պանիր էր պահանջում, ակլտիզը բարկանում էր և քարեր նետում նրա վրա:

Ալխոր Շուշանյանը նաև թարգմանություններ է կատարում, փորձում է թարգմանել Գյոթեին: Նա նուրբ հոգեկերտվածք ունի և որպես բանաստեղծ, մեծ ցավ է ապրել մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի մահվան բոթը լսելով.

Ավետիք Իսահակյանին (անմոռանալի հիշատակին)

Դու երգեցիր ծիլ ու ծաղիկ Հավքերի հետ ձեն տվիր, Դու երգեցիր վարդ ու աղջիկ, Միրտդ բացիր, սեր տվիր,	Առվի ափին ուռին դողաց, Մենակ մնաց, ո՞ւր կերթաս, Սրտով սիրած, կարոտ թողած, Անվերադարձ ո՞ւր կերթաս:
---	--

Էն քո սիրած հավք ու երամ,
Աստղ ու լուսին, ցող ու շող,
Ու Հայաստանն արևահամ,
Հագան մահվան սզի քող...

Մահդ լսին հավքերն անուշ,
Կոկոսացին ու լացին,
Էջմիածնի զանգերն անուշ,
Ղողանջեցին, ողբացին:

Մրմռացող վերքը սրտիդ,
Անրուժ մնաց, մեծ գուսան,
Թրթռացող երգը շուրթիդ
Սառավ, ազիզ Ավո ջան...

Մեր հայրենի հողն արգավանդ,
Թող շիրիմդ գուրգուրե,
Զով հովերը հարանդ, մարմանդ,
Թող քեզ անուշ քուն բերեն...

1957, Միլֆորդ, ԱՄՆ

Ալխորը կարևորում է նաև ընթերցողի կարծիքը, ուստի և անկեղծանում է՝ ասելով, որ ամենալավ ու բարեխիղճ քննադատը ընթերցողն է:

Եզրահանգում. Ալխոր Շուշանյանի «Մանկությունս. թուրքական արշավանքների տարիներին» հուշապատումը պատմական, ազգագրական, աղբյուրագիտական առումով արժեքավոր ստեղծագործություն է: Հուշապատումը մեծաքանակ նոր նյութեր է դնում շրջանառության մեջ, իր ձևով ինքնատիպ է՝ գրված արձակի և չափածոյի համադրությամբ և իբրև Շիրակի պատմամշակութային ժառանգության արժեքավոր նմուշներից մեկը՝ կիրատարակվի «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի հերթական յոթերորդ պրակով:

ВОСПОМИНАНИЯ ПЕРЕЖИВШЕГО АРМЯНСКИЙ ГЕНОЦИД АЛХОРА ШУШАНЯНА

Авагян И.Э.

Ключевые слова: *Красный Крест, село Казанчи, немецкий плен, турки погромищики, Карин, Хнус.*

Переживший Армянский геноцид Хорен Алексанян - писатель, который творил под псевдонимом Алхор Шушанян, родился в 1914г. в Ширакском селе Казанчи - ныне Меграшат. Он творил в разных жанрах и направлениях: поэзия, повесть, на армянский язык переводил известных немецких и английских авторов. Пережив два турецких нашествия (1918 и 1920 гг.) он получает образование, преподает в сельской школе, возглавляет одну из школ района, но во время Великой Отечественной войны он попадает в плен и после победы, боясь сталинских репрессий, он решает переправиться через океан в США. Трудной была жизнь у скитальца. Обосновавшись в США он в 1960-ых гг. пишет свои воспоминания, которые состоят из двух частей. У нас под рукой только первая часть мемуаров, которая состоит из 106 рукописных страниц и имеет заглавие «Мое детство». Красота мемуаров в том, что они написаны в двух жанрах - прозе и поэзии. Но кроме литературной ценности, воспоминания представляют историческую, этно-

графическую, социально-демографическую картину данного периода и являются бесценным источником историко-культурного наследия Ширака.

Воспоминания Алхора Шушаняна в дальнейшем будут изданы в издаваемой нами серии «Пережившие Армянский геноцид».

MEMORIES OF ALKHOR SHUSHANYAN WHO HAS SURVIVED ARMENIAN GENOCIDE

Avagyan I. E.

Key words: *The Red Cross, the village of Kazanchi, German prisoners, Turkish massacres, Karin, Khnus.*

The survivor of the Armenian genocide Khoren Aleksanyan - a writer who worked under the pseudonym Alhor Shushanyan, was born in 1914 in Shirak village Kazanchi - now Megrashat. He worked in different genres and directions: poetry, story, translated famous German and English authors' writings into Armenian. Having survived two Turkish invasions (1918 and 1920), he gets an education, teaches at a rural school, heads up one of the schools in the district, but during the World War II war he is captured prisoner and after the victory of the Soviet Union, fearing Stalinist repression, he decides to cross over across the ocean to the USA. The wanderer life was difficult. Having settled in the USA in the 1960s he writes his memories, which consist of two parts. We have at our disposal only the first part of the memories, which consists of 106 handwritten pages and is entitled "My Childhood". The beauty of the memoirs is that they are written in two genres - prose and poetry. But besides the literary value, the memories represent the historical, ethnographic, socio-demographic picture of this period and are an invaluable source of Shirak's historical and cultural heritage.

In the future we shall publish Alkhor Shushanyan's memoirs in the series "Those who have Survived Armenian Genocide".

References

1. Armyanskiy vopros, pod redaktsiyey K. Khudaverdyana, Yerevan, 1991 (**In Russian**).
2. Avagyan I. E. Mets egherny verapratsnery, Hishoghutyunner mer yntaniqi patmutyan mi qani paherits. Aghasi Makaryani hushapatumy, Gyumri, «Izd.Eldorado», 2015 (**In Armenian**).
3. Avagyan I. E. Mets yegherrny verapratsnery, 1915. Bitlisyan voghbergutyun. Mihran Ghazaryani hushapatumy, Gyumri, «Izd.Dpir», 2008 (**In Armenian**).
4. Avetisyan S., Hayastani karmir khachi ynkerutyun yev amerkomu pokhharaberutyunery (1929–1931tt.)// Patmabanasirakan handes, Yerevan, 2016, tiv 1 (**In Armenian**).
5. Hakobyan V.H. Manr zhamanakagrutyunner XIII-XVIII dd., h. II, Yer., 1956, ej 603-613 (**In Armenian**).

6. **Hakobyan T. Kh., Melik-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh.** Hayastani yev harakic shrjanneri teghanunneri barraran, 5 hatorov, h. 2, Yerevan, 1988 **(In Armenian)**.
7. **Hakobyan T. Kh., Melik-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh.** Hayastani yev harakits shrjanneri teghanunneri barraran (HTB), 5 hatorov, h. 3, Yerevan, 1991 **(In Armenian)**.
8. **Orbeli I. A.** Izbranniye trudi v dvukh tomakh, tom II, vypusk 2, Yerevan, 2002 **(In Russian)**.
9. **Petrosyan A.** Tseghaspanutyun yev azgatsnutyun, Patmabanasirakan handes, Yerevan, 2007, tiv 3 **(In Armenian)**.
10. **Svazlyan V.** Hayots tseghaspanutyuny yev patmakan hishoghutyuny, Yerevan, 2003 **(In Armenian)**.
11. **Svazlyan V.** Hayots tseghaspanutyun. akanates vkayoghneri vkayutyunner, Yerkrord hamalrvats hratarakutyun, Yerevan, 2011 **(In Armenian)**.

Ընդունվել է՝ 18.03.2020

Գրախոսվել է՝ 16. 05. 2020

Հանձնվել է տպ.՝ 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Ինգա ԱՎԱԳՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, Գյումրու «Կումայրի»

պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի

գիտաշխատող, էլ. հասցե՝ inga.avagyan.76@mail.ru

УДК 72.03

**ИСТОРИЧЕСКАЯ ВЕРНАКУЛЯРНАЯ АРХИТЕКТУРА ГЮМРИ:
ОБОСНОВАНИЕ ПОНЯТИЯ И ПОДХОД К СОХРАНЕНИЮ**

Андрей Иванов

Агентство промышленного развития города Москвы

Ключевые слова: *живой вернакулярный город, вернакулярный ансамбль, регулярный вернакуляр, свобода внутри решетки, черный туф, мастер.*

В статье приводится ряд обоснований адекватности термина «вернакулярная» природе гюмрийской исторической «архитектуры без архитекторов».

Выясняются соотношения со спецификой Гюмри теоретических концептов урбанистического понятия «вернакулярный город», разрабатываемого в гуманитарной географии понятия «городской вернакулярный район» и предлагаемого автором понятия «вернакулярный ансамбль», обосновывается: правильно ли говорить не только о вернакулярной архитектуре Гюмри, но и о Гюмри в целом как о живом вернакулярном городе? Выделяются 4 этапа развития Александрополя-Ленинакана-Гюмри как города, преемственно воспроизводящего локальную архитектуру, создаваемую на основе характерных для Западной Армении традиций домостроения, использования местных и столичных образцов и прототипов и импровизации мастеров-каменщиков в рамках общепризнанных неписаных правил построения городской среды.

Отвечая на вопрос: можно ли сохранить и как правильно сохранять в современном глобализующемся мире историческую вернакулярную архитектуру Гюмри, автором выдвигается и обосновывается принцип «в вернакулярном городе мысли и действуй вернакулярным образом».

1. УНИКАЛЬНОСТЬ ГЮМРИ

*That far land we dream about,
Where every man is his own architect.*

Роберт Браунинг¹

1.1 Общие сведения о городе

Город Гюмри назывался ранее Кумайри (по данным древнегреческих историков, он существовал в VIII в. до н. э.), Гумры (XVIII – начало XIX века), Александрополь (крепость основана в 1835 г., город учрежден в 1840 г.) и Ленинакан (1924–1991 гг.). К концу XIX – началу XX вв. это был крупнейший город управлявшейся Россией Восточной Армении, важный экономический и культурный центр Южного Кавказа, место дислокации российского военного гарнизона вблизи границы с Османской империей. Историческая часть города, малоэтажные кварталы, построенные практически без участия архитекторов, сохранили свою аутентичность в советское время как многофункциональный центр города. Однако в 1988 г. город был разрушен землетрясением, к которому добавился ряд других травмирующих событий: закрылись советские промышленные предприятия; независимая Армения вступила в полосу экономического кризиса; большинство активных и образованных горожан уехали.

С тех пор город выживает и развивается в основном самостоятельно, опираясь на врожденную городскую культуру горожан, уникальные местные традиции и упорство оставшихся жителей.

1.2 Основные этапы городского развития

Александрополь-Ленинакан-Гюмри – это город, преемственно воспроизводящий и развивающий локальную архитектуру исторических городов Западной Армении, оказавшихся в границах Османской империи (Ван, Муш, Карс и др.). Оттуда в Александрополь добровольно переселились первые мастера-каменщики после присоединения Восточной Армении к России в 1829 г. и принесли с собой свои умения. Потомки и ученики этих мастеров, используя местные традиции домостроения и импровизируя в рамках общепризнанных неписаных правил, продолжают здесь вернакулярное строительство вплоть до сегодняшнего дня.

¹ *Browning [1873]*. Приблизительный перевод: «Та далекая земля, о которой мы мечтаем, / Где каждый человек – свой собственный архитектор».



Илл. 1. План крепости и города Александрополь. 1830-е гг.

Выделяются 4 этапа вернакулярного развития города:

традиционный (1830-е – 70-е гг., когда город получил регулярный план с прямоугольной сеткой кварталов и начал застраиваться первыми каменными зданиями);

мультикультурный (1880-е – 1910-е гг. – расцвет Александрополя после присоединения к России соседней Карсской области и строительства железной дороги до Карса, когда город, не изменяя своей природе, активно вбирал в себя модные архитектурные веяния);

компенсационный (1920-е – 50-е гг., когда вернакулярное строительство частных жилых зданий на средства горожан продолжалось вопреки официальной политике советского государства);

неовернакулярный (1990-е – настоящее время, когда после периода торжества модернизма и массового возведения многоквартирного жилья возрождается строительство традиционных частных жилых домов из черного туфа).

Но и в 1960-е – 80-е годы в городе работали отдельные мастера-строители, и вернакулярная традиция в целом не прерывалась.



Илл. 3. Бригада Мукуча Мхитаряна во время восстановления колокольни храма Всеспасителя, 1965.
Источник: URL: <http://cfa.am/en/construction-masters>
(дата обращения: 31.03.2020).



Илл. 2. Общий вид Александрополя. Открытка, 1900-е гг

1.3 Вернакулярный метод строительства

В архитектурных текстах термин «вернакуляр» употребляется в применении к застройке, выполненной без участия профессиональных зодчих, обладающей определенными средовыми и художественными достоинствами и названной Бернардом Рудовски «архитектурой без архитекторов» (*Rudofsky* 1964).

Интерес к такой застройке, медленно нараставший в течение всего XX века, оформился в его конце в «Хартии по построенному вернакулярному наследию», ратифицированной в 1999 году 12-й Генеральной ассамблеей ИКОМОС в Мехико. Хартия оценивала вернакулярное наследие или, иными словами, историческую вернакулярную архитектуру, как «занимающее центральное место в привязанностях людей к их среде обитания <...> составляющее ядро существования человека как такового <...> фундаментальное выражение культуры сообщества, его отношений с занимаемой им территорией и, в то же время, выражение культурного разнообразия мира». «Оно появляется неформальным образом, но тем не менее упорядочено. Оно выполняет утилитарные функции и в то же время обладает уникальностью и красотой. Это фокус современной жизни и в то же время свидетельство истории общества. Это творение человека, но также и результат работы времени. Было бы антигуманно не принимать мер по сохранению этого традиционного гармоничного наследия» (*Charter on the Built...* 1999).

Для прояснения разницы понятий «народная» и «вернакулярная» архитектура я воспользуюсь мнением известного исследователя вернакуляра Аллена Нобла, считающего, что если авторами народной архитектуры обычно являются лица, не обученные профессионально строительному искусству, то вернакулярная архитектура также создается простыми людьми (*the common people*), но может быть создана и профессионалами, прошедшими обучение по системе «мастер-подмас-

терье» (apprenticeship), с использованием при этом местных, традиционных образцов и материалов (Noble 2007: 1-17).

Именно такие профессионалы, входившие в гильдию каменщиков, были основными акторами строительства Александрополя. При «проектировании» и строительстве домов они использовали и творчески перерабатывали архитектурные «прототипы» (уже построенные другими мастерами или ими самими здания) и «образцы» (опубликованные в альбомах и каталогах чертежи построек различных типов).

Знаменитый армянский архитектор Рафаэль Исраэлян, тонко чувствовавший нюансы исторического зодчества Армении, в своей статье 1954 года «Об архитектуре Ленинакана» подчеркивал умение местных мастеров использовать исторические аналоги: «Особенно заметно сходство творений профессиональных мастеров Александрополя/Ленинакана с архитектурой города Ани. Дело в том, что мастера-архитекторы XIX в. не стали слепо следовать особенностям архитектуры прошлого, но развивали ее в соответствии с современными требованиями, так, чтобы она выглядела соответствующей современной архитектуре и все же следовала старым традициям» (Israelyan 1982).

При формировании города действовали обратные связи, важные для устойчивости любой системы: прототип/образец – новый дом – реакция коллег-мастеров, заказчика и его соседей – извлечение уроков и совершенствование умений – следующая постройка, отличавшаяся от прежней, как правило, в лучшую сторону.

Таким образом строились и храмы. Показательный пример – строительство церкви Аменаприкч (Всеспасителя). Самый большой храм города (и самая высокая на тот момент армянская церковь в мире) возведена в 1860–1873 гг. на средства, пожертвованные горожанами, как копия кафедрального собора Ани – одной из древних столиц Армении, руины которой находятся недалеко от Гюмри. Строительство осуществили местные мастера Тадевос Андикян и Манук Петросян. На протяжении четырнадцати лет каждое воскресенье мастер Тадевос в экипаже направлялся в Ани и делал там обмеры собора, что давало ему возможность осмысленно руководить осуществлявшимся в Александрополе грандиозным проектом (Патикян 2011).



Илл. 4. Собор Ани (989-1001, архитектор Трдат); церковь Святого Спасителя (Аменаприкч) в Александрополе. Фотографии начала XX в.

Примечательно, что мастер-строитель Аменапркича – его называли в городе «мастером мастеров» («варпетац варпет») и мэтром (устабаши) (Согомонян 2018) – «открыл» и оценил анийские шедевры зодчества своего народа тысячелетней давности задолго до академика Николая Марра и архитектора Тороса Тороманяна².



Илл. 5. Вернакулярный ансамбль улицы Абовяна. Фото автора, 2019

И даже практически «освоил» один из них, взяв в качестве величественного образца. Но строил он Аменапркич так же, как любой городской дом-опираясь на прототип и импровизируя: по сравнению с оригиналом в новом храме увеличен размер, изменены пропорции и детали (так, вместо циркульных появились стрельчатые арки), сфантазирован купол³. Образ собора Ани послужил своего рода «решеткой» – каркасом для творчества мастера.

1.4 Живой вернакулярный город: свобода внутри решетки

Одним из первых российских адептов понятия архитектурного и средового вернакуляра был урбанист Александр Высоковский, который в своей лекции 2013 года «Вернакулярный город» говорил о «невидимой, но очень мощной структуре понимания и идентификации места, в котором живут горожане», как о «мыслительной конструкции, порожденной самими людьми в процессе жизнедеятельности», и назвал ее «вернакулярным городом или вернакулярной структурой, по аналогии с вернакулярным районом и другими вернакулярными конструктами, которые не являются результатом осознанной технической или научной деятельности, а возникают в процессе жизнедеятельности, проживания и вживания, взаимодействия с окружающими физическими объектами и социальными средами» (Высоковский 2015).

Уникальный материал сохранившейся в Гюмри исторической вернакулярной застройки позволяет раскрыть некоторые аспекты формирования и бытования ее особого типа – «регулярного» вернакуляра, созданного искусными местными мастерами-каменщиками – актерами срединной архитектурной культуры. Именно ими – в парадигме «свобода внутри решетки», при «рамочном» участии военных инженеров и инженеров-строителей (возможное в ряде случаев участие профессиональных зодчих пока документально не подтверждено) и был создан город Александрополь.

² Вряд ли мастеру были известны самые первые специально посвященные Ани издания – выпедшие одновременно с его работой над александропольским храмом книги академика Броссе (Brosset. Ruines d'Ani, I-II, СПб, 1860–1861) и Д.И. Гримма (Памятники христианской архитектуры Грузии и Армении. СПб, 1866) – см.: (Арутюнян 1964). Раскопки под руководством Н.Я. Марра начались в Ани только в 1892–1893гг. и продолжились в 1903–1914 годах с участием Т. Тороманяна, Н. Буниатяна и др.; их результаты широко публиковались в научной и популярной литературе – но все это случилось через полвека после подвижнического труда Тадевоса Андикяна.

³ Купол Анийского собора рухнул при землетрясении 1319 г.

Но и после появления в Ленинакане в середине 1920-х годов дипломированных архитекторов «рядовая» частновладельческая жилая застройка возводилась чаще всего тем же вернакулярным образом.



Илл. 6. Парадный и боковой фасады типичного вернакулярного дома на ул. Пушкина. Фото автора, 2017

Традиции александропольского вернакуляра живы и в сегодняшнем Гюмри. Состоятельные горожане, возводящие дома в историческом центре, не утратили интерес к архитектуре и используют приемы местного каменного строительства, идя при этом на весьма немалые дополнительные «затраты на красоту».

Для понимания специфики нашего предмета важны два следующих замечания.

А) Александрополь был городом в том античном или раннесредневековом понимании этого слова, которое подразумевает в качестве основной градоформирующей силы самодеятельность горожан – ремесленников-мастеров, хозяев собственной жизни, умело и красиво строящих свой «горизонтальный» мир.

Но этот город создавался в заданных «сверху» рамках:

- планировочных («решетка» регулярного плана),
- правовых (предписания о необходимости вписываться в «решетку» и согласовывать «рамочные» строительные проекты, указы городских властей «о выпрямлении улиц» и т.д.),
- эстетических (использование архитектурных прототипов и образцов: «высоких» – как собор Ани, и «срединных» – как разного рода альбомы и каталоги «образцовых» проектов, имевшие в городе широкое распространение).

Б) Это – свободный город, созданный при минимальном участии бюрократии и максимальном – «рядовых» жителей.

«В городе заправляли царские чиновники, но им так никогда и не удалось проникнуть в глубины его жизни, так и не удалось окрасить ее в свой цвет – серый. Правда, на улицах стояли городовые, в пригородных казармах и в крепости – войска, но это было всего-навсего кольцо, охватившее жизнь города по поверхности, извне. Внутри этого кольца Гюмри имел свои собственные краски и отстаивал их, как только мог» (Армен 1984).



Илл. 7. Таблица из книги (Браузеветтер 1904); жилой дом на ул. Туманяна (начало XX в.) построен, скорее всего, с использованием подобного каталога и дополнен грандиозной аркой ворот, одним из архетипов городского вернакулярного ансамбля. Фото автора, 2016

Административные функции сосредотачивались: в масштабе города – в Александропольской крепости (город управлялся извне скорее по военной, чем по гражданской линии)⁴. Как пограничному городу ему предоставлялся ряд особых финансовых и экономических льгот); в региональном масштабе – в Ереване, назначенном губернским центром, но в то время меньшим по численности населения, более «восточным» и менее развитым, чем Александрополь.

Архитектурно-средовой феномен Александрополя-Гюмри заключается в наличии мощного срединного средообразующего слоя исторической вернакулярной архитектуры, существующего на стыке «высокой» и «низовой» архитектурных культур.

Но гюмрийский феномен выходит за пределы застройки как таковой. Здесь наличествует *живой вернакулярный город*, причем в смысле, несколько отличающемся от того, который вкладывал в это понятие А. Высоковский. Если для Высоковского «вернакулярный город» – «мыслительная конструкция», которая зарождается в уже данной людям среде при ее обживании, переживании и осмыслении, то в данном случае, помимо (и прежде) этого, это город, созданный именно *вернакулярным образом*. В отношении исторического Гюмри это понятие перестает быть метафорой или сугубо теоретическим концептом и становится прямым определением местной реальности.

К сегодняшнему дню в большинстве городов, считающихся историческими, «вернакулярность» сохранилась лишь в виде застывших «следов», отдельных зданий-реликтов, которые могут даже состоять на охране как архитектурные памятники. Но такой город, как Гюмри, остается и сейчас живым вернакулярным городом, ибо в нем продолжают бытовать спонтанные, низовые вернакулярные

⁴ Так, по данным изучавшего этот вопрос гюмрийского архитектора Р. Егояна, «Николаю I посылались ежегодные отчеты относительно текущего состояния строительства крепостей, и без получения его одобрения работы не продолжались» (Шагоян 2012). Александрополь как пограничному городу, военному форпосту Российской империи предоставлялся ряд особых финансовых и экономических льгот.

практики. Социальное, деятельностное, нарративное наполнение среды, во многом следующее исторической традиции, здесь не менее важно, чем ее собственно архитектурные составляющие.

На простую планировочную сетку здесь накладывались плотные и сложные сети многообразных человеческих взаимодействий, экономических и культурных



Илл. 8. Вернакулярный ансамбль улицы Горганяна. Фото автора, 2017

транзакций, гетерогенных художественных образов, городских преданий и анекдотов, жизненных историй. Причем, в отличие от первой, эти сети никто не проектировал – они были полностью естественны, самоорганизованы, стохастичны. Это наложение продолжается и сегодня. И одним из результатов взаимоналожения спонтанного и спланированного становится непреднамеренная красота городской среды.

2. ВЕРНАКУЛЯРНЫЙ ЛЕКСИКОН ГЮМРИ

*anyone lived in a pretty how town
(with up so floating many bells down)
spring summer autumn winter
he sang his didn't he danced his did.
Эдвард Эстлин Каммингс⁵*

2.1 Вернакулярный ансамбль

Важная сторона уникальности Гюмри – эстетичность городской материальной субстанции. Применительно к его историческому центру можно говорить не просто о вернакулярной среде «срединного» уровня, но о среде весьма высокого архитектурного, художественного качества. Для более адекватного описания этого урбанистического феномена я предлагаю использовать понятие «вернакулярный ансамбль» (ВА).

Не является ли оно своего рода оксюмороном? Ведь «ансамбль» – термин, который обычно используется искусствоведами или историками «высокой» архитектуры. Корректно ли применять его к non-pedigreed, по словам Б. Рудофски, архитектуре?

⁵ (Каммингс Б. Г.).



Илл. 9. Вернакулярный ансамбль улицы Спандаряна. Фото автора, 2018

Не претендуя на окончательность суждений, отмечу, что приложение термина «ансамбль» к среде исторического центра Александрополя-Гюмри может быть оправдано наличием у нее очевидной эстетической ценности и образного единства, а также ряда других качеств, традиционно приписываемых архитектурному ансамблю – соразмерности, согласованности частей, уникальности, социокультурной признанности⁶.



Илл. 10. План города с выделением территории заповедника «Кумайри». 1980-е гг.
Из личного архива создателя заповедника архитектора Сашура Калапяна

Но ценность эта – все же не универсального, а локального, местного порядка. При этом целым рядом других атрибутивных свойств ансамбля в его конвенциональном понимании этот объект, очевидно, не обладает (композиционная продуманность, стилистическое единство, художественная осмысленность, иерархичность частей, синхронизированность элементов, неразрывность целого). Так что ес-

⁶ Иначе здесь не появился бы уже в 1980 году самый большой в СССР государственный историко-архитектурный музей-заповедник «Кумайри», включивший в свои границы всю историческую часть города площадью около 1000 га.

ли это и «ансамбль», то ансамбль особый, и ему присущи некоторые качества, принципиально отличающие его от классического «архитектурного ансамбля».



Илл. 11. Фрагмент вернакулярного ансамбля Гюмри: стилиевой коллаж на улице Абовяна. Фото автора, 2017

Наиболее важной отличительной особенностью ВА является *субъект ансамблевости*. Ему свойствен иной, чем классическому архитектурному ансамблю, тип создателей («авторов» или акторов городской среды). Из многочисленных определений «ансамбля» моему пониманию ВА, пожалуй, более всего соответствует определение «ансамбля в сценическом искусстве» в словаре Брокгауза и Ефрона: «Для полного А. необходимо иметь эстетически образованных артистов, добросовестно относящихся к своему делу» (*Энциклопедический словарь... 1890*). Именно такими «артистами» были строители вернакулярного Александрополя.

Коллективный субъект ВА – мастера-ремесленники, «эстетически образованные» в ходе обучения у старших коллег и ознакомления с материальными и печатными образцами и прототипами, творчески действующие в рамках местных традиций и планировочных, юридических и эстетических ограничений.

Архитектор – это, по выражению Адольфа Лооса, «строитель, выучивший латынь». Гюмрийские мастера латыни, скорее всего, не знали – они разговаривали на своем языке (и в переносном – на местном архитектурном лингва франка, – и в прямом смысле: гюмрийский диалект и гюмрийский юмор до сих пор четко распознаются в Армении).

И еще – они были открыты для творчества, и они импровизировали, свободно смешивая в своих произведениях элементы высокой, срединной и низовой архитектурных культур.

«В классической музыке музыкальное сочинение важнее, чем его исполнение, а в джазе наоборот», – говорил американский композитор Андре Превин. Так, по-джазовому, и был исполнен этот город-джем-сейшен, и эта его непредсказуемая импровизационность – еще один фактор его особой привлекательности.

Приведу характерный пример – фрагмент застройки улицы Руставели. Там есть на первый взгляд странная пара – один из самых роскошных домов Александрополя⁷ и довольно бесцеремонно поставленная рядом с ним, скорее всего в 1950-е годы, башенка электроподстанции.

⁷ Т.н. «Дом с двойным карнизом». Он интересен, в частности, «шахматной» сбивкой осей кронштейнов двух карнизов в боковых частях фасада при их согласованности в центральной части. Мастер импровизировал от души!



Илл. 12. Фрагмент вернакулярного ансамбля Гюмри: надгробие на старом городском кладбище. Фото автора, 2017



Илл. 13. «Дом с двумя карнизами» и башенка электроподстанции на ул. Руставели. Фото автора, 2019



Илл. 14. Перебивка осей кронштейнов в боковых частях фасада «Дома с двумя карнизами». Фото автора, 2018

Строители башенки работали в совсем иное время, чем строители дома, в ином социуме, с иного рода заказчиком. А получился в итоге своего рода вернакулярный (микро)ансамбль, сложенный по тем же базовым принципам – рукодельность, любовное отношение к материалу, сомасштабность человеку, уважение к контексту, вписанность в ткань места.

2.2 Продолжающийся вернакуляр 1950-х

Американский историк архитектуры Грег Кастилло считает, что в «восточных» национальных республиках СССР в целом использование местных, национальных архитектурных форм в государственном строительстве имело чисто внешний, декоративный характер: «Преследуя цель преобразования «отсталых» обществ по образу социализма, культурные власти [Советского Союза] монументализировали формы вернакулярной архитектуры, чтобы символизировать региональную идентичность населения, и в то же время ликвидировали социальные и политические структуры, которые лежали в основе вернакулярных традиций» (Castillo 1997).

В Ленинакане «структуры, лежавшие в основе вернакулярных традиций», каким-то образом продолжали существовать – это видно по результатам преемственного «низового» воспроизводства алекпольского вернакуляра вплоть до конца 1950-х годов.



Илл. 15. Дом 146 по ул. Гукасяна. Построен мастером Петросом Карапетяном в 1957 г.
Фото автора, 2018

Советской властью не были уничтожены вернакулярные практики жилищного строительства. «Городу ремесленников», вопреки официальной борьбе с вернакуляром⁸, удалось удержать традицию частной жилой застройки по историческим прототипам. Принцип «свобода внутри решетки» продолжал действовать.

Официальный город как бы закрывал глаза на повседневную жизнь, проходившую в кварталах регулярного вернакуляра, частично огражденных в 30-е – 50-е годы «ширмами» сталинских парадных проспектов. На свободных участках исторических кварталов продолжалось создание нормального (не-социалистического, не-модернистского) города – руками его жителей.



Илл. 16. Мастер Петрос и его семья. Фото 1950-х гг. Из архива семьи Карапетян

⁸ Так, «В 1931 году вышло постановление ЦК КП/б/А “О бесплановом строительстве и дефектах в архитектурно-строительном деле”, в котором говорилось о запрещении практики заказывания проектов частным лицам, подчас мало квалифицированным, и ведения строительства без утвержденных проектов» (Долуханян 1980).

Характерный пример – дом № 146 по улице Гукасяна, построенный мастером Петросом Карапетяном в 1957 году. Согласно рассказу вдовы мастера Анаит Карапетян⁹, дом возведен на предоставленном горисполкомом угловом земельном участке в юго-восточной части исторического города, распланированной еще в начале 20 века, и был уже третьим по счету, сооруженным мастером для его семьи по мере ее роста. Черные туфовые камни для облицовки фасадов по 5 рублей за штуку (примерно 1/150 от средней зарплаты в СССР в 1957 г.) мастер заказывал на карьере, а затем собственноручно обтесывал с выполнением архитектурных деталей. Остальные материалы были не столь дороги, но весь дом был сложен Петросом собственноручно. На стройке каждодневно работала и его жена. Интересна трудовая этика этой семьи, принципиальное равенство ее членов. Анаит рассказывала:

«- Мы этот дом построили вдвоем.

- Вы помогли мужу?

- Я не помогала, я работала! Обычно на стройке бывают мастер и рабочие. Так вот, Петрос был мастером, а я – рабочим. Потому что пятеро детей было, и не было возможности рабочего нанять. Работали рано утром, до ухода мужа на работу. Отходы от камней я собирала в ведра и заполняла ямы на улице».

На иждивении мастера (он и формально работал в то время мастером в строительной бригаде при железнодорожной станции – не худшая, но и далеко не самая высокая должность в тогдашнем Ленинакане) находилось шесть человек (жена, сын и четверо дочерей), детей нужно было готовить к поступлению в институты, девочек – к замужеству, и каждый рубль в семье был на счету. Несмотря на это, только на украшение двух уличных фасадов дома потрачены немалые деньги. Было важно построить дом «не хуже, чем у людей». А по возможности и лучше – особняк стал первым в округе, оборудованным ванной с горячей водой, что вызвало любопытство и зависть соседей.

Рассказчица подробно описала роль в процессе строительства знакомого ее мужа – городского инженера, бесплатно выдавшего мастеру проект двухэтажного дома, а затем закрывшего глаза на то, что из-за нехватки средств был построен совершенно другой – одноэтажный дом.

Этот простой с виду дом и по сей день украшает город, закрепляя один из углов его прямоугольных кварталов. В тридцатую годовщину землетрясения 1988 года внучка мастера, Ани Саркисян, вспомнила в своем посте в Фейсбуке: «Мой дед Петрос был каменщиком... После страшного землетрясения он попросил его отвезти в Гюмри, прошелся по всем своим постройкам... впервые я видела слезы на его глазах... “Теперь, девочка моя, моя душа спокойна. Всем свое дело надо делать на совесть, тогда не было бы столько жертв...” Дома, которые построил мой дед в Гюмри, были целы после землетрясения и стоят по сей день...».

⁹ Беседа с автором 08.05.2017, Ереван. Бабушка Анаит ушла из жизни 12 мая 2019 года в возрасте 97 лет.



Илл. 17. Дом 146 по ул. Гукасяна. Деталь.
Фото автора, 2018

Вернакулярная архитектура – всегда устойчива (в полном значении термина sustainable). В случае Гюмри она доказала свою устойчивость и в буквальном смысле. На фасадах здесь часто высечена дата строительства здания. Читая этот «вернакулярный дневник» города, можно установить рубеж преемственного бытования традиционного вернакуляра в Ленинакане. Это конец 1950-х – начало 1960-х гг., время запуска массового жилищного строительства, когда у горожан

впервые появилась возможность решить жилищный вопрос иными способами, получая квартиры в пятиэтажках.

2.3 Неовернакуляр XXI века

В начале нового тысячелетия в городе появились новые дома из черного туфа. Иногда они безыскусны, порой – если хозяева побогаче – с претензией на «роскошность», пропорции их больше не идеальны, детали вычурны и порой вульгарны. Они строились при неодобрении тогдашнего мэра города, неофициально запретившего в городе новые черные дома («они печальны, нам нужны светлые, радостные»), но для себя построившего в историческом центре города шикарный черный нео-вернакулярный особняк.



Илл. 18. Новые дома из черного туфа постройки
2000-х гг. на улице Маяковского.
Фото автора, 2018

Таких слишком щедро, чрезмерно украшенных новых домов достаточно много в центре города. В отличие от контекстуального исторического вернакуляра, их задачи амбициозней. С одной стороны, их заказчики находятся внутри традиции, следуют ее устоям (строят только по красным линиям, не выше двух этажей, используют традиционные материал и декор). С другой, они хотят не просто влиться в городской ансамбль, но

проявить собственную значимость, выделиться из общего ряда. Отсюда – перебор в деталях, их взаимонесоответствие, нарушение негласных правил построения фасадов, коим следовали старые мастера...


Но появляются и более скромные и уместные 1- и 2-этажные черные дома, корректно встраиваясь в среду и продолжая в XXI в. лучшие традиции александропольских мастеров и их наследников, работавших в Ленинакане еще в 1950-х гг.



Илл. 19. Дом постройки 2000-х гг. на ул. Абовяна – реплика «Дома с 2 карнизами». Фото автора, 2017



Илл. 20. Новый и старый дома из черного туфа на улице Шираза. Фото автора, 2018



Илл. 21. Одноэтажные дома постройки 2010-х гг. с деталями из красного туфа на т.н. 25-й улице, подчиненные по высоте церкви Богородицы (известной также как Церковь Семи ран). Фото автора, 2019



Илл. 22. Арка между модернистским и историческим зданиями из черного туфа. Фото автора, 2019

Мы знаем, как трудно принимаются и тем более исполняются ограничительные режимы нового строительства в постсоветских исторических городах. Тем удивительнее само появление подобных зданий, полностью уместных и «правильных», происходящее здесь без всяких писаных правил. В городе как будто бы действует какой-то невидимый, очень строгий регламент, преступить который не то чтобы невозможно – горожане сами этого не хотят.

Символична появившаяся совсем недавно небольшая каменная арка, «сшивающая» кубический объем нового черного модернистского здания на главной площади города с соседним историческим домом. Такое возможно, как представляется, только в таких городах, как Гюмри.

ity like this one makes me dream tall and feel in on things.

Тони Моррисон¹⁰

Выводы: Гюмри расценивается сегодня в Армении как единственный хорошо сохранившийся исторический город страны. По мнению властей, его нужно развивать как туристический центр. Но соответствует ли такое направление развития природе этого города, который был построен его жителями прежде всего для самих себя?

В мире сегодня умеют создавать туристические «витрины». А вот как вернуть город к его глубинным основам, как направить вектор преобразований не на внешнюю привлекательность, а на поддержание собственной логики его саморазвития?

Это серьезный вызов и для горожан, и для специалистов. Ответить на него можно, только внимательно изучая исторические особенности и живые сегодняшние практики вернакулярного города.

В эпоху тотальной гибридизации, цифровизации, тиражирования всех сторон человеческой жизни чрезвычайно важно сохранить такие редкие, чудом сохранившиеся, аутентичные вернакулярные города-ансамбли, как исторический Гюмри. Их одухотворенная традициями, культурой и рукотворностью среда дает нам надежду, что современный – и будущий – город может быть *не* бездушен и *не* бесчеловечен.

ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐՆԱԿՈՒԼՅԱԴ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՄԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐ
Իվանով Ա Վ.

Բանալի բառեր՝ վերնակույյար ապրող քաղաք, վերնակույյար ամբողջություն, կանոնավոր վերնակույյար, ազատություն ցանցի մեջ, սև տուֆ, վարպետ:

Գյումրի քաղաքի /նախկին Ալեքսանդրապոլ, Լենինական/ ճարտարապետական և միջավայրային առանձնահատկությունները հատկորոշվում են վերնակույյար ճարտարապետությանը հատուկ շերտվածությամբ՝ «առանց ճարտարապետների ճարտարապետություն» (Բերնարդ Ռուդոֆսկի) բնորոշմամբ. կառուցապատողները վարպետ քարաշ-որմնադիրներն էին, իսկ որպես շինարարական հումք օգտագործվում էր սև տուֆը:

¹⁰ Цит. по: (*New York...* 2000). Я предпочел привести эту удивительно точно описывающую мое ощущение Гюмри фразу в оригинале, ибо могу предложить лишь приблизительный перевод, не передающий всех ее смыслов: «Этот город побуждает меня мечтать о высоком и находить самого себя во всем существе».

19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին Գյումրին Արևելյան Հայաստանի ամենամեծ քաղաքն էր, նրա տնտեսական և մշակութային կենտրոնը /Հայաստանը Ռուսական կայսրության կազմում էր/:

Քաղաքի պատմական մասը նախագծված ցածրահարկ ուղղանկյուն թաղամասերն են: Չնայած 1926 և 1988 թվականների ավերիչ երկրաշարժերին՝ քաղաքը պահպանում է ինքնատիպությունը և ծառայում է որպես բազմագործոնային միջուկ:

Հողվածում Գյումրու օրինակով լուսաբանվում են վերնակույր քաղաքի և վերնակույր անսամբլի տեսական նոր մոտեցումները, ինչպես նաև քննվում են տարբեր փուլերում հիշյալ ճարտարապետության երևան եկած մասնահատկությունները: Ճարտարապետական նշված հատկորոշումը բնորոշ է ոչ միայն 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին, այլև խորհրդային տարիներին, երբ մասնավոր ճարտարապետական գործունեությունը պաշտոնապես արգելված էր:

Ավելին՝ անգամ այսօր, երբ տեսնում ենք Գյումրի քաղաքում ճարտարապետական առատ զարդարանքներով ինքնաբուխ վերնակույր շինությունների իսկական վերածնունդ, նկատում ենք նաև ավանդական մեթոդների հիանալի կիրառում և վարպետների սերը կատարվող աշխատանքի նկատմամբ:

HISTORICAL VERNACULAR ARCHITECTURE OF GYUMRI: JUSTIFICATION FOR THE CONCEPT AND WAYS TO MAINTENANCE

Ivanov A. V.

Key words: *living vernacular city, vernacular ensemble, regular vernacular, freedom inside the grid, black tuff, master.*

Architectural and environmental peculiarities of the city of Gyumri (former Alexandropol, Leninakan) located in the Republic of Armenia, lie in the vernacular – a significant layer of historic “architecture without architects” (Bernard Rudofsky) built by local skilled stonemasons from the local material, called black tuff.

Gyumri was in the late 19th – early 20th centuries the largest city of Eastern Armenia (Armenia within the borders of the Russian Empire), its economic and cultural center.

The historical part of the city is based on a rectangular planned network filled with one-two-story stone vernacular buildings (on the unwritten principle of “freedom inside the grid”).

Until now, despite the devastating earthquakes of 1926 and 1988, it remained practically authentic and serves as a living multifunctional city core.

New theoretical concepts of the living vernacular city and the vernacular ensemble, developed by the author, are settled in the article. The peculiarities of the emergence of vernacular architecture at different stages of urban formation are examined.

It took place not only during the heyday of the city in the late 19th – early 20th centuries, but also in Soviet times, when private architectural activity was officially forbidden, and today when we see the revival of spontaneous vernacular construction in excessively decorated forms but with the same traditional methods and the masters' love for their works.

R e f e r e n c e s

1. **Armen M.** Rodnik Egnar (The Egnar's Spring). Yerevan: Sovetakan Groh Publ., 1984, p. 35 **(In Russian)**.
2. Atlas krepostey Rossiyskoy imperii (Atlas of Fortresses of the Russian Empire). Saint-Peterburg, s.a. URL: istmat.info/files/uploads/45273/atlas_krepostey_rossiyskoy_imperii_ok_1830_chast_i.pdf **(In Russian)**.
3. **Arutyunyan V.** Gorod Ani (The City of Ani). Yerevan: Aramaynskoe Gosydarstvennoe Publ., 1964, pp. 14–15. URL: <http://www.armenianhouse.org/harutyunyan-varazdat/ani/intro.html> **(In Russian)**.
4. **Brauzevetter A.** Architekturnye formy gragdanskikh postroerek (Architectural Forms of Civil Buildings). Saint-Petersburg: I. I. Bazlov Publ., 1904 **(In Russian)**.
5. **Vysokovskiy A.A.** Vernacularnyy gorod (The Vernacular City). Alexander Vysokovskiy v 3 t. (Alexander Vysokovskiy in 3 vol.). Vol. 3. Public. Moscow: Grey Matter Publ., 2015, pp. 30–33 **(In Russian)**.
6. **Dolukhanyan L. K.** Arhitektura Sovetskooy Armenii: 20-e gody (Architecture of Soviet Armenia: the 20s). Yerevan: Sovetakan Groh Publ., 1984, p. 10 **(In Russian)**.
7. **Cummings.** Kto-to zhil v slavnom schitay gorodke... Pervod s angliyskogo V. Britanishskogo (Anyone lived in a pretty how town... Trans. from English by B. Britanishsky). S. a. URL: <https://www.stihi.ru/2013/08/13/1993> **(In Russian)**.
8. **Papikyan O.** Tserkvi v dvuch gorodach, soedinennye tragicheskoy sudboy (Churches in Two Cities, United by a Tragic Fate). Nazional'naya ideya (The National Idea, Internet journal), 2011, no 10. URL: <http://national-idea.am/articles.php?id=313&l=> **(In Russian)**.
9. **Sogomonyan A.** (What to Sights of Shirak Dostoptimechatelnosti Shirakskoy oblasti: chto posmptret' Region See?). URL: <https://www.armmuseum.ru/news-blog/2018/11/17/> **(In Russian)**.

10. **Shagoyan G.** «Pervy» i «vtoroy» v obrazakh Gyumri: opyt semioticheskogo analiza gorodskogo teksta (“The First” and “The Second” in the Images of Gyumri: The Experience of Semiotic Analysis of the Urban Text). *Kritika i Semiotika*(Criticism and Semiotics),2012,vol.16,17-47.URL:<https://www.philology.nsc.ru/journals/kis/pdf/CS16/cs016shagoyan.pdf> **(In Russian)**.
11. *Enziklopedichedkiy slovar’ Brokgausa i Efrona* (Brockhaus and Efron Encyclopedic Dictionary). Ed. I.E. Andreevskiy. Vol. Ia. Saint-Petersburg: Semenovskaia Tipo-Litografiia (I.A. Efron) Publ., 1890, pp. 821–822 **(In Russian)**.

Принята: 30.03.2020

Рецензирована: 20. 04. 2020

Сдана в пч.: 27. 05. 2020

Информация об авторе

Андрей ИВАНОВ: профессор Московской международной академии архитектуры, Агентство промышленного развития города Москвы, E-mail: andreyivanovarch@mail.ru

ՀՏԴ՝ 39

«ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱԿԱՅԻՆ ԿԱՎԱՆՆԵՐ
ԵՎ ԱՐԴԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵՎՆԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ
Կարինե Բազեյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ մասնագիտության ազգաբանություն, գրադմունք, արհեստ, արհեստավարժ:

Մասնագիտությունների սահմանումները պատմականորեն փոփոխվել են գիտական-տեսական մոտեցումների և հենց ուսումնասիրության օբյեկտի զարգացման ընթացքում: Հոդվածում քննարկվում են մասնագիտությունների ուսումնասիրության տարբեր մոտեցումները, փորձ է արվում ներկայացնել «մասնագիտություն» հասկացության ավանդական ու արդի ընկալումները և մոտեցումները հայոց մեջ, հիմնավորվում է մասնագիտությունների ազգագրական հետազոտության կարևորությունը:

Նախաբան. Ազգագրական գիտության կարևորագույն օբյեկտներից մեկը՝ նյութական մշակույթը, այդ թվում՝ նաև տնտեսական գործունեության ձևերը, տեխնիկական քաղաքակրթության առաջընթացին զուգընթաց՝ դուրս են մղվում հետազոտական ծրագրերից, դառնում չպահանջված ոլորտ: Զանգվածային արդյունաբերական արտադրությունը, ուրբանիզացիայի պայմաններում առարկայական միջավայրի համընդհանրացումը, կարծես տարանջատում են արդի իրային աշխարհը և ավանդույթը (ավանդականությունը), ինչը պահանջում է հետազոտության նոր մոտեցումներ ու նոր մեթոդաբանություն: Այս առումով արդիական ազգաբանության մեջ առաջ է քաշվել նոր ուղղություն՝

«Մասնագիտությունների ազգաբանությունը», որը քաղաքի, տնտեսության ազգագրության ուսումնասիրության բաղադրիչներից մեկն է¹:

«Մասնագիտությունների ազգաբանություն» եզրույթը սահմանում է կոնկրետ մեթոդաբանական մոտեցում արդի կամ նորագույն շրջանի մասնագիտությունների ու մասնագիտական խմբերի առօրյա կյանքի տարբեր առումների ուսումնասիրության գործում: Նման ուսումնասիրությունները գալիս են բացահայտելու այն գիտելիքները, որոնք ձևավորվում են վերոհիշյալ խմբերի՝ տարբեր կարգավիճակում գտնվող, սակայն նույն գործով և առօրյա ընդհանուր ապրելակերպով միավորված մասնակիցների մեջ, ընդհանուր աշխատանքի ընթացքում²:

«Մասնագիտություն» հասկացությունը արևմտյան և ռուսական սոցիոլոգիական ու ազգաբանական հետազոտություններում

«Մասնագիտություն» երևույթը գոյություն ունի հազարավոր տարիներ, սակայն դրա նախորդ ձևերը չեն կարող դիտարկվել որպես ժամանակակից մասնագիտությունների պատմական հիմք: Արդի իրողության յուրահատկությունն այն է, որ մասնագիտականացման գործընթացն ընդգրկել է աշխատանքային գործունեության բոլոր ոլորտները, ինչի արդյունքում մասնագիտությունը դարձել է համընդհանուր սոցիալական ինստիտուտ, իսկ որևէ մասնագիտական խմբին պատկանելը՝ սոցիալական նույնականացման գլխավոր եղանակ (ի տարբերություն էթնիկականի, կրոնականի, դասայինի և այլն):

Մասնագիտությունների սոցիոլոգիան ձևավորվել է XX դարում՝ որպես սոցիոլոգիական գիտության ինքնուրույն ճյուղ, որն ունի ուսումնասիրության յուրահատուկ առարկա և զարգացել է սերտ համագործակցության մեջ այնպիսի ոլորտային ուղղությունների հետ, ինչպիսիք են աշխատանքի, արդյունաբերության, կրթության սոցիոլոգիան և այլք: Մասնագիտական գործունեությունը՝ որպես մարդկային գործունեության կարևորագույն ձևերից մեկը, իր արտահայտությունն է գտել սոցիալական փիլիսոփայության և սոցիոլոգիայի առաջատար ներկայացուցիչների աշխատություններում: Աշխատանքի հասարակական բաժանումով պայմանավորված մասնագիտական գործունեության բացահայտման տեսությունները զարգացրել են Կ.Մարքսը, Է.Դյուրկհեյմը, Մ.Վեբերը և այլք: Ընդ որում, մասնագիտությունների ուսումնասիրության խնդիրներն անմիջականորեն ենթարկվում էին հեղինակների սոցիոլոգիական հայե-

¹ Шепанская Т. Б. Сравнительная этнография профессий: повседневные практики и культурные коды (Россия, конец XX - начало XXI в.), «Наука», СПб, 2010.

² Романов П. В., Ярская-Смирнова Е. Р. Мир профессий как поле антропологических исследований, Этнологическое обозрение, 2005, N 5, с. 3.

ցակարգին³: Մարքսը, Մպենսերը, Դյուրկհեյմը «մասնագիտություն» հասկացությունը դիտարկում էին աշխատանքի բաժանման ու սոցիալական գործունեության տարանջատման դիտանկյունից: Աշխատանքի հասարակական բաժանման պատմականորեն առաջացած տիպերը, ըստ նրանց, պայմանավորված են պրոֆեսիոնալ գործունեության որոշակի ձևեր իրականացնելու ընդունակ արհեստավարժ մասնագետների՝ պրոֆեսիոնալների նկատմամբ սոցիալական պահանջարկի առաջացմամբ:

Հիմնախնդիրն ավելի լայն ու խորը ներկայացված է Մ.Վեբերի աշխատանքներում. նրան հետաքրքրում էին մասնագիտությունների զարգացման սոցիալ-պատմական առումները, դրանց տնտեսական գործառույթները, աշխատանքի մասնագիտական բաժանման տիպերը, անհատի մասնագիտական կոչումը և այլն: Մ. Վեբերը շեշտը դնում էր մասնագիտության միայն ամենաընդհանուր հատկանիշների վրա՝ այն սահմանելով որպես մասնագիտացված զբաղմունք, որն ամրագրված է որոշակի հասարակական խմբի կողմից: Այսպիսի լայն իմաստով մասնագիտությունների ցանկում ընդգրկվում էր ցանկացած զբաղմունք, որը հանդես էր գալիս որպես գոյատևման միջոց կամ ապահովում էր աշխատավարձ⁴:

Մ.Պարսոնսը իր 1930-ական թթ. աշխատություններում ուշադրությունը կենտրոնացնում էր մասնագիտացված գիտելիքի և մասնագիտական էթիկայի՝ որպես պրոֆեսիոնալիզմի երևույթը բնորոշող հատկանիշների վրա, որոնք տարբերակում էին մասնագիտությունները տարբեր զբաղմունքներից (մասնավորապես բիզնեսից և պետական ծառայությունից): Սրան համապատասխան, արդի իմաստով մասնագիտությունները, ըստ նրա, հիմնված են ինտելեկտուալ, գիտական գիտելիքի փոխանցման ինստիտուցիոնալացված համակարգի վրա, իսկ իդեալական մասնագիտությունները ակադեմիականներն են, քանի որ ապահովում են գիտելիքների՝ որպես բոլոր այլ մասնագիտությունների բազայի փոխանցումը⁵:

Մասնագիտության ժամանակակից ըմբռնումը հիմնված է պրոֆեսիոնալիզմի հատկանիշների նույն լրակազմի վրա, սակայն չունի մեկ ընդհանուր և հստակ սահմանում, ուստի և չկա ընդհանուր կարծիք առ այն, թե որ զբաղմունքները կարելի է սահմանել որպես մասնագիտություն: Բոլոր դեպքերում որպես «մասնագիտությունը» բնորոշող հատկանիշ շեշտադրվում են որոշակի

³ **Максимова Л. Н.** Социальное конструирование профессиональной культуры в современном российском обществе, Вестник СГТУ, 2012, N 4 (68), ст 245-253. <https://cyberleninka.ru/article/n/sotsialnoe-konstruirovanie-professionalnoy-kultury-v-sovremennom-rossiyskom-obschestve/viewer>

⁴ **Александрова Т.Л.** Методологические проблемы социологии профессий //Социологические исследования, 2000, N 8, стр. 16/11-17 <http://ecsocman.hse.ru/data/917/148/1217/002.ALEXANDROVA.pdf>

⁵ **Щепанская Т. Б.** Сравнительная этнография профессий, ст. 6.

մասնավոր գիտելիքները և էթիկան: Ըստ այդմ, պրոֆեսիոնալիզմը (արհեստավարժությունը) մասնագիտական գիտելիքի, էթիկայի, ինչպես նաև մասնագիտական գործունեության մեջ մշակութային նոր արժեքներ ներդնելու, պահպանելու, արտադրելու և փոխանցելու ունակության հիման վրա մասնագիտական գործունեություն իրականացնելու կարողությունն է: Պրոֆեսիոնալիզմը մասնագիտական մշակույթի ցուցիչ է. դա ցույց է տալիս որակն այն մարդու, որն ի վիճակի է իր աշխատանքում արդյունավետորեն կիրառել տեսական և գործնական գիտելիքները:⁶

Գիտելիքների սոցիոլոգիայի համատեքստում «մասնագիտություն» եզրի քննարկման մեջ գիտելիքը դիտարկվում է որպես ժամանակակից մասնագիտությունները բնորոշող հիմնական հատկանիշ. քննարկման առարկան դառնում է գիտելիքի մասնագիտացումը, դրա ինստիտուցիոնալացումը (հատուկ կրթական հաստատությունների առկայությունը), լիցենզավորման (արտոնագրում) կարգը (դրա գիտելիքների և դրա կիրառման հմտությունների պաշտոնական հաստատումը), ինչը իրավունք է տալիս զբաղվելու մասնագիտական գործունեությամբ: Պաշտոնական արտոնագրման կարգով հաստատված գիտելիքները համարվում են օրինական ճանապարհով մասնագիտության մեջ մտնելու հիմնական գործոնը: Միևնույն ժամանակ, գիտելիքներն ու դրա գործնական կիրառության հմտությունները կազմում են մասնագիտական գործունեության հիմքը, հետևաբար նաև՝ համայնքի անդամների սոցիալական կարգավիճակը և մասնագիտական ինքնության հիմքը:

Այն սահմանումները, որոնք մասնագիտության հիմնական հատկանիշը համարում են պաշտոնական արտոնագրման ընթացակարգով հաստատված գիտելիքը, նկատի ունեն, սակայն, նոր ժամանակաշրջանին բնորոշ մասնագիտությունների միայն մի պատմական ձևը, երբ ձևավորվեց բարձրագույն կրթության ինստիտուտների համակարգը՝ որպես հավաստագրման իրավունք ունեցող մարմին: Ընդ որում, դա սկզբում վերաբերում էր միայն հատուկենտ մասնագիտություններին, որոնցից շատերի՝ մեր օրերին բնորոշ կազմակերպման ձևերը կարելի է արձանագրել միայն XIX դ.վ.- XX դարասկզբին, երբ մասնագիտությունների տարածումը զանգվածային բնույթ է ստանում:

Եթե «մասնագիտություն» հասկացության սահմանման հիմքում դնենք եկամուտ բերող և հատուկ գիտելիքներ, հմտություններ ու վարքի կանոններ պահանջող գործունեությունը, ապա ուսումնասիրության շրջանակը բավականին ընդարձակ կլինի, որի մեջ կարող են ընդգրկվել նույնիսկ այն զբաղմունք-

⁶ Романов П. В., Ярская-Смирнова Е. Р. Мир профессий: Пересмотр аналитических перспектив // Социологические исследования, N 8, 2009, ст. 25-35.
<http://ecsocman.hse.ru/data/468/399/1224/Romanov.pdf>

ները, որոնց համար ամենևին էլ անհրաժեշտ չէ բարձրագույն կրթությունը, բայց որտեղ մշակվում են յուրատեսակ՝ «սեփական» գիտելիքներ և դրանց փոխանցման եղանակներ, իսկ կոնկրետ աշխատանքի տեսակի շուրջ առաջանում է սեփական կյանքի յուրահատուկ աշխարհը, ձևավորվում են ոճական առանձնահատկություններ և հարիտուս⁷:

Մասնագիտություն երևույթը սահմանող մյուս հատկանիշը պրոֆեսիոնալ էթիկայի կամ վարքի կանոնների առկայությունն է, որը պահպանելու նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է մասնագիտական հանրույթը: Էթիկայի նորմերը հիմնականում վերաբերում են մասնագիտական ծառայությունների մատուցման բնույթին, պատվիրատուի հանդեպ արհեստավարժների վերաբերմունքին, ինչպես նաև հենց իրենց ներքին փոխհարաբերություններին: Ուսումնասիրողները մասնագիտական էթիկայի ակունքները կապում են հոգևորականության ու արքունիքի կամ իշխող էլիտայի, գիլդիաների բազայի հիման վրա առաջացած մասնագիտությունների հետ: Էթիկայի նորմերի զարգացումը արտահայտվում է դրանց կանոնակարգման մեջ (մասնագիտությունների պաշտոնապես ընդունված կոդեքսում ամրագրվելով), որոնց խախտումը կարող է հիմք հանդիսանալ համապատասխան մասնագիտությամբ աշխատելու իրավունքից զրկելու համար⁸:

Վերլուծելով տարբեր մասնագիտական ավանդույթները՝ Շչերբանսկայան, որը դրանք ուսումնասիրում է ազգաբանության տեսանկյունից, եկել է այն եզրակացության, որ բացի վերոշարադրյալից, կան այլ ընդհանուր տարրեր՝ վարքի կարծրատիպեր, նշանների համակարգեր, ոչ ֆորմալ դիսկուրսի դրդապատճառներ և միջանձնային հարաբերությունների որոշակի կառուցվածք: Իրենց սոցիալական պրագմատիկայի տեսանկյունից այս տարրերը գործում են որպես մասնագիտական կարգավիճակի կառուցման միջոց⁹:

Ժամանակակից մասնագիտությունների ձևավորման ազգային ու պատմական յուրահատկությունները մեծ ազդեցություն ունեն էտալոնային կամ մոդելային մասնագիտությունների առանձնացման վրա: Ամերիկյան փորձի վրա հիմնված գրականության մեջ այդպիսիք են համարվում, այսպես կոչված, «ազատ» մասնագիտությունները՝ բժշկի, իրավաբանի և այլն: Այստեղ առաջին պլան է մղվում պրոֆեսիոնալ ինքնավարության կամ արհեստավարժների անկախության գործոնը (առաջին հերթին պետությունից), իսկ գիտելիքն ու կրթու-

⁷ Романов П. В. Ярская-Смирнова Е. Р., Мир профессий, ст. 27.

⁸ Щепанская Т. Б. Сравнительная этнография профессий, ст. 11.

⁹ Щепанская Т. Б. Предметный мир технической цивилизации в этнографической перспективе: атрибуты профессии // Антропология социальных перемен. Исследования по социально культурной антропологии: сборник статей, [отв. ред. Э. Гучинова, Г. Комарова], М. 2011, ст. 177-196.

թյան համակարգի լիցենզավորման վերահսկողությունը դիտվում են որպես այդ ինքնավարության պահպանման պայմաններ¹⁰:

Ինչ վերաբերում է մեր մեջ խոր արմատավորված մասնագիտությունների բաժանմանը «բարձրի» ու «ցածրի», «բարդի» ու «պարզի», ապա դրա հիմքերը գտնվում են հենց մասնագիտությունների կառուցվածքում: Եթե «բարձր» մասնագիտությունների մի մասը ծագում է ի պատասխան կառավարման, առողջապահության, արտաքին և ներքին սպառնալիքներից պաշտպանվելու հասարակական պահանջների, ապա մյուս մեծ շարքը դուրս է եկել սիրողական բնույթ ունեցող զբաղմունքներից, որոնք դարավոր պատմություն ունեն:

Ըստ երևույթին, ցանկացած զբաղմունք, խիստ արտահայտված սոցիալական պահանջի դեպքում, ենթարկվել է մասնագիտացման: Հատկանշական է, որ աշխատանքի սոցիալական բաժանման ընթացքում նախ առանձնացել են այն մասնագիտությունները, որոնք հիմնված էին ոչ թե տեխնոլոգիական, այլ մտավոր աշխատանքի գործառույթների (բժիշկներ, քահանաներ, իրավաբաններ, արվեստագետներ, քանդակագործներ), այնուհետև կառավարման և կազմակերպման գործառույթների (պաշտոնյաներ, վերակացուներ) և վերջապես՝ արտաքին և ներքին թշնամիներից պաշտպանվելու գործառույթների (վարձու գինվորներ, զորահրամանատարներ, բանտապահներ, ոստիկանություն) հետ: Այս մասնագիտություններն ուղղակիորեն կապված չէին արտադրության հետ, բայց ընդհանուր պայմաններ էին ապահովում հասարակության գործունեության համար: Հետագայում, գյուղատնտեսությունից արհեստների անջատումով, սկսվում է աշխատանքի տեխնիկական բաժանման վրա հիմնված մասնագիտությունների զարգացման գործընթացը: Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, տնտեսության առաջնային ոլորտին, որը հազարավոր տարիներ սոցիալական արտադրության հիմնական ոլորտն էր, այստեղ մասնագիտական տարբերակումը ձգձգվեց մինչև 20-րդ դարը¹¹:

Մասնագիտությունների վերոհիշյալ ընկալումը բավականին ճշգրիտ համապատասխանում է Արևմուտքի նոր և նորագույն ժամանակներին հատուկ իրավիճակին: Այդուհանդերձ մասնագիտությունների նշված հատկանիշների մշակութային-յուրատեսակ բնույթը թույլ չի տալիս օգտագործել տրված սահմանումներն ազգաբանական հետազոտությունում, ինչը ենթադրում է պրոֆեսիոնալիզմի երևույթի այլ (ազգային, տարածաշրջանային, տեղական, պատմական) տարբերակներ հաշվի առնելու և այնուհետև դրանք միմյանց հետ համեմատելու հնարավորություն:

¹⁰ Щепанская Т. Б. Сравнительная этнография профессий, ст. 9.

¹¹ Александрова Т.Л. Методологические проблемы социологии профессий, ст. 16.

«Մասնագիտությունների» ուսումնասիրության վիճակը հայ իրականության մեջ. «մասնագիտություն» հասկացության ընկալումները հայոց մեջ

Հայագիտության մեջ, ցավով պետք է փաստել, այս թեմայով մինչ օրս որևէ լուրջ սոցիոլոգիական կամ ազգաբանական ուսումնասիրություն չի կատարվել¹², այդ պատճառով բառի կամ եզրույթի գիտական սահմանումները բացակայում են: Ուստի այս հասկացության ավանդական ու արդի ընկալումները փորձելու ենք պարզաբանել օգտագործելով տարբեր բառարանների բացատրությունները:

Պետք է նշել, որ թե՛ արևմտահայերենում, թե՛ արևելահայերենում «մասնագիտություն» բառը սկսվել է գործածվել 19-րդ դարի վերջից ու հատկապես լայն տարածում ստացել 20-րդ դարի սկզբին: Արևմտահայերենում «մասնագիտություն» բառն առաջին անգամ հանդիպում ենք 1884 թ. ֆրանսերեն-հայերեն բառարանում «spécialité» բառի թարգմանության մեջ. «2. մասնաւոր ուսմունք, վաստակք, մասնագիտութիւն»¹³:

Արևելահայերենում առաջին անգամ բառի բացատրությունը տրվել է Ս. Գաբամաճյանի 1910 թ. բառարանում. «մասնագիտութիւն – մասնաւոր բանի որակութիւն» և «մասնագէտ – մասնաւորապէս այս ինչ կամ այն ինչ բանով զբաղող մարդը»¹⁴: Գրեթե նույն բացատրությունն ենք տեսնում Ստ. Մալխասյանցի մոտ. «մասնագիտութիւն – 1. Մասնագէտ լինելը, մասնագէտի յատկութիւնը: 2. Առարկայի՝ աշխատանքի ճյուղ՝ որին մեկը նուիրում է¹⁵» և «Մասնագէտ – 1. նա որ նուիրված է մի առարկայի կամ առարկայի մի ճիւղի մանրամասն ուսումնասիրութեան: 2. Առարկան լաւ ուսումնասիրած, հմուտ անձ¹⁶»: Բառի մեկնաբանությունն ավելի է ընդլայնվում հետագա տարիների բառարաններում, այսպես. «Մասնագիտություն– 1. Մասնագէտ լինելը: 2. Գիտության՝ տեխնիկայի՝ արվեստի կամ առանձին բնագավառ: 3. Որևէ զբաղմունքի որակավորում: 4. փխր. Հմտություն, վարպետություն¹⁷» կամ «Մասնագիտու-

¹² Բացառություն են կազմում Ռ. Օհանջանյանի «Մասնագիտության ընտրությունը պայմանավորող գործոնների մասին» զեկուցումը (Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, հանրապետական վեցերորդ գիտաժողովի հիմնադրույթներ, Գյումրի, 2004, էջ 90-93), և նույն հեղինակի նույն թեմայով «Ընտանեկան արժեհամակարգի կառուցվածքը» հոդվածը (Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում (Մ. Գալստյան, Ռ. Օհանջանյան, Թ. Զաքարյան, Գ. Հակոբյան) Եր., 2017), որոնք չեն անդրադարձնում հասկացության իմաստաբանական հիմքերին:

¹³ Բիզանդացի Ն.Ն., Բառագիրք ի գաղղիերեն լեզուէ ի հայերէն, Կ. Պօլիս, 1884, էջ 1165:

¹⁴ Գաբամաճեան Ս., Նոր բառագիրք հայերէն լեզուի, Տպագրութիւն Ռ. Սագաեան, Կ. Պօլիս, 1910, էջ 897:

¹⁵ Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ, Պետհրատ, Եր. 1944, էջ 262:

¹⁶ Մալխասեանց Ստ., Նույն տեղում, էջ 261:

¹⁷ Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Եր, 1976, էջ 971:

թիւն – 1. Արուեստի կամ գիտութեան ճիւղի մը մէջ ձեռք բերուած հմտութիւն: 2. Տուեալ ճիւղի մը մէջ հմտութիւն՝ վարպետութիւն¹⁸»:

Այսպիսով, եթէ 20-րդ դարասկզբին մասնագիտություն ասելով հասկանում էին ինչ-որ գործով զբաղված մարդու որակ կամ հատկություն՝ առանց նշելու զբաղմունքի ոլորտները, ապա 20-րդ դարավերջին ցույց են տրվում նաև ճյուղերը՝ արվեստ, գիտություն և տեխնիկա, ինչը, կարծում ենք, սահմանափակում է բառի իմաստը, որին կանդրադառնանք ստորև:

Հարց է առաջանում, իսկ ինչ համարժեք բառ կամ հասկացություն է օգտագործվել հայոց մէջ, մինչ «մասնագիտություն» հասկացության մուտքը հայոց լեզու: Նախ դիմենք հոմանիշների բառարանին, որտեղ գրված է. «Մասնագիտություն – 1. Տե՛ս Զբաղմունք, 2. Հմտություն, վարպետություն¹⁹», իսկ *զբաղմունք* բառի հոմանիշներն են «1. Գործ, աշխատանք, բան, զբաղանք (հնց.) (որևէ բանով զբաղվելը, աշխատելը): 2. Մասնագիտություն, պարապմունք, արհեստավարժություն, արհեստ (*պրոֆեսիա, որոշակի մասնագիտացում և հմտություն պահանջող աշխատանքային գործունեություն*)²⁰»: Հարկ է նշել, որ *զբաղմունք* բառը կամ գրական լեզվում է կիրառվում, քանի որ ժողովրդական խոսակցական լեզվում դրա փոխարեն օգտագործվել են թուրքերեն *սանիաթ* (սանատ, սանյաթ, սանահատ, սանիյաթ, սանհաթ, զանիաթ) բառը, որ դարձյալ ըստ բառարանների բացատրվում է որպէս «1. Արհեստ, 2. Պարապմունք, գործ, զբաղմունք²¹» և պարսկերեն *փեշակ* «1.Արհեստ: 2. Զբաղմունք, գործ»²² բառը:

Փաստորեն հայ ժողովրդի լեզվամտածողության մէջ «մասնագիտություն» բառի իմաստային հիմքը կազմում է «արհեստ» բառը: Դա արտահայտված է նաև միջազգային տարածում ունեցող «պրոֆեսիա» և «պրոֆեսիոնալ» բառերի թարգմանություններում: Մասնավորապէս 19-րդ դ.վ-20-րդ դ. սկզբի բառարաններում կարդում ենք «profession – կրթութիւն, վարժք, *արհեստ*, պարապումն»,²³ «profession – 2. *արուեստ*, բախտ, վիճակ, գործ»,²⁴ «профессиональный – պրոֆեսիոնել, կոչման, *արհեստք*, «փեշակի» կրթական-արուեստագիտական»: ²⁵ Այդ է վկայում նաև «պրոֆեսիոնալ» բառի հայերեն «արհեստավարժ» համարժեքը: Այսինքն, եթէ պրոֆեսիան հայերեն թարգմանվում է որպէս մասնագիտու-

¹⁸ Հայոց լեզուի նոր բառարան, Կազմեցին՝ Գ. արքեպ. Ճերեճեան, Փ. Տօնիկեան և Ա. Տէր Խաչատուրեան: Կ. Տօնիկեան և Որդիք Հրատարակչատուն, Պէյրուք, 1992, էջ 92:

¹⁹ Սուրբիապյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 733:

²⁰ Նույն տեղում, էջ 297:

²¹ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 5, Եր., ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2008, էջ 262:

²² Նույն տեղում, հ. 6, Եր., 2010, էջ 364: Նաև՝ Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 1517:

²³ Աւգերեան Յ. Վ., Բառարան Անգղիերէն և Հայերէն: Մխիթարեանց Տպարան, Վենետիկ, 1868, էջ 564:

²⁴ Բիւզանդացի Ն.Ն., Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն, էջ 995:

²⁵ Дагбашьянъ А. С. Полный русско-армянский словарь, Тифлис, 1906, ст. 918.

թյուն, իսկ պրոֆեսիոնալը՝ արհեստավարժ²⁶ կամ արհեստագետ²⁷, ուրեմն հայոց մեջ *արհեստ* բառն ավանդաբար ներառել է զբաղմունք, գործ, աշխատանք իմաստները: Եվ դա պատահական չէ, քանի որ արհեստը արժեհամակարգային նշանակություն ունի հայ ժողովրդի էթնիկական մշակույթում, այն հային բնորոշող այն երևույթն է, որ դարեր շարունակ նրա կեցության հիմքն է եղել, որի համար ժողովուրդը արհեստը համարել է «ոսկի ապարանջան» (Ճարտարուեստ հայ ժողովուրդը այսպես կը կոչէ արհեստը, ամեն բան է վեր համարելով զայն. ապարանջան մը՝ որ ոչ մեկը կրնայ թեւէն հանել, իլել)²⁸:

Որպես «մասնագիտություն» հասկացության ավանդական ձևի՝ արհեստին բնորոշ են այն բոլոր հատկանիշները, որոնք, ինչպես վերը ներկայացվեց, գիտնականների կողմից առանձնացվել են որպես դրա բնութագրիչներ. դրանք են՝ ա/ զբաղմունքի մասնագիտացումը (գործառույթները), բ/ որոշակի հասարակական խմբի նկատմամբ ամրագրվածությունը, գ/ գիտելիքը՝ որպես մասնագիտական աստիճանակարգի հիմք, հատուկ կրթությունը և արտոնագրման գործընթացը դ/պրոֆեսիոնալ էթիկայի կամ վարքի կանոնների առկայությունը:

Հակիրճ անդրադառնանք դրանց՝ արհեստների համատեքստում:

ա/ Հայոց մեջ արհեստների նեղ մասնագիտացումները դիտարկվում են արդեն զարգացած միջնադարում, երբ, այսպես կոչված, «մայր արհեստներից» սկսում են անջատվել մի շարք ինքնուրույն արհեստներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առանձին ոլորտը²⁹: Մասնավորապես մետաղամշակության մեջ առանձնանում են երկաթագործությունը կամ դարբնությունը, պղնձագործությունը, ոսկերչություն-արծաթագործությունը, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են ավելի նեղ մասնագիտացումներ ներկայացնող արհեստների, այսպես. երկաթագործության մեջ՝ դարբնություն (աշխատանքային գործիքների պատրաստում), փականագործություն (փականների, կողպեքների, սողնակների ու ծխնիների պատրաստում), պայտագործություն (անասունների և կռչիկների պայտերի պատրաստում), պայտարություն (անասունների պայտերի ամրացում), մեխագործություն (գամերի ու մեխերի պատրաստում), շղթայագործություն (օղակ-շղթաների պատրաստում) և այլն³⁰, ոստայնանկության մեջ՝ մանածագործություն (տարբեր թելերի ու պարանների պատրաստում), ջուլհակություն (տարբեր գործվածքների պատրաստում), գորգագործություն և կարպե-

²⁶ Մուրադյան Ա., Խաչատրյան Ս., Ֆրանսերեն-հայերեն բառարան, Եր., 2010, Փրիթինֆո, էջ 891:

²⁷ Ասմազույան Հ., Հովհաննիսյան Մ., Անգլերեն-հայերեն բառարան, Եր., 1984, Հայաստան, էջ 734:

²⁸ Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 854:

²⁹ Առաքելյան Բ., Քաղաքներն ու արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հ. 2, Եր., 1964:

³⁰ Աղանյան Գ., Երկաթագործական արհեստները հայոց մեջ 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին// ԳՄԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, Գյումրի, 1999, էջ 169-176:

տագործություն, երիզագործություն և այլն³¹: Հայերենում պահպանվել են հնուց եկած արհեստ-արհեստավորանիշ բազմաթիվ անվանումներ. հազարամյակներ շարունակ դրանք մշակվել, փոփոխվել, զարգացում են ապրել, և այժմ էլ շարունակվում է այդ գործընթացը³²:

բ/ Արդեն զարգացած միջնադարում նեղ մասնագիտացված արհեստավորները միավորվել են միևնույն կամ հարակից զբաղմունքը ներկայացնող կազմակերպություններում կամ համքարություններում: Համքարությունը հիմնականում արհեստավորների, առևտրականների և բանվորների մի եղբայրություն էր, որը ղեկավարում էր համքարության անդամների կողմից ընտրված ավագը³³: Դրանց խնդիրն էր լուծել արհեստավորների տնտեսական (հումքի ձեռքբերում, արտադրանքի իրացում և այլն), սոցիալական (արհեստակիցների փոխօգնություն, որբախնամ գործունեություն), հումանիտար (համայնական և մասնագիտական տոնածիսական արարողությունների կազմակերպում) և իրավական (պետություն-արհեստավոր, միջանձնային հարաբերություններ) պահանջները³⁴:

գ/ Համքարության մեջ չէին կարող ընդունվել և վարպետ ձեռնադրվել առանց որևէ արհեստի մասնագիտորեն տիրապետելու, իսկ այս *մասնագիտացումը* պահանջում էր երկար ժամանակ՝ նայած արհեստի տեսակին և դժվարությանը: Արհեստը սովորեցնելու ողջ պատասխանատվությունն ընկնում էր վարպետի վրա: Աշակերտն արհեստ սովորում էր փոքր հասակից, նրա ընդունման ժամանակը և տարիքը մի կողմից կախված էին արհեստի դժվարությունից, իսկ մյուս կողմից՝ աշակերտի ընդունակությունից: Որոշակի գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելուց հետո աշակերտին շնորհվում էր ենթավարպետի կոչում, որի համար տրվում էր «գիր-վկայական»³⁵: Ենթավարպետից վարպետ դառնալու գործընթացը ևս ուղեկցվում էր հատուկ ծիսական արարողություններով և պարտադիր գործողություններով: Վարպետ ձեռնադրելու համար կարևոր պայման էր համարվում նաև թեկնածուի տարիքը, քանի որ հարիր ու վայել չէր անբեղ-անմորուս մեկին հավասարների շարքը դասելը: Մեկ աստիճանից մյուսին անցումը ինիցիացիոն (ձոնման) ծեսերի կիսաթատերա-

³¹ Բազեյան Կ., Գործվածքն ու դրա հետ կապված արհեստները հայոց մեջ (XIX-XXդդ.)//Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ XV, Եր., էջ 404-413:

³² Ավետիսյան Լ., Արհեստ-արհեստավորանիշ անվանումները հայերենում, Եր., ԵՊՀ հրատ., 2015:

³³ Աբրահամյան Վ., Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբ), Եր., «Հայաստան» հրատ., 1971:

³⁴ Աղանյան Գ., Ալեքսանդրապոլի էսնաֆությունները XIX դարում (համքարական ծիսակարգ)// ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XI, Գյումրի, 2008, էջ 49-55:

³⁵ Աբրահամյան Վ., Նշվ.աշխ., էջ 100-108:

կանացված շարք էր, որտեղ յուրաքանչյուր մասնակից ուներ իր դերակատարումը և մասնակցության աստիճանը: Քաղաքային կենսաձևին բնորոշ այս ծիսաշարքում իբրև վերապրուկ պահպանվել էին հնուց եկող հասակային և սոցիալ-մասնագիտական խմբերի անցումային ձևերն ու դրանց սոցիալականացման եղանակները³⁶:

դ/ Համաքարությունների սոցիալ-կարգավորող գործառույթներն իրավական ձևակերպում էին ստանում իշխանության բարձրագույն մարմինների կողմից հաստատված կանոնադրություններում: Բոլոր ներքին իրավական և այլ կենսական կարևոր հասարակական խնդիրները կարգավորվում էին այդ Կանոնադրությամբ և սովորութային իրավունքի նորմերով:

Այսպիսով, արհեստները կարելի է դիտարկել որպես մասնագիտությունների ավանդական ձևեր, քանի որ դրանք ունեն նույն հատկանիշները և իրականացնում էին բոլոր այն գործառույթները, որոնք նշվեցին վերևում, և ըստ այդմ, համապատասխանում են «մասնագիտություն» հասկացությանը տրված սահմանումներին: Մեր կարծիքով, արհեստավորների՝ մասնագետների փոխարկվելու գործընթացը պետք է դիտել որպես փոխհաջորդում, քանի որ 20-րդ դարում արհեստավորների ճնշող մեծամասնության գործի բնույթը փոխվեց. նա մասնագիտացավ որևէ ոլորտի արտադրության մեջ ու սկսեց «դեկավարել» զանազան գործողություններ կատարող մեքենան: Այդպիսով մեծացավ նույն արհեստը ներկայացնող մասնագիտացումների ու մասնագետների թիվը, որը տարեցտարի ընդլայնվեց:

Նոր մոտեցումները առավել ամբողջական ներկայացված են «Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների Հայաստանի Հանրապետության դասակարգիչ»-ում, որտեղ *մասնագիտություն* բառը սահմանված է որպես «որոշակի ուղղվածություն ունեցող աշխատանքային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողությունների ինտեգրված/միասնական համակարգ, որը ձեռք է բերվում ուսումնառության տարբեր ձևերով և հաստատվում համապատասխան փաստաթղթով (դիպլոմ, վկայական, լիցենզիա, արտոնագիր, լիազորագիր)³⁷: Այս ցուցակը համապատասխանեցված է Զբաղմունքների միջազգային դասակարգչին և «ներկայացնում է բանվորների և ծառայողների՝ ըստ մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգման, նրանց կողմից կատարվող աշխատանքների բարդության աստիճանի, աշխա-

³⁶ Աղանյան Գ., Ալեքսանդրապոլի էսնաֆությունները XIX դարում... էջ 52:

³⁷ Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների Հայաստանի Հանրապետության դասակարգիչ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, 2011, <http://gortsq.am/uploads/documents/dasakargichner/masnagitutyunneri.pdf>:

տանքի պայմանների, մասնագիտություններին, մասնագիտացումներին և պաշտոններին ներկայացվող կրթության պահանջների վերաբերյալ տեղեկատվություններ»³⁸: Հարկ է նշել, որ ինչպես հայագիտության մեջ մասնագիտություններին նվիրված ուսումնասիրությունների բացակայությունը, այնպես էլ ոլորտին ծանոթ սոցիոլոգների ու ազգագրագետների խորհրդատվության անտեսումը հանգեցրել են նրան, որ հիշյալ ցուցակը կազմված է բազմաթիվ թերություններով ու անհարկի ծանրաբեռնված է հայ իրականությանը չհամապատասխանող մասնագիտությունների անուններով:

Եզրահանգում. Մասնագիտությունների աշխարհը անկայուն է և բազմազան: Դրանց խորհրդանշական սահմանները, որ հաստատագրված էին ավանդույթներով և պաշտպանված սովորույթային իրավունքի նորմերով, աստիճանաբար ջնջվում կամ վերափոխվում են: Որոշ մասնագիտություններ ընկղմվել են մոռացության մեջ, մյուսները միայն ամրապնդում են իրենց կարգավիճակը, իսկ երրորդները հայտնվել են եզրագծին: 20-րդ դարում գիտության, տեխնիկայի աննախադեպ վերելքը փոխեց մարդկանց կենցաղը, ի հայտ եկան նոր իրեր, գործիքներ, մասնագիտություններ, որոնց պատրաստման, սպասարկման, նորոգման համար անհրաժեշտ էին համապատասխան մասնագետներ, արհեստավորներ: Այս շրջանում նկատվում է մի շարք արհեստների նեղ մասնագիտացում. օրինակ, եթե նախկինում կոշիկ կարելու ողջ գործընթացը կատարում էր մի մարդ՝ կոշկակարը, ապա աշխատանքի մեքենայացման պայմաններում կատարվեց ոչ միայն աշխատանքի գործընթացի բաժանում (տակացուի պատրաստում, ձևարար և այլն), այլև ողջ գործողությունն սկսեց կատարել մեքենան, ուստի վերջինս սպասարկողին այլևս արհեստավոր չի կարելի կոչել:

Ինչպես տեսանք, այսօր հայոց մեջ մասնագիտությունը մեկնաբանվում է լայն իմաստով՝ որպես տնից դուրս գործունեության ձև, որը եկամուտ է բերում, պահանջում է որոշակի որակավորում և ամրացված է մարդկանց որոշակի խմբի, սակայն որի համար պարտադիր չեն ինքնավարությունը, մասնագիտական վարքի նորմերի առկայությունը և արտոնագրման համակարգը: Այս մոտեցմամբ մենք կարող ենք դրա մեջ ներառել զբաղմունքների շատ լայն շրջանակ, ինչն էլ արտահայտվել է «Մասնագիտությունների դասակարգիչ»-ում:

21-րդ դարը բերեց նոր մարտահրավերներ, որոնց հետ բախվում են մասնագիտական խմբերը պետության և շուկայի ուժեղացող ճնշման ներքո: Նախկինում երաշխավորված աշխատանքային հարաբերությունները դարձան ան-

³⁸ Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների Հայաստանի Հանրապետության դասակարգիչ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, 2011, <http://gortsq.am/uploads/documents/dasakargichner/masnagitutyunneri.pdf>:

կայուն ու անպաշտպան: Աշխատաշուկայում արդյունաբերական արտադրության, ծառայությունների ոլորտում և սոցիալական քաղաքականության մեջ նոր, գլոբալ գործընթացները հանգեցրին արհեստավարժության սոցիալական չափորոշիչների և մշակութային իմաստների փոփոխությունների: Ընդ որում՝ փոխվեցին ինչպես դասական մասնագիտությունները, այնպես էլ զբաղվածության նոր տեսակները: Մասնագիտական խմբերի շուրջ ձևավորված սահմանները գնալով տարրալուծվում, վերափոխվում և ամրապնդվում են այլ արհեստավարժների հետ մրցակցային պայքարի ընթացքում: Մենեջերների աճող իշխանությունը վերջիններիս թույլ է տալիս միջամտել մասնագետների որոշումների ընդունմանը, մեծանում է հաճախորդների/սպառողների կազմակերպությունների դերը, հասարակության մեջ զարգանում են ցանցային հարաբերությունները, աշխատաշուկան դառնում է ավելի ճկուն: Այս ամենը բերում է ժամանակակից հասարակության մեջ մասնագետների ինքնավարությանն ու իշխանության հիմքերի խարխլմանը: Ընդ որում՝ զբաղմունքների որոշ խմբերի հաջողվում է պահպանել պատմականորեն ձևավորված ավանդույթները, մյուսներին չեն բավարարում ռեսուրսները, և նրանք հանձնում են իրենց դիրքերը, երրորդները հարմարվում են և թարմացնում իրենց կորպորատիվ հիմքերը:

Այս խնդիրները լուրջ ազգաբանական ուսումնասիրության կարիք ունեն: Մասնագիտությունների մարդաբանական հետազոտությունը հիմնված է զբաղմունքների ոչ միայն ֆորմալ բնութագրերի, այլև (հիմնականում, որպես ելակետ) մասնագետի դիրքի ու կարգավիճակի վրա: Հետևաբար, մասնագիտությունը սահմանող հատկանիշների մեջ այն ներառում է ոչ միայն պաշտոնական որակավորումները, այլև ոչ ֆորմալ գիտելիքները, նորմերն ու հմտությունները, որոնք ուղղակիորեն ձեռք են բերվել գործընկերների՝ դաստիարակների, ուսուցիչների և աշխատակիցների հետ անմիջական շփման ընթացքում: Մասնագետների կյանքի աշխարհը «ներսից» ուսումնասիրելու, ենթադրյալ սոցիալական փոխազդեցությունների, ոչ ֆորմալ հարաբերությունների, կողմնակի դիտորդների աչքից թաքնված մշակութային պրակտիկայի հետազոտությունները կիրառական բնույթ ունեն և ուղղված են կառավարման մեթոդների զարգացմանը:

ТРАДИЦИОННЫЕ И СОВРЕМЕННЫЕ ВОСПРИЯТИЯ И ТРАКТОВКИ ПОНЯТИЯ «ПРОФЕССИЯ»

Базеян К. Р

Ключевые слова: *антропология профессии, занятие, ремесло, профессионал, этнографическая точка зрения.*

Феномен профессии существует тысячи лет, и нет оснований рассматривать предшествующие формы всего лишь как подготовку к профессиям современного типа.

Особенность нынешней ситуации заключается в том, что процесс профессионализации охватил практически все сферы трудовой деятельности, в результате чего профессия стала универсальным социальным институтом, а принадлежность к профессиональной группе - главным средством социальной идентификации (в отличие от этнической, религиозной, классовой, сословной и т.п.).

Дефиниции профессий исторически изменились вследствие развития научно-теоретических подходов и изменения восприятия самого объекта исследования. В статье рассматриваются различные подходы к изучению феномена, выявляются традиционные и современные восприятия понятия «профессия» у армян, а также обоснована значимость исследования различных профессий с этнографической точки зрения.

TRADITIONAL AND MODERN PERCEPTIONS AND INTERPRETATIONS OF THE CONCEPT OF “PROFESSION”

Bazeyan K.R.

Key words: *anthropology of profession, occupation, craft, professional, ethnographic perception.*

Although the phenomenon of *profession* existed for thousands of years, its former manifestations couldn't be viewed as a historical basis for current professions.

The peculiarity of the current situation we encounter today is that the process of specialization encompasses all areas of employment, as a result of which the profession has become a universal social institution. Hence belonging to any professional group is the main method of social identification (as opposed to ethnic, religious, class, etc.).

The definitions of the professions have been changed historically during the development of the scientific and theoretical approaches to the object of the study itself.

The article discusses different approaches to the study of *professions*. We try to present the traditional and modern perceptions and approaches of the term among Armenians and to justify the importance of its ethnographic research.

R e f e r e n c e s

1. **Abrahamyan V.** Hay hamk'arut'yunnery Andrkovkasi k'aghak'nerum (18-20-rd dari skizb), Yerevan, 1971(**In Armenian**).
2. **Acharrean H.** Hayeren gawarrakan barraran, Eminean azgagrakan zhoghovatscu, h. 9, Tiflis, 1913 (**In Armenian**).
3. **Aghanyan G.** Yerkat'agortsakan arhestnery hayots' mej 19-rd darum yev 20-rd daraskzbin, SHHHK Gitakan ashkhatut'yunner, h. II, Gyumri, 1999 (**In Armenian**).
4. **Aghanyan G.** Alexandrapoli esnafut'yunnery XIX darum (hamk'arakan tsisakarg), SHHHK Gitakan ashkhatut'yunner, h. XI, Gyumri 2008 (**In Armenian**).
5. **Aleksandrova T. L.** Metodologicheskiye problemy sotsiologii professiy, Sotsiologicheskiye issledovaniya,, 2008, N 8. 17 [http://ecsocman.hse.ru/data /917/148/1217 /002.ALEXANDROVA.pdf](http://ecsocman.hse.ru/data/917/148/1217/002.ALEXANDROVA.pdf) (**In Russian**).
6. **Asmagulyan H., Hovhannisyan M.** Angleren-hayeren barraran, Yerevan, 1984 (**In Armenian**).
7. **Agayan Ed.** Ardi hayereni bacatrakan barraran, Yerevan, 1976 (**In Armenian**).
8. **Arrak'elyan B.** K'aghak'nern u arhestnery Hayastanum IX-XIII darerum, h. 2, Yerevan, 1964.
9. Ashkhatoghneri masnagitut'yunneri, masnagitats'umneri yev pashtonneri Hayautani hanrapetut'yan dauakargich', HH Ekonomikayi nakhararut'yun, 2011, [http://gortsq.am/uploads/docu-ments/dasakargichner/masnagitutyunneri. pdf](http://gortsq.am/uploads/docu-ments/dasakargichner/masnagitutyunneri.pdf) (**In Armenian**).
10. **Avetisyan L.** Arhest-arhestavoranish anvanumnery hayerenum, Yerevan, 2015 (**In Armenian**).
11. **Bazeyan K.** Gortsvatsk'n u dra het kapvats arhestnery hayots' mej (XIX-XXdd.), Avandakanyyev ardiakany hayots' mshakuyt'um, Hay zhoghovrdakan mshakuyt', XV, Yerevan, 2010 (**In Armenian**).
12. **Biwzandats'I N. N.** Barragirk' i gaghghiyeren lezue i hayeren, K. Polis, 1884 (**In Armenian**).
13. **Yarut'iwn V. Awgerean.** Barraran Angghiaren yev Hayeren, Hayr Mkhit'areants' Tparan, Venetik, 1868 (**In Armenian**).

14. **Gabamachean S.** Nor barragirk' hayeren lezui, Tpagrut'iwn RR. Sagayean, K. Polis, 1910 (In Armenian).
15. **G. ark'episkopos Cherechean, P'. K. Tonikean, A. Ter Khach'aturean.** Hayots' lezui nor barraran, K. Tonikean yev Vordik' Hratarakch'atun, Peyrut', 1992 (In Armenian).
16. Hayots' lezvi barbarrayin barraran, h. 5, Yerevan, GAA Lezvi institut, 2008 (In Armenian).
17. **Suk'iasyan A.** Hayots' lezvi homanishneri bats'atrakan barraran, YePH, 2009 (In Armenian).
18. **Malkhaseants' St.** Hayeren bats'atrakan barraran, Haykakan SSRR petakan hratarakch'ut'yun, Yerevan, 1944 (In Armenian).
19. **Maksimova L. N.** Sotsial'noye konstruirovaniye professional'noy kul'tury v sovremennom rossiyskom obshchestve, Vestnik SGTU, 2012, N 4 (68), <https://cyberleninka.ru/article/n/sotsialnoe-konstruirovanie-professionalnoy-kul'tury-v-sovremennom-rossiyskom-obschestve/viewer> (In Russian).
20. **Dagbashyan A. S.** Polnyy russko-armyanskiy slovar', Tiflis, 1906 (In Russian).
21. **Romanov P.V. Yarskaya-Smirnova Ye. R.** Mir professiy kak pole antropologicheskikh issledovaniy, Etnologicheskoye obozreniye, 2005, N 5 (In Russian).
22. **Romanov P.V., Yarskaya-Smirnova Ye.R.** Mir professiy: Peresmotr analiticheskikh perspektiv, Sotsiologicheskoye issledovaniya, N 8, 2009, <http://ecsocman.hse.ru/data/468/399/1224/Romanov.pdf> (In Russian).
23. **Shchepanskaya T.B.** Sravnitel'naya etnografiya professiy: povsednevnyye praktiki i kul'turnyye kody (Rossiya, konets XX - nachalo XXI v.), «Nauka», SPb, 2010 (In Russian).
24. **Shchepanskaya T.B.** Predmetnyy mir tekhnicheskoy tsivilizatsii v etnograficheskoy perspektive: atributy profesii, Antropologiya sotsial'nykh peremen. Issledovaniya po sotsial'no kul'turnoy antropologii: sbornik ststey, [otv. red. E. Guchinova], M. (In Russian).
25. **Muradyan A., Khach'atryan S.,** Franseren-hayeren barraran, Yerevan, 2010 (In Armenian).

Ընդունվել է՝ 25.02.2020

Գրախոսվել է՝ 15.05.2020

Հանձնվել է տպ.՝ 27.05.2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարինե ԲԱԶԵՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների

կենտրոնի ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ bazeyan60@mail.ru

ՀՏԴ՝ 781.7

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ ՈՐՊԵՍ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
Հասմիկ Հարությունյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ աշուղական երգ, քանավոր արվեստ, տարբերակ, Կոմիտաս, աշուղ Շերամ, ազգային ինքնություն, էթնիկ երաժշտամտածողություն, ավանդույթ, պրոֆեսիոնալ մոնոդիա:

Հոդվածում անդրադարձ է կատարվել աշուղական երգերի ժողովրդական կատարումների որոշ առանձնահատկություններին՝ կոմիտասյան դրույթների համատեքստում:

Կոմիտասն իր հրապարակումներում, դասախոսություններում, նամակներում հստակ և համոզիչ շարադրել է հայ ազգային երաժշտության ինքնության չափորոշիչները: Ընդունված է այն կարծիքը, որ մեծ գիտնականն իր հետազոտական տեսադաշտից դուրս է թողել հայ աշխարհիկ պրոֆեսիոնալ մոնոդիան՝ աշուղական երգը, քանի որ այն կրել է ինչպես ազգային ինքնության բնորոշիչներ, այնպես էլ մերձավորարևելյան տարածաշրջանի մշակույթին բնորոշ բազմաթիվ տարրեր:

Ու թեև Կոմիտասը ուղղակիորեն խուսափել է հայ աշուղական արվեստում ազգային ինքնության հստակ բնութագրից, սակայն երբեմն զգուշորեն «խուստովանել» է, որ աշուղը հայ ժողովրդական երգի գիտակ է, և ժողովուրդն էլ շարունակաբար յուրացրել, սրբազրել և մեկնաբանել է հայ աշուղական երգը:

Նախաբան Երաժշտական ցանկացած կատարում ստեղծագործական կամ գեղարվեստական մեկնաբանության երևույթ է, որը հիմնված է երկու կարևոր հմտությունների վրա: Առաջինը կատարողի կողմից ստեղծագործության իմացությունը կամ յուրացումն է, իսկ երկրորդը՝ նրա անհատական, ինքնատիպ վերարտադրումը կամ մեկնաբանությունը:

Այս երևույթը ինքնատիպ դրսևորումներ է ստանում հատկապես ժողովրդական արվեստի մեջ, քանի որ այն բանավոր է և չունի մեկնաբանության կանոնակարգված սկզբունքներ:

Հայ ազգային երգի ինքնության, էթնիկ երաժշտամտածողության չափորոշիչների, տիպաբանության բազում խնդիրների լուծման գործընթացում Կոմիտասի հիմնարար հետազոտության առարկան հայկական ժողովրդական երգն էր: Ազգային երաժշտության մյուս ճյուղերը և հատկապես աշուղական երգը իրենց տեղը զիջելու էին: Սհավասիկ իր ելույթ-դասախոսություններից մեկում նա ասում է. «Հայ ժողովրդական երաժշտության վրայ օտար երաժշտությունները շատ քիչ ազդեցություն ունեցած են, որովհետև ժողովուրդը թրքական եղանակ մը թուրքերէն խօսքերով կ'երգէ, պարսկական եղանակ մը՝ պարսկերէն խօսքերով, քրդական եղանակ մը՝ քրդերէն խօսքերով, եւ այլն, ու երբէք օտար եղանակ մը՝ հայերէն խօսքերով. հայ լեզուով երգերը կ'երգէ զուտ ազգային եղանակներու վրայ»¹:

Հայ ժողովրդական երգի ինտոնացիոն արտահայտչականության մեջ Կոմիտասը մշտապես կարևորել է խոսքի դերը, և վերը բերված դրույթն էլ դրավառ դրսևորումն է: Եվ հենց այս երկու բաղադրիչների խախտումներն էլ, ըստ Կոմիտասի, *հայ աշուղական արվեստում բերում են ազգային ինքնության խաթարման*: «Միայն թէ, - շարունակում է նա ելույթում, - աշուղները, որ շատ յաճախ քաղաքներուն մէջ կ'երգեն՝ մեծատուններուն մոտ, կը գործածեն օտար եղանակներ՝ յարմարացուած հայերէն խօսքերու, զոր կը շարադրեն օտար - սովորաբար՝ արաբ, պարսիկ կամ թուրք - տաղաչափական կանոններու համեմատ»²:

Սա հայ աշուղական երգի մասին կոմիտասյան դրույթներից մեկն է:

Անշուշտ, այս դրույթը՝ իբրև յուրօրինակ ավանդույթ, կիրառվել է հայ աշուղական արվեստում, և այն ընդունված է եղել առհասարակ աշուղության մեջ: Իբրև ցայտուն օրինակ բերենք Ալեքսանդրապոլի աշուղական համաքարության մեջ ընդունված ավանդույթը, ըստ որի՝ այս կամ այն տաղաչափական ձևը

¹ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ և յօդուածներ, Գիթք Բ, Եր., «Մարգիս Խաչենց-Փրինթինգո», 2007, էջ 193:

² Կոմիտաս Վարդապետ, Նույն տեղում, էջ 193:

կրող բանաստեղծական խոսքը կարող էր եղանակավորվել մի քանի տարբերակներով: Այս մասին իր հուշերում արժեքավոր տեղեկություն է տալիս ալեքսանդրապոլցի աշուղ Խայաթը: Նա իր ասելիքը հստակեցնում է *դոշմայի* նկարագրության մեջ՝ նշելով, որ 11 վանկից բաղկացած այս ոտանավորի եղանակները մի քանիսը կարող էին լինել, ինչպես, օրինակ՝ *Քեսիկ, Քեսիկ Քերեմի, շեքի, դալայչի, կիրյանի*: «Այս եղանակները երգելիս, - հստակեցնում է նա,- դոշմա կոչված ոտանավորներն էին կիրառում»³:

Նույնի մասին Կոմիտասը խոսել է նաև 1905 թվականին Թիֆլիսի Հովնանյան դպրոցի դահլիճում կայացած դասախոսության ժամանակ, որտեղ նշել է, որ «Կրթված գուսաններն ավանդաբար նախանձախնդիր են արաբ, պարսիկ և տաճիկ երաժշտության, թեպետ *մեկ-մեկ էլ երգում են ժողովրդական եղանակներ* (ընդգծումը մերն է-Հ.Հ.), բայց ավելի զվարճացնելու, քան ճաշակ տալու նպատակով, որովհետև անարվեստ, թեթև, անոճ եւ իրենց դպրոցի ոգուն հակառակ են համարում: Մոքա երգում ու նվագում են, վերջին ժամանակներս, ավելի հայերեն լեզվով, բայց արաբ, պարսիկ և տաճիկ գուսանական⁴ բանաստեղծության և երգագրության օրենքներով: Շատ անգամ պատրաստի եղանակներին հարմարեցնում են նոր բառեր»⁵:

Այստեղ կարևորում ենք *երգում ու նուագում են ժողովրդական երգեր* դիտարկումը, որը՝ իբրև դրույթ, շատ արժեքավոր է և փաստում է այն, որ *հայ աշուղը եղել է նաև ժողովրդական երգի գիտակ*:

Իբրև յուրօրինակ հաստատումն այս կոմիտասյան դրույթի՝ մեջբերենք աշուղ Զիվանու «Ես հայի զավակ եմ» երգը.

Ծանր-չափավոր ՅԻՎՆՆԻ

Ես հայ-ի զավակ եմ, եղ-բարք, ինձ տա-նում են զին-վո - լու-թյան,
լա - թե-կա՞մ ենք. պատ-վե - ի հարք, վեր-ջրն լա՞վ է այս նո - լու-թյան

Փռուզիական քառալարում ծավալվող այս գողտրիկ երգը՝ մինիմալիստական պտույտներով, կրում է հայ գեղջուկ երգերի արտահայտչականության

³ **Խայաթ Զահրիյան**, Հիշողություններ աշուղների մասին, 1930, անտիպ ձեռագիր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, FF 1, 7829:

⁴ Կոմիտասն իր հրապարակումներում համարժեք կիրառությամբ է գործածում *գուսան* և *աշուղ* բառերը, թեև դրանք համարժեքներ չեն: Ամենայն հավանականությամբ դրանք օգտագործվել են որպես աշխատանքային եզրույթներ:

⁵ **Կոմիտաս Վարդապետ**, Ուսումնասիրություններ և յօդուածներ, Գիրք Ա, Եր., «Սարգիս Խաչենց», 2005, էջ 324:

դրոշմ և ակնհայտորեն վկայում է աշուղի կողմից այդ երգերի արժեքավորման, ոճավորման մասին:

Կոմիտասը ի՞նչ օրենքներ նկատի ունի, որոնց շրջանակներում էլ աշուղները կիրառել են պատրաստի եղանակներ:

Հայտնի է, որ աշուղական երգն ու նվագը կրել են ինչպես ազգային ինքնության բնորոշիչներ, այնպես էլ մերձավորարևելյան տարածաշրջանի մշակույթին բնորոշ բազմաթիվ տարրեր. «Լինելով Մերձավոր Արևելքի էպիկական երգարվեստի դասական դրսևորումներից մեկը՝ աշուղական սիրավեպը քննելի է իբրև հայ-արևելյան երաժշտական առնչությունների հարուստ շտեմարան, որտեղ ամփոփված են հարակից մշակույթներում ձևավորված գեղարվեստական երևույթներ՝ կրոնագեղագիտական ու ժողովրդահավատալիքային պատկերացումների ընդգրկումով»⁶:

Ինչպես նշեցինք, Կոմիտասին հետաքրքրում էին հայ ժողովրդական երգի ինքնության չափորոշիչները, *ազգային հնչյունի* ոգեղեն էությունը: Նա մանրագին բացատրում է հայ խոսքի ֆոնետիկ հնչյունային անատոմիան՝ նշելով. «Ազգային հնչյունը մի ժողովրդական երգի ճշգրիտ ոգին է, գաղափարն է: /Լեզուի մեջ/ Չանազան ազգերը ունին զանազան տեսակ էլ հնչյուն տառերի, այսպես էլ զանազան ազգեր ունին զանազան երգեր եւ զանազան էլ հնչում են երգերի ձայները՝ մեկը ավելի կոկորդային, միւսը՝ կրծքի, մեկելը՝ ռնգային, մի չորրորդը՝ քմքի եւ այլն:

Հայերը ունին /զանազան տեսակ/ ազգային եւ օտար հնչյուն. օտարը փոխառություն է դրացի ազգերի հնչյունաբանությունից: /Իսկ ազգայինը/ Հայի ազգային հնչյունն է կրծքի եւ գլխի բնական ձայները հանելիս մի քիչ գոյն են տալիս զգացմունքի բարձր սաւառնելու ժամանակ քմքի ձայներով, որի հետ յաճախ խառնուում է և ռնգային մեղմ ձայն, եւ խառնուրդն ստացւում է բաւական նման ֆրանսիական clarinet-ի ձայնին, յերբ /ձայն/ բառերի մեջ ռնգային տառեր կան եւ օրինակ /նոքա/ երբ միացած են լինում մանաւանդ «ա» տառի հետ կրկնակների մեջ. /.../ կրծքի ձայները լի, գլխի ձայները վճիտ ինչպես բիւրեղ, իսկ կեղծ ձայն չեն գործածում»⁷:

Հիմնվելով հնչյունաբանության վրա՝ Կոմիտասը կարևորում է ազգային ելևէջի մյուս կարևոր բաղադրատարրերը. «Մեր երգի կշիռն ու չափը բխում է նույն երգի բառերի շեշտերի կշռից եւ չափից»⁸:

⁶ Երնջակյան Լ., Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում, Եր., 2009, էջ 6:

⁷ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ և յօդուածներ, Գիրք Բ, էջ 307-308:

⁸ Նույնը:

Այսպիսով, Կոմիտասը *ազգային երգի բնորոշիչների համալիրը կառուցում է խոսքի լեզվական-հնչյունային բազայի վրա*. «Ազգային երաժշտության ոգին է ձայների այսպես կամ այնպես շարունակելը՝ բերելը, ձայների եւ լեզուի հնչյունների առնչությունը (քերականական շեշտն ու մտքի շեշտը, երաժշտական շեշտը), բառերի արտահայտած մտքի ելևէջը եւ համապատասխան ինքնաբուխ եղանակը, որ սրտի ելևէջն է, ազգային երաժշտության ոգին է երգի համապատասխան տաղաչափութեան ընտրութիւնը և այլն, ... ինչ որ երգի հետ սերտ առնչութիւն ունի, դա ազգային երաժշտութեան ոգին է»⁹:

Հենց այս դրույթն էլ Կոմիտասին հնարավորություն է տվել հայ աշուղական երգի բնութագրի մեջ կարևորելու նաև հետևյալը. «Քաղաքներու աշուղներէն անոնք, որ օտար ժողովուրդներու արուեստին ծանոթ չեն, երգեր կը յօրինեն ժողովրդական տաղաչափութեան հետեւելով, սակայն եղանակները գոր կը ստեղծեն՝ կը հետեւին ընդհանուր ոգոյն օտար երաժշտութեանց, բայց զանոնք բնագործէն ժողովրդացնելով:

Գիւղացիները այս վերջին տեսակի երգերը երբեմն կը որդեգրեն, բայց երգած ատենին՝ անգիտակցաբար անոնց խոսքերն ու եղանակները կը սրբագրեն եւ անոնց կուտան հայ գոյն մը»¹⁰:

Կոմիտասայան այս դրույթը բավական բարդ է և երկիմաստ: Այն է՝ *եթե աշուղը /որը ծանոթ չէ օտարալեզու աշուղական, բանաստեղծական տաղաչափությանը/ հորինում է հայերեն, սակայն այդ բանաստեղծությունը հարմարեցնում է օտար եղանակներին, իսկ ժողովուրդը դրանք երգում է յուրովի՝ հայեցի եղանակներով:*

Իհարկե, դժվար է պատկերացնել հայ քաղաքային մշակույթի մեջ գործունեություն ծավալող որևէ աշուղի, որը օտար կամ հարևան ժողովուրդների համարժեք արվեստին անծանոթ էր, քանի որ աշուղական արվեստը հատկապես քաղաքներում առանց միջմշակութային շփումների չէր կարող զարգանալ: Պարզապես թվում է, որ Կոմիտասը ուղղակիորեն խուսափում է հայ աշուղական արվեստում ազգային ինքնության հստակ բնութագրից՝ այն դարձյալ հանձնելով ժողովրդական՝ թող որ *բնագղաբար* կատարվող սրբագրումներին:

Ահավասիկ այն երգային նմուշը, որը իր վերոնշյալ ելույթում դիտարկում է մեծ գիտնականը: Դա ակեքսանդրապոլցի աշուղ Գիգոյի «Ալ ու ավվան» երգն է: Ըստ Կոմիտասի՝ «Եղանակը գրեթե թրքաձեւ է, *արապան* կամ *քարճի-հար* թուրք կարգին (mode) վրայ»¹¹: Ցավոք, երգի նոտագրված տարբերակը բա-

⁹ Կոմիտաս Վարդապետ. Ուսումնասիրություններ և յօդուածներ, Գիրք Ա, էջ 308-309:

¹⁰ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ և յօդուածներ, Գիրք Բ, էջ 193:

¹¹ Նույնը:

ցակայում է, սակայն մենք համոզված ենք, որ խոսքը վերաբերում է աշուղ Շերամի¹² (6) համանուն երգին, որը տեղ է գտել նրա երգերի ժողովածուում՝ Վ.Տալյանի նոտագրմամբ: Նշենք, որ երգը նվիրված է Անդրանիկ զորավարին:¹³

ԱԼ ՈՒ ԱԼՎԱՆ ԵՄ ՀԱԳԵԼ

Moderato

Ալ ու ալ - վան ես հա - գել, կար - միր լա - լա ես դա - ռել,
 կար - միր լա - լա ես դա - ռել, Սյու - ռե - ի կը - լոր մեջ - քոք,
 փամ - փուշտ - նե - բով ես ծած կել... Փամ - փուշտ - նե - բով ես ծած կել...
 Ալ ու ալ - վան ես հա - գել: Ախ - պեր ջան,
 քեզ դուր - բան, մեր գյու - ման, դու ես, դու:

Վիպաշունչ այս ձոներգի տունը ծավալվում է g^1 տոնիկայով և c^2 օժանդակ հենակետով հարմոնիկ ձայնակարգում, իսկ կրկներգը՝ d^1 հիմքով եռլական մինորում: Աշուղ Շերամի բազմաթիվ երգերի հնչյունաշարերում հանդիպում են եռլական և հարմոնիկ քառալարերի շղթաներ, որոնք բնորոշ էին նաև Ալեքսանդրապոլի քաղաքային երգերին¹⁴:

Այս նույն երգը տարիներ անց Կոմիտասը գրառել է ժողովրդական կատարումից (մի քանի տարբերակով)¹⁵, և, ինչպես նշում է Ռ.Աթայանը, Կոմիտասը այս երգը «իր դասախոսություններում հիշատակել է որպես գյուղացիների կողմից որդեգրված և խոսքերն ու մեղեդին ժողովրդական ոճով «բնագղաբար» սրբագրված երգի օրինակ»¹⁶:

¹² Կոմիտասի հիշատակած աշուղ Գիզուն, ըստ էության, Գրիգոր Տալյանն է, որին Ալեքսանդրապոլում նաև Տալոյենց Գոթոր են կոչել, իսկ հետո՝ աշուղ Շերամ:

¹³ Շերամ, Սիրո երգեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1981, էջ 58:

¹⁴ Դրա վառ վկայությունն է նաև Ա.Տիգրանյանի «Անուշ» օպերայի երաժշտական նյութը, որը խարսխված է այդ ձայնակարգի վրա և Ալեքսանդրապոլի քաղաքային ու աշուղական երգի ինքնատիպ ոճական առանձնահատկությունների կրողն է:

¹⁵ Կոմիտաս, Երկերի ժողովածու: Հայ ժողովրդական երգեր, Գիրք Գ: «Ազգագրական ժողովածու», մաս առաջին /Կազմ., խմբ. և ծանոթ.՝ Ռ. Աթայան, Եր., «Գիտություն», 2000, էջ 31:

¹⁶ Նույն տեղում, էջ 129:

ԱԼ ՈՒ ԱԼՎԱՆ ԵՍ ԱՌԵԼ

Ոմրվրայից. Allegretto. Amorevole

Լ ւ ու ալ - վան ես ա - ռել,
 կար - ծիր լա - լա ես ռա - ռել,
 կար - ծիր լա - լա ես ղա - ռել:
 Ախ - աբո ջան, քա ղուր - բան, ղու ես
 ղու ծեր գյու - - - ճան.

Երգի ժողովրդական տարբերակում կան էական տարբերություններ՝ սկսած խոսքային տեքստից մինչև ձայնակարգայինը: Ու թեև պահպանված է աշուղական երգի կրկներգը, սակայն ամբողջությամբ բացակայում է նրա հարմոնիկ քառալարը, և երաժշտական տեքստն ամբողջությամբ ծավալվում է կվարտային օժանդակ հենակետով ու g^1 տոնիկայով էոլական մինորում: Այս երևույթն էլ Կոմիտասը որակել է որպես ժողովրդի կողմից աշուղական երգի *սրբագրում*: Նա գրում է. «Ահա ինչպես է ժողովուրդը երգում այս երգը՝ ուղղումներ անելով և յուրաքանչյուր բառին տալով համապատասխան ելևեջ»¹⁷:

Այս երգի մասին աշուղի արխիվային ձեռագրերից մեկում կա անչափ հետաքրքիր մի դրվագ (9, թիվ 5)¹⁸: 1905թ. գարնանը նրան հրավիրել են Էջմիածին՝ մասնակցելու Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության համագումարին: Աշխատանքի ավարտին Շերամը ելույթ է ունեցել մենահամերգով: Վերջինիս էլ ներկա է եղել Կոմիտասը, որը աշուղին հրավիրել է Գևորգյան ճեմարան՝ ուսանողների առջև ելույթ ունենալու համար: Համերգը կայացել է և արժանացել մեծ հավանության: Կոմիտասը խրախուսել է աշուղին իր բարձր գնահատականով և խնդրել, որ նա շարունակի ստեղծագործել հատկապես «Ալ ու ալվան» երգի ոճով: Այս մասին երաժշտագետ Ա.Քոչարյանը գրել է. «Տեսակցությունն ունենում է իր հետևանքները: Երգիչը՝ ազդված Կոմիտասի խոսքերից, հորինում է մի շարք ժողովրդական բնույթ կրող երգեր, ինչպես օրինակ՝

¹⁷ Կոմիտասս Վարդապետ, Ուսումնասիրություններ և յօդուածներ, Գիրք Բ, էջ 188:

¹⁸ Ե.Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Շերամի ֆոնդ, թ.5:

«Բաղը մտա», «Իրիկնահովին», «Միրուհուցս չեկավ նամակ», «Աչքդ խումար», «Հազար երնեկ» և այլն»¹⁹:

Ինչպես ակներև է, հիշյալ երգի կոմիտասյան բնութագրի մեջ կա հակասականություն: Եթե Շերամի երգը ժողովուրդը խմբագրել է, նշանակում է հենց այդ երգի ոճով ստեղծագործելու հորդոր Կոմիտասը նրան չէր կարող տալ, հետևաբար, համոզված ենք, որ երգի ժողովրդական կատարումը պարզապես աշուղական երգի ինքնատիպ մեկնաբանություն է, որը շատ բնորոշ է ժողովրդական-անհատական մոտեցմանը: Անտարակույս, ժողովրդական երգիչն իր ընկալման մեջ ճիշտ չի յուրացրել երգի ձայնակարգը, որը խիստ պարզեցված է և հեռացված բնօրինակից:

Նշենք նաև, որ աշուղ Շերամի երգերը շատ հազվադեպ են ենթարկվել այսպիսի փոխակերպումների՝ քաղաքային ժողովրդական երգին հոգեհարազատ լինելու շնորհիվ: Ավելին, Շերամը ի սկզբանե խուսափել է, այսպես կոչված, աշուղական տիպական մեղեդիներից՝ տուրք տալով իր սեփական հորինվածքներին²⁰:

Ասվածը կարող ենք հաստատել հենց Կոմիտասի կողմից գրառված մեկ այլ՝ «Խնուս գեղի մեջտեղը» երգի օրինակով: Ահավասիկ աշուղ Շերամի երգը՝ Վ.Տայանի գրառմամբ²¹.

Moderato

Խնուս գեղի մեջտեղը խը լուսն յեց մեծ շե խը:
 Խը - լուսն - յեց մեծ շե - խը: Թոր - գեց գիս լաց ու չի - վան,
 Թոր - գեց գիս լաց ու չի - վան, յար - սի տա - լավ մեծ ա - խը
 յար - սի տա - լավ մեծ ա - խը: Տա - լան տա - լան գիծ յա - լը:
 տա լան գիծ մե յու ճա լը հա վար է լեջ
 Սա - լու - լիմ տա - լան խո - ռոտ վա - ռո - յին:

¹⁹ Նույն տեղում, թ.4:

²⁰ Տե՛ս Հարությունյան Հ., Աշուղ Շերամը և Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը: //ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 10, Եր., «Գիտություն», 2007, էջ 90-95:

²¹ Շերամ, Միրո երգեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1981, էջ 131:

Երգը ուշմիջնադարյան պատմական կամ պատմաոգրերգական ժանրի բնորոշիչների կրող է թե՛ բովանդակությամբ և թե՛ երաժշտական վիպական արտահայտչականությամբ: Ծավալվում է e¹ տոնիկայով հիպոդորիական-եռական մինորում, երգի տան մեջ h¹ օժանդակ հենակետն է, իսկ կրկնակում՝ g¹-ը:

Անչափ հետաքրքիր է երգի ժանրային բնութագիրը՝ տրված Ռ.Աթայանի կողմից. «Քաղաքային ժողովրդական երաժշտության տարրեր պարունակող այս երգ-պատումը ժամանակին հենց քաղաքում շատ տարածված է եղել, եղանակի մասնավորապես երկրորդ կեսը (կրկնակը) անցել է նաև նվագարանային երաժշտության բնագավառը, և մինչև 1930-ական թթ. կեսերը Երևանում դեռ կարելի էր լսել այդ հատվածը ժողովրդական նվագարանների զանազան նվագաշարերում: Երգի հորինումը վերագրվում է աշուղ Շերամին (գետեղված է նրա ժողովածուում), թեև երգի հնությունը և պատմական վավերականությունը գրեթե անվիճելի են: /.../ Երգի աշուղական ծագումը ակնհայտ է, սակայն եղանակը Կոմիտասին հասել է գյուղացիների բերանով «բնագործեն ժողովրդականացած» վիճակում»²²:

Ահավասիկ երգի կոմիտասյան գրառումը.

(Չափավոր. Moderato)

Խը-նուս գե - դի մեջ-տե - դը խրա - մա - յեց մեծ շեյ - խը.
 զը-ցեց ինձ լաց ու շի-վան. յարս - ի տա - ռավ մեծ բե - խը:
 Տա - ռան, տա - ռան, իմ յա - ռը, տա - ռան իմ մեկ ու ճա - ռը,
 խա - բար ա-րեթ Ա - ռո - յին տա - ռան խո - ռոտ Մա - ռո - յին,
 տա - ռան խո - ռոտ Մա - ռո - յին:

Ի տարբերություն «Ալ ու ալվան» երգի՝ այստեղ ժողովրդական կատարումը գրեթե նույնական է աշուղական տարբերակի հետ: Ավելին, աշուղական երգի «բնագործեն ժողովրդականացած» տարբերակի առանձին դրվագներ (օրինակ՝ կրկներգի *Խարար արեք Արոյին* դարձվածքը) շատ ավելի զարդու-

²² Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 10, Կազմ.՝ Ռ. Աթայան: Եր., «Գիտություն», 2000, էջ 182:

րուն են, քան աշուղական երգինը: Հետևաբար երևույթը ժողովրդական ստեղծագործական մեկնաբանության տիրույթում է: Ժողովրդական ընկալման և մեկնաբանման սահմանները, սկզբունքները բազմազան են, առավել ևս, որ դրանք բանավոր արվեստի մեջ շատ դժվար են ուրվագծվում:

Այն, որ Կոմիտասը հայ ազգային երգի ուսումնասիրման և նոր որակական՝ կոմպոզիտորական տիրույթում գնահատել է նաև աշուղական երգը, կասկած չի հարուցում: Ավելին, նույնիսկ աշակերտական երգացանկում նա նպատակահարմար է գտել դրանց ընդգրկումը: Այստեղ հանդիպում են աշուղ Շիրինի «Այգեպան» և աշուղ Զիվանու «Այծյամ» երգերը²³:

Եզրահանգում: Ամփոփելով մեր դիտարկումները՝ նշենք հետևյալը. Կոմիտասը հայ աշուղական երաժշտության նկատմամբ տածել է որոշակի հետաքրքրություն՝ խորամուխ լինելով նրա բազմազան դրսևորումների մեջ: Անդրադառնալով երաժշտաոճական, տաղաչափական, ձայնակարգային և արտահայտչական այլ ազդեցությունների ու ընդհանրությունների առանձնահատկություններին, այդուհանդերձ, նա «խոստովանել» է, որ հայ աշուղները *երգեր կը յօրինեն ժողովրդական տաղաչափության հետևելով*: Հետևաբար, աշուղը հայ ժողովրդական երգի զիտակ է, և ժողովուրդն էլ շարունակաբար յուրացրել, սրբագրել և մեկնաբանել է հայ աշուղական երգը:

НАРОДНАЯ ПЕСНЯ КАК ТВОРЧЕСКАЯ ИНТЕРПРЕТАЦИЯ

Արուտյան Ա. Գ.

Ключевые слова: *ашугская песня, устная традиция, вариант, Комитас, ашуг Шерам, национальная идентичность, этническое музыкальное мышление, традиция, профессиональная монодия.*

Комитас в своих публикациях, лекциях, письмах четко и убедительно излагал критерии идентичности армянской национальной музыки. Существует мнение, что выдающийся ученый исключил из своего научного поля зрения армянскую светскую профессиональную монодию – ашугскую песню, так как она была под влиянием ближневосточной музыкальной традиции. И хотя Комитас зачастую избегал от четких характеристик национальной идентичности творчества ашуггов, тем не менее настороженно “признавался”, что ашуг являлся маститым знатоком народной песни и народ, в свою очередь освоил, корректировал и комментировал ашугскую песню.

²³ Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 5, խմբ.՝ Ռ. Աթայան, Եր., «Սովետական գրող», 1979, էջ 53-54,158:

FOLK SONG AS A CREATIVE INTERPRETATION

Harutyunyan H. H.

Key words: *ashough song, oral tradition, variant, Komitas, ashough Sheram, national identity, ethnic musical thinking, custom, professional monody.*

In his publications, lectures, letters, Komitas has clearly and convincingly outlined the standards of the Armenian national music identity. It is widely believed that the great scientist left out the Armenian secular professional monody - the ashugh song from his research perspective, as well as some elements typical of the culture of Middle East territory.

And though Komitas has simply avoided the distinctive character of national identity in Armenian ashough art, he has sometimes cautiously "confessed" that the ashough is a connoisseur of the Armenian folk song, and that the people have continually mastered and sometimes proofreaded the Armenian ashugh song.

References

1. **Komitas Vardapet.** usumnasirutyunner yev hoduatsner. Girk A. Yerevan. «Sargis Khachents», 2005 (In Armenian).
2. **Komitas Vardapet.** Usumnasirutyunner yev hoduatsner. Girk B. Yerevan. «Sargis Khachents'-Printinfo». 2007 (In Armenian).
3. **Yernjakyan L.** Ashughakan siravepy merdzavorarevelyan yerazhshtakan pokharnchutyunneri hamatekstum, Yerevan, 2009 (In Armenian).
4. **Komitas.** Yerkeri zhoghovatsu: Hay zhoghovrdakan yerger. Girk G: «Azgagrakan zhoghovatsu», mas arajin /Kazm., khmb. yev tsanot. R. Atayan. HH GAA Arvesti int. Yerevan. GAA «Gitutyun». 2000 (In Armenian).
5. **Sheram.** Siro yerger, Yerevan. «Sovetakan grogh», 1981 (In Armenian).
6. **Harutyunyan H.** Ashugh Sheramy yev Aleksandrapoli yerazhshtakan kyanky: HH GAA SHHH kentroni «Gitakan ashkhatutyunner». h. 10. Yerevan. «Gitutyun». 2007 (In Armenian).

Ընդունվել է՝ 13. 03. 2020

Գրախոսվել է՝ 01. 05. 2020

Հանձնվել է տպ.՝ 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ արվեստագիտ. թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ hasmik.har@mail.ru

ՀՏԴ՝ 781.7

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ
(սանդի, խնոցու և գութանի օրինակով)

Արթուր Հովհաննիսյան

Երևանի Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան

Բանալի բառեր՝ *որթով, ձայն, սանդ, խնոցի, գութան, հոռովել, Արցախ, Շատախ, Լոռի:*

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել ավանդական աշխատանքային երգերը՝ սանդի, խնոցու և գութանի օրինակով և դիտարկել դրանց ժամանակակից մեկնաբանությունները շոու-բիզնեսում և ազգագրական բնույթի թանգարաններում դրանց հնարավորինս արդյունավետ ներկայացման եղանակները: Աշխատանքային երգերի մասին կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Փորձ է արվում դրանց միջոցով անդրադառնալ այն հարցին, թե թանգարանային միջավայրում կամ շոու-բիզնեսում ինչ կերպով կարելի է ներկայացնել այս երգերը, որպեսզի ավելի ճանաչելի դառնան նոր սերունդներին: Այս խնդիրը հատկապես արդիական է մեր օրերում, երբ տեղի է ունենում մշակութային գլոբալացում, որի հետևանքով մենք կորցնում ենք մեր ազգային դիմագիծը և օտարվում մեր ավանդույթներից:

Նախաբան. Հայ աշխատանքային երգը հարուստ է ու բազմազան թե՛ իր ժանրերով, թե՛ երաժշտական առանձնահատկություններով և թե՛ բովանդակությամբ: Նրա մեջ իր արտացոլումն են գտել մեր ժողովրդի պատմական անցյալը, կյանքն ու կենցաղը, մտքերն ու զգացմունքները: Այդ է պատճառը, որ այն ներկայանում է մեզ որպես ժողովրդի կյանքի կենդանի տարեգրություն:

Հենվելով ազգագրական գիտության մեջ ընդունված տեսակետների ու հիմնահարցերի մեթոդաբանության վրա՝ աշխատանքային երգերի վերլուծումը թույլ կտա վերականգնել հայոց ավանդական տնտեսական կենցաղի աշխատանքային երգերի, աշխատանքային գործիքների տեխնիկա-տեխնոլոգիական և ոլորտի սոցիալ-ծիսական առումները: Չափազանց կարևոր է նաև աշխատանքային երգերից ընտանիքի և ընտանեկան կենցաղի, սովորույթների ու ծեսերի վերաբերյալ նյութերի քաղումը, վերլուծումն ու արժևորումը, որոնք որպես եզակի վկայություններ, տասնամյակներ շարունակ անձանոթ են մնացել հասարակական լայն շրջաններին: Ի տարբերություն այլ երգերի՝ աշխատանքային երգերը ունեն կառուցվածքային որոշ առանձնահատկություններ:

Երաժշտագետները և բանագետները ժողովրդական երգերը պայմանականորեն դասակարգում են տարբեր ժանրերի, ինչպես օրինակ՝ վիպերգեր, ծիսական-պաշտամունքային երգեր (օրացուցային տոների, հարսանեկան և այլն), օրորոցայիններ, պարերգեր, ռազմի, պանդուխտի, աշխատանքային երգեր և այլն: Վերջիններս, իրենց նախնական տեսքով, բաղկացած են եղել ռիթմիկ ճիչերից՝ կամ բնաձայնական հնչյուններից և ծագել են աշխատանքը թեթևացնելու, բնության և Աստծո հետ կապ հաստատելու, ոգևորվելու, ձանձրույթը ցրելու և այլ նպատակներով՝ նկարագրելով հայրենի բնաշխարհը, որոշ մանրամասնությամբ ներկայացնելով կատարվող աշխատանքը, ապա պատմելով գյուղական առօրյայի անցուդարձի կամ նույնիսկ սիրուց կրած տառապանքների և այլնի մասին: Կարելի է ենթադրել, որ այս երգերի մի խումբն ունեցել է նաև ծիսական գործառույթ և լինելով ինքնատիպ աղոթք՝ բնության հովանավոր ուժերից հայցել է նպաստավոր պայմաններ և առատ բարիք: Օրինակ՝ «Լոռվա գութաներգ»-ը սկսվում է հետևյալ տողերով.

Հո՛ւ՛ -

Օրհնյալ է Աստված,

Հիշյալ է Աստված:

Հո՛ւ՛, հո՛ւ՛...

Այս բառերով երկրագործական աշխատանքը սկսելով՝ հայ գյուղացին դիմում է Աստծուն՝ խնդրելով նրա օրհնությունն ու բարեհաճությունը: Ինչպես նշում է Ա. Դոլուխանյանը՝ այս երգերում ցոլանում են վաղնջական ժամանակների հայ մարդու պատկերացումները բնության ընկալումների վերաբերյալ, և աշխատանքային երգերից շատերում կարելի է նկատել դիցաբանական հավատալիքների հետքեր²: Հետևաբար, նախաքրիստոնեական ժամանակներում,

¹ Դոլուխանյան Ա. Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., 2008, էջ 125:

² Նույն տեղում, էջ 125:

հնարավոր է, «Աստված» բառի տակ հասկացվել է երկրագործությունը հովանավորող աստվածությունը կամ դրա փոխարեն հնչել է հենց նրա անունը: Հնարավոր է նաև, որ գործել է այն սկզբունքը, որի համաձայն՝ աստծո անունը տաբուացված էր, շատ հաճախ դա արտասանել չէր կարելի, և դրանց փոխարինելու էր գալիս որևէ մակդիր: Օրինակ՝ Արամագղ (Ահուրա Մագղա)³ կամ Եհովա, որոնց անունները աղոթքներում կամ այլ տեքստերում փոխարինում էին «Տեր», «Արարիչ», «Բարձրյալ» և այլ բառերով:

Ի տարբերություն մյուս երգատեսակների՝ աշխատանքային երգերն առաջին հերթին առանձնանում են նրանով, որ երգվել են բացառապես աշխատանքի պահին: Գիտարշավների ժամանակ հաճախ դժվարություններ են հանդիպում մեր օրերում կենցաղից դուրս մղված տարբեր աշխատանքային երգեր գրանցելիս: Պատճառն այն է, որ գյուղական ավանդական աշխատանքների որոշ տեսակների փոփոխմանը հետևում է համապատասխան երաժշտախոսքային շերտի մոռացումը: Կարևոր է նաև այն, որ գյուղացին երբեք երկրագործական աշխատանքներում ստեղծվող երաժշտապոետիկ տեքստը չի ընկալում իբրև առանձին երգ և հրաժարվում է կատարելուց, քանի դեռ ապահովված չեն անհրաժեշտ պայմանները՝ նպատակը, վայրը, ժամանակը, գործողությունը և մասնակիցները⁴:

Ասվածը փաստվում է հետևյալ օրինակով. Կոմիտաս վարդապետը, տեղեկանալով, որ գյուղերից մեկում ապրում է մի ծերունի, որը հիանալի հոռովել ասացող է, մեկնում է այնտեղ՝ գրառելու: Երեկոյան նա գտնում է ծերունի գեղջուկին՝ դաշտից եզան հետ տուն վերադառնալիս: Կոմիտասը խնդրում է նրան երգել, սակայն գյուղացին կտրականապես մերժում է: Փոխարենը նա վարդապետին առաջարկում է գիշերել իրենց տանը՝ խոստանալով հոռովել ասել վաղ առավոտյան: Լուսաբացին գեղջուկը երգելով, եզան հետ գնում է դաշտ, իսկ Կոմիտասը ընթացքում գրի է առնում երգը: Երբ վերջում հարցնում է, թե ինչու երեկոյան ոչ մի կերպ չհամաձայնեց երգել, գյուղացին բացատրում է, որ երեկոյան տուն վերադարձող եզը, հոռովելը լսելով, պիտի կարծեր, թե լույսը բացվել է, և պետք է վերադառնար դաշտ: «Այնինչ նա, ամբողջ օրն աշխատած լինելով, խիստ հոգնել էր»՝ ավելացնում է գեղջուկը⁵:

Աշխատանքային երգերն առանձնանում են նաև նրանով, որ դրանց ռիթմը հիմնականում պայմանավորված էր տվյալ աշխատանքին բնորոշ պարբերա-

³ Ахурамазда, Мифы народов мира, М., Сов. Энциклопедия, 1991, стр. 141.

⁴ Պիկիցյան Հ. Վ., Հոռովելի ժամանակակից կենցաղավարումը. Կոմիտասի հետքերով/Կոմիտասի թանգարանի տարեգիրք / Կոմիտասը և միջնադարյան երաժշտական մշակույթը, Եր., 2016, էջ 155:

⁵ Թրուանց Ա. Ա., Երգի մը պատմությունը... ժամանակ պարբերական, Կ.Պոլիս <https://clck.ru/M65he> (17.01.2019):

կան շարժումներով: Օրինակ՝ սանդով աշխատելիս թակիչով ծեծել են փոսիկի մեջ լցված հատիկը, և շարժումներն ու հարվածների ձայնն էլ դարձել են աշխատանքի միջոցին հյուսվող երգերի ուրիշը: Բազմաթիվ են սանդի երգերը, որոնցից առավել հայտնիները ավանդված են Շատախից ու Վանից՝ «Սանդ կը ծեծիմ», «Նա վա՛մ վ իրի», «Շատխու սարեր», «Տընեն իլար» և այլն: Այս երգերը աշխատանքային մյուս երգերից տարբերվում են հիմնականում կատակային բնույթով: Հատկապես նկատելի է կանանց կողմից ամուսինների ծաղրը: Օրինակ՝ «Շատխու սարեր» սանդերգում⁶ կանանցից մեկը ծաղրանքով նկարագրում է իր ամուսնուն՝ որպես հիվանդոտ, դեղնած մաշկով մեկը, որին ով տեսնի, կվախենա նրա մեռելային տգեղությունից: Կինը շարունակում է կատակը՝ ասելով, որ մտադիր է ձեռքից բռնել, տանել ու գրողին հանձնել, որից հետո ինքը կկարողանա գնալ ու ապրել սիրեկանի հետ:

Շատախի մեկ այլ սանդերգում, որը սկսվում է «Սանդ կը ծեծիմ գյարախուսի» տողով⁷, կինն ասում է, թե իր ամուսինը, կարծես, քարից պատրաստված լինի, հավանաբար նկատի ունենալով բիրտ ու կոպիտ բնավորությունը: Իսկ մյուսն իր ամուսնուն նմանեցնում է հավի ճուտի, որը հավի նման «ճվճրվում» ու «կոթկրոթում» է: Հնարավոր է, որ այդպիսի «կատակները» արտահայտությունը լինեն հասարակական կյանքում ու ընտանեկան հարաբերություններում կնոջ ունեցած սոցիալական դիրքի, քանզի, ինչպես նշում է Վ. Բոդյանը, դասակարգային հասարակության մեջ կնոջ ենթակայությունը շեշտակի բնույթ է ունեցել, և նրա իրավունքները կյանքի բոլոր բնագավառներում սահմանափակ են եղել⁸:

Բերենք սանդի երգի ևս մեկ օրինակ, որում բացակայում է ծաղրի տարրը և նկարագրվում է սանդով աշխատանքի ընթացքը: Խոսքը Կոմիտասի գրառած տարբերակի մասին է⁹, որտեղ գեղջուկը, դիմելով սանդին, ասում է՝ «Վարե, վարե լըման»: «Վարե» ասելով՝ գեղջուկը, հնարավոր է, ներկայացնում է թեփը հացահատիկից անջատելու գործողությունը, իսկ «լըման» նշանակում է «ամբողջը, լրիվ»¹⁰: Ապա ասում է. «Վարե հայու նման»: Այսինքն՝ մաղթում է, որ սանդն էլ իր նման բարեբեր և արդար աշխատանք կատարի:

Ինչպես նշեցինք, սանդի երգերի դեպքում ուրիշմական հիմքը թակիչով հացահատիկը ծեծելու շարժումներն էին, սակայն այս ժանրի երգերում նեղ անձնական բնույթի տեքստերը ոչ միայն ուրիշմով են պայմանավորված, այլ նաև

⁶ Շահնագարյան Ա. Մ., Երգ ու բան, Եր., 1989, էջ 23:

⁷ Նույն տեղում, էջ 47:

⁸ Բոդյան Վ. Հ., Հայ ազգագրություն, Եր., 1974, էջ 127:

⁹ Աթայան Ռ. Ա., Կոմիտաս, երկերի ժողովածու, հատ. 3, Եր., 1969, էջ 168:

¹⁰ Աճառյան Հ. Հ., ՀՀ ԳԱԱ, հատ. 1, Եր., 2001, էջ 234:

երգի կատարման ընթացքում հաճախ երգողից բացի այլ անձի բացակայությամբ: Այսինքն՝ վստահ լինելով, որ ունկնդիր չունի՝ աշխատանքի ընթացքում կինն ազատություն է տալիս իր հույզերին ու մտքերին և խոսում է շատ անձնական երևույթների մասին: Նմանատիպ տեքստերի բացակայությունը խնոցու երգերում, կարող է փաստել վերոնշյալը, քանզի խնոցին երկուսով են հարում, բաց կամ փակ տարածքում. և չի բացառվում նաև ընթացքում այլոց ներկայությունը¹¹: Խնոցի հարելու աշխատանքը նույնպես պահանջում էր ձեռքերի պարբերական շարժում, որը տարբերվում էր սանդ ծեծելու զարկերից: Ըստ սովորության՝ խնոցին հարում էին երկու կին՝ հիմնականում գերդաստանի ավագ սերնդից: Նրանք պետք է խնոցին տարուբերեին՝ այն միալար հրելով իրար, արդյունքում խնոցու մեջ լցված կաթի սերուցքը հարվում էր, և զատվում էին կարագն ու թանը: Այս աշխատանքը պահանջում էր առավել դանդաղ շարժում, հետևաբար խնոցու երգերը նույնպես կատարվում էին դանդաղ ռիթմով: Սակայն խնոցու երգերի ընդհանրությունը ոչ միայն դանդաղ ռիթմն է, այլև դրանց երաժշտախոսքային առանձնահատկությունները, որոնցում հաճախ կարելի է հանդիպել տիկի ներսում հեղուկի ճողփյունը նմանակող բացականչությունների: Օրինակ՝ Շատախի հայությունից ավանդված տարբերակի կրկներգում ասվում է.

Ցա՛մփ, հա, ցը՛ մփ զարկեմ,

Մեր տուն շէն անեմ¹²:

Այսպիսի բացականչությունները, բացի այսօրինակ երգերում որպես կրկներգ հանդես գալուց, նաև Հայաստանի տարբեր գավառներում դարձել են խնոցու անվանումը, ինչպես օրինակ՝ «ծըփոց» կամ «ձըձում»: Հենց վերոհիշյալ Շատախի հայությունից ավանդված խնոցու երգում էլ այն անվանված է «ձըձում»: Իսկ այսպես¹³ խնոցուն անվանում էին ոչ միայն Շատախում, այլև Հայաստանի այլ գավառներում, ընդ որում, մեկ ձեռքով և ոտքով խփվող խնոցին այս անվանումով հայտնի է շատ շրջաններում: Աշխատանքը կատարող կանանցից մեկը երգում է, որ իրենց ձձումը՝ խնոցին, նախշուն է: Հավանաբար, նրա վրայի նախշազարդերն ի նկատի ունենալով: Ապա ասում է. «Տիկ¹⁴ զարկեմ, եղ հանեմ, սարակտիրուն ճաշ անեմ»: Խոսում է այն մասին, որ խնոցի հարելուց ստացված կարագն ու յուղը լցնում էին տիկի մեջ, և այժմ, հավանաբար, գդալը զարկելով յուղ է հանում, որպեսզի «սարակտիրուն»՝ սարում աշխատող-

¹¹ Պիկիչյան Հ. Վ., Երաժշտությունը հայոց ավանդական առտնին և տոնակաձիսական կյանքում, Եր., 2012, էջ 84:

¹² Շահնագարյան Ա. Մ., նշվ. աշխ., էջ 7:

¹³ Մալխասյանց Ստ. Ս., Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944, էջ 178:

¹⁴ Տիկն այն տարան էր, որի մեջ պահում էին կարագն ու յուղը (տե՛ս Մալխասյանց Ստ. Ս., նշվ. աշխ., էջ 412):

ների համար ճաշ պատրաստի: Ապա հաջորդում է կրկներգը, որը խնցու միջի կիսահեղուկ զանգվածի տարուբերվելուց արձակված ձայներն է ընդօրինակում ասես՝ «Ցամփ, հա ցըմփ զարկեմ, եղ հանեմ, մեր տունը շեն անեմ», քանի որ տունը շեն, կանգուն, կյանքով լի պահելու համար ապրուստ ու կերակուր է պետք, և կարագը, որ իրենք պատրաստում են, դրա մի մասն է կազմում:

Եթե Շատախի խնցու երգում նկարագրվում է աշխատանքի ընթացքը, ապա «Հարի, հարի, խնցի» և Արցախի «Խնեցե» երգերում արդեն արծարծվում է սոցիալական թեմա: Նշվածներից առաջինում խնցահար կինը թեև գովերգում է իր խնցին, որի ունկերը նուրբ ու բարակ են, նրա մեջ պատրաստվող հումքը՝ բարիք ընտանիքի համար, սակայն իր ունեցած կաթն այնքան քիչ է, որ դրանից անհրաժեշտ չափով կարագ չի կարողանում ստանալ՝ յուղ հալելու համար: Երգի մյուս տողերում ընդգծվում է գեղջկուհու չքավորության այլ դրսևորումներ. նրա ամուսինը հիվանդ է, իսկ ինքը հույս ունի, որ խնցին հարելով բավականաչափ կարագ կստանար, որը վաճառելով՝ կկարողանար դեղ գնել: Այս ամենով նա արտահայտում է իր բողոքը, որ ամբողջ տարվա ընթացքում, տքնաջան աշխատելով հանդերձ, դարձյալ գտնվում է կարիքի մեջ: Իսկ ահա, խնցու երգի արցախյան տարբերակում առավել վառ է նկարագրված գեղջուկի սոցիալական ծանր կացությունը: Գյուղացի կինը պատրաստվում է խնցի հարելու և օգնության է կանչում իր եղբոր երեխաներին, որպեսզի խնցին կախեն առաստաղից և սկսեն աշխատանքը: Հաջորդ տեսարանում արդեն գործի են դրել խնցին և դրա շարժման ռիթմով երգում են այն մասին, որ հարում են խնցին՝ առանձնացնելով թանն ու կարագը, սակայն կարագը պետք է տան պարտքի դիմաց, իսկ իրենց ընտանիքին մնալու է միայն թանը, որով պետք է և՛ տունը պահեն, և՛ իրենք սնվեն:

Եթե սանդով և խնցիով աշխատելիս հարկավոր էր ձեռքով կամ ոտքով պարբերական շարժումներ կատարել, ինչն էլ պայմանավորում էր աշխատանքի ընթացքում կատարվող երգի ռիթմը, ապա երկրագործական աշխատանքների ժամանակ հիմնականում նման շարժումներ չէին կատարվում: Հետևաբար, հոռովել երգելիս գյուղացին ռիթմական սահմանափակում չունի, ինչն էլ իմպրովիզացիայի հնարավորություն էր տալիս: Դա արտահայտվում էր հոռովելների ինչպես երաժշտական, այնպես էլ խոսքային բովանդակության մեջ: Ինչպես նշում է Հ. Պիկիչյանը, այս երաժշտական կառույցը ոչ մի գյուղում չի կոչվել երգ, այլ կանչ կամ խոսք: Այստեղից էլ՝ հոռովելը ոչ թե երգում են, այլ կանչում, ընդ որում՝ «ասում են ձենով»: Ըստ ավանդույթի՝ հողը վարելու ընթացքում

հոռովել կանչելը պարտադիր էր՝ անկախ կատարողի ձայնային-երաժշտական տվյալներից¹⁵:

Հոռովելները հայ գեղջուկների երկրագործական բազմապիսի աշխատանքների՝ վարի, ցանքի, կալի, հունձի, խոտ խրձելու, սայլը բարձելու և այլնի գեղարվեստական արտացոլումն էին: Դրանք երգվել են ոչ միայն իրենք իրենց, այլև բանող անասուններին ոգևորելու և աշխատանքն առավել խթանելու նպատակով: Այս երգատեսակը տարածված է եղել ողջ Հայաստանով, այնպես, ինչպես գութանն ու դրանով աշխատանքը: Լոռիի, Արցախի, Սուրմալուի, Ապարանի, Թալինի, Վասպուրականի, Սյունիքի և այլ վայրերի գեղջուկ բնակչությունից գրառվել են հոռովելներ, որոնք ունեն մի շարք ընդհանրություններ և առանձնահատկություններ: Դիտարկելով Հայաստանի տարբեր տարածաշրջանների հոռովելների երաժշտապոետիկ տեքստերը, կարող ենք նշել, որ սրանցից գրեթե բոլորին հատուկ են «հոռովել», «հոռոլո», «առավել» և նման այլ բացականչությունները: Սրանք ծագել են «հո՛» բացականչության և «առավել» բառի միասնությունից: Հողագործներն «առավել» են անվանել երկու արտի սահմանագիծը ներկայացնող չհերկվող հողաշերտը, որտեղ հասնելով՝ հանգիստ են տվել եզներին, և իրենք էլ հանգստացել են¹⁶: Շինականը, հողը վարելիս ձգտելով շուտ հասնել առավելին, իբրև լծկաններին ոգևորելու միջոց, ի թիվս այլ բացականչությունների, ամենից ավելի օգտագործում է հենց «հո՛» բացականչությունը: Նա, ոգևորելով լծկաններին, հաճախ հիշատակում է նաև «առավել» բառը՝ նկատի ունենալով, որ դրան հասնելով՝ շուտով հանգիստ կառնեն: Ոգևորելով եզներին, նաև գրուցելով իրար հետ՝ գութանավորները ազատ ու արձակ դաշտում ջանացել են առավոտից մինչև ուշ գիշեր հույս ու հավատ փայփայելով, որ կրկին մեկ տարվա պաշար կունենան¹⁷: Հոռովելների մյուս ընդհանրությունն էլ այն է, որ սրանք կատարվել են բացառապես երկրագործական աշխատանքների ժամանակ՝ վարի, ցանքի, կալի, հունձի, խոտ խրձելու, սայլը բարձելու և այլնի:

Բազմազան են հոռովելների թեմաները, որոնք կարող են լինել գրույց եզների հետ կամ գութանավարների միջև, գութանի ու մշակի աշխատանքի փառաբանություն, աղոթք առ բնություն ու Աստված, սոցիալական վիճակի նկարագրություն, աշխատանքի ընթացքի նկարագրություն և այլն: Դրանք տարբեր գավառների հոռովելներում, կախված տվյալ տարածաշրջանի սովորույթներից և աշխատանքը կատարելու առանձնահատուկ կերպերից, նույն-

¹⁵ Պիկիչյան Հ. Վ., նույն տեղում, էջ 156:

¹⁶ Աճառյան Հ. Հ., Նշվ. աշխ., էջ 98:

¹⁷ Բրուտյան Մ. Ա., Հայ ժողովրդական ստեղծագործություն, Եր., 1983, էջ 122-124:

պես տարբերվում են: Օրինակ՝ Լոռիում գործածվել է տասներկուլծանոց գութան, հետևաբար Լոռվա գութաներգը խիստ տարբերվելու էր այլ գավառներում ստեղծված հոռովելներից՝ թե՛ իր բովանդակությամբ, թե՛ տաղաչափությամբ: Ահա թե ինչպես է նկարագրում Կոմիտասը Լոռվա գութանավարը. «Լոռում տակավին գործ են ածում հին ձևի նահապետական գութան: Որովհետև այսպիսի գութանով առանձին-առանձին վար անել չեն կարող, ուստի մի քանի տուն միանում են, տեղական ոճով ասենք՝ մոտկամ են դառնում. կամ համկալանում՝ համկալ են դառնում. մեկ գութան են լծում, տասներկու լուծ ու փոխադարձ օգնությամբ վար անում: Համկալ կամ մոտկամ են դառնում, բնականաբար, միմյանց առավել համակրող կամ մտերիմ ընտանիքները: Երբ նախապատրաստությունը՝ վերջանում, ու տասներկու լուծը լրանում է, որոշյալ օրը՝ ճաշից հետո՝ իրիկնադեմին, կազմ ու պատրաստ դուրս են գալիս գյուղեն ու գնում համկալների հողերը՝ հերթով վարելու, և սովորաբար առաջին օրը և առաջին անգամին գութանամոր մաճկալի արտը՝ այսինքն՝ այն մարդու, որին պատկանում է գութանը, և որի հետ մոտկամ են լինում մյուսները: Այդ օրը գործ են դնում հողը, այսինքն՝ սկսում են. մի քանի ակոս են բաց անում, որպեսզի գիշերավարը հեշտությամբ կատարեն»¹⁸:

Աշխատանքի այս ձևը Լոռիում պահպանված է եղել դեռևս 20-րդ դարի առաջին տասնամյակում: Ռ. Աթայանը նշում է, որ Կոմիտասը Լոռվա գութաներգը գրառել է 1899-ի աշնանից մինչև 1901 թվականն ընկած ժամանակահատվածում, քանի որ 1902 թվականի մարտին՝ Գևորգյան ճեմարանում կազմակերպված համերգի ժամանակ, նա հնչեցրել է Լոռվա գութաներգի խմբագրային մշակումը¹⁹:

Այն սկսվում է Աստծո փառաբանությամբ, որպեսզի նրա օրհնությամբ կատարվի աշխատանքը: Ապա հաջորդում են գոմեշին ուղղված խրախուսանքի խոսքեր: Երգի ընթացքում հնչում են նաև եզների անուններ և նրանց ուղղված գովասանքներ, ինչպես նաև «ռավել» բացականչությունը: Իսկ տողերից մեկում ասվում է. «Լուսը լուսացավ, բարին շատացավ»: Ինչպես Լոռվա գութաներգում, այնպես էլ Արցախի հոռովելների մի տարբերակում, որը գրառել է Ե. Լալայանը, առկա են գոմեշին ու եզներին քաջալերելու խոսքեր, մի տարբերությամբ, որ արցախցի մաճկալը խրախուսում է նաև իրեն օգնող հոտաղին: Այս տարբերակում ևս կա խնդրանք առ Աստված գրեթե նույն աղոթական բանաձևերով, ինչպես օրինակ՝

¹⁸ Բրուտյան Մ. Ա., Նշվ. աշխ., էջ 123:

¹⁹ Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատ. 10, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Ռ. Ա. Աթայանը, Եր., 2000, էջ 13:

Օրինյալ է Աստված, հոտադներ,
 Համենայն ժամ գութնամեր,
 Օրը բացվեց, լիսացավ,
 Մաճկալն Աստծուն հուսացավ²⁰:

Բացի աշխատանքային գործընթացի նկարագրությունից և մշակներին ու եզներին ոգևորող բացականչություններից՝ նաև արտացոլվում են հայ գեղջուկի սոցիալական ծանր կացությունը, հոգեկան ապրումները և այլն: Օրինակ՝ Լոռվա հոռովելում հայ գեղջուկը երգի ամբողջ ընթացքում դիմում է իր եզանը՝ նրան անվանելով «ախպեր ջան»: Մա ցույց է տալիս, թե այս բանող անասունը որքան կարևոր նշանակություն է ունեցել նրա համար. չէ՞ որ նրանից է կախված իր ընտանիքի ապրուստը: Նույն վերաբերմունքն ենք տեսնում նաև «Ել, ել» երգում, որտեղ գեղջուկը պատկերվում է հիվանդ եզան առաջ գլխահակ կանգնած: Նա դառը կսկիծով դիմում է կենդանուն, մոլորված ասելով, որ օրն անցավ, մութն ընկավ, իսկ իրենք դեռ հողը չեն մշակել: Եվ ծանր մտածմունքների մեջ է ընկել, թե ինչպես պետք է հոգա իր ընտանիքի ապրուստը, եթե եզը սատկի. և ինքը չկարողանա գութանով աշխատել դաշտում²¹:

Եզրահանգում. Վերոնշյալ աշխատանքային գործիքները մեր ժամանակներում արդեն փոխարինվել են իրենց նոր, ժամանակակից տարբերակներով, որոնք նվազեցրել են մարդու կողմից կատարվող աշխատանքը, իսկ ավանդական աշխատանքային երգերը այսօր ներկայացվում են ժամանակակից մեկնաբանություններով՝ համերգային կատարումների ժամանակ և տարբեր տեսահոլովակներում: Սակայն այս տիպի երգերի ներկայացման եղանակներից շատ քչերն են, որոնք որևէ աղերս ունեն ավանդական աշխատանքային երգերի և դրանց ռիթմական առաձևահատկությունների հետ: Հայկական շոու-բիզնեսում այս երգերը ներկայացվում են՝ էթնոջազային, փոփ և այլ երաժշտական ոճերի երաժշտական առանձնահատկությունները աշխատանքային երգերի տեքստերին համադրելով (Օրինակ՝ Միրուշոյի «Պոե գոմեշ», Անդրեի «Արցախի հորովել», «Բամբիո» ռոք-խմբի «Խիո խիո», Ափո Սահակյանի, «Վանա սանդերգ» և այլն): Երիտասարդ ունկնդիրները շատ հաճախ չունեն բավարար չափով տեղեկություններ և երբեմն նույնիսկ ծանոթ չեն աշխատանքային գործիքներին, իսկ այդ երգերի ժամանակակից ժանրային մեկնաբանումները շատ հաճախ չեն ընկալում որպես աշխատանքային կամ ժողովրդական երգ: Այս առումով ազգագրական բնույթի թանգարաններում աշխատանքային գործիքների կիրառման եղանակների ցուցադրությունը, ինչպես նաև դրանց երաժշտական

²⁰ Լալայան Ե. Ա., Երկրագործի երգեր.// ԱՀ//, XI գիրք, Թիֆլիս, 1904, էջ 70:

²¹ Ադամյան Ա. Տ., «Հայրենիքը երգարվեստի մեջ» ռադիոհաղորդաշար, թողարկում 29-րդ:

կատարումների ներկայացումը կամ աշխատանքային գործիքների և աշատանքային երգերի վերաբերյալ կրթական ծրագրերի անցկացումը թանգարաններում մեծապես կնպաստի աշխատանքային գործիքների և դրանց կիրառության մասին պատկերացում ձևավորելուն, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի, բացի ժամանակակից կատարումներից, ծանոթանալու նաև այդ երգերի բնօրինակներին:

Սույն աշխատանքը շարադրելիս մեր առջև խնդիր դրեցինք մեկ անգամ ևս անդրադարձ կատարելու աշխատանքային երգերի ծագմանն ու որոշ աշխատանքային գործիքների հետ դրանց ունեցած կապին՝ սանդի, խնոցու և գութանի օրինակով: Անդրադարձ կատարվեց վերոնշյալ աշխատանքային գործընթացների յուրօրինակությանը, դրանց՝ աշխատանքի ընթացքում առաջացած ռիթմիկ ձայներին ու տեքստերին, ինչպես նաև երգերում արտացոլված ժողովրդական կենցաղի տարբեր դրսևորումներին: Եվ քանի որ հազարամյակների ընթացքում միասին զարգացած աշխատանքային գործիքներն ու երգերն իրենց կենսունակությունը պահպանեցին մինչև 20-րդ դարի առաջին կեսը և աշխատանքի մեքենայացման և այլնի հետևանքով կամաց-կամաց դուրս եկան կիրառությունից, արդեն մերօրյա աշխատանքային միջավայրերում անհնար է պատկերացնել աշխատանքային երգերի ստեղծումը և դրանց կիրառումը, ուստի խստագույն անհրաժեշտություն է ներկայիս դրանց մշակումներում հնարավորինս ապահովել ավանդական ռիթմի, երաժշտության և ազգագրական-աշխատանքային երգի բովանդակության փոխադարձ կապը:

О ПРИМЕНЕНИИ ТРАДИЦИОННЫХ ТРУДОВЫХ ПЕСЕН

Оганисян А. Л.

Ключевые слова: *ритм, звук, ступа, маслобойка, плуг, оровел, Шатах, Лори, Арцах.*

Целью данного сообщения является выявление связи между возникновением трудовых песен, их ритмо-поэтической структурой и рядом инструментов – таких как ступа, маслобойка и плуг. Отдельное внимание уделено также выявлению характерных особенностей той или иной трудовой деятельности, ее ритмического звукового сопровождения, формирования поэтической и музыкальной природы сопровождающих ее песен. Помимо всего вышеупомянутого, анализируется характер отображения особенностей народного быта в трудовых песнях. С учетом того факта, что на протяжении тысячелетий развитие трудовых песен было обусловлено применением тех или иных инструментов, использование которых

потеряло актуальность ближе к середине 20-го века в связи с механизацией труда, в наши дни формирование новых трудовых песен представляется маловероятным, что делает еще более актуальной задачу выявления корреляции музыкальной и содержательной составляющей трудовых песен с особенностями трудовой деятельности.

**ON THE ISSUE OF THE APPLICATION
OF TRADITIONAL WORK SONGS
(by the example of mortar, churn and plough)
*Hovhannisyan A. L.***

Key words: *rhythm, sound, mortar, churn, plow, plow song, Shatakh, Lori, Artsakh.*

The paper aimed at highlighting the origin of work songs and the relationship of the rhythmic and poetic lyrics of the latter with such working tools as the mortar, the churn and the plow. The novelty of the research is provided by a comprehensive approach to the peculiarities of working processes, the rhythmic sounds and the lyrics emerging in the meantime, and the reflection of the everyday routine of folk life. Seeing that the working tools and work songs had been developing for centuries and endured to the first half of the 20th century, have become obsolete nowadays due to the work automation, it is impossible to imagine the creation of work songs at present. Hence we made an attempt to demonstrate the interrelationship between the rhythm, melody, and the lyrics content with the working tools.

R e f e r e n c e s

1. Acharyan H. H. Yerker. HH GAA, hat. 1, Yerevan, 2001 (In Armenian).
2. Bdoyan V. H. Hay azgagrut'yun, Yerevan, 1974 (In Armenian).
3. Brutyan M. A. Hay zhoghovrdakan steghsagortsut'yun, Yerevan, 1983 (In Armenian).
4. Dolukhanyan A. G. Hay zhoghovrdakan banahyusut'yun, Yerevan, 2008 (In Armenian).
5. Komitas. Yerkeri zhoghovatsu, hat 10. kazmets', khmbagrets' yev tsanot'agrets' R. A. At'ayany, Yerevan, 2000 (In Armenian).
6. Lalayan Ye. A. Yerkragortsi yerger, // AH //, XI girik' T'iflis, 1904 (In Armenian).
7. Malkhasyants' St. S. Hayeren bats'atrakan barraran, Yerevan, 1944 (In Armenian).

8. **Pikich'yan H. V.** Horroveli zhamanakakits' kents'aghavar na. Komitasi het miasin // Komitasi t'angarani taregirk' // Komitasy yev mijnadaryan yerazhshtakan mshakumy, Yerevan, 2016 **(In Armenian)**.
9. **Pikich'yan H. V.** Yerazhshtut'yuny hayots' avandakan arrtnin yev tonakatsisakan kyank'um. Yerevan, 2012 **(In Armenian)**.
10. **Shahnazaryan A. M.** Yerg u ban. HKHSH zhoghkrtnakh. Yerevan. 1989 **(In Armenian)**.
11. **T'ruants' A. A.**, Yergi patmut'yun ...Zhamanak parberakan, K.Polis, 01.17.2019 **(In Tyrkey)**.

Ընդունվել է՝ 10. 03. 2020

Գրախոսվել է՝ 05. 03. 2020

Հանձնվել է տպ.՝ 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Արթուր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ Խ.Արվյանի անվ. ՀՊՄՀ
թանգարանագիտության, գրադարանագիտության և
մատենագիտության ամբիոնի մագիստրոս,
Էլ. հասցե՝ arthur.hovhannisyan333@gmail.com

ՀՏԴ՝ 398

ԳՅՈՒՄՐՈՒ ԲԱՆԱՎՈՐ ԵՐԳԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ
ՏԵՔՍՏԻ ԼԵԶՈՒՆ

Ռոզա Հովհաննիսյան, Կարինե Սահակյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *համատեքստ, Կարնո բարբառ, համեմատություն, մակդիր, այլաբանություն, շրջանություն, տաղաչափություն, պատկեր, գունային ձևավորում, հնչյունային ձևավորում:*

Հոդվածում անգիր մշակույթի ժառանգության շարունակականության ծիրում դիտարկվել են Գյումրու բանավոր երգաստեղծության տեքստի լեզվի որոշ առանձնահատկություններ, անդրադարձ է կատարվել Կարնո բարբառի բառաքերականական դրսևորումներին, բառաշերտում առկա փոխառյալ բառերին ու դրանց բառակազմական գործառության ձևերին, մասնակիորեն նաև՝ բանավոր երգաստեղծության պատկերի գունային և հնչյունային ձևավորման հարցերին: Քննության են առնվել Գյումրու ժողովրդական բանահյուսության առավել կենսունակ ժանրերի նյութեր (քնարական ու վիպական բանահյուսության նմուշներ, առածաբանություն, դարձվածաբանություն), որոնք գերազանցապես գրառվել են նախադետյան շրջանում Շիրակի մարզի, ի մասնավորի Գյումրու բնակչությունից: Դրանցում լավագույնս է դրսևորվում ժողովրդի դիպուկ, պատկերավոր, իմաստալից ու հյութեղ լեզվամտածողությունը, քանի որ բանահյուսական տեքստը գերազանցապես դրսևորվում է ձեռի, սովորույթի ու ավանդույթի համատեքստում՝ պատումի տարաբնույթ ձևերով ու ազգաբանական շերտերի ընդլայնումով: Սրանով հանդերձ՝ Գյումրու բանահյուսական տեքստերի լեզվի սեղմ քննություն-

նր թույլ է տալիս եզրակացնել, որ այստեղ անխառն քնարերգություն՝ որպես այդպիսին, հազվադեպ է, քանի որ ստեղծարար քաղաքն իր լեզվամտածողության մեջ ամփոփում է Ալաշկերտից, Ներքին Բասենից, Կարինից ու Կարսից վերաբնակեցվածների քաղաքային տիպի բանահյուսությունը:

Նախաբան. Մասնագիտական գրականության մեջ տեքստի սահմանումը միանշանակ չէ: Լեզվաբանության մեջ անգամ այն գործածվում է երկու նշանակությամբ. նախ՝ իբրև տեքստ հասկացվում է ամեն մի ասույթ, որը բաղկացած է մեկ կամ մի քանի նախադասությունից և ավարտուն իմաստ ունի, երկրորդ՝ տեքստը ավարտուն խոսքային ստեղծագործություն է (վեպ, վիպակ, պատմվածք, հոդված և այլն): Ըստ Հայերենագիտական բառարանի՝ տեքստը (*լատ. textus-հյուսվածք, միացում*) իմաստով շաղկապված խոսքային միավորների (արտասանվածք, ասույթ, պարբերույթ և այլն) հաջորդականությունն է, արտասանված ամբողջական խոսքը¹: Վ. Տոպոբովի «Տարածությունը և տեքստը» հոդվածում տեքստը ներկայացվում է որպես կազմակերպված իմաստային տարածություն:

Համատեքստը «խոսքային շղթայի՝ իմաստով ու ձևով ավարտուն, ամբողջականություն ներկայացնող այն հատվածն է, որի սահմաններում պարզորոշ նկատվում է նրա մեջ մտնող լեզվական տարրերի, միավորների նշանակությունը»²: Լայն առումով համատեքստը տվյալ լեզվով տվյալ մշակութային միջավայրում ժամանակի ընթացքում ստեղծված, կարևորված ու հիշված տեքստերի այնպիսի ամբողջությունն է, որի մեջ կա աշխարհընկալումային ամբողջականություն:

«Յուրաքանչյուր տեքստ՝ գրական, կինոտեքստ, նկարչական և այլն, ունի արտաքին և ներքին շրջանակներ, որոնք իրականացնում են իր համատեքստից մեկուսացնելու գործառույթ: Մակայն այն, որքան էլ պարադոքսալ լինի, նաև միավորում է նրանց մի ամբողջական, յուրօրինակ համակարգի մեջ, որտեղ տեքստը հանդես է գալիս որպես ենթահամակարգ, և որտեղ մասի ու ամբողջի միջև կան տարբեր տիպի կապեր ու հարաբերություններ, որոնք ազդում են տեքստի իմաստի վրա: Տեքստի և իր համատեքստի փոխադարձ կապը (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին) այնքան էական է լինում, որ երբեմն տեքստի տեղափոխությունը մի համատեքստից մյուսը կարող է տրամագծորեն փոխել իմաստը»³:

¹ Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1987, էջ 582:

² Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 307:

³ Հարությունյան Ս.-Ա., Արվեստի նշանագիտական սահմանները, Եր., «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2017, էջ 395:

Մեր քննության մեջ ևս իբրև տեքստ հասկացել ենք ամեն մի ասույթ, որը բաղկացած է մեկ կամ մի քանի նախադասությունից և ավարտուն իմաստ ունի: Մրանով հանդերձ, բերնեբերան ավանդվող ստեղծագործությունները մասնավորից ընդհանուրը գնալու կենսունակություն ունեն և հակառակը. այս պարբերական անցումն ու փոխադարձ կապը իրականն ու երևակայականը միահյուսում են ժողովրդական հորինվածաբանության տիրույթում, որին առավելապես բնորոշ են խոսքի անպաճույճ հյուսվածքը, բյուրեղյա պարզությունն ու անմիջականությունը, սեղմությունն ու զգայականությունը, ժողովրդի դիտողականությունն ու դիպուկ բնութագրումը:

Յուրաքանչյուր ասացողի երգաստեղծությունն իր ժամանակի մեջ ինչոր չափով դառնում է ավանդականի ու նորի համադրում (կամ ավանդականի նորացում), որը յուրօրինակ արտահայտություն է ստանում տեքստի լեզվական դրսևորումներում: Վերջիններս սերտորեն կապված են տեքստի տեսակի, կառուցվածքի ու տեքստային նշանների հետ: Հետևաբար բանավոր երգաստեղծությունը հարկ է դիտարկել քրոնոտոպի մեջ՝ ժամանակի ու տարածության չափումներում:

Ինչպե՞ս է մշակութային միջավայրն ազդում տեքստի լեզվի վրա:

Ինչ խոսք, ազգային լեզվամտածողության վրա ազդեցություն են թողնում ոչ միայն բնաշխարհիկ, այլև այլալեզու մշակութային միջավայրերը, քանի որ մշակույթները ձևավորվում ու զարգանում են փոխադարձ շփումներով ու երկխոսությամբ միմյանց փոխսնուցելով: Վկայաբերենք քնարական բանահյուսության ժանրերից մեկի՝ ժողովրդական խաղիկի մի քանի օրինակ՝

ա) Թիֆլիսու ֆայտոն գուքա, // Ձիանը յորդա գուքա, // Մեջը նստող էն տղեն // Տե՛ս, ինչքան չեռվոն կուտա:

բ) Առվրները համամ է, // Գյուլի բաղը շամամ է, // Ես էն աղջրկան կառնիմ, // Որի անունը Թամամ է:

գ) Ձիվանի ձին ձորեն է, // Բալես ալ խնձորեն է:

Առաջին օրինակում ակնհայտ է ռուսերենի ազդեցությունը (*ֆայտոն, չեռվոն* բառամիավորներով): Էական է, որ ժողովուրդը տվյալ ժամանակահատվածում ընտրում է ավելի բարձր մշակույթի դրսևորում համարվող ֆայտոնը, ոչ թե, ասենք, սայլը: Երկրորդ օրինակում առկա են թուրքերենից փոխառյալ բառեր (*համամ, գյուլ, Թամամ*), երրորդում բանասացը, իր ժամանակին ու բնաշխարհին հոգեհարազատ մնալով, խոսում է իր բարբառին հատուկ բառաբերականական ձևերով:

Ակներև է, որ, ըստ պատմական ժամանակաշրջանի, փոխվում է փոխառությունների կամ օտարաբանությունների բնույթը՝ ռուսերեն, արևելյան հարևան լեզուներից փոխառյալ բառեր, երբեմն էլ՝ խառը: Բանավոր երգաստեղ-

ծության տեքստերում հաճախ անանցող հիմքը փոխառյալ բառ է (*անգյուման թողիր, անյուլագյումագ*), իսկ բառաքերականական ձևը՝ հայերեն, ինչպես՝ *Ղաղա դուրդուշունի* ռաստ գաս (նորօրյա հորինումների տեքստում՝ *դուխով* բառը), պատահում է նաև, որ թե՛ հայերեն, թե՛ փոխառյալ արմատին ավելանում է փոխառյալ բառակազմական մասնիկ՝ նախածանց (օր.՝ *էս ի նչ բեքախտ տարի է, բեմուրագ, աշխրրիքե բեխաբար և այլն*):

Ընդգծենք, որ մեր գրառած բանահյուսական նյութի շրջանակում շատ բառեր բարբառային երանգ են ձեռք բերել Կարնո բարբառի համապատասխան քերականական փոփոխությունների (հոլովում, խոնարհում)՝ *սարեն, ձորեն, մտքեն, քթես, մեկեն, քեզի, ընձի, կայնի, էրթանք, թոնիմ, կեղնի*, ինչպես նաև հնչյունական-բարբառային ձևերի՝ *նխշուն, լուս, արուն, օրթունք, հարուր, ձուն, ախպեր, մեր, գեղ* ևն շնորհիվ: Բացարձակորեն իշխում են բայի ներկա ժամանակի Կարնո բարբառին (և առհասարակ արևմտյան բարբառներին) հատուկ համադրական ձևերը՝ *Աղջի՛ Թեղի, դուս մի՛ ելնի, կրսեմ նագ, // Բոյդ կարճ է, լոթու խարջ է, կրսեմ նագ: // Աղջի՛ Թեղի, դուս մի՛ ելնի, ձուն գուքա, // Ժաշկը գեղնի, պատը վրեղ փուլ գուքա:*

Ստացականության կրկնակի արտահայտությունը ևս հատուկ է նշյալ բարբառով տեքստերի լեզվին՝ *Բմ՛ ձիս չափառակ յորդա է: Կոն՛նկ, իմ բայիցս մեկ խաբար բերեք: Օձի պես սակավի քու կերդ:*

Մեր ուսումնասիրության հատույթում տեքստի լեզվի համար առաջնահերթը ոչ թե երգաստեղծության թեման է, այլ նրա գեղարվեստական իրագործման, արտահայտման ձևը, այսինքն՝ ոչ թե *ինչք*, այլ *ինչպես*-ը:

Բանավոր երգաստեղծության տեքստի լեզվի խնդիրների մեջ մտնում են նախևառաջ արտահայտչական միջոցները՝ պատկերը, այլաբանությունը, փոխաբերությունը, նաև տաղաչափությունը: Այն խոսքի ֆիզուրներից ու տրոպներից օգտվում է հիմնականում պարզ համեմատությունից, որի նպատակը ոչ թե ինտեգրալ համադրումներն են (ինչպես վերոհիշյալ ֆիզուրներինը), այլ երկու կամ ավելի հատկությունների պարզ ճանաչողական համադրությունները⁴:

Ուշագրավ է, որ Կարնո բարբառակիրների լեզվամտածողության դրսևորումներում, ժողովրդաբարբառային հարադրություններում ու դարձվածքային միավորներում առկա են օտար բառանվանումներ ու արտահայտություններ, որոնք հաճախ դառնում են բարբառային բառերին համաձույլ՝ *խանը անթև դուշ է, հոտած ջրերի հետ յուլա կերթա, բեյնի դափաղ է, գյամերը քաշե, դուշմնի մալ է, կաթիդ գորա խոսա, դոջա սև ձուն է դառե, դալաթ ես էրե և այլն*: Հիշյալ խոսքային բնագրերը (տեքստերը) ձևավորված են ժողովրդական դարձվածա-

⁴ Մուլսես Ն., Գրառումներ 2, Եր., «Հայագիտակ», 2017, էջ 57:

բանության յուրահատկություններով. դրանք մեծավ մասամբ համեմատության, փոխաբերության, մակդիրի պատկերավորման հնարներով ավանդական ասույթներ են՝ կարճ բանաձևումով ու ներփակ կաղապարով: Մրանց պես ինքնաբավ խոսքային պատրաստի կազմություններ են նաև *անպոչ գղայ*, *անթաղ մեռել*, *անֆոտ ծաղիկ*, *անկրակ մուխ* և այլ դարձվածքներ, որոնք անվանողական արժեք ունեն, և որոնցով բնութագրվում են այս կամ այն անձն ու իրադրությունը:

Պատկերավորությունը՝ իբրև գեղարվեստական գրականության, հետևաբար և նրա լեզվի արմատական հատկանիշ, չի կարելի նույնացնել, այսպես կոչված, բառային պատկերների կամ պատկերավոր արտահայտությունների հետ (մակդիր, համեմատություն և այլն): Գրողը (մեր քննասիրության պարագայում՝ **ասացողը**,⁵ *ընդգծումը մերն է Ռ.Հ., Կ.Ս.*) կարող է չօգտվել արտահայտչական այս կամ այն միջոցից, բայց նրա խոսքը պատկերավոր կլինի, եթե բացահայտում է առարկայի էական կողմերը՝ իրենց գեղարվեստական կոնկրետության մեջ⁵:

Այսպես՝ ստորև բերվող հարսանեկան-ծիսական երգում արտահայտված են մեր սովորության կենցաղի ու նիստուկացի առանձնահատկությունները՝ *Հարսանիքը էկավ վերին թաղերով, // Շորերը բերին օսկե ծալերով, // Դե՛ հազի, դե՛ կապե, // Էկել ենք տանենք, // Չես հազնի, չես կապե, գոռով կտանենք: // Տանում են, աղե՛ ջան, տանում են: // Թող տանեն, բալա՛ ջան, թող տանեն, // Հայրենական տնեն թող հանեն:* Ըստ էության, խոսքային նմուշը պատկերավոր է գործողությունների թվարկմամբ, որ հատուկ է բանավոր պատումների (նարատիվներ) տեքստերի լեզվին: Դրամատիզմն ստեղծվում է բանահյուսական կերպարների՝ *աղեի* ու *նորահարսի* երկխոսությամբ, որի մեջ կյանքի բնական շարունակականության անհրաժեշտության գաղափար կա. *աղեն* ժողովրդի կենսափորձի մարմնացումն է՝ նոր օջախի ստեղծման պարզունակ, բայց իմաստուն ցանկության բանաձևով:

Ամեն դեպքում Գյումրու բանավոր երգաստեղծության տեքստը յուրատիպ մտածողության համակարգ է, որտեղ պոետիկայի տարրերը (պատկեր, մետաֆոր, առոգանություն և այլն) աճում են լեզվից, ասել է թե՛ բանաստեղծական արվեստն ամբողջապես բխում է լեզվից, ոչ միայն յուրահատուկ բառապաշարը, այլև կառուցվածքային բաղադրիչները: Կարող ենք ասել, որ բանարվեստի բոլոր տարրերը լեզվի արտաբխումներ են:

⁵ **Ջրբաշյան Էդ.**, Գրականության տեսություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1972, էջ 239:

**Գյումրու բանավոր երգաստեղծության տեքստը՝ ժամանակի
ողբի ու խնդության գեղարվեստականացում**

Լեզուն իր կիրարկողի ճակատագիրն է. պատմական բախտի մեծ վավերացումներն արտահայտվում են լեզվական իրողություններով կամ բանավոր (վերբալ) պատումներով: Կյանքի (ողբ և խնդություն) գեղարվեստականացումը Կարնո բարբառի ուշագրավ դրսևորումներով, ըստ էության, մտքի ու զգայականի կենսուժի հաստատում է դառնում Գյումրու բանավոր երգաստեղծության նմուշներում, որոնցում տեղանունների, քաղաքի թաղանունների (մահլա) հիշատակմամբ ուրվագծվում են կոլորիտային միջավայրը: Զորօրինակ՝ *ա/Պալի-գոնի ճամփեն երգան ու դուզ է, // Ամերիկացին կայնե՝ որբերը գուզե: Երգան ու դուզ ճամփի* մետաֆորում առկա է օտարի կասկածելի գթասրտության հանդեպ ժողովրդի հեզնանքը, որն ասես տվյալ ժամանակի համատեքստում երկակի արժևորման վկայություն է:

բ/ Յարոյիս ձին փախել է, // Սասնա սարեր անցել է, // Ճիլ-ձիլ խոտեր կերել է, // Պաղ-պաղ ջրեր խմել է: Այստեղ մետաֆորը փախած ձին է՝ յարոյի ձին, և ողբերգության գեղարվեստականացումը անձնայինից վերաճում է համընդհանուր կորստի զգացողության՝ Սասնա սարեր անցնելու, ձիլ-ձիլ խոտեր ուտելու և պաղ-պաղ ջրեր խմելու թվարկումով:

գ/ Մլաքոտկի ճամփեն դուզ է, // Արսենը Սոնիկին գուզե, // Արսեն ջան, պեխերդ խուզե, // Թե չէ էնիկ քեզի չի ուզե: Կամ՝ *Շինելս մանեթիմ առած էր, // Տասնհինգ տեղով կարկտած էր, // Ալեքսանդրովսկին կախած էր, // Ափսոս, տարան թագա շինելս:* Վերջին երկու նմուշներում ասացողի հայացքը ներսից է, որ դառնում է ժողովրդին հատուկ խնդություն՝ հումորով ու երգիծանքով:

Ուշագրավ է, որ բանավոր երգաստեղծության տեքստերում կյանքի ողբն ու խնդությունը ժողովուրդն արտահայտել է տվյալ ապրումին համապատասխան գունային զգացողությամբ:

ա/ Պատկերի գունային ձևավորումը

Տեքստերում պատկերի գունային ձևավորման մեջ հիմնային գույներ են կարմիրն ու կանաչը, կարմիրն ու սևը, սևն ու սպիտակը, որոնք ի սկզբանե հատուկ են մեր ժողովրդի բնաշխարհիկ գունընկալմանը, այսպես օրինակ՝ *Մեր թագվորն էր աջ, // Աջն էր խաչ ու մաչ, // Բինիշն էր կարմիր, // Արնն էր կանաչ: Ծառ ծաղկեցավ, // ծառ կայնեցավ, // Կանաչ ու կարմիր: Կամ՝ Ապրի քու գառ, // Կանրնչի քու ծառ (կանաչ հատկանիշը գործողության մեջ տեսնելու մաղթանքի բանաձև):*

Պատահական չէ, որ հայ ժողովրդական դյուցազնավեպում ու հեքիաթներում ևս խորհրդանշական այս գույներն ընկալվում են որպես լույսի ցուցիչ, կենաց ծառ ու ծաղկում գունային որոշակի իրավիճակում ու տրամադրության

մեջ: Դարձվածքային մտածողության մեջ *մեկի կանաչ-կարմիրը կապել*-ը⁶ նշանակում է պսակել, ամուսնացնել: Ամեն դեպքում ժողովրդի մետաֆորային ընկալման մեջ կարմիրը կանաչի հետ խնդության արտահայտություն է, սևի հետ՝ հակառակը, ինչպես՝ *Ես ի՞նչ էնեմ, դու էրիր, // կարմիր օրըս սև էրիր* նմուշում:

Տեքստի լեզվական քննությունը շարունակենք հետևյալ օրինակով՝ *Գնացի չայը, // Սառուց դառավ, // Մե դարդս հարուր դառավ, // Ես ինչ սև բախտի տեր էի, // Շաքյար առա, աղ դառավ*: Ենթագիտակցական գունային ընկալումն է թերևս հանգեցրել շաքարի՝ աղ դառնալուն, այսինքն՝ սպիտակի ընդհանրությամբ (այստեղ գույնը հատկանշվում է ոչ թե ուղղակիորեն, այլ շրջասությամբ), գուտ համային հատկանիշով, հակադրվում են շաքարն ու աղը: Այս օրինակում տեղ գտած փոխակերպումը (*չայը՝ սառույցի, շաքարը՝ աղի*) և *մեկի հարյուր* դառնալու թվային սիմվոլիկական գեղարվեստական իրագործման առումով բնորոշ են բանահյուսական այլ ժանրերի ևս՝ հանելուկին ու հեքիաթին: Ուժեղ սիմվոլի գերակայությունը պայմանավորված է վերջինիս կենսական նշանակությամբ:

Հայտնի է, որ մարդը տարբերում է բազմաթիվ գուներանգներ, և բնական է, որ յուրաքանչյուր գույնի ինքնուրույնությանը համապատասխան առաջանում են հուզական տարբեր հակազդումներ: Հոգեբանական փորձաքննությունները բացահայտել են, որ յուրաքանչյուր անձի ներհատուկ է միայն իր ներաշխարհին բնորոշ գունային սանդղակ, որով նա արտահայտում է իր տրամադրությունն ու բնավորության առանձնահատկությունները, պատկերացումներն ու զգայությունները⁷: Հետևյալ բանաձևային ասույթում (անեծք)՝ *Ծակրոտիս, ծակ-ծակ շայիկ հագնիս, դեղին ջրերը վրայեղ էրթան*, դեղինն այլաբանական փոխաբերական իմաստ ունի. աստիճանավորման հնարով արտահայտված է իրար հաջորդող հետևանքային իրադրությունների ցանկություն:

Բոլոր դեպքերում գույնի փոփոխությամբ փոխվում են բանասացի հոգեվիճակն ու ապրումների ներկայակերպ, բնապատկերի գունային համակարգը. գույնի ընկալումը հարստացնում է մարդու հոգեկան ապրումների բնույթը: Գունային սիմվոլիկային առնչվող հնարավոր տիպաբանական ընդհանրություններ կարելի է գտնել ուրիշ ժողովուրդների բանահյուսական նմուշներում ևս:

բ/ Պատկերի հնչյունային ձևավորումը

Բանավոր երգաստեղծության տեքստերի իմաստային շերտերի քննությունը թույլ է տալիս բացահայտել նաև հնչյունային պատկերների արտա-

⁶ Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1975, էջ 312:

⁷ Սահակյան Կ., Հազար երազի հուշարձան, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 96:

հայտչական նշանակությունը: Բանավոր երգաստեղծության հնչունաբանությունը, դրսևորվելով շարահյուսական կրկնակների, նաև միևնույն կամ նման որոշ հնչունների կրկնության ձևով, ուժեղացնում է պատկերի երաժշտականությունը, որին կարելի է հասնել՝

ա/ որևէ բառի կրկնությամբ՝ *Ամպել է քուլա-քուլա, // Դուշմանի սիրտը կուլա*, կամ՝ *Արևը կամար-կամար, // Կապել ես օսկե քյամար:*

բ/ բաղաձայնությամբ՝ *չոքեմ չաքմեքդ քաշեմ....:*

գ/ առձայնությամբ՝ *Ամպերը ամպի վրա, // Ամպերը սարի վրա, // Ա՛մպ օր, Աստված կսիրես, // Չանձրնես յարիս վրա*, նաև՝ հնչունային, բառային և շարահյուսական հարակրկնությունների՝ նույնասկիզբ (անաֆոր) և նույնավերջ (էպիֆոր) հարաբերությամբ և համարժեք է հնչունային գործիքավորմանը:

Եթե խոսքի մի քանի միավորներ (նախադասություններ, բանատողեր) ունենում են միատեսակ սկիզբ ու վերջավորություն, ստացվում է համատեղում՝ բաղիյունում⁸, ինչպես, օրինակ՝ *Դարդ կա, գուքա ու կերթա, // Դարդ կա, վառե ու կերթա:*

գ/ Ներքին կամ միջանցիկ հանգով՝ համահնչունություն տողի ներսում. *Դուլա, դուլա յարս, // Ընչի գուլա յարս, // Նրստե գուլա յարս, // Ըսեք չըլա յարս:* Նշենք, որ «ավելի հաճախ այդ ձևը հանդիպում է արևելյան աշուղական պոեզիայում: Առհասարակ, արևելյան պոեզիայի շատ ավանդական ձևեր էապես կապվում են տողամիջի հանգի հասկացության հետ. գազելը, մուխամմազը, ռուբայաթը սովորաբար ունեն տողամիջի հանգերի կայուն համակարգ, տողերի վերջում կամ սկզբում կրկնվող որոշ բառերից (ռեդիֆ) առաջ կամ հետո երևան եկող տողամիջի հանգեր⁹:

դ/ Հանգով՝ *Ջուր կրթափի առվրներ, // Աստված ջարդե պատվրներ:* Կամ՝ *Վանքի պատին գրված է, // Լավը գեշին տրված է:*

Ակնհայտ է, որ հանգը որոշակիորեն օժանդակում է պատկերային համակարգի հնչունային գործիքավորմանը: Ահա մի քանի հանգային զույգեր բանավոր երգերից՝ կալերեն-ծալերեն, դռավ-թռավ, Շուշան-Սուրբ Նշան-նշան և այլն: *Աղջի հարսնառդ եկավ // Վերի կալերեն, // Քեզի հինա բերավ // Թղթի ծալերեն: Գետինը դրեց դռավ, // Սիրեցի ձեռես թռավ: Աղջի՛, անունդ Շուշան, // Քել էրթանք Սուրբ Նշան, // Մատանիս քեզի նշան:*

Ինչպես տեսնում ենք, հանգը կարող է հանդես է գալ ոչ միայն հնչունային, այլև կառուցվածքային, բովանդակային ու սյուժետային դերով:

Գյումրեցու բանավոր երգաստեղծության տեքստերում բառը խիստ խա-

⁸ **Ջաբարյան Հ., Ավետիսյան Յու.**, Ոճագիտություն, տեքստագիտություն, հայոց լեզվի պատմություն, Եր., «Ձանգակ» հրատ., 2018, էջ 39:

⁹ **Ջրբաշյան Էդ.**, Պոետիկայի հարցեր, Եր., «Հայաստան» հրատ., 1976, էջ 324:

դացկուն է. այն դառնում է ապրում-պատկեր-բնութագրում. կարող է այնքան դիպուկ կիրառվել, որ հաճախ հիշեցնում է բառաճայթյուն: Ընդհանրապես գյումրեցու ազատ երևակայության ճախրի մեջ ոճական բանադարձումներն այնքան համ ու հոտով են միահյուսվում, որ, թվում է, բանավոր ասված խոսքն անգամ օրում դառնում է բանաստեղծական պատկեր: Այս առումով խիստ բնորոշ են Կարնո բարբառը կրողների բանաձևային մտածողության դրսևորումները, հատկապես երբ բանասացը կամ հորինողը դիմում է իր նախնյաց լեզվական փորձառությանը՝ կառուցելով յուրօրինակ տեքստ տեքստում, այսպես, օրինակ՝ *Մամս մե լավ խոսքում ունիր՝ ամեն մարդ ինքն իրա փոսը կը լցնե: Օղորմածիկ հերս կըսեր՝ գեշ կնկա ձեռի հացը կեր, սիրուն կնգա ծոցը մոտի: Մորս սիրած խոսքերեն է՝ աղբրտի երեսը պաղ է: Պապրս կըսեր՝ երջանկությունն ու դժբախտությունը 40 ախպեր են. ձեռք ձեռքի տված գուրան:* Ստույթային բանաձևերում բացահայտվող հարաբերությունների համակարգից բացի՝ կարևոր է տեքստն ըմբռնել որպես հատկանիշների ամբողջություն, այսինքն՝ լեզվական նշանների կապակցում ու կապակցվածություն: Հաճախ առած-ասացվածքները, լինելով մեջբերում, դառնում են նաև մեկ այլ տեքստի նշան, ասենք, հեքիաթի ու ավանդագրույցի վերնագիր:

Մեր ժամանակների անհատական-հեղինակային հորինումներում ևս շարժման մեջ է բանավոր պատումի տեքստի լեզուն՝ պատկերավորման համակարգով: Պոետիկայի ներքին խաղը կամ պոետիկան գործողության մեջ գյումրեցու ինքնահատուկ զվարթախոհությամբ շատ հաճախ դառնում է աշխարհի ամբողջական կառուցվածքը տեքստի մեջ բեկելու ու նորովի արարելու ձգտում:

Գյումրեցին, որտեղ էլ լինի, իր ստեղծարար քաղաքի սահմաններում է և հայացք ունի դեպի ներս, դեպի իր զգայական ու իմացական շերտերը, վկա նրա բանահյուսաստեղծ մտածողությունը, որը ժողովրդական տարերքի բռնկուն ձևերով է դրսևորվում: Այսօր էլ նրա ստեղծաբանող միտքը հորինումների մեջ է. կյանքի այս կամ այն երևույթը բնութագրում, գնահատում է բանավոր մի պատումով, խաղիկով կամ ասույթով, որոնց տեքստը դառնում է ստեղծարար քաղաքի սրտի ու մտքի յուրօրինակ շերտագրություն, ինչպես, օրինակ՝ *Ախճի՛, հուսել ես մազրդ, // Տեղն են քելվածկդ, նազրդ, // Հրմը ինչխոր դու եղնիս // Քար-դաշյանի տնազր: Կամ՝ Վենձ կույսերու հավասը. // Բաց կթողնին դարբասը, // Օր բախտ չունին՝ ի՞նչ էնեն, // Քուռն ընգնի՞ն, թե՞՞ Սրաքսը... Քանի ցարն է Նիկոլը, // Բե՛ր պաճենք ժամի պոլը, // Աստված լավ աշե իրան, // Ընոնց էլ՝ Բնտերպոլը¹⁰:*

Եզրահանգում. Նոր ժամանակների քաղաքական, սոցիալ-հոգեբանական, մշակութային կյանքի անդրադարձումները բացահայտում են Կարնո

¹⁰ Աղաջանյան Լ., Ջիգրեխելառ Գյումրի, Եր., «ՎՄՊ-ՊԲԻՆՏ», 2018, էջ 146:

բարբառակիրների լեզվահայեցողության ֆենոմենը իրենց իսկ ստեղծած բանահյուսական տեքստերում, որոնց պատկերավորման-արտահայտչական համակարգը մեծապես բխում է հայ տոհմիկ երգի ակունքներից: Որպես ընդհանրական հատկորոշում՝ ընդգծենք, որ ասույթաբանական ու քնարական բանահյուսության փոքրագույն նմուշները չունեն տեքստային որոշ նշաններ՝ վերնագիր, բնարան, միջտեքստայնություն և այլն:

Ընդհանրացնենք, որ գրառված բանահյուսական տեքստերը գերազանցապես դրսևորվում են ծեսի, սովորույթի ու ավանդույթի համատեքստում՝ պատումի տարաբնույթ ձևերով ու ազգաբանական շերտերի ընդլայնումով: Մրանով հանդերձ՝ Գյումրու բանահյուսական տեքստերի լեզվի սեղմ քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այստեղ անխառն քնարերգություն՝ որպես այդպիսին, հազվադեպ է, քանի որ ստեղծարար քաղաքն իր խառնարանում ամփոփում է պատմական հայրենիքից՝ Ալաշկերտից, Ներքին Բասենից, Կարինից ու Կարսից վերաբնակեցվածների քաղաքային տիպի բանահյուսությունը¹¹:

ЯЗЫК ТЕКСТА УСТНОГО ПЕСНЕТВОРЧЕСТВА ГЮМРИ

Оганесян Р. К., Саакян К. А.

Ключевые слова: *контекст, Каринский диалект, сравнение, эпитет, аллегория, перифраз, стихосложение, картина, цветное формирование, звуковое формирование.*

В статье в контексте продолжительности устной культуры рассмотрены некоторые особенности языка текста устного песнетворчества Гюмри, в общих чертах мы обратились к словесно-грамматическим проявлениям Каринского диалекта, существующим в словесных слоях заимствованным словам и их словообразовательным формам, отчасти также вопросам формирования цветовой и звуковой картины устного песнетворчества. Исследованы наиболее жизнеспособные жанры фольклора Гюмри (образцы лирического и эпического фольклора, пословицы, обороты), которые были записаны до землетрясения, в частности от народонаселения Гюмри. В языке текстов записанных материалов проявилось меткое, образное, мудрое и сочное словесное мышление жителей Гюмри, так как фольклорный текст часто создавался в контексте обряда, обычая и традиции, различными формами сказа, с расширением национальных слов. Тем не менее краткое изучение языка текстов фольклора Гюмри позволяет сказать, что здесь чистая лирика, как таковая, очень редко встречается, так как созидательный город в своем языковом

¹¹ Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ., Խաչը՝ թիկունքիս, Յոթվերքը՝ սրտիս // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, Գյումրի, «Գիտություն» հրատ., 2008, էջ 16:

мышлении резюмирует фольклор городского типа переселенцев из Алашкерта, Нижнего Басена, Карина и Карса.

THE LANGUAGE OF THE TEXT OF GYUMRI'S ORAL SONG PRODUCTION

Hovhannisyan R. K., Sahakyan K. A.

Key words: *context, Karin dialect, simile, epithet, allegory, trope, prosody, figure, colour formation, sound formation.*

In the paper, we have tried to consider some of the peculiarities of the language of Gyumri's oral song production in the course of the continuity of the folk culture heritage. We have touched upon lexico-grammatical manifestations of the Karin dialect, the loan words and their formation; in particular the issues of colour and sound formation of oral song creation. We have studied more viable genres of Gyumri's folklore (specimens of lyric and epic folklore, proverbs and sayings, phraseology) that have been eminently recorded in Shirak region-in the predisasterous period, especially from Gyumri's townsfolk.

The language of the recorded materials gives the best characteriazation of Gyumri dwellers' delicate, meaningful, fruitful linguo-thinking as the folklore text is supremely manifested in the context of rituals, customs and traditions with various forma of narration and ethnological layers.

However, the brief examination of the language of the folk texts in Gyumri allows one to conclude that pure lyricism here as such is rare, as the creative city summarizes in its linguistic thinking the town folklore of the resettlers of Alashkert, Lower Basen, Karin and Kars.

References

1. **Petrosyan H.** Hayerenagitakan bararan, Yerevan, «Hayastan» hrat., 1987 (**In Armenian**).
2. **Harutyunyan S.-A.** Arvesti nshanagitakan sahmanner@, Yerevan, VMP-PRINT», 2017 (**In Armenian**).
3. **Movses H.** Grarumner 2, Yerevan, «Hayagitak», 2017 (**In Armenian**).
4. **Jrbashyan Ed.** Grakanutyun tesutyun, Yerevan, Yerevani hamalsarani hrat.,1972 (**In Armenian**).
5. **Suqiasyan A., Galstyan S.** Hayoc lezvi darcvatsabanakan bararan, Yerevan, Yerevani hamalsarani hrat.,1975 (**In Armenian**).
6. **Sahakyan K.** Hazar yerazi hushardzan, Yerevan, «Gitutyun» hrat., 2010 (**In Armenian**).

7. **Zaqaryan H. Avetisyan H.** Vocagitutyun, teqstagitutyun, hayoc lezvi patmutyun, Yerevan, «Zangak» hrat., 2018 **(In Armenian)**.
8. **Jrbashyan Ed.** Poetikayi harcer, Yerevan, «Hayastan» hrat., 1976 **(In Armenian)**.
9. **Aghajanyan L.** Jigrexelar Gyumri, Yerevan, «VMP-PRINT», 2018 **(In Armenian)**.
10. **Sahakyan K., Hovhannisyan R.** Khachy tikunqis, Yotverqy srtis // GAA Shiraki hayagitakan hetazotutyunneri kentroni «Gitakan ashkhatutyunner», h. 1, Gyumri, «Gitutyun» hrat., 2008 **(In Armenian)**.

Ընդունվել է՝ 16. 03. 2020

Գրախոսվել է՝ 21. 04. 2020

Հանձնվել է տպ.՝ 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակների մասին

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, էլ. հասցե՝ vard-rosa@mail.ru

Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ՝ հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ sahakyanani@mail.ru

ՀՏԴ՝ 316.4

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՆՅՈՒԹԵՐԻ (1907-1925թթ.)

Վարդուհի Մելքոնյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ քաղաքային բանկ, քաղաքային հիվանդանոց, առօրեականություն, բանվոր, գործազրկություն, համաքարություն, արհեստներ, ֆարրիկա, պարենի հիմնախնդիր:

Հաղորդման շրջանակներում ներկայացվում են Ալեքսանդրապոլ-Լենինականի տնտեսությանն առնչվող կարևոր հարցեր՝ 1907-1924 թթ. կտրվածքով: Հիշյալ ժամանակահատվածում այստեղ հրատարակվել են բավականին մեծ թվով թերթեր՝ «Ախուրեան», «Աշխատանքի դրօշակ», «Ասպարեզ», «Գաւառի ձայն», «Ժայռ», «Մարտիկ», «Կարմիր Շիրակ», «Լույս», «Շիրակի աշխատատր», «Բանվոր», «Նոր ուղի» և այլն:

Մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր պարբերականներում մեծ ուշադրություն էր դարձվում քաղաքի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացումը ներկայացնելուն, ինչը պատահական չէ, եթե հաշվի ենք առնում դարասկզբի արմատական, որոշ դեպքերում՝ հեղափոխական փոփոխությունները: Շատ են անդրադարձերը այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ հնի և նորի բախումը, անցումը նոր ինդուստրիալ հասարակարգին, գործազրկության թվի կրճատումը, կանանց ներգրավվածությունը արդյունաբերական հասարակարգին և այլն:

Նախաբան. Ազգագրական հետազոտություններում, մեծ տեղ է հատկացվում պարբերական մամուլի նյութերին: Մամուլի նյութերի նախնական դի-

տարկումն ու համակարգումը թույլ են տալիս արձանագրել, որ դրանցում կարևորվել են ոչ միայն քաղաքական, տնտեսական ու այլ խնդիրներ, այլև առօրեականությունը, տնտեսական փոփոխությունների ազդեցությունը մշակույթի, միջանձնային հարաբերությունների փոփոխությունների ու ազգաբնական տեսանկյունից կարևոր այլ իրողությունների վրա:

20-րդ դարի սկզբին Կովկասում հրապարակվում էին մեծ թվով պարբերականներ, որոնցում մեծ ծավալ են կազմում ազգագրական կամ նման հետազոտությունների համար կարևոր նյութերը: Դրանց մի մասը վերաբերում է 20-րդ դարի առաջին երեսնամյակի Ալեքսանդրապոլ-Լենինականին, քանի որ քաղաքը Հարավային Կովկասի կարևոր արհեստագործական, տնտեսական, մշակութային կենտրոններից էր:

20-րդ դարասկզբին Ալեքսանդրապոլի առջև ծառայել էին մի շարք լուրջ խնդիրներ, որոնցից առանձնացնում ենք գաղթականության հարցը, քաղաքի արհեստավորների դրությունը, հարցեր, որոնք առնչվում են առողջապահությանը և այլն: Անդրադառնանք այս խնդիրներին առանձին-առանձին:

«Շիրակի աշխատավոր» թերթում կարդում ենք. «Մեզ մոտ արհեստները հետզհետե մեռնում են: Շատ արհեստավորներ, արհեստը թողած, ուրիշ գործ են անում, շատերը պարապ ման են գալիս, իսկ մեծ մասն էլ առևտուր է անում: Սրա միակ պատճառը հանդիսանում է ապրանքի բացակայությունը. դերձակի համար չկան թել և կտորեղեն, կոշկակարը չունի կաշեղեն ապրանք և այլն: Եվ այս սուսկալի թանկության մեջ, երբ կենսամթերքները 200-300 անգամ թանկացել են, արհեստավորը յուր գոյությունը պահպանելու համար դիմում է առևտուրին: Եվ այն ժամանակ, երբ երկիրը կարոտ է վերաշինության՝ արհեստը մեռնում է մեզանում: Իշխանությունը պիտի միջոցներ առնի դրա առաջն առնելու համար»¹: Արհեստավորների ապահովության խնդրին անդրադարձեր կան նաև «Ախուրեան» պարբերականի համարներում: Մասնավորապես նշվում է, որ համքարական կազմակերպությունները սկսել են գործել առանց կանոնադրության և մշակված ծրագրի: Հետևաբար նրանց գործունեությունը կանոնավորելու համար պետք է բարեփոխումներ մտցնել²: Փաստորեն, 20-րդ դարասկզբին արդեն ի հայտ եկան համքարությունների քայքայման նշաններ, որի հետևանքով ստեղծվեցին կոոպերացիաներ՝ արհեստագործական արտելներ, որ ենթադրում էր արհեստավորների շահերի պաշտպանում: Կազմակերպելով արտելներ՝ արհեստավորական շատ կազմակերպություններ վերածվեցին խոշոր ձեռնարկությունների. այսպես, տրիկոտաժ արտելը միացավ տեքստիլ

¹ «Շիրակի աշխատավոր», 1919թ., № 32:

² «Ախուրեան», 1907 թ., № 76:

գործարանի վարչությանը, ապա ստեղծվեցին գուլպայի, տրիկոտաժի, կոշիկի, կարի ֆաբրիկաները³:

Հաջորդ խնդիրը, որը հուզել է գրեթե բոլոր թերթերի խմբագիրներին, քաղաքի անբարեկարգ վիճակն էր, աղբի մեծ չափերը, անբարեկարգ փողոցները, մայթերը և այլն: Մեկը մյուսի հետևից լույս են տեսնում հոդվածներ, որտեղ խմբագիրները հորդորում են քաղաքային իշխանություններին՝ քայլեր ձեռնարկել, փոխել բնակչության վերաբերմունքը քաղաքի նկատմամբ, լայն թափով շինարարական աշխատանքներ ձեռնարկել: «Ախուրեան»-ի 1907թ. 8-րդ համարում կարդում ենք. «Ձնհալից հետո սկսվում է Ալեքսանդրապոլի պատմական ցեխը, ցեխը հասնում է մինչև ծնկները: Բայց ինչո՞ւ Կարսի պես փոքր քաղաքը չունի նման խնդիր, որպիսին ունի Ալեքսանդրապոլը»: Վերջում հոդվածի խմբագիրը քաղաքային իշխանություններին առաջարկում է պարտք վերցնել և շտկել դրությունը՝ մեջբերելով մի նշանավոր քաղաքային գործչի խոսքը. «Այն քաղաքը, որը պարտք չունի, ամենաանբարեկարգն է»⁴: Նույն թվականին լույս տեսած 33-րդ համարում խմբագիրը մտահոգություն է հայտնում, որ փողոցները այնպես են թաղվել ցեխի մեջ, որ ո՛չ կառքերն են անցնում, ո՛չ մարդիկ: Վերջում հավելում է, որ այս տեղերում մարդիկ հիվանդանալու իրավունք էլ չունեն: Դե բնականաբար ամռանն էլ սկսվում է պատմական փոշին, և ամիսներ շարունակ մարդիկ օդի փոխարեն փոշի են շնչում: Չկա նաև խմելու ջուր, Ալեքսանդրապոլի 37 աղբյուրների քիմիական վերլուծությունը ցույց է տվել, որ 37-ից հազիվ 4-ն են բավարար, մնացածը վնասակար են խմելու համար⁵: «Կարմիր Շիրակ»-ի խմբագիրը Ալեքսանդրապոլը համարում է Խորհրդային Հայաստանի ամենակեղտոտ քաղաքը և հավելում է, որ եթե լուրջ քայլեր չձեռնարկեն այս ուղղությամբ, ապա քաղաքին սպասում է համաճարակի վտանգ⁶:

«Ախուրեան» թերթի 1911թ. լույս տեսած 9-րդ համարում գրված է. «Երբ որ մարդ հետևում է քաղաքային լապտերներին, եզրակացնում է, որ քաղաքի փողոցները լուսնյակ գիշերները լուսնով են լուսավորվում, իսկ մնացած գիշերները թեև վառվում են լապտերներ, բայց ավելի լավ էր, որ նրանք չվառվեն, գոնե նրանց վրա արած ծախսերը կը մնար հօգուտ քաղաքի»⁷: Դրությունը փոխվեց Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, որը ազդարարեց խաղաղ շինարարական աշխատանքների վերսկսման փուլ: 1922թ. քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշմամբ սկսվում են փողոցների

³ Մեղրոսյան Կ., Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 6, Եր., 1974:

⁴ «Ախուրեան», 1907 թ., № 8:

⁵ «Ախուրեան», 1907, №33:

⁶ «Կարմիր Շիրակ», № 8:

⁷ «Ախուրեան», 1911, №9:

կարգավորումը և քաղաքային հրապարակի կառուցման շինարարական աշխատանքները⁸:

Հաջորդ հրատապ խնդիրը քաղաքային հիվանդանոցի հարցն էր: «Ախուրեան»-ի խմբագիրը 1907թ. 33-րդ համարում գրում է. «Մարդկանց բարեկեցության առաջնային գլխավոր պայմանը առողջ լինելն է: Այս գլխավոր հանգամանքն ի նկատի ունենալով՝ յուրաքանչյուր քաղաք պետք է առողջապահական բարեկարգ դրության մեջ գտնվի: Իսկ քաղաքը հակառողջապահական պայմանների մեջ է»: Այս հարցին անդրադարձ էր կատարվել թերթի 4-րդ համարում, որտեղ մասնավորապես նշվում է, որ քաղաքային հիվանդանոցը առանձին ուշադրության չի առնվում: Քաղաքային բնակչության մեծամասնությունը աղքատ է և ի վիճակի չէ ո՛չ հիվանդանոց գնալու և ո՛չ էլ բժիշկ հրավիրելու: Շուրջ 40 հազար բնակչություն ունեցող քաղաքը նորմալ հիվանդանոցի կարիք ունի: Ալեքսանդրապոլի հիվանդանոցը բացման օրից մինչև այժմ գրեթե չի ունեցել մասնագետ վիրահատ: Վիրահատվելու համար հիվանդները գրավ են վերցնում և մեկնում են կա՛մ Երևան, կա՛մ Թիֆլիս՝ վիրահատվելու: Ողջ հիվանդանոցը ծանրացած է բժիշկ Ասլանյանի և մի քաղաքային բժշկի վրա: Դրությունը շտկելու համար առաջարկվում է 2000 ռուբլի աշխատավարձ առաջարկել հեղինակավոր վիրահատի և հրավիրել Ալեքսանդրապոլ: Դրա համար առաջարկվում է կրճատել ծախսերը և այդ ավելցուկը տրամադրել հիվանդանոցին⁹:

Ալեքսանդրապոլի տնտեսության մեջ լուրջ առաջխաղացում էր քաղաքային բանկի հիմնումը: Մինչև այս հաստատության հիմնումը քաղաքի վաշխառուները ժողովրդից գանձում էին տրված գումարի 20-30-50% վարկ: Ահա այս բանկը դարձավ մի հաստատություն, որտեղից արհեստավոր դասակարգը, մշակը և այլք կարող էին չափավոր տոկոս վճարելով իրենց կարիքների համար փող ստանալ: Մրա հետ մեկտեղ պետք է նշել, որ բանկում կատարվում էին նաև չարաշահումներ: Բանկում սովորական երևույթ էր դարձել հարուստներին շողոքորթելը, վերջիններիս գործարքը շատ արագ իրականացնելը, իսկ հասարակ ժողովրդին երբեմն նաև 3 օրով անհարկի սպասեցնել: Խմբագիրը վերջում հավելում է, որ բանկին՝ իբրև քաղաքային ժողովրդական մի հաստատության, նսեմացնում են այս թերությունները և ժողովրդին դժվարին դրության մեջ դնում: Վերջում կոչ է արվում քաղաքային վարչությանը՝ լուրջ ուշադրություն դարձնել այս հանգամանքի վրա¹⁰:

⁸ Մեղրոսյան Կ., նշվ.աշխ., էջ 205:

⁹ «Ախուրեան», 1907, №9:

¹⁰ «Ախուրեան», 1907, №4:

Թերևս ամենակարևոր հիմնախնդիրը հացի կամ պարենի խնդիրն էր: «Ախուրեան»-ի 1908թ. լույս տեսած 55-րդ համարում գրված է. «Ալեքսանդրապոլը, բացի հացից, բերք չունի: Ալեքպոլցիների միակ հույսը հացն է: Եթե ստացվեր այնպես, որ ցորեն չլիներ, ահն ու սարսափը պատում էր բնակչությանը: Այդպես եղավ 1907 թվականին»¹¹: «Ախուրեան»-ում կարդում ենք. «Հացի գինը օրից օր իջնում է: Գյուղից այլուր է թափվում: Քաղաքում դառը հաց է վաճառվում: Պատճառը դառը ալյուրն է: Ռուսաստանից մնացած և փչացած ալյուր են բերել տալիս՝ էժան լինելու պատճառով, և տարածում աղքատ հասարակության մեջ»¹²: «Ժայռ»-ի 1917 թ. լույս տեսած 17-րդ համարում կարդում ենք. «Ալեքսանդրապոլում կա մի կոմիսիա, որի նպատակն է պարենավորել քաղաքը, շաքար, հաց տալ բնակչությանը: Հիմնված է մի խումբ բուրժուանների նախաձեռնությամբ և միջոցներով: Դրդիչը եղել է «բարեգործության» մաքուր զգացմունքը, որ չթողնեն քաղցը և կարիքը խեղդեն քաղաքի աղքատ ժողովրդին: «Բարեգործություն» սկսելուց առաջ ունեցել են 40 հազար ռուբլի, իսկ այսօր 250 հազար ռուբլի»¹³:

Այսպիսով, պարենի, հողի և այլ խնդիրներով պայմանավորված Ալեքսանդրապոլի քաղաքացին ստիպված էր բռնել գաղթի ճանապարհը: 20-րդ դարասկզբին մեծ թափ է առնում դեպի Ամերիկա, մասնավորապես Կալիֆոռնիա մեկնող շիրակցիների հոսքը: Գաղթում են 18-60 տարեկան տղամարդիկ, որոնք սովոր լինելով գյուղի չարքաշ կյանքին, կարողանում են աշխատել Կալիֆոռնիայի հանքերում՝ ստանալով օրական 2,5-8\$: Նահապետական ընտանիքում տղային ամուսնացնում, նոր էին ուղարկում Նոր Աշխարհ, որ գոնե հիշե իր սիրեցյալին և ետ վերադառնա, սակայն պատահում էր, որ տղան ետ էր վերադառնում և իր ընտանիքին էլ հետը տանում¹⁴:

1917թ. «Աշխատանքի դրօշակ» թերթի հերթական համարներից մեկում ամրագրված էր այն միտքը, որ արդյունաբերության անկման պատճառը բանվորությունը չէ, այլ գործարանների վատ կառավարելը: Արդյունաբերության անկման գլխավոր պատճառը ինքը՝ բուրժուազիան է»¹⁵:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Ալեքսանդրապոլի գավառը, այլ գավառների հետ համեմատած, ամենաաղքատն էր: Նրա գյուղերից շատերում համատարած սով էր: Ահա այս պայմաններում սկսվեց Շիրակի ջրանցքի շի-

¹¹ «Ախուրեան», 1908, №55:

¹² «Ախուրեան», 1909, №56:

¹³ «Ժայռ», 1917թ., № 17:

¹⁴ «Ախուրեան», 1910, №68:

¹⁵ «Աշխատանքի դրօշակ», 1917թ., №11:

նարարությունը, որը, ըստ քաղաքային «Բանվոր» թերթի կարծիքի, ժամանակի համար ծախսատար և ոչ խելամիտ որոշում էր¹⁶:

Նշենք, որ բացի տնտեսության վիճակի ու հիմնախնդիրների նկարագրությունից, մամուլը կարևորել ու թիրախավորել է ազգագրական տեսանկյունից շատ կարևոր ու հետաքրքիր իրողություններ ևս: Այս տեսակետից ուշագրավ է «Մեր կեանք» թերթի «Հանաք և դագանակ» հոդվածը, որտեղ խմբագիրը ծաղրում է հասարակության արատավոր երևույթները¹⁷: «Բանվոր» թերթի տարբեր համարներում գտնում ենք արդյունաբերական բանվոր-ծառայողների առօրյայի, բանվորուհիների, աշխատանքային ընտանիքների, քաղաքային միջավայրում այլ փոփոխությունների հետաքրքիր նկարագրություններ: Այսպես, մինչև նոր տնտեսական քաղաքականության անցնելը Խորհրդային հանրապետությունների բանվորների մեծ մասը ստանում էր մթերային աշխատավարձ: Դրամական աշխատավարձն այնքան չնչին էր, որ էական դեր չուներ: Իսկ նեպի ժամանակահատվածում ենթադրվում էր, որ աշխատավարձը պետք է լինի արտադրության ասպարեզում բանվորների գործադրած աշխատանքի բնույթին և որակին համապատասխան: Այսպիսով, առաջ եկավ դրամական աշխատավարձը, որը գնալով ավելացավ և 1922թ. դեկտեմբերին կազմեց նախապատերազմյան աշխատավարձի 48,2%-ը: Դրամական աշխատավարձին զուգահեռ՝ նաև մտցվեցին մի շարք արտոնություններ, օրինակ՝ անվճար կամ չնչին վարձով բնակարանի, երեխանների անվճար կրթության իրավունքի և այլնի մասին¹⁸:

«Խորհրդային օրենքով կնոջ իրավունքները հավասարեցված են տղամարդու իրավունքներին, վերացված է կնոջ հպատակությունը տղամարդուն: Կինը կարող էր անգամ փոխել բնակարանը, եթե ցանկանար և եթե անձնագիր ուներ: Խորհրդային օրենքով բոլորովին ազատ էր ապահարզանը: Ապահարզանի ժամանակ երեխան մինչև 7 տարեկանը մնում էր մոր մոտ, իսկ դրանից հետո ինքն է որոշում ում մոտ մնալ: Կինն ուներ նաև քաղաքական իրավունքներ¹⁹:

1925թ. Լենինականում լույս է տեսնում «Նոր ուղի» աշակերտական թերթը²⁰: Թերթի խմբագիրները աշակերտներ էին, ովքեր կոչ էին անում պայքարելու անգրագիտության դեմ, միավորվելու՝ կրթական հոդվածներ տպագրելու: Աշակերտները Լենինականի որբանոցի սասներ էին, որոնք փորձում էին քա-

¹⁶ «Բանվոր», 1923թ., № 63:

¹⁷ «Մեր կեանք», 1912, №1:

¹⁸ «Բանվոր», 1923թ., №39:

¹⁹ «Բանվոր», 1923թ., №64:

²⁰ «Նոր ուղի», 1925թ., №1:

դաքի մշակույթում իրենց հետքը թողել: Սակայն թերթի լույսընծայումը այդպես էլ չշարունակվեց անհայտ պատճառներով:

1920-ական թթ., բնականաբար, արդեն կտրուկ աճում են քաղաքում կատարվող փոփոխությունները, թերթերում ներկայացվող նյութերը, որոնք, չնայած գաղափարախոսական ազդեցություններին, խորհրդայինը միայն դրական լույսի ներքո դիտարկելու միտումներին, շատ կարևոր են ազգագրական տեսանկյունից:

Այսպիսով, ժամանակի պարբերական մամուլում արձանագրված են Ալեքսանդրապոլ-Լենինականի տնտեսության, հասարակական հարաբերությունների, առօրեականության այլևայլ դրսևորումների բազմաթիվ դրվագներ, որոնց ազգաբանական քննությունը հնարավորություն է տալիս կատարելու խորքային ու ամբողջական վերլուծություններ, վերականգնելու քաղաքային կյանքի ու մշակույթի պատկերը 20-րդ դարի առաջին երեսնամյակին:

ЭКОНОМИКА АЛЕКСАНДРОПОЛЬ - ЛЕНИНАКАНА ПО МАТЕРИАЛАМ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ (1907-1925гг.)

Мелконян В. Г.

Ключевые слова: *городской банк, городской госпиталь, повседневная жизнь, рабочий, безработица, ремесло, гильдия, фабрика, продовольственные проблемы.*

В этнографических исследованиях, особенно когда они относятся к повседневной жизни, городской культуре, социально-культурным событиям, большое место предоставляется материалам периодической печати: корреспонденции, небольшие новости, освещение важных событий, публичные дискуссии по тому или иному вопросу.

Во второй половине XIX века и в начале XX века на Кавказе также публиковалось множество периодических изданий с большим количеством этнографических материалов или важных материалов для этнографических исследований. Некоторые из них относятся к Александрополь-Ленинакану в первом тридцатилетии XX века, так как город был одним из важных ремесленных, экономических, культурных центров Южного Кавказа.

Изучение прессы показывает, что большое внимание уделялось развитию различных областей экономики города, что не случайно, если учитывать радикальные, в некоторых случаях революционные изменения в начале века. Много упоминаний о таких проблемах, как столкновение старого и нового, переход к новому индустриальному обществу, сокращение безработицы, вовлеченность женщин в индустриальном сообществе и так далее.

THE ECONOMY OF ALEXANDRAPOL-LENINAKAN BASED ON PERIODICAL PRESS MATERIALS (1907-1925)

Melqonyan V.G.

Key words: *the City Bank, the City Hospital, daily life, worker, unemployment, factory, crafts, guild, foodstuffproblem.*

In ethnographic researches, especially when they relate to daily life, urban culture, socio-cultural developments, a large place is provided for periodical press materials: correspondence, small news, coverage of important events, public debates over this or that problem.

In the second half of the 19th century and at the beginning of the 20th century, a large number of periodicals were also published in the Caucasus with a large amount of ethnographic materials or important materials for ethnographic researches. Some of them related to Alexandrapol-Leninakan in the first thirty years of the 20th century, as the city was one of the important craftsmanship, economic and cultural centres of the South Caucasus.

Preliminary monitoring and coordination of press materials allow to register that there have been highlighted not only economic indicators, but also daily life, the impact of economic changes on culture, interpersonal relations and other important facts from a geneological point of view.

References

1. “Akhuryan”: Hasarakakan, grakan orat’ert’. Khmb.-hratarakich’’ Karapet Ap’inean, Alek’sandrapol, tp. Shirak 1907-1915, 1907 №4, №8, №9, №33, №76, 1908 №55, 1909 №56, 1910 №68, 1911 №9 (In Armenian).
2. “Banvor”: Organ Hayastani K. K. Alek’poli gavkomi, gortskomi, uch’profsozhi yev gavprofbyuroyi: Kmb. kol.; Kmb.՝ A. Hakhumyan, Leninakan, tp. HSKHH komtnt., 1923-1990, 1923 №39, №64 (In Armenian).
3. “Karmir Shirak”:/Pataskhanatu khmb.՝ H. Ghuli-K’evkhyan (Giwlik’evkhean);Organ՝ Hayastani Komunistakan Kusakts’ut’yan Alek’poli kazmakerput’ ean gawarrayin komitei yev Alek’poli Yeghap’vokhakan komitei, Alek’sandrapol, 1921-1922, 1921 № 8, ej 1 (In Armenian).
4. “Mer keank’’: Hasarakakan, grakan, k’aghak’akan, tntesakan t’ert’: Khmb.- hratarakich’’ Konstandin Ch’arakhch’yan, Alek’sandrapol, 1912, №1, ej 4 (In Armenian).
5. “Nor ughi’’: Shabat’at’ert’: Vorgan Seversku 7a vorb. ashakertut’yan / Kmb.՝ Gar-Most., Alek’sandrapol, №1, 1925 (In Armenian).
6. **Seghbosyan K.** Arhestavorakan avanduyt’ nery yev drants’ artahaytut’yunnery leninakanants’ineri kents’aghum, HAB, prak 6, Yerevan, 19745 (In Armenian).

7. “Shiraki ashkhatawor”: Organ H.Y.D. Alek’sandrapoli teghakan komitev. Alek’sandrapol: tp. H. Ghasabyants’I, 1919-1920. № 32 **(In Armenian)**.
8. “Zhayrr”: K’aghak’akan hasarakakan yev grakan t’ert/ Khmb. Arshak Ghazaryan, Alek’sandrapol, tp. Svoboda, 1917-1918, 1917 № 17 **(In Armenian)**.

Ընդունվել է՝ 10. 03.2020

Գրախոսվել է՝ 20. 04. 2020

Հանձնվել է տպ.՝ 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Վարդուհի ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական

հետազոտությունների կենտրոնի ասպիրանտ,

Էլ. հասցե՝ varduhi.melkonyan93@mail.ru

ՀՏԴ՝ 81.19

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՂԱՏՈՒՄԱԿԱՆ ՄԻ
ԿԱՌՈՒՑԱՏԻՊԻ ՄԱՍԻՆ

Հայիկ Խաչատրյան

Երևանի Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան

Բանալի բառեր՝ հետադաս շարադասություն, գլխավոր անդամներ, երկրորդական նախադասություն, տրոհված անդամներ, հարաբերական բառեր, հարաբերյալ բառեր, ենթակա:

Հոդվածում անդրադարձ է կատարվում հին հայերենի շարահյուսական ինքնատիպ կառույց համարվող այն բարդ նախադասություններին, որոնցում հարաբերական բառերը նախորդում են հարաբերյալներին: Թարգմանական և ինքնուրույն մատենագրական երկերի լեզվական տվյալների հիման վրա հեղինակը բացահայտում է այդպիսի կառուցատիպերում հարաբերյալների շարադասական առանձնահատկությունները:

Նախաբան. Հին հայերենի նախադասության կառուցվածքները բազմազան են. հանդիպում են շարադասության շրջուն կառուցատիպեր, տրոհված անդամներով նախադասություններ, լրացումների թե՛ նախադաս և թե՛ հետադաս կիրառություններ, անվանական և դերբայական նախադասություններ¹, պարզ նախադասության տարատեսակ կառուցվածքներ² և այլն:

Հին հայերենի բարդ նախադասությունների կառուցատիպերի համատեքստում որոշակի հետաքրքրություն են դրսևորում այն նախադասությունները, որոնց բաղադրիչները կապակցվում են հարաբերական դերանվամբ: Այդպիսի

¹ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջք 350-351, 369-370:

² Տե՛ս **Հայրապետյան Ս.**, Գրաբարի շարադասությունը, Եր., 2005:

նախադասությունների արտահայտության պլանում սովորաբար գլխավոր նախադասության մեջ լինում են հարաբերյալներ, որոնց կանոնավոր շարադասության դեպքում հաջորդում են երկրորդական նախադասության համապատասխան հարաբերական բառերը: Հմնտ.

Առաքեալքն արբուցին տիեզերաց երկուք բաժակօք՝ *որք* կամեցան ըմպել զինչ կամեցանն (Ագաթ., 254). *առաքեալքն...որք*: Եւ *նոքա* լցեալ Հոգւով սրբով՝ *որք* ի մերձաւորացն եպերեալք (Ագաթ., 251). *նոքա...որք*: Չու արարեալ զնայ *յերկիրն Արարադայ*, *որ* է ի կողմանս հիւսիսոյ (Խոր., 33). *յերկիրն Արարադայ...որ*: *Ջրուան* ոմն անուն էր, *որ* թարգմանի բախտ կամ փառք (Եզն., 113). *Ջրուան... որ*:

Հին հայերենի շարահյուսական մակարդակում յուրահատուկ կառուցատիպ են այն նախադասությունները, որոնց արտահայտության պլանում հարաբերական բառերը նախորդում են հարաբերյալներին. վերջիններս կա՛մ գետեղված են լինում երկրորդական նախադասությունների մեջ, կա՛մ միջարկված են լինում այլ նախադասություններով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախադասության այդպիսի կառույցներ հանդիպում են ինչպես Աստվածաշնչի թարգմանական գրքերում³, այնպես էլ հին հայերենի ինքնուրույն մատենագրության մեջ:

Համեմատենք հետևյալ նախադասություններում հարաբերյալների և հարաբերական բառերի հարաբերակցությունն ու շարադասությունը:

Որ և *բազումք* իսկ եկին և ժողովեցան, և կալան զիրաքանչիւր կալուածս (Եղ., 131). *որ... բազումք*: Իսկ *որք* յենթակայէ միայն են ... *բազումք* և *հողովք* ի նոցանէ ոչ զոն կատարեալք (Անյ., 46). *որք... բազումք* և *հողովք*: Եւ ոչ, *որ* ունէր զնոսս *մութն* աներկիրս պահեաց (Իմաս. ԺԷ.4). *որ ... մութն*⁴:

Հին հայերենում այս կարգի նախադասությունները դրսևորում են որոշակի օրինաչափություններ, ուստի անհրաժեշտություն է առաջանում կատարել նմանատիպ կառույցների արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցված քննություն՝ հետադաս հարաբերյալների շարադասության դրսևորումները բացահայտելու համար:

³ Քննության բնագիր ենք ընտրել Հայաստանի աստվածաշնչային ընկերության՝ 1997-ի հրատարակած մատյանը՝ «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց»: Բնագրային օրինակները՝ ըստ հետևյալ աշխատության՝ «Համաբարբառ հին և նոր կտակարանաց, աշխատասիրութիւն Թադէոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցոյ», Երուսաղէմ, 1895:

⁴ Ա. Այտընյանը, այդ երևույթը դիտարկելով աշխարհաբարի քերականության շրջանակներում, գրում է. «Յարաբերական դերանունը միշտ իւր յարաբերեալէն յետադաս է: Միայն տաղաչափութեան մէջ քիչ տեղ կը ներուի հակառակը, յարաբերականը յարաբերեալէն յառաջ. Ուշատեն կէս գիշեր, *Որ* դրոնէն դուրս են քըշեր՝ *Գինով մէկն* իբր անբան Քալեր կ'երթար իւր ճամբան: Այսինքն՝ *Գինով մէկն, որ* դոնէն դուրս են քըշեր»: (Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1886, էջ 199):

*Հետադաս հարաբերյալների շարահյուսական յուրահատկությունները
հին հայերենում*

Հին հայերենի քերականության պատմության մեջ Ա. Բագրատունին անդրադարձել է այն կառույցներին, որոնց արտահայտության պլանում հարաբերական բառերը նախորդում են հարաբերյալներին. «Յաճախ յառաջ դնի յարաբերականն, քան զյայտնի յարաբերելի հասարակ անուն, սովորաբար ամենայն սարուք հանդերձ, որպես. Եւ զայլ ամենայն *որ այր կռուոյ* յաշխարհի գտանէր, ցանեցի, ցրուեսցի: Տեսեալ, թե *որով* սովոր էր պատրել *ձախակողման մարտն* խայտառակի: Փոխանակ՝ *այր կռուոյ, որ ձախակողման մարտն, որով*»⁵:

Ա. Բագրատունին սահմանափակվում է նմանատիպ օրինակներ վկայելով միայն. նա չի մանրամասնում և չի վերլուծում այդ կառույցները՝ ցույց տալու դրանց կառուցվածքն ու բնույթը. այսինքն՝ օրինաչափ են դրանք գրաբարի շարահյուսական համակարգում, մասնակի դրսևորումն է՞ր են, թե՞ օտարալեզու ազդեցության հետևանք են:

Վ.Առաքելյանը, հինգերորդ դարի մատենագիրների լեզուն և ոճը քննելիս, Ագաթանգեղոսի, Կորյունի և Եզնիկի ոճերի կապակցությամբ գրում է, որ Կորյունի կամ Ագաթանգեղոսի կազմած նույնպիսի նախադասությունը Եզնիկն արտահայտում է բարդ նախադասությամբ: Նրա վկայած օրինակներից նկատելի է, որ խոսքը վերաբերում է հարաբերյալների նկատմամբ հարաբերական բառերի նախադաս շարահյուսությանը: Հմմտ. «*Որ զիրս* առաջին եղեալս գրով ցուցանէր կայսերն» (Կոր.) և «*Զի յայն, զոր* առաջի եղ, հասանել կարասցէ» (Եզն.)⁶: Վ.Առաքելյանը Եզնիկի ոճին բնութագրական է համարում այն հանգամանքը, որ նա «երբեմն հարաբերականն ու հարաբերյալը համադրում է մի նախադասության մեջ», ինչպես՝ «*Որպես որ* բասիլիկոն կոչի *ազգ ինչ օձից*»: Փխն. «*Որպես ազգ ինչ օձից, որ* բասիլիկոն կոչի»⁷: Այնուհետև լեզվաբանը նկատում է, որ այս երևույթը հատուկ կարող է լինել միայն մշակության գործընթաց ապրած որևէ գրական լեզվի կամ կարող է լինել թարգմանության հետևանք, ինչպես՝ «Բայց իրաւամբք այն է, յորժամ արժանի ըստ որոց գործեաց որ ինչ առնուցու»: Փխն. «Յորժամ որ արժանի առնուցու ըստ այնց, զոր ինչ գործեաց»⁸:

Վ.Առաքելյանը մեկ այլ աշխատությամբ անդրադառնում է Աստվածաշնչի լեզվի և ոճի քննությանը և օտարաբանությունների առնչությամբ նկատում, որ այնտեղ կան նախադասություններ, որոնք ակնհայտ երբայաբանություններ

⁵ Բագրատունի Ա., Հայերեն քերականությունի ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 367:

⁶ Առաքելյան Վ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., 1981, էջ 124:

⁷ Ա.Աբրահամյանն այս կառուցատիպը համարում է շրջուն շարահյուսություն, փոխ. *Ազգ ինչ օձից, որ բասիլիկոն կոչի* (Տե՛ս Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 417):

⁸ Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 134:

են. «Աստվածաշնչում հաճախ նկատվում է հոլովված հարաբերականից հետո նույնահոլով մի այլ դերանուն, որ երբայական հավելադրություն է»⁹:

Այս կապակցությամբ վկայված օրինակներից երևում է, որ խոսքը վերաբերում է նախադաս հարաբերականների գործածությանը, որոնց հարաբերյալները (դարձյալ դերանունով արտահայտված) շարադասորեն հաջորդում են նրանց՝ գտնվելով միևնույն նախադասության մեջ: Հմմտ. *Ձոր Տէր Աստուած քո դարմանէ զնս*, յանապագ աչք տեառն Աստուծոյ քո ի վերայ նորա (Բ Օրէն. ԺԱ 12): Փխն. *Զնա, զոր Տէր Աստուած քո դարմանէ, յանապագ աչք տեառն Աստուծոյ քո ի վերայ նորա: Կամ՝ Կորուսանելով կորուսջիք զամենայն տեղիսն, զորս դուք ժառանգիցէք զնսսա* (Բ Օրէն. ԺԲ 2): Փխն. Կորուսանելով կորուսջիք զամենայն տեղիսն, *զնսսա, զորս դուք ժառանգիցէք*:

Ինչպես երևում է շարադրանքից, նա այդ կարգի կառույցները դիտում է մեկ երբայաբանություն, մեկ՝ ժողովրդական խոսքային հավելադրության հատկանիշ, մեկ՝ դեռևս չկազմակերպված խոսքի հետևանք՝ այդպիսով հարցի մեկնաբանությունը հասցնելով անորոշության¹⁰:

Հին հայերենին հատուկ շարահյուսական այդ կառույցների հարցը կարելի է լուծել դրանց արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցված քննությամբ միայն: Ստորև կփորձենք քննության առարկա դարձնել նմանատիպ կառույցները և կաշխատենք բացահայտել դրանց էությունն ու կառուցվածքային յուրահատկությունները:

Նմանատիպ կառույցները վերլուծելու տարբեր մեկնակետեր կան. մենք նպատակահարմար ենք համարում դրանց ուսումնասիրությունը կատարել ըստ այն գործոնի, թե գլխավոր նախադասության հարաբերյալով արտահայտված ո՛ր անդամն է գտնվում երկրորդական նախադասության մեջ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկրորդական նախադասության մեջ գերազանցապես զետեղված է լինում գլխավոր նախադասության ենթական. վիճակագրորեն նրան հաջորդում են խնդիր և պարագա լրացումները:

Քննության կառնենք այն նախադասությունները, որոնց գլխավոր նախադասության *հարաբերյալը՝ իբրև ենթակա*, գտնվում է երկրորդական նախադասության մեջ՝ հաջորդելով հարաբերական բառերին¹¹:

Դիտարկենք այդ նախադասություններն ըստ այս սկզբունքի:

Ա. Եթե նկատի ունենանք գլխավոր նախադասության *հարաբերյալի (ենթակայի) շարադասության հանգամանքը*, ապա կարող ենք ասել, որ նմանա-

⁹ Առաքելյան Վ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Եր., 1984, էջ 225:

¹⁰ Նույնը:

¹¹ Տրոհված խնդրային և պարագայական լրացումների քննությունն առանձին հոդվածի նյութ կարող է դառնալ:

տիպ նախադասություններում հարաբերյալը հանդիպում է երկու դիրքում. առաջին՝ *այն եզրափակում է բարդ նախադասությունը*, երկրորդ՝ *գտնվում է նախադասության մեջ*:

Դիտարկենք այդ դեպքերն առանձին-առանձին:

ա) *Հարաբերյալը (ենթական) եզրափակում է բարդ նախադասությունը*.

Բարդ նախադասության շարահյուսական այս կաղապարը կարող ենք ձևակերպել այլ կերպ՝ *միջադաս նախադասությունները գտնվում են գլխավոր նախադասության ստորոգյալի և ենթակայի միջև*: Այդպիսի բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները կապակցվում են հիմնականում *որ* հարաբերականով, որ սակավ հանդիպում է թեք ձևով՝ *որով*, կամ նախդրով՝ *գոր*:

Նման կառուցատիպերում *որ* հարաբերականով կապակցվող երկրորդական նախադասությունները կատարում են որոշչի շարահյուսական գործառույթ: Հմմտ.

Վասն զի սուրբ է, *որ* անդր եմուտ *տապանակն տեսոն* (Բ.Մնա. Ը. 11). (Փոխանակ՝ Վասն զի սուրբ է *տապանակն տեսոն*, *որ* անդր եմուտ): Ձի արժանի զգերութիւն ընկալցի, *որ* առ ի քէն քան զամենայն առաւել պատուական էր *երկիրն* (Իմաս. ԺԲ. 7): (Փոխանակ՝ Ձի արժանի զգերութիւն ընկալցի *երկիրն*, *որ* առ ի քէն, քան զամենայն առաւել պատուական էր): *Իբրև լուան, *որ* յԵրուսաղէմ *առաքեալսն* էին, իբրև զիտացին, որ ի Թեսաղոնիկէ Հրեայքն էին¹²: (Փոխանակ՝ *Առաքեալսն*, *որ*...): Եւ *որ* այլ ևս խառնափնդոր *բազմաճճիք* են (Եղ., 53): (Փոխանակ՝ *այլ ևս բազմաճճիք*, *որ*...):

Շաղկապական դեր կատարող հարաբերականը հաճախ հանդես է գալիս *զ* նախդիրով՝ *գոր*. որպես նախադասության անդամ՝ այն ունի խնդրային գործառույթ: Հմմտ. *Ընդ քեզ բուսանին, *գոր* ընդ քեզ թաղեցեր *արդարութիւնքն կամ մեղքն*: (Փոխանակ՝ *գարդարութիւնսն կամ զմեղսն*, *գոր*...): *Գերեզման քեզ լիցի, *գոր* շինես *քաղաքն* (փոխանակ՝ *քաղաքն*, *գոր*...):

Նման կառուցատիպերում երբեմն շաղկապի դեր է կատարում *ուր* մակբայը: Հմմտ. Ո՞ւր է, *որ* ծնաւ *արքայն Հրէից* (Մատ. Բ. 2). (փոխանակ՝ *արքայն Հրէից*, *որ*...):

Նմանատիպ կառույցներում գլխավոր նախադասությունը կարող է լինել անվանական կառուցվածքի՝ առանց ստորոգյալի. նման դեպքերում ստորոգման դերը կատարում է հնչերանգը: Հմմտ.

*Եւ այլ ևս բազումք, *որ* ի սոյն յարին *բանք*. (փոխանակ՝ *բանք*, *որ*...): *Դեմետրիոս և *որ* ընդ նմա *ճարտարք*... էին. (փոխանակ՝ *ճարտարք*, *որ*...): Եւ *որ* այլ բազում *կեշտք* են (Եղ., 61). (փոխանակ՝ *կեշտք*, *որ*...):

¹² Ա.Բագրատունու աշխատությունից վկայած օրինակները տրվում են աստղանիշով:

բ) Գլխավոր նախադասության հարաբերյալը (ենթական) գտնվում է միջադաս նախադասության մեջ.

Այսպիսի կառուցատիպերում *որ* հարաբերականով կապակցվող միջադաս երկրորդական նախադասությունները կատարում են գոյականական անդամի (ենթակայի) լրացման՝ որոշի դեր: Հմնտ.

Անդ *որ* (Եզն., 214). (փոխանակ՝ *Խաւարն, որ* ի վեր յերկինս լինի, ուստի՞ իցէ): *Իսկ *որ* զարտուղեցան *ոտք* յարդարութեան ճանապարհէն ... այնպիսի ոտք առաքին ի վիհս դժոխոց (փոխանակ՝ Իսկ *ոտք, որ* զարտուղեցան յարդարութեան ճանապարհէն... այնպիսի ոտք առաքին ի վիհս դժոխոց): Զարմացան *որք* ի թլպատութենէ անտի *հաւատացեալք* եկեալ էին (փոխանակ՝ *Հաւատացեալք* զարմացան, *որք* ի թլպատութենէ անտի եկեալ էին): *Եւ *որ* այլքն էին ի Հրէից անտի, ժողովեցան. (փոխանակ՝ Եւ *այլքն, որ* էին ի Հրէից անտի, ժողովեցան): *Եւ *որ* այլ *ևս* աստուածախօսութիւնք առ նահապետսն եղեն. (փոխանակ՝ Եւ *այլ ևս* աստուածախօսութիւնք, *որ* առ նահապետսն եղեն): Իսկ *որ* էր գիտակ անօրէն գործոյն անդրէն ի դրան արքունի նոյն *հազարապետն Միհրներսէհ* յառաջ մատուցեալ ասէ ցթագաւորն (Եղ., 128). (փոխանակ՝ Իսկ *նոյն հազարապետն Միհրներսէհ, որ* էր գիտակ անօրէն գործոյն անդրէն ի դրան արքունի, յառաջ մատուցեալ ասէ ցթագաւորն):

Հին հայերենում հաճախադէպ են այն նախադասությունները, որոնք սկսվում են հարաբերական բառերով. նման դեպքերում երկրորդական նախադասությունը նախադաս դիրքում է, հետևաբար հարաբերյալները դարձյալ գտնվում են գլխավոր նախադասության մեջ: Հմնտ.

Որ ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ *բանն*՝ հաստատուն եղև (Եբր. Բ. 2). (փոխանակ՝ *Բանն, որ...*): *Որ* չեն մտավարժ՝ բազում անգամ *զծառայ այր* առաջի նորա զան հարկանեն (Եզն., 82). (փոխանակ՝ *ծառայ այր, գոր...*): *Որ* ինչ անմարմին է՝ *նա* պարզ բնութիւն է (Եզն., 91). (փոխանակ՝ *նա, որ...*): *Որ* զեղեցիկ է՝ *այն* ի բարոյ արարչէ կարծիցի ոմանց (Եզն., 9). (փոխանակ՝ *այն, որ...*):

գ) Գլխավոր նախադասության հարաբերյալը (ենթական) գտնվում է հաջորդ նախադասության մեջ.

Երբեմն շաղկապի դերով հանդես է գալիս մակբայական անդամը (ուստի), որի հարաբերյալ գոյականը գտնվում է հաջորդ նախադասության մեջ: Հմնտ.

Ուստի այս ամենայն զանձ ելանէ՝ զիա՞րդ շէն կայցէ *աշխարհն* (Եղ., 23): Նման դեպքերում տրամաբանական է, որ հարաբերվող բառը (աշխարհն) նախորդի երկրորդականին, ինչպես՝ *Աշխարհն, ուստի* այս ամենայն զանձ ելանէ, զիա՞րդ շէն կայցէ):

Եթե ելակետ ենք ընդունում վերլուծության այն սկզբունքը, որ գլխավոր նախադասության հարաբերական բառերը կատարում են ենթակայի գործա-

ռույթ, ապա կարող ենք դիտարկել հարաբերյալների և հարաբերականների տարատեսակ դրսևորումներ՝ կապված նրանց թվային համաձայնության հետ: Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ հարաբերյալների և հարաբերականների թվային համաձայնությունը միանշանակ չէ. հաճախ դրանք միմյանց համաձայնում են, հաճախ էլ թվային անհամաձայնություն են ցուցաբերում¹³:

Դիտարկենք այդ դեպքերն առանձին-առանձին:

ա) Հարաբերյալներն ու հարաբերականները համաձայնել են եզակի թվով.

Իսկ *որ* կատարելագոյնն էր ի նոսա, *Ոլիմպիադորոս անուն*, այսպես ասաց (Խոր., 25). (փոխանակ՝ *Ոլիմպիադորոս անուն, որ...*): *Ձայն որ* ի վերայ վիշապին հեծեալ էր *այր*, արծուոյ իմն արդարն սլացեալ թևովք յարձակեալ (Խոր., 76). (փոխանակ՝ *զայն այր, որ...*): *Զի որ* անմարմին *ոք* է, նա և անսերմն է (Եզն., 100). (փոխանակ՝ *ոք, որ...*): *Զի որ ինքն* իւր չար է, այլում բարի ոչ կարէ լինել. և *որ ինքն* ընդ իսուար գնայ, այլում ոչ առաջնորդէ ճշմարտութեան լուսով (Եղ., 86). (փոխանակ՝ *ինքն, որ...*): Այլ և *որ* սերտ սիրով ետ զանձն իւր *այրն* և ընտրեաց զլան՝ արժան է դիպել երևելի փառաց (Փարպ., 43). (փոխանակ՝ *այրն, որ...*): *Որ ինքն* բնութեամբ Որդի է՝ անվեհեր մատուցանէ զիւր պատուիրանապահսն (Ագաթ., 89). (փոխանակ՝ *ինքն, որ...*): *Որ* միանգամ *միաբանք* եկին հասին յերկիր Հայաստանի աշխարհս աւելի էին, քան զեօթանասուն մարդ (Ագաթ., 112). (փոխանակ՝ *միաբանք, որ...*): *Որ* էրն ի սկզբանէ *Բանն*, և *Բանն* էր առ Աստուած (Ագաթ., 210). (փոխանակ՝ *բանն, որ...*): *Որ* ի ծոցոյ Հոր եկն, *նա* է տեղեակ խորհրդոց ծնողին իւրոյ (Ագաթ., 219). (փոխանակ՝ *նա, որ...*): *Զի որ* յԱստուծոյ առաքեցաւ՝ *նա* զպատգամս Աստուծոյ խօսի (Ագաթ., 216). (փոխանակ՝ *նա, որ...*): *Որ* ի Հօրէ ուսաւ զվճիռ դատաստանին՝ *նա* եկեալ մարդ լեալ քարոզէ աշխարհի (Ագաթ., 222). (փոխանակ՝ *նա, որ...*): *Որ* յանկարօտ և յանճաշակ արքայութեանն ճաշակել զիտէ՝ *նոյն ...* լի և անկարօտ ամենացոյցն շարժէր (Ագաթ., 244). (փոխանակ՝ *նոյն, որ...*): Իսկ *որ* միջին ինչ եղել, *այն* ի ձեռաց այլոց գրել գրեցաւ (Բուզ., 5). (փոխանակ՝ *այն, որ...*): *Որ ինքն* ի մէջ կացեալ, ի ձեռն Հոգւոյն սրբոյ յայտնէր զխոնարհութիւն կրօնազգեաց աստուածսիրութեան նշանակ թագաւորին Կոստանդիանոսի (Բուզ., 22). (փոխանակ՝ *ինքն, որ...*): *Որ* մինչդեռ մանուկ իսկ էր՝ գնայ *նա* ամենայն պատուիրանօքն տեառն (Բուզ., 58). (փոխանակ՝ *նա, որ...*): Նոյնպէս և *որ* զհոգի զարդարէ *իմաստասիրութիւն*՝ պատուականագոյն է, քան զայլ արհեստս՝ մարմնոյ զարդարողս (Անյ., 154). (փոխանակ՝ *իմաստասիրութիւն, որ...*):

¹³ Հին հայերենում հարաբերական դերանվան և հարաբերյալների թվային համաձայնության մասին տե՛ս Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1992, էջ 205-206:

Իբրև հարաբերյալ հանդես է գալիս *նա ինքն* հարադրությունը: Հմնտ. *Որ նա ինքն* է յեութեանն, որպես և էն իսկ. սակայն յորժամ կամեցաւ... էջ ի մեր նմանութիւն (Ագաթ., 188). (փոխանակ՝ *նա ինքն, որ...*):

բ) Հարաբերյալներն ու հարաբերականները համաձայնել են հոգնակի թվով.

Ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց, արք քաջք և անուանիք, որպէս և *որք* առ մեօք են այժմ *երևելիք* (Խոր., 38). (փոխանակ՝ *երևելիք, որք...*): Եպիսկոպոսապետ Վրթանէս և *որք* ի նովաւ *եպիսկոպոսունք...* տեառն մերոյ Կոստանդեայ կայսեր ինդալ (Խոր., 261). (փոխանակ՝ *եպիսկոպոսունք, որք...*): *Որք* առ Արշակայ էին *միամիտք...* միաբանեալ հալածեցին զնոսա (Խոր., 299). (փոխանակ՝ *միամիտք, որք...*): Իսկ *որք ընկալայնքդ հաւատովք*, որդիք էք և ոչ օտարախորթք (Եղ., 112). (փոխանակ՝ *ընկալայնքդ հաւատովք, որք...*): *Որք* յայսց հաւատոց վրիպեցան՝ *նոքա* զանկոխն և զանխուլ զնացին (Ագաթ., 185). (փոխանակ՝ *նոքա, որք...*): Իսկ *յորս* արեգակն զլուսաւորութիւն հաւատոցն ծագէ... *նոքա* հանապազ հանդիմանեն զստութիւնս և զմոլորութիւնս (Բուզ., 71). (փոխանակ՝ *նոքա, յորս...*): *Որք* կային *զլիսաւորք եպիսկոպոսք Հայոց*, մի ըստ միոջէ կարգօք թուօք և համարօք կանոնեալ դրոշմեալ նկարեցի իւրաքանչիւր զլիտովք (Բուզ., 1). (փոխանակ՝ *Գլիսաւորք եպիսկոպոսք Հայոց, որք...*): *Որք* առ յապայն և առնելոց էին ի նմանէ *հովիւքն զլիսաւորք...* ի շահ մշակութեան եկեղեցեաց յաւետարանական հրամանացն սպասաւորել (Բուզ., 10). (փոխանակ՝ *հովիւքն զլիսաւորք...* *որք...*): Վասն զի մանաւանդ *որք* մեռանն, *նոքա* յաղագս աշխարհի և եկեղեցեաց և աստուածագործ օրինացն տուչութեան (Բուզ., 23). (փոխանակ՝ *նոքա, որք...*): *Որք են պիհոռնացիք*, զամենայն ինչ եղծանել կամելով՝ զմայր ապացուցին (Անյ., 20). (փոխանակ՝ *պիհոռնացիք են, որք...*):

գ) Հարաբերյալների ու հարաբերականների թվային համաձայնությունը խախտվել է. հոգնակի հարաբերյալներն ունեն եզակի հարաբերականներ.

Այսպիսի կառուցատիպի նախադասություններում սովորաբար եզակի հարաբերականներին հաջորդում են հոգնակի թվով հարաբերյալներ: Հմնտ.

Աշխատասիրեցայց ... յանմահ յիշատակ թողուլ զայս քեզ և *որ* զկնի քո զալոց են *ազգք* (Խոր., 5). (փոխանակ՝ *ազգք, որք...*): *Որ* և *բազումք* իսկ եկին և ժողովեցան, և կալան զիւրաքանչիւր կալուածս (Եղ., 131). (փոխանակ՝ *բազումք, որք...*): Յայնմ հետէ *որ* մի անգամ լինէին *եպիսկոպոսք* սահմանացն Հայոց, երթային ի քաղաքն կեսարացոց (Բուզ., 191). (փոխանակ՝ *եպիսկոպոսք, որք...*): Զի *որ* մի անգամ *կուսանք* և *հաւատացեալք* իցեն՝ անդր ի պահս և յաղօթս (Բուզ., 192). (փոխանակ՝ *կուսանք* և *հաւատացեալք, որք...*): Զոր յաղագս առաւելապէս աճեցեալ օր քան զօր և թագաւորական տոհմին Արշակունեաց գործք անօրէնութեան չարեացն (Փարպ., 25). (փոխանակ՝ *յաղագս անօրէնութեան չա-*

րեացն, գորս...): Որ միանգամ *միաբանք* եկին հասին յերկիր Հայաստան աշխարհս աւելի էին, քան զեթանասուն մարդ (Ագաթ., 112). (փոխանակ՝ *միաբանք, որք...*): Բնակեցուցանէ յարեւելայ ուսոյ մեծի լերինն մինչեւ ի սահմանս Գողթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, և *որ այլք* առ եզերք գետոյն (Խոր., 83). (փոխանակ՝ *այլք, որք...*):

Եզրահանգում. Այսպիսով, դիտարկված շուրջ յոթանասուն բնագրային վկայությունները որոշակի գաղափար են տալիս ենթակայի դեր կատարող հարաբերյալ բառերի հետադաս շարահաստության վերաբերյալ: Հին հայերենի մատենագրական երկերի համաժամանակյա ուսումնասիրությունը կարող է նորանոր իրողություններ ի հայտ բերել, իսկ երևույթի տարժամանակյա ուսումնասիրությունը կարող է բացահայտել շարահաստական տվյալ իրողության պատմական փոփոխությունների ընթացքը և այդպիսով ամբողջացնել շարահաստության տարժամանակյա գործընթացի գիտական նկարագրությունը:

Հին հայերենի շարահյուսական մակարդակում յուրահատուկ կառուցատիպ են կազմում այն նախադասությունները, որոնց արտահայտության պլանում հարաբերական բառերը նախորդում են հարաբերյալներին: Որոշակի յուրահատկություն են դրսևորում այն կառույցները, որոնց հարաբերյալ բառերը կատարում են ենթակայի գործառույթ: Այսպիսի հարաբերյալ բառերը հանդես են գալիս երկու դիրքով՝

ա) զետեղված են լինում երկրորդական նախադասությունների մեջ,

բ) միջարկված են լինում այլ լրացումներով կամ նախադասություններով:

Այդ կարգի կառույցները վերլուծելու տարբեր մեկնակետեր կան.

ա) ըստ հարաբերականների ուղիղ և թեք ձևերի,

բ) ըստ հարաբերականների և հարաբերյալների թվային համաձայնության:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հետադաս հարաբերյալներով (ենթակայով) կառույցները տարածված են հինգերորդ դարում, սակայն, ինչպես կարելի է եզրակացնել վկայված օրինակներից, հին հայերենի ինքնուրույն մատենագրական երկերում դրանց տեսակարար կշիռն անհամեմատ ավելի մեծ է, քան Աստվածաշնչի թարգմանական գրքերում: Հետևաբար դժվար է համաձայնել այն տեսակետին, որ այդ կարգի կառույցները Աստվածաշնչի ազդեցության հետևանք են, կամ այդ ոճերը օտարալեզու ազդեցություններ են (հունաբանություն կամ ասորաբանություն):

Համառոտագրություններ

Ա) Գրաբարի բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ
Ագաթ. – *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիխիս, 1909:*

- Անյ. – *Ղափթ Անյաղթ, Սահմանք ինաստասիրութեան, Եր., 1960:*
Բուզ. – *Փաստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:*
Եզն. – *Եզնկայ Կողբացոյ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:*
Եղ. – *Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Եր., 1957:*
Խոր. – *Սովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913:*
Փարպ. – *Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս, 1904:*

Բ) «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց», Հայաստանի աստվածաշնչա-
յին ընկերություն, Մեծ Բրիտանիա, 1997:

Երբ. – *Թուղթք Պաւղոսի Առաքելոյ առ Երբայեցիս:*

Իմաս. – *Իմաստութիւն Սողոմոնի:*

Մատ. – *Աւետարան ըստ Մատթէոսի:*

Բ Մնա. – *Մնացորդաց Բ.:*

Բ Օրէն. – *Երկրորդումն Օրինաց:*

Գ) Բառարաններ

Համարարբառ հին և նոր կտակարանաց, աշխատասիրութիւն Թադէոս վարդապետ Աստուածատուրեան Արապկերցոյ, ի տպարանի Առաքելական աթոռոյ Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1895:

ОБ ОДНОМ СИНТАКСИЧЕСКОМ СТРУКТУРНОМ ТИПЕ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

Խաչատրյան Լ. Մ.

Ключевые слова: *постпозиционный порядок слов, главные члены предложения, второстепенные предложения, обособленные члены предложения, относительные слова, соотносительные слова, подлежащее.*

В синтаксическом строе древнеармянского языка особый структурный тип формируют те предложения, в которых соотносительные слова следуют относительным словам. Соотносительные слова имеют разные функции. Некую особенность выявляют те структуры, в которых соотносительные слова имеют функцию подлежащего.

Соотносительные слова имеющие функции подлежащего имеют две позиции:

- а. находятся о второстепенных предложениях,
- б. обособлены другими дополнениями или предложениями.

Существуют разные аспекты для анализа таких конструкций:

- а. по относительным словам (ըր, ուր, ուստի),
- б. по численному согласованию относительных и соотносительных слов.

В этих структурах относительные слова не имеют константный порядок. Они могут выступать также с усилительными словами.

Исследование показывает, что конструкции с обособленными подлежащими древнеармянского языка встречаются не только в переводческих книгах Библии, но и в самостоятельных библиографических трудах.

ON A SYNTAX STRUCTURAL TYPE OF OLD ARMENIAN LANGUAGE

Khachatryan L. M.

Key words: *postposition word order, basic parts of the sentence, dependent sentences, isolated parts of the sentence, relative words, correlative words, subject.*

In the syntax structure of the Old Armenian language unique structural type have such sentences where relative words are arranged before correlative words. The correlative words have different functions. Certain uniqueness show such structures where correlative words have the function of a subject.

The correlative words which have a function of subject have two positions:

- a. they appear in dependent sentences
- b. they are interrupted by another extensions or sentences.

There are different aspects to analyze those structures:

- a. according to relative words (որ, ուր, ուստի),
- b. according to tense correspondence of correlative and relative words.

In such structures relative words do not have constant word order; they can appear with intensifying words.

The surveys show that structures with isolated subjects in Old Armenian are testified either in translation books of the Bible or in independent bibliographical works.

References

1. Aytynyan A. Qnnakan qerakanutyun ashxarhabar kam ardi hayeren lezvi «Mchitaryan Miabanutyun hrat.», Vienna, 1886 (In Armenian).
2. Abrahamyan A.A. Grabari dzernark. Yerevan. «Luys» hrat. 1976 (In Armenian).
3. Araqelyan V.D. Aknarkner hayoc grakan lezvi patmutyan. Yerevan. «GA» hrat. 1981 (In Armenian).

4. Araqelyan V.D., Hingerord dari hay targmanakan grakanutyun lezun ev vochy, Yerevan, «GA» hrat., 1984 (In Armenian).
5. Avetisyan H.M., Khazaryan H.M. Grabari dzernark, Yerevan, «EPH» hrat., 1992 (In Armenian).
6. Bagratuni A. Hayeren qerakanutyun i pets zargaceloc, Venetik, «S.Lazar» hrat., 1852 (In Armenian).
7. Khachatryan L.M., Tosunyan G.B. Grabari dasagirq, Yeevan, «Zangak-97» hrat., 2003 (In Armenian).
8. Hayrapetyan S.A. Grabari sharadasutyuny, Yerevan, «GA» hrat., 2005:
9. Jahukyan G.B. Hayoc lezvi patmutyun. Nakhagrayin jamanakashrjan, Yerevan, «GA» hrat., 1987 (In Armenian).

Ընդունվել է՝ 13.12.2019
Գրախոսվել է՝ 10.01.2020
Հանձնվել է տպ.՝ 27.05.2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների
լաբորատորիայի վարիչ, Էլ. հասցե՝ lingualal51@mail.ru

ՀՏԴ՝ 398.

ԿԱՐՍԻ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ ՈՐՊԵՍ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ
ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

Մարինե Խենյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր՝ բանահյուսություն, Կարսի տարածաշրջան, հրաշապատում հեքիաթ, հեքիաթի տիպ, տարբերակ, սյուժե, մոտիվ, հերոս, հմայական արգելք, բաղարկություն:

Հայ վիպական բանահյուսության մեջ ուրույն տեղ ունեն հեքիաթները՝ իրենց տեսակներով՝ հրաշապատում կամ կախարդական, իրապատում կամ կենցաղային և կենդանական: Այդ հեքիաթները կենցաղավարել են Հայաստանի բոլոր պատմազգագրական տարածաշրջաններում (Այրարատ, Շիրակ, Արցախ, Ուտիք, Սյունիք, Գուգարք, Ալաշկերտ, Մանազկերտ, Բաղեշ, Մուշ, Հարք, Տարոն, Մասուն, Վան-Վասպուրական, Մոկս, Կարս, Ղարադաղ, Տավուշ և այլն)՝ հորինվելով ու բանավոր ճանապարհով փոխանցվելով սերնդեսերունդ, կրելով փոփոխություններ ու ձեռք բերելով տարբերակայնություն: Հայ ժողովրդական հեքիաթների տպագիր ժառանգության մեջ ստվար մաս են կազմում հրաշապատում հեքիաթները՝ ներառելով նաև Կարս պատմազգագրական տարածաշրջանի 45 հեքիաթ: Սույն հետազոտության նպատակն է ներկայացնել Կարսի հրաշապատում հեքիաթների տիպերի, սյուժեների և մոտիվների համադրությունը Հայաստանի տարբեր տարածաշրջանների հրաշապատում հեքիաթների հետ՝ ըստ Աարնե-Թոմփսոն-Ութերի հե-

քիաթների տիպերի, սյուժեների ու մոտիվների միջազգային դասակարգման:

Նախաբան. Հեքիաթը մարդուն ուղեկցել է հնուց ի վեր. մարդու սոցիալական կարգավիճակը, երազանքները, բնության առեղծվածային երևույթները, կրոնաժիսական և առասպելաբանական պատկերացումներն իրենց բազմազան դրսևորումներն են գտել հեքիաթներում, որոնք, հյուսվելով, պատմվելով և փոխանցվելով սերնդից սերունդ, տարածաշրջանից տարածաշրջան, հասել են մեր օրերը և երբեք չեն կորցրել իրենց արդիականությունը: Ինչպես Հայաստանի բոլոր պատմաագագրական տարածաշրջանները, այնպես էլ Կարսի տարածաշրջանը հարուստ է հրաշապատում հեքիաթներով, որոնք ընդգրկված են «Կարս. հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուում¹: 1920թ.՝ Կարսի երկրորդ անկումից հետո, կարսեցիները գաղթում են Հայաստան, Վրաստան և Հյուսիսային Կովկաս՝ իրենց հետ տանելով բանահյուսական հարուստ ժառանգությունը: Տպագրված հրաշապատում հեքիաթների գրեթե կեսը (22 հեքիաթ) 1974-75 թթ. գրառել ու Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվին (ՀԱԻԲԱ) պահպանության է հանձնել բանասաց-բանահավաք Եղիշե Խաչատրյանը՝ ծնված Կարսի մարզի Ճալա գյուղում՝ 1906 թվականին: Նա իր գրառած հեքիաթների մեծ մասը լսել է մանկության տարիներին իր հորեղբոր տղայից՝ Արսեն Խաչատրյանից, հորից՝ Պետրոս Խաչատրյանից և համագյուղացիներ Նազար Թորոսյանից ու Հովսեփ Բզնունուց: Շիրակ, Երևան, Թբիլիսի, Բաքու, Շամշադին և այլ բնակավայրեր բռնագաղթված կարսեցիներից հրաշապատում հեքիաթներ են գրառել նաև Անուշավան Գևորգյանը, Պարույր Բարսեղյանը, Վարդ Բդոյանը, Սարգիս Հարությունյանը, Արագ Կարապետյանը, Բարխուդար Ղազիյանը, Արուսյակ Սահակյանը, Սվետլանա Վարդանյանը և Էսթեր Խեմչյանը:

Այնպես, ինչպես աշխարհի տարբեր ժողովուրդների հրաշապատում հեքիաթներում Կարսի հեքիաթի հերոսը նույնպես ունի գործողությունների որոշակի հաջորդականություն²՝ կախված իր առջև դրված խնդրի իրագործման բարդությունից: Կարսի հեքիաթը սովորաբար սկսվում է գործող անձանց թվարկումով, այնուհետև գլխավոր հերոսը տարբեր պատճառներով (հրաշագործ առարկա ձեռք բերելու նպատակով, հմայական արգելքը խախտելու պատճառով, անեծքի հետևանքով և այլն) հեռանում է տնից և տարբեր փորձու-

¹ Կարս. հայոց բանահյուսական մշակույթը (այսուհետև՝ Կարս), կազմողներ՝ **Հարությունյան Ս.Բ., Վարդանյան Ս.Ա., Խեմչյան Է.Հ., Ղոնջյան Լ.Խ., Խեմչյան Մ.Հ.**, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2013:

² Հրաշապատում հեքիաթի հերոսի գործառույթների մասին տե՛ս՝ **Пронин В.** Морфология сказки, Издательство “Наука”, М., 1969, с. 29-60.

թյուններ հաղթահարելով, հասնելով իր գերագույն նպատակին՝ վերադառնում: Կարսի հրաշապատում հեքիաթների զգալի մասն իրենց տիպերով, սյուժեներով ու մոտիվներով համապատասխանում է Հանս Յորգ Ութերի հեքիաթների տիպերի դասակարգմանը³: Ըստ այդ դասակարգման՝ հեքիաթների տիպերն ընդգրկված են հետևյալ խմբերում.

- գերբնական հակառակորդներ (ATU 300- ATU 369),
- գերբնական կամ կախարդված ամուսին (կին), կամ այլ ազգական (ATU 400- ATU 459),
- գերբնական խնդիրներ (ATU 460- ATU 499),
- գերբնական օգնականներ (ATU 500- ATU 559),
- կախարդական (հրաշագործ) առարկաներ (ATU 560- ATU 649),
- գերբնական ուժ կամ գիտելիքներ (ATU 650- ATU 699),
- կախարդական այլ մոտիվներ (ATU 700- ATU 749),
- հերոսի ամուսնությունը արքայադստեր հետ (ATU 850- ATU 869),
- հերոսուհու ամուսնությունը արքայազնի հետ (ATU 870- ATU 879),
- հավատարմության և անմեղության ապացույցներ (ATU 880- ATU 899),
- բարի խորհուրդներ (ATU 910- ATU 915),
- խելացի արարքներ և բառեր (ATU 920- ATU 929),
- պատումներ ճակատագրի մասին (ATU 930- ATU 949),
- պատումներ ավազակների և մարդասպանների մասին (ATU 950- ATU 969),
- այլ իրապատում պատումներ (ATU 970- ATU 999):

Կարսի հրաշապատում հեքիաթները, ըստ իրենց կառուցվածքի, կարելի է բաժանել երեք խմբի. 1) հեքիաթներ, որոնք պատկանում են մեկ՝ որոշակի տիպի, 2) հեքիաթներ, որոնցում կան տիպերի երկու կամ ավելի զուգակցություններ, 3) բաղարկային (կոնտամինացիոն) սյուժեներով հեքիաթներ:

Ըստ հեքիաթների տիպերի միջազգային դասակարգման՝ «Երեք հափշտակված արքայադուստրեր» խորագիրը կրող ATU 301 թվահամարով տիպին են համապատասխանում Կարսի «Օխթ ախպոր քուրը» (ATU 301 + ATU 408 + ATU 516C), «Ասլանզաղեի հեքիաթը» (ATU 301 + ATU 513A + ATU 516C) և «Առչի տղեն» (ATU 301 + ATU 302B) հեքիաթները: Այս տիպի հեքիաթների տարբեր

³ Ֆինն բանասեր Անտտի Աարնեի եվրոպական հեքիաթների տիպերի համակարգը երկու անգամ վերանայել և ընդարձակել է ամերիկացի հեքիաթագետ Սթիթ Թոմփսոնը ընդգրկելով Եվրոպայից մինչև Հնդկաստան ընկած տարածաշրջանների ավանդական հեքիաթները: Հանս Յորգ Ութերի հեքիաթների տիպերի դասակարգումը սկզբունքորեն նոր հրատարակություն է՝ ընդարձակ լրացումներով ու նորամուծություններով հիմնված Անտտի Աարնեի և Սթիթ Թոմփսոնի համակարգերի վրա: Տե՛ս **Uther H.-J.**, The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales. and Realistic Tales, with an Introduction, Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011, 620 p.

մուտքային դիպվածները միավորվում են հիմնական մասի հետ: Նշված հեքիաթներից առաջինում մուտքային դիպվածը զուգադրվում է ATU 408 թվահամարով տիպին, ըստ որի՝ արքայազնը դիտմամբ ջարդում է պառավի կուժը, պառավը նրան անիծում է՝ սիրահարվել կախարդական ծագմամբ աղջկան. «Մի օրըմ էդոնք էրդիկը էլէ՝ իրանց համար խաղահին կը, տեսնին կը՝ պառավըմ, կուժը ումուզին, ջուր տանիր կը: Էդոնք իրարու հետ բաս բրոնեն կը, թե իրանցից վեր մեկը կըռնա քարով զարկէ՝ կուժը ջարթէ: Էդոնք նըշան բրոնեն կը, քարը քըցեն կը: Ինչըխ կեղնի Շահգաղեի քարը դիպնի կը էդ խեղճ պառավ կընկա կըժին, ջարթըվի կը, միչի ջուրը թափի կը: Պառավը խեղճ ու կըրակ էդոնց կաշէ, կըսէ. – Ի՞նչ էնեմ, քըրֆելու չեք, օր քըրֆեմ, անիծելու չեք, օր անիծեմ: Թաքավորի տըղա էք: Մենակ էն կըսեմ՝ իմ փարչը ջարթողը, թող օխթը ախպոր քըրոջ սերը ընկնի սիրտը, վառվի, օր գիտենա, թե աշխարքը ինչ կա»⁴: Նմանօրինակ մուտքային դիպվածներ հանդիպում են Հայաստանի այլ տարածաշրջանների հեքիաթներում ևս: Պառավն անիծում է. «Ենգիչարու դարդով մեռնես» (Այրարատ)⁵, «Նուռի-Գյոզալի սերը սիրտդ ընկնի, վառիս ու էրիս» (Շիրակ)⁶, «Ըստուծանա կըխնթրիմ, վըեր տու ծո՞ւվին ծառին տըրանաս» (Արցախ)⁷, «Ո՞նց անըծեմ քեզ: Թաքավորի մինուճար ես էլի, անըծիրու պան չունեմ քեզ ախլու, մենակ, -ասըմ ա, - տո՞ւ Խյար բըրուլի ըխճըկանը պտահես» (Տավուշ)⁸ և այլն:

«Առջի տղեն» հեքիաթում⁹ արջի կողմից հափշտակված արքայադստեր երեխան հրաշածին է՝ օժտված բացառիկ ուժով: Այս հեքիաթի տարբերակները հանդիպում են Այրարատի, Արցախի, Լոռու և այլ տարածաշրջաններում¹⁰: Եթե Այրարատի և Արցախի մեկ տարբերակում արքայադուստրը արջից է հղիանում, ապա Արցախի մյուս՝ «Աժդահակը» տարբերակում հասարակ ընտանի-

⁴ «Օխթ ախպոր քուրը».- Կարս, № 10(10), էջ 87:

⁵ «Ենգիչարու հեքիաթը».- Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ), հ. III, Այրարատ, կազմող՝ Նազիկյան Ա., Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, № 26, էջ 310:

⁶ «Ղուլ-զադա և Նուռի-Գյոզալի».- ՀԺՀ, հ. IV, Շիրակ, կազմող՝ Մկրտչյան Մ., Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, № 12, էջ 149:

⁷ «Ծո՞ւվին ծառը».- ՀԺՀ, հ. V, Արցախ, կազմողներ՝ Նազիկյան Ա., Գրիգորյան Մ., Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966, № 21, էջ 157:

⁸ «Խյար բըրուլի ախչիկը».- Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 25, Իջևան (Ձորոփոր), կազմող՝ Խեմչյան Է., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008:

⁹ Այս հեքիաթն այն սակավաթիվ պատումներից է, որում Կարնո բարբառը պահպանված է մասամբ, որովհետև բանահավաք Արագ Կարապետյանն այն գրառել է Շամշադինի շրջանի Նորաջեն գյուղում՝ Կարսից գաղթած և 1929 թվականից Շամշադինում ապրող Բասակ Մարգարյանից, որի լեզուն կրել է նաև տեղի խոսվածքի ազդեցությունը: Տե՛ս «Առջի տղեն».- Կարս, № 10(10), էջ 102-105:

¹⁰ «Առջի տղի նաղը».- ՀԺՀ, հ. I, Այրարատ, կազմող՝ Նազիկյան Ա., Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, № 9, էջ 149-160: «Արչին տըղան».- ՀԺՀ, հ. V, № 41, էջ 267-275: «Աժդահակը».- ՀԺՀ, հ. V, № 69, էջ 415-425: «Տերտերի արջ տղեն».- ՀԺՀ, հ. VIII, Գուգարք (Լոռի), կազմողներ՝ Նազիկյան Ա., Գրիգորյան Ռ., Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, № 41, էջ 291-297:

քում է հրաշամանուկ ծնվում, իսկ Լոռու տարբերակում էգ արջն է տերտերից տղա ունենում:

Կարսի՝ այս տիպի (ATU 301) նշված հեքիաթներում հերոսը ճանապարհվում է գտնելու արքայադստերը, որին տեսել էր երագում կամ պառավի անեծքով էր իմացել նրա մասին: Հերոսը ճանապարհին ձեռք է բերում գերբնական ընդունակություններով ընկերներ (երկու և ավելի), որոնք օգնում են նրան լուծելու առաջադրված խնդիրները (գուգակցվում են նաև ATU 513 տիպի հեքիաթների հետ)¹¹:

Կարսի վերոնշյալ հեքիաթներին հարկ է ավելացնել նաև հետևյալ հեքիաթները՝ «Շահ Յուսուֆի հեքիաթը»¹², «Ջանսըզը»¹³, «Յաշօղլանի հեքիաթը»¹⁴ և «Քաջիկի հեքիաթը»¹⁵, որոնք նույնպես, ըստ միջազգային դասակարգման, համապատասխանում են «Գերբնական հակառակորդներ» խմբի հեքիաթների տիպերին՝ ընդգրկելով մի քանի այլ տիպեր:

Ընդհանրապես հայ ժողովրդական, այդ թվում նաև Կարսի հրաշապատում հեքիաթներին բնորոշ է միևնույն հեքիաթում մի քանի այլ տիպերի առկայությունը. այդ տիպերը հանդես են գալիս դիպվածների ձևով, ի դեպ, բազմաթիվ են իրապատում (երբեմն նաև՝ կենդանական) հեքիաթների տիպերի՝ հրաշապատում հեքիաթում որպես դիպված հանդես գալու օրինակները: Այլ է պատկերը բաղարկային հեքիաթներում, որոնցում հիմնական հեքիաթն ընդգրկում է մի քանի ամբողջական և ավարտուն պատում: Այդպիսի հեքիաթների շարքին են դասվում «Փոնցիանոս թաքավորի տղեն»¹⁶ ու «Ալեքսիանոս և Լուտվիկ»¹⁷ հեքիաթները, որոնք հիմնականում պատկանում են «Արքայազնի յոթ իմաստուն ուսուցիչներ» (ATU 875D*) տիպին: Ըստ այդ տիպի՝ արքայազնը ուսումնառության է մեկնում յոթ իմաստունների մոտ: Երբ նա վերադառնում է պալատ, խորթ մայրը՝ երիտասարդ թագուհին, չկարողանալով նվաճել արքայազնին, ստիպում է թագավորին նրան մահապատժի ենթարկել: Յոթ իմաստունները յոթ օրվա ընթացքում պատմում են պատմություններ, որոնք լսելով, թագավորը փոխում է արքայազնին մահապատժի ենթարկելու որոշումը: Այդ ողջ ընթացքում արքայազնը իմաստունների խորհրդով համր է ձևանում. այդ

¹¹ Գերբնական ընդունակություններով օժտված ընկերների մասին տե՛ս **Խեմչյան Մ.**, Գերբնական հատկություններով օժտված գործող անձինք որպես հեքիաթի հերոսի օգնական // Ոսկե դիվան. հեքիաթագիտական հանդես, պրակ 5, Եր., 2015, էջ 79-85:

¹² «Շահ Յուսուֆի հեքիաթը».- Կարս, № 7(7), էջ 66-73:

¹³ «Ջանսըզը».- Կարս, № 8(8), էջ 73-79:

¹⁴ «Յաշօղլանի հեքիաթը».- Կարս, № 13(13), էջ 105-113:

¹⁵ «Քաջիկի հեքիաթը».- Կարս, № 14(14), էջ 113-118:

¹⁶ «Փոնցիանոս թաքավորի տղեն».- Կարս, № 32(32), էջ 202-214:

¹⁷ «Ալեքսիանոս և Լուտվիկ».- Կարս, № 33(33), էջ 214-225:

հանգամանքն անհրաժեշտ էր իմաստունների պատմությունները ներկայացնելու համար: Պատումներից մեկը համապատասխանում է հեքիաթների տիպերի միջազգային դասակարգման ATU 178A («Անմեղ շուն») տիպին: Շունն օձից փրկում է իր տիրոջ երեխային: Երբ տերը տեսնում է շան արյունոտ բերանը, մտածում է, որ իր երեխաների մահվան պատճառը շունն է և սպանում է նրան: Տեսնելով երեխայի օրորոցի տակ սպանված օձին, տերը հասկանում է, որ սխալվել է: Բայց շանը վերադարձնել այլևս չէր կարող: Եթե «Փոնցիանոս թաքավորի տղեն» հեքիաթում թագավորի 6 ամսական երեխաներին օձն էր սպանում, ապա «Ալեքսիանոս և Լուտվիկ» հեքիաթում թագավորի միամյա երեխաներին վիշապն էր կուլ տալիս:

Նշված երկու հեքիաթում էլ առկա է ATU 178B («Հավատարիմ շունը») տիպին համապատասխանող պատումը: Երկու հեքիաթում էլ հարուստ վաճառականի շունը նկատում է, թե ինչպես վաճառականի ձիու վրայից ընկնում է ոսկով լի խուրջինը, և հետ ու առաջ վազելով, կաղկանձելով փորձում է հասկացնել տիրոջը դրա մասին: Վաճառականը, մտածելով, որ շունը կատաղել է, սպանում է նրան, հետո է իմանում կորուստի մասին, բայց շանն արդեն վերադարձնել չի կարողանում: ATU 178C տիպը վերաբերում է թագավորի հավատարիմ բազեի մասին պատումներին: Ծարավ թագավորը ժայռից կաթիլ-կաթիլ թափվող ջուրը լցնում է ոսկե թասը¹⁸ (բաժակը)¹⁹, որ խմի, սակայն բազեն երեք անգամ թափում է ջուրը: Զայրացած թագավորը սպանում է բազեին: Հետո պարզում է, որ կաթիլ-կաթիլ ջուրը սատկած օձի (վիշապի) թույնն էր, ինչի մասին նրան փորձում էր հասկացնել բազեն: Թագավորը փոշմանում է, որ սպանել է բազեին, բայց արդեն ուշ էր: Երկու հեքիաթում էլ իմաստունները յոթ օր շարունակ պատմում են այնպիսի պատմություններ, որ թագավորը հասկանա իր կործանարար որոշման սխալը: Եզրափակիչ՝ յոթերորդ պատումը համապատասխանում է ATU 516C տիպի հեքիաթներին: Պատումի կենտրոնական մոտիվներն են երկու միմյանց նման ընկերների անկեղծ բարեկամությունը, դերերով փոխվելը, անմեղ երեխաների արյամբ բուժվելու հատկությունը: Առաջին՝ «Փոնցիանոս թաքավորի տղեն» հեքիաթի յոթերորդ պատումի հերոսների անունները (Ալեքսիանոս և Լուտվիկ) ծառայել են որպես վերնագիր մյուս հեքիաթի համար: Այս պատումը՝ որպես առանձին հեքիաթ²⁰, ինչպես նաև որպես

¹⁸ «Փոնցիանոս թաքավորի տղեն».- Կարս, № 32(32), էջ 204:

¹⁹ «Ալեքսիանոս և Լուտվիկ».- Կարս, № 33(33), էջ 219:

²⁰ «Աղեքսանդրի կսեն».- Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գիրք XXII, № 1, Թիֆլիս, տպ. օր. Ն. Աղանեսանցի, 1912, էջ 117-123:

կոնտամինացիոն հեքիաթի մաս²¹, հանդիպում է Վասպուրականի բանահյուսության մեջ:

«Քերբնական կամ կախարդված ամուսին (կին), կամ այլ ազգական» հեքիաթախմբին պատկանող ATU 430 տիպին են համապատասխանում Կարսի «Փիր Ահմադի հեքյաթը»²² և «Ձուկ տղեն»²³ հեքիաթները: Հայ ժողովրդական որոշ հրաշապատում հեքիաթներում անժառանգ ամուսինները երեխաներ են ունենում ոչ բնական ճանապարհով. գավակը դուրս է գալիս գանգից, մոթալի տիկից, դդումից և այլն, կամ էլ երեխայի են փոխակերպվում իշուկը, հորթը, ոգնին, ձուկը, օձը և այլն: Վերոնշյալ հեքիաթներից առաջինում. «Մե օրմ էլ հալիվորն ու պառավը նստած կեղնին տունը, կը տեսնին, օր դուռի դաֆեն (գանգ) գլորելով կուքա կընկնի տուն: Մարդ ու կընիկ կվախենան, թե.– Էս վո՞վ գլորեց բերեց ըստեղ:

Էսոնք օր կը խառնվին իրար, դուռի դաֆեն կըսէ.– Մի՛ք վախենա, ես ձեր տղեն եմ, դուք՝ իմ հերն ու մերը: Ընձեն ձեզի զիան (վնաս) չի գա»²⁴:

Մուշի հեքիաթներից մեկում. «... օրմ հովիվ գացել էր դուրս կելներ, տեսավ օր հուրնե խոխրմ (գանգ) փրցավ, Էկավ: ... Հովիվն է, հորեց, թողեց քանի մը ոտք գնաց, դառցավ ետևանց իշքեց, օր ձենըմ կիգա. «Աբո՛ (հայրիկ), հո՞ւր կերթաս զիս կթողիս հողա, կերթա՛ս, զիս լե տար քու հետ»²⁵: Վանի տարբերակում. «Մարթ կիրիշկի որ էտ կոտ (գանգ) կլորվելեն կկանչի, կասի.– Հայրի՛կ, կայնի չում ես գյնմ խասնիմ քյե»²⁶:

Նշված երեք հեքիաթում էլ գանգից դուրս եկած տղան պահանջում է, որ հայրը իր համար գնա արքայադստեր ձեռքը խնդրի: Թագավորը երեք պայման է դնում: Պայմանները հաջողությամբ կատարելուց հետո տղան ստանում է արքայադստեր հետ ամուսնանալու իրավունքը: Սակայն խախտվում է հմայական արգելքը, այսինքն՝ չի պահպանվում գանգից դուրս գալու գաղտնիքը, և արքայադուստրը գնում է թագավորի փեսային գտնելու: Այրարատի հեքիաթներից մեկում²⁷ անժառանգ ամուսիններին դերվիշը խնձոր է տալիս, որ կինն ու ամուսինը ուտեն, սակայն կինը տանը չի լինում, խնձորն ամբողջությամբ ուտում է ամուսինը, հղիանում է, բերում մի մոթալի տիկ և անմիջապես մեռնում: Այն-

²¹ «Ոսկի կանթեղ».- ԱՀ, գիրք XXII, էջ 123- 151:

²² «Փիր Ահմադի հեքյաթը» Կարս, № 4(4), էջ 51-57:

²³ «Ձուկ տղեն» Կարս, № 15(15), էջ 118-120:

²⁴ «Փիր Ահմադի հեքյաթը» Կարս, № 4(4), էջ 51:

²⁵ «Թագավորի խոխ փեսեն».- ՀԺՀ, հ. XIII, Տուրուբերան (Մուշ-Տարոն), կազմող՝ **Ղազիյան Ա.**, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, № 10, էջ 102-103:

²⁶ «Կոտի խեքաթ».- ՀԺՀ, հ. XV, Վան-Վասպուրական, կազմող՝ **Սվազյան Վ.**, Եր., «Ամրոց» հրատ., 1998, № 47, էջ 330:

²⁷ «Մոթալի հեքիաթը».- ՀԺՀ, հ. II, Այրարատ, կազմող՝ **Նազիկյան Ա.**, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, № 12, էջ 189-198:

պես, ինչպես մյուս նմանատիպ հեքիաթներում գերբնական ծնունդով տղան խնդրում է արքայադստեր ձեռքը և կատարում թագավորի պայմանները: Այս հեքիաթում թագավորի փեսայի՝ աղավնու փոխակերպվելու և հեռանալու պատճառը տիկը վառելն էր:

Կարսի մյուս՝ «Ձուկ տղեն» հեքիաթում ձուկն է փոխակերպվում տղայի և դառնում թագավորի փեսա: «Օրերից մեկ օր հարսի մերը գալիս է փեսի տուն: Գիշերը որ փեսին տեսնում է, քիչ է մնում նրա գեղեցկության վրա գծվի: Առավոտը ախշկանը ասում է. – Ա՛յ բալա, դու հետևի տես՝ նա իրեն ձկան կաշին որտեղ է պահում, վերցրու քցի կրակը, վառի, որ նա էլ ցերեկները ձուկ չդառնա, մընա քու մոտը»²⁸: Այս հեքիաթում նույնպես երիտասարդը փոխակերպվում է աղավնու և հեռանում՝ իրեն փնտրելու և գտնելու խնդիր դնելով արքայադստեր առաջ: Եթե Կարսի տարբերակում ձուկը անժառանգ ամուսինների տանն է հայտնվում, ապա Այրարատի հեքիաթներից մեկում²⁹ կինը հղիանում է և ձուկ ծննդաբերում: Երկու տարբերակում էլ, ձկան կաշին վառելով, խախտվում է կախարդանքը. ձուկ-տղան դառնում է աղավնի և հեռանում:

Այս տիպի հեքիաթներ կան նաև Արցախում³⁰, Լոռիում³¹ և այլ տարածաշրջաններում: Լոռու «Մոզին» հեքիաթը, ընդհանրություններով հանդերձ, ունի որոշ տարբերություններ թե՛ Կարսի, թե՛ այլ տարածաշրջանների հեքիաթների հետ: Նախ՝ անժառանգ ամուսինների մոտ հորթ է ծնվում դերվիշի պայմանը խախտելու պատճառով (պառավը խնձորներն ուտում է առաջին օրը, ոչ թե երեք օր անց), ապա, եթե Կարսում և մյուս տարածաշրջաններում աղավնու փոխակերպված տղային աղջիկը գտնում է, և վերադառնում են, ապա այս հեքիաթում աղջիկը գտնում է ամուսին-աղավնուն, ինքն էլ դառնում է աղավնի, ընկնում են մի անտակ ծովի մեջ և շարունակում այնտեղ ապրել, այսինքն՝ նրանք շարունակում են ապրել անդրաշխարհում:

Ըստ հեքիաթների միջազգային դասակարգման՝ «Գերբնական օգնականներ» հեքիաթախմբի ATU 550 տիպը համապատասխանում է Կարսի «Շլատ թագավորի հեքիաթը (Հազարան բիլբուլ)» և «Թագավորի պզտի տղեն» հեքիաթներին: Առաջին հեքիաթում անեծքի հետևանքով չորացած այգին կանաչեցնելու համար թագավորի երեք որդիները ճանապարհվում են Հազարան բլբուլը բերելու, երկրորդ հեքիաթում հիվանդ թագավորին բուժելու նպատակով երեք որդիներն ուղևորվում են Հազարան բլբուլը, անմահական ջուրը և անմահական

²⁸ «Ձուկ տղեն».- Կարս, № 15(15), էջ 119:

²⁹ «Ձուկ տղան».- ՀԺՀ, հ. I, № 31, էջ 407-414:

³⁰ «Կոզնի տղան».- ՀԺՀ, հ. V, № 5, էջ 49-52: «Թաքավերին կնեցը վրեր էշի քոռակ ա պերնը».- ՀԺՀ, հ. VI, Արցախ-Ուտիք, կազմողներ՝ Նազինյան Ա., Սվազյան Վ., Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, № 17, էջ 85-86: «Ամիր աղեն».- ՀԺՀ, հ. VI, № 95, էջ 351-366:

³¹ «Մոզին».- ՀԺՀ, հ. VIII, № 1, էջ 14-17:

խնձորը բերելու: Առաջին հեքիաթը նաև համադրվում է ATU 551 տիպին. եղբայրները շեղվում են իրենց նպատակից, միայն կրտսեր եղբայրն է գնում Հազարան բլրույր բերելու: Եղբայրները հանում են կրտսեր եղբոր աչքերը³², վերցնում Հազարան բլրույրը և տանում ներկայացնում թագավորին: Խաբեությունը բացահայտվում է Հազարան բլրույրի տիրոջ միջոցով. «Մե երկու օր հետև (խաբեա եղբայրներին դիմակազերծելուց հետո - Մ.Խ.) Աջիլի թագավորը կրտսենի, օր գալող չկա, կը հայտնե թագավորին. – Իրեք օր քեզի ժամանակ, յա՛ բիլբույր բերող տղին դրկե գա, յա՛ թե չէ, սաղ քաղաքը սրի կը քաշեմ»³³: Եթե այս հեքիաթում խաբեությունը բացահայտվում է Հազարան բլրույրի տիրոջ օգնությամբ, ապա երկրորդ հեքիաթում հերոսին օգնում է աղվեսը³⁴, որը, հետագայում պարզվում է՝ այն երախտագետ հանգուցյալի փոխակերպված հոգին է. «Ես էն հալիվոր մարդու հոգին եմ, օր դու քու վերջին կապեկները տվիր տերտերին, թաղեցիր: Դու էն լավությունը երիր, ես էլ էս լավությունը երի քեզի: Հըմի գնա, էլ հեչ մե փորձանքի չես հանդպի: Կերթաս ճամբեն մե քասիբ չոբանմ կը հանդիպի, քովդ եղած փարեն կուտաս եղոր, շորերդ եղոր հետ կը փոխես, կերթաս ձեր քաղաքը: Հորդ քովը կեղնիս նոքար, հարի օսկե քաղաքի թագավորի աղջիկը գա»³⁵:

Այս տիպի հեքիաթները, կարելի է ասել, կենցաղավարել են Հայաստանի գրեթե բոլոր պատմաազգագրական տարածաշրջաններում: Այս՝ «Գերբնական օգնականներ» խմբի ATU 513A³⁶, ATU 516C³⁷, ATU 518³⁸, ATU 530³⁹, ATU 530A⁴⁰, ATU 531(AaTh 513C)⁴¹, ATU 531 II⁴², ATU 532⁴³, ATU 533⁴⁴, ATU 554⁴⁵ տիպերին

³² Թե ինչպես է վերականգնվում կուրացած հերոսի տեսողությունը, տե՛ս **Խեմյան Մ.**,

Խորհրդատու և նվիրատու թոշունը Կարսի հրաշապատում հեքիաթներում, //ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XIX, Գյումրի, 2016, էջ 187:

³³ «Ժլատ թագավորի հեքաթը (Հազարան բիլբույր)».- Կարս, № 1(1), էջ 38:

³⁴ Խորհրդատու աղվեսի մասին տե՛ս Խեմյան Մ., Նվիրատու և խորհրդատու կենդանիները հայ ժողովրդական հեքիաթներում, // Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ № 1 Եր., 2018, էջ 454-455:

³⁵ «Թագավորի պզտի տղեն». Կարս, № 2(2), էջ 42:

³⁶ «Ասլանզադեի հեքիաթը». Կարս, № 11(11), էջ 96-102:

³⁷ «Ասլանզադեի հեքիաթը». Կարս, № 11(11), էջ 96-102: «Փոնցիանոս թաքավորի տղեն».- Կարս, № 32(32), էջ 202-214: «Ալեքսիանոս և Լուսիլիկ».- Կարս, № 33(33), էջ 214-225:

³⁸ «Շահենշահ և Սալվի». Կարս, № 31(31), էջ 193-202:

³⁹ «Շահ Յուսուֆի հեքաթը». Կարս, № 7(7), էջ 66-73: «Մինամ թագավորի հեքաթը». Կարս, № 9(9), էջ 79-87:

⁴⁰ «Շահ Յուսուֆի հեքաթը». Կարս, № 7(7), էջ 66-73:

⁴¹ «Չոփճու տղի հեքաթը». Կարս, № 5(5), էջ 57-63: «Ավջի Ահմադի տղան». Կարս, № 6(6), էջ 63-66:

⁴² «Թաքավորի տղեն ու ստրուկը». Կարս, № 45(45), էջ 270-271:

⁴³ «Շահ Յուսուֆի հեքաթը». Կարս, № 7(7), էջ 66-73:

⁴⁴ «Թագավորի աղջկա հեքիաթը». Կարս, № 26(26), էջ 165-171:

⁴⁵ «Ձանսրզը». Կարս, № 8(8), էջ 73-79: «Շիրակ թագավորի հեքիաթը». Կարս, № 17(17), էջ 124-133:

համապատասխանում են Կարսի բազմաթիվ հեքիաթներ, որոնք զուգակցվում են նաև որոշ իրապատում հեքիաթների տիպերի հետ:

«Կախարդական (հրաշագործ) առարկաներ» հեքիաթախմբի ATU 560 «Կախարդական մատանի» տիպին է համապատասխանում «Չոփչին» հեքիաթը⁴⁶: Հերոսը չարաճճի երեխաներից գնում է կատվի, շան ձագ և օձի ճուտ, որպեսզի փրկի նրանց ձեռքից: Օձերի թագավորը նրան, ի նշան երախտագիտության, տալիս է մի կախարդական մատանի, որը կարող էր կատարել նրա բոլոր ցանկությունները: Մատանին գողանում են, և այն հերոսին են կարողանում վերադարձնել երախտագետ շունը և կատուն: Արցախի տարբերակում աղքատ տղան իր մոտ եղած հացն է տալիս՝ կենդանիներին փրկելու համար⁴⁷: Բուլանրիսի «Բաց սև քարս» հեքիաթում⁴⁸ մատանու փոխարեն անգին քար է, և հերոսը գողացված քարը վերադարձնում է շան և մկան օգնությամբ:

Եզրահանգում. Այսպիսով՝ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կարսի հրաշապատում հեքիաթները բազմազան են: Դրանց մեծ մասը համապատասխանում է հեքիաթների տիպերի միջազգային դասակարգմանը: Հեքիաթների որոշ տիպեր հանդիպում են նաև Հայաստանի տարբեր տարածաշրջաններում (Այրարատ, Արցախ, Լոռի, Վասպուրական, Շիրակ Բուլանրիս, Տավուշ), որոնք, ընդհանրություններից գատ, ունեն նաև տարբերություններ՝ պայմանավորված տարածաշրջանի կենցաղի, սովորույթների, հավատալիքների տեղական դրսևորումներով, ինչպես նաև բանահյուսական նյութի փոխներթափանցումներով: Երկարաշունչ հեքիաթներում հիմնական տիպին զուգակցվում են երկու և ավելի տիպեր ու բազմաթիվ մոտիվներ: Որոշ հրաշապատում հեքիաթներում հիմնական տիպը երբեմն զուգակցվում է իրապատում և կենդանական հեքիաթների տիպերին: Հայ ժողովրդական հեքիաթների ամբողջության մեջ Կարսի հրաշապատում հեքիաթները զգալի թիվ են կազմում և կարող են հեքիաթագետների ուսումնասիրության համար ծառայել որպես հարուստ նյութ:

ВОЛШЕБНЫЕ СКАЗКИ КАРСА КАК СОСТАВНАЯ ЧАСТЬ АРМЯНСКИХ НАРОДНЫХ ВОЛШЕБНЫХ СКАЗОК

Хемчян М. Г.

Ключевые слова: *фольклор, регион Карса, волшебная сказка, тип сказки, вариант, сюжет, мотив, герой, магическое табу, контаминация.*

⁴⁶ «Չոփչին».- Կարս, № 20(20), էջ 141-145:

⁴⁷ «Լիւվոթունը մըննա ինգիլ չի».- ՀԺՀ, հ. VII, Արցախ-Սյունիք, կազմողներ՝ **Նազինյան Ա., Առաքելյան Մ.**, Եր., ՀՍՍՀ ԳՍ հրատ., 1979 № 23, էջ 93-98

⁴⁸ «Բաց սև քարս».- Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Բ, Մոսկուա-Վաղարշապատ, Լազարեան ձեմարանի արևելեան լեզուաց հրատ., 1901, հ. Բ, № 36, էջ 395-400:

В армянском эпическом фольклоре особое место занимают сказки с собственными разновидностями: фантастические или волшебные, реалистические или бытовые и животные. Эти сказки бытовали во всех историко-этнографических регионах Армении (Айратат, Ширак, Арцах, Утык, Сюник, Гугарк, Алашкерт, Маназкерт, Багеш, Муш, Харк, Тарон, Сасун, Ван-Васпуракан, Мокс, Карс, Гарадах, Тавуш и т.д.), сочиняясь и передаваясь устным путем из поколения в поколение, изменились и приобрели вариантность. В печатном наследии армянских народных сказок большую часть составляют волшебные сказки, включая также 45 сказок историко-этнографического региона Карс, напечатанных в сборнике «Карс. Фольклорная традиция армян». В исследовании представлены сопоставления типов, сюжетов и мотивов волшебных сказок Карса с волшебными сказками различных регионов Армении по международной классификации типов, сюжетов и мотивов сказок Аарне-Томпсон-Утера.

KARS FAIRY TALES OF MAGIC AS A PART OF THE ARMENIAN FOLK FAIRY TALES OF MAGIC

Khemchyan M. H.

Key words: *folklore, Kars region, fairy tale, tale type, version, plot, motive, character, magic taboo, contamination*

In the Armenian epic folklore the fairy tales have their special place with their own versions: fairy or magical, realistic or household and animalistic. These fairy tales existed in all historical and ethnographic regions of Armenia (Ayrarat, Shirak, Artsakh, Utyk, Syunik, Gugark, Alashkert, Manazkert, Baghesh, Mush, Hark, Taron, Sasun, Van-Vaspurakan, Moks, Kars, Gharadagh, Tavush etc.), being composed and transmitted orally from generation to generation, changing and acquiring variation. The fairy tales constitute a large part in the printed heritage of the Armenian folk tales, including 45 of them from the historical-ethnographic region of Kars, published in the collection “Kars: the Folklore Traditions of Armenians”. The paper highlights the comparison of the types, plots and motives of Kars’ fairy tales of various regions of Armenia according to the international classification of the types, plots and motives suggested by Aarne-Thompson-Uther.

References

1. Azgagrakan handes, girik XXII. Tiflis, tp. or. Aghaneantsi, 1912 (**In Armenian**).
2. Eminian azgagrakan zhoghovadsu, h. B, Moskwa-Vagharshapat, Lazaryan jemarani arevelian lezvats hrat. 1901 (**In Armenian**).
3. Hay azgagrutyun ev banahiusutyun, Ijevan (Dzoropor), kazmogh **Khemchyan E.**, Yerevan, HH GAA “Gitutian” hrat., 2008 (**In Armenian**).

4. Hay zhoghovrdakan hekiatner, h. I, Ayrarat, kazmogh **Nazinyan A.**, Yerevan, HSSR GA hrat., 1959 (In Armenian).
5. Hay zhoghovrdakan hekiatner, h. II, Ayrarat, kazmogh **Nazinyan A.**, Yerevan, HSSR GA hrat., 1959 (In Armenian).
6. Hay zhoghovrdakan hekiatner, h. III, Ayrarat, kazmogh **Nazinyan A.**, Yerevan, HSSR GA hrat., 1962 (In Armenian).
7. Hay zhoghovrdakan hekiatner, h.IV, Shirak, kazmogh, **Mkrtchyan M.**, Yerevan, HSSR GA hrat., 1962 (In Armenian).
8. Hay zhoghovrdakan hekiatner, h.V, Artsakh, kazmoghner **Nazinyan A., Grigoryan M.**, Yerevan, HSSH GA hrat., 1966 (In Armenian).
9. Hay zhoghovrdakan hekiatner, h.VI, Artsakh-Utik, kazmoghner **Nazinyan A., Svazlyan V.**, Yerevan, HSSH GA hrat., 1973 (In Armenian).
10. Hay zhoghovrdakan hekiatner, h.VII, Artsakh-Syunik, kazmoghner **Nazinyan A., Araqelyan M.**, Yerevan, HSSH GA hrat., 1979 (In Armenian).
11. Hay zhoghovrdakan hekiatner, h.VIII, Gugark, kazmoghner **Nazinyan A., Grigoryan R.**, Yerevan, HSSH GA hrat., 1977 (In Armenian).
12. Hay zhoghovrdakan hekiatner, h. XIII, Turuberan (Mush-Taron), kazmog **Ghaziyani A.**, Yerevan, HSSH GA hrat., 1985 (In Armenian).
13. Hay zhoghovrdakan hekiatner, h. XV, Van-Vasporakan, kazmog **Svazlyan V.**, Yerevan, “Amrots” hrat., 1998 (In Armenian).
14. Kars. Hayoc banahiusakan mshakuyt, Kazmoghner: **Harutyunyan S.B., Vardanyan S.A. Khemchyan E.H., Ghrejyan L.Kh., Khemchyan M.H.** Yerevan, HH GAA “Gitutian” hrat., 2013 (In Armenian).
15. **Khemchyan M.** Gerbnakan hatkutyunnerov ojtvars gordsogh andzik vorpes hekiati herosi ognakan, “Voske divan” hekiatagitakan handes, prak 5, Yerevan, 2015 (In Armenian).
16. **Khemchyan M.** Khorhrdatu ev nviratu trchune Karsi hrashapatum hekiatnerum, Gitakan ashkhatutiunner, h. XIX, Gyumri, 2016 (In Armenian).
17. **Khemchyan M.** Nviratu ev khorhrdatu kendaninere hay zhoghovrdakan hekiatnerum, Hnagitutian ev azgagrutian instituti ashkhatutiunner № 1, Yerevan, 2018 (In Armenian).
18. **Propp V.** Morfologia skazki, Moskva, Izdatelstvo “Nauka”, 1969 (In Russian).

Ընդունվել է՝ 22. 01. 2020

Գրախոսվել է՝ 25. 02. 2020

Հանձնվել է տպ.՝ 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարինե ԽԵՄՉՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության
և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող,
Էլ. ասցե՝ mkhemchyan@yandex.com

ՀՏԴ՝ 398.

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ՏԵՔՍՏԻ
ԱՐԱՐՄԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ
Հասմիկ Մատիկյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ ավանդական, գրական, կառուցվածք, գույերգ, բանասաց, բանաձև, հեղինակ, լեզվաոճական, կատարողական, օրորոց:

Աշխատանքում կարևորվում է բանահյուսական օրորոցային տեքստի արարման և կատարման միջավայրերի դերը. առանձնանշվել են այն էական գործոնները, որոնք նպաստում են տեքստի «արտադրմանը»: Բանահյուսական օրորոցային տեքստի լեզվաոճական նկարագիրը դիտարկվել է հեղինակային օրորոցայինների համապատկերում:

Լախարան. Օրորոցայինը՝ որպես ոչ նյութական մշակութային ժառանգության կարևոր բաղադրիչ, դրսևորվում է թե՛ բանահյուսական, թե՛ գրական միջավայրերում: Մեզ հուզող խնդրի տեսանկյունից արժևորվում են բանահյուսական այն օրորները, որոնք արարման ու կատարման հատուկ միջավայր են պահանջում և հեղինակային օրորների համադրմամբ հատուկ մեկնություն են ստանում: Օրորոցային տեքստի լեզվա-բանագիտական քննությունը ինչ-որ առումով պահանջում է միջլեզվական և միջմշակութային ուսումնասիրություն: Կանդիդատանք թե՛ հայ, թե՛ անգլալեզու օրորոցային տեքստերին:

Օրորոցայինը՝ իբրև բանահյուսական տեքստի առանձին տեսակ, ունի ուրույն հատկանիշներ, որոնցով էլ առանձնանում է մի կողմից՝ բանահյուսական այլ ժանրերից, մյուս կողմից՝ հեղինակային օրորոցայիններից: Օրորը, լինելով ժողովրդական բանավոր ստեղծագործության տեսակ, հատկորոշվում է *անանունությամբ* և չի կրում հեղինակային անհատականության դրոշմ: Այն

անհեղինակ տեքստ է, և միշտ չէ, որ բանահյուսական և հեղինակային տեքստերի սահմանագիծը հեշտ է որոշել:

Հեղինակային որոշ օրորոցայիններ կարող են համարվել ժողովրդական բանավոր ստեղծագործություններ: Մրա վառ ապացույցն են Ուիսթեն Օդենի (*Քնի՛ր, հոգյա՛կս*), Ուիլյամ Բլեյքի (*Օրո՛ր*) և Ռաֆայել Պատկանյանի (*Արի՛, իմ սոխակ*) օրորոցայինները: Հիշյալ շարքը կարելի է շարունակաբար հավելել:

Հեղինակային տեքստի ստեղծման հոգեբանությունն այլ է. այն ունի ընդգծված սուբյեկտիվ՝ ենթակայական բնույթ: Բանահյուսական ու հեղինակային տեքստերի լեզվական որոշակի նմանության հետևանքով երբեմն խախտվում է տեքստերի տարրորոշման, հստակեցման տիրույթը: Հեղինակային օրորոցայինը մեծավ մասամբ ունի բանահյուսական ակունք և բնորոշվում է ժողովրդական մտածողության լեզվատարրերով: Չի բացառվում, որ ժողովրդից լսած օրորոցրական մշակման ենթարկվի որևէ հեղինակի կողմից: Խոսու՛ն օրինակ է Ռ. Պատկանյանի *Արի՛, իմ սոխակ* օրորոցային երգատեքստը.

Թո՛ղ դու, տատրակի՛կ, քու ձագն ու բունը,

Վու՛վուու՛վ տրդիս բե՛ր անուշ քունը.

Բայց նա լալիս է. տատրակի՛կ, մի՛ գալ,

Իմ որդին չուզե սրգավոր դառնալ:

Տեքստ ներմուծված *վու՛վուու՛վ* բառամիավորը, ըստ էության, բացատրվում է մանկանց լեզվամտածողությամբ:

Ըստ Ս. Մալխասյանի բացատրական բառարանի¹ *վու՛-վու՛*-ն աղավնիների ձայնն է: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում² էլ նշվում է դրան համարժեք *դունդունալ* (բրբ) բառամիավորը, որը տարբեր նրբիմաստներով է ներկայացվում. 1. *դու-դու ձայն հանել (աղավնիների մասին)*, 2. *փխբ. Քաղցր ձայնով սիրային խոսքեր ասել միմյանց*, 3. *Թոթովել (նոր լեզու ելած երեխայի մասին)*: BBC-ի լրատվական էջում՝ *The Universal Language of Lullabies* խորագրով հաղորդման մեջ, ուշագրավ են ներկայացվում օրորոցայինի առանձնահատուկ դերը, համամարդկային նշանակությունը և համընդհանուր լեզուն: Քոլվին Տրևարվինը (Էդինբուրգի համալսարանի մանկական հոգեբան) առանձնացնում է մոր և երեխայի շփումը, կարևորում է թե՛ մոր երգելու շնորհը, թե՛ երեխայի արձագանքը մոր երգելուն՝ որպես աղավնախոսք³:

¹ **Մալխասյան Ս.**, Հայերեն բառարան, ՀՄՍՌ Պետհրատ, Եր., հ. 4, 1945, էջ 353:

² Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայկ. ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., հ. 3, Եր., 1974, էջ 430:

³ **Nina Perry.** The Universal Language of Lullabies, // BBC World Service, BBC News Magazine Online, January 20, 2013, <http://www.bbc.co.uk/news/magazine-21035103> (accessed March 3, 2020).

Այս բառը գործածվում է նաև գեղարվեստական տեքստերում. *Իսկ կողքի սենյակում՝ ննջարանում, զարթնել է 4 ամսական երեխասս և խոսում է... Բնջ է խոսում, ինչ լեզվով... Հաստատ կարելի է ասել, որ դա աղավնիների բարբառն է,-դու ~դու ~ ... և պետք է ենթադրել, որ նա պատմում է իր հարուստ կենսագրությունը...*

Մանկախաղաց տեքստերում նույնպես ուրույն տեղ ունի *դո ~ լ-դո ~ լ-ն*, ահավասիկ՝ Ղ. Աղայանի *Գյուլնազ տատի թոռները* մանկական պատմվածքը.

Տատը վեր առավ փոքրիկներից մեկին, դրավ ծնկան վրա, երկու ձեռքից բռնեց և վեր ու վայր թափ տալով երգեց.

*Ղու՛-դու՛-դու՛, ա-դու՛-դու՛,
Նա՛կ, նա՛կ, ա-դու-նա՛կ, թըռռ...⁴*

Թե՛ բանահյուսական, թե՛ հեղինակային օրորոցայինների կայուն տարրերը անփոփոխ են մնում և բարդացնում են տեքստային պատկանելության տարբերակումը: Օրինակ՝ վերցնենք Ուիլյամ Քոքս Բենեթի հեղինակային օրորը և բանահյուսական հենքով գրված համանման այլ նմուշ՝

<i>Sleep then, sleep! My heart's delight!</i>	<i>Դե՛, քնի՛ր, քնի՛ր, իմ սրտի՛ բերկրանք,</i>
<i>Sleep! and through some darksome night</i>	<i>Դու՛ հանգի՛ ստ քնի՛ր,</i>
<i>Round thy bed, God's angels bright.</i>	<i>Այս մթամած գիշերում</i>
<i>Lullaby!</i>	<i>Աստծո լուսավոր հրեշտակներն են</i>
<i>Guard thee till I come with light!</i>	<i>Քո քունը հսկում:</i>
<i>Lullaby!</i>	<i>Օրո՛ ~ր, օրո՛ ~ր....</i>

(թարգմ.՝ հոդվածագրի-Հ. Մ.):

<i>Sleep child mine, there's nothing here,</i>	<i>Քնի՛ր, քնի՛ր, իմ բալի՛կ,</i>
<i>While in slumber at my breast,</i>	<i>Միայն դու ես քո քնի մեջ իմ գրկում</i>
<i>Angels smiling, have no fear,</i>	<i>Անհո՛ գ եղի՛ր, փոքրի՛կս,</i>
<i>Holy angels guard your rest.</i>	<i>Պահապան հրեշտակներն են քեզ հսկում...</i>

(թարգմ.՝ հոդվածագրի-Հ. Մ.)

Հայկական նյութի շրջանակներում ևս ունենք համարժեքներ: Ռ. Պատկանյանի *Քու՛ն եղի՛ր, պալա՛ս⁵* օրորը ենթադրաբար բանահյուսահենք տեքստ է. օրորի որոշ տողեր առկա են նաև Նոր Նախիջևանի բանահյուսական օրորոցայինում.

<i>Դուն ալ քու՛ն եղի՛ր, ինձի ալ քո՛ւն տո՛ւր,</i>	<i>Քուն եղի՛ր, բալա՛ս,</i>
<i>Սո՛ւրբ Աստուածամայր, պալիկիս քո՛ւն տուր,</i>	<i>Ինձի յա քուն դուր.</i>

⁴ Աղայան Ղ., Երկեր, «Սովետական գրող» հրատ., Եր., 1979, էջ 630:

⁵ «Շիրակ» երգարան, կազմող՝ Կ. Հաննէսեան, Պէյրութ, 2010, էջ 416:

*Իմ պալա՛ւ, օրոր, օրոր ու նան,
Իմ անուշիկիս քունը կը տանի*

*Բոյ քաշե, մեճցիր,
Մեզի խնդացուր։⁶*

(Ռ. Պատկանյանի օրորը):

Օրորոցայինը՝ որպես տարողունակ և կենսունակ ժանր, երբեմն համադրում է տարբեր ժանրեր, որոնց ձուլումից առաջանում են տարբերակներ: Օրորասացը երգի կատարման ընթացքում հաճախ օգտագործում է մեծերից լսած օրորներ:

Մեջբերենք բանասաց Ա. Մաթևոսյանի խոսքերը⁷. «Օրորելիս ինչ հիշում էի, երգում էի, հաճախ Շիրազ էի երգում, հաճախ էլ Իսահակյան ու Թումանյան. նրանք ժողովրդի ծոցից ելած են...»:

Ջեք Ջայփսն առաջարկում է մի շարք չափանիշներ⁸, որոնց օգնությամբ կարելի է տարրորոշել բանահյուսական և հեղինակային տեքստերը: Կառանձնացնենք այդ ցանկում նշված մի քանի չափանիշներ, որոնք սերտորեն առընչվում են մեր ուսումնասիրությանը և ասացող-ունկնդիր փոխհարաբերությանը.

- Բանավոր (oral) - գրավոր (written)
- Առդեմ հաղորդակցում (face to face communication) - անուղղակի հաղորդակցում (indirect communication)
- Անցողիկ (ephemeral) - հարատև (permanent)
- Վերստեղծում (recreation) - ստեղծագործություն (creation)
- Տարբերակ (variation) - կրկնություն (revision)

Բանավոր օրորոցային տեքստն ունի *անցողիկ* բնույթ, ժամանակի հոլովություն այն *վերստեղծվում* է՝ դառնալով *տարբերակային*: Հեղինակային ստեղծագործությունը կոնկրետ հեղինակի մտաշխարհի ծիրում ծնված երկ է, որը ներկայացնում է ժողովրդի հոգեբանությունն ու մտածողությունը. հեղինակ-ժողովուրդ կապը անխախտ է թե՛ բանահյուսական, թե՛ հեղինակային օրորոցային երգերի ստեղծման, կատարման ժամանակ:

Ուշագրավ է հեքիաթագետ Ա. Ջիվանյանի դիտարկումը հեքիաթի տեքստի անանունության վերաբերյալ⁹, որը աներկբա աղերս ունի օրորոցայինի հետ.

⁶ Փորքշեյան Խ., Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը. նյութեր և ուսումնասիրություններ, հ. 2, Եր., Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ., 1971, էջ 155:

⁷ Արեգնազան Մխիթարյան. բանասաց: Ծնվել է 1952թ. Լենինականում: Ունի բարձրագույն կրթություն: Նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասեն գավառից (գրառող՝ Հ. Մատիկյան):

⁸ Zipes J., Breaking the magic spell: Radical theories of folk and fairy tales. Austin: University of Texas Press, 1979, p. 11.

⁹ Ջիվանյան Ա., Հրաշապատում հեքիաթի պոետիկան. Համեմատությունը հեքիաթի համատեքստում (հայկական հեքիաթի նյութի հիման վրա), սեղմագիր դրկտորական ատենախոսության, Եր., 2008:

«Բանահյուսական հեքիաթը բանավոր պատում է: Պատումի բանավոր կերպը հեքիաթի համար նույնն է, ինչ գրավոր գոյակերպը գրական երկի համար: Ժողովրդական հեքիաթի բանավոր լինելու հանգամանքը ենթադրում է նաև, որ վերջինս չի կարող ունենալ ճշգրիտ կրկնություն, եթե հեքիաթն ընդունենք որպես տեքստի, ունկնդրի և տվյալ վայրի ու ժամանակի ամբողջություն: Հեքիաթի տեքստն անանուն է, և հեղինակայնություն հասկացությունը կիրառելի չէ նրա նկատմամբ: Հեքիաթի անանունությունը պայմանավորված է ժանրի ժամանակագրությամբ ու ծագումով: Արքիտեքստը պետք է անհեղինակ լինի: Այս տեսանկյունից կարելի է անգամ ընդունել, որ հեքիաթների տպագրությունը՝ տեքստերին կից ասացողների անուններով, մասնակիորեն զրկում է ժողովրդական հեքիաթն անհեղինակ կարգավիճակից»¹⁰:

Բանահյուսական օրորոցային տեքստի արարման միջավայրը ծնում է նոր տարբերակներ: Բանասացի ներաշխարհով, տրամադրությամբ, օրվա աշխատանքով պայմանավորված՝ կարող է փոխվել բանահյուսական տեքստի լեզուն, հետևաբար առաջանում են բանահյուսական նմուշի տարբերակներ:

Ինչպես նշում է Ս. Հարությունյանը, բանահյուսության գոյության կերպը *տարբերակայնությունն* է: Բանահյուսական բնագրերը գոյություն ունեն միայն տարբերակների տեսքով¹¹:

Ս. Հարությունյանի առաջադրած տարբերակայնության առաջացման նոր պատճառները կիրառելի են նաև օրորոցային տեքստերի նորանոր տարբերակների առաջացման համար: Բանագետն առաջադրում է բանահյուսական ստեղծագործությունների գոյացման հետևյալ չորս գործոնները՝

- Անհատի կամ միևնույն էթնիկական հանրության ստեղծագործական-հոգեբանական խառնվածքի ազդեցություն (հոգեբանական գործոն),
- տեղավայրի կամ էթնիկաաշխարհագրական միջավայրի ազդեցություն (տարածության գործոն),
- հասարակության տարբեր դասերի և սոցիալական խմբերի ազդեցություն (սոցիալական գործոն),
- ժամանակաշրջանների ազդեցությունը (պատմական գործոն)¹²:

Որոշ իրավիճակներ թելադրում են տարբերակներ: Տարբերակների առաջացումը կարող է առաջ բերել նաև թեմատիկ փոփոխություններ և այլն:

Բանահյուսական տեքստը ներկայացվում է որպես անփոփոխ և փոփոխվող տարրերի համադրություն: Օրորոցային տեքստում գրեթե անփոփոխ են մնում կրկնատողերը, օրոր հիշեցնող բառային միավորները:

¹⁰ Նույնը:

¹¹ **Հարությունյան Ս.**, Բանագիտական ակնարկներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 18:

¹² Նույն տեղում, էջ 18-20:

Տարբերակներում կարող է տեղի ունենալ բառանյութի մասնակի փոփոխություն՝ մեծ մասամբ ասացողի բնակության վայրով և ժամանակով պայմանավորված: Այս պարագայում ակնհայտ է բարբառային շերտերի առատությունը: Ներկայանալի օրինակներ են հետևյալ օրոքները՝ վերցված Ռ. Գրիգորյանի «Հայ ժողովրդական օրոքոցային և մանկական երգեր» գրքից.

- | | |
|--|--|
| 1. Քուն դնեմ քնի, բալա ջան, | 2. Օրո՛ր ընեմ, օրրիս դուն, |
| Ծածկեմ քրտնի, բալա ջան, | Ծածկեմ օր քրտնիս դուն, |
| Օրոք ծածկանդ եղ քաշիմ, | Էկածը վարդեվառ է, |
| Վարդի պես փովիս, բալա ջան: ¹³ | Վարդերուն հետ բացվիս դուն: ¹⁴ |

Նշված օրոքի հաջորդ քառյակներում երեխան է գովերգվում գեղարվեստական ու պատկերավոր նկարագրությամբ.

*Օրոցք դնեմ, օրրեմ քեզ,
Մնուշ լեզվով գովեմ քեզ...
Աղջիկը ծո՛ւլ-ծո՛ւլ աչեր է...*

Նկատելի է, որ առաջին քառատողը նույն բովանդակությամբ պահպանվել է: Այս առումով հիշատակելի է նաև հետևյալ օրոքը, որը, ինչպես նշված է Ռ. Գրիգորյանի գրքի ծանոթագրության բաժնում, առաջացել է տարբեր խաղիկներից.

<i>Նանիկ ասեմ՝ քնես դու,</i>	<i>Միրոս խոցով յարա յա,</i>
<i>Ծածկեմ քրտնես դու,</i>	<i>Թաքուն չի, աշկարա յա,</i>
<i>Ծածկածն եղ գցեմ,</i>	<i>Դեղ կանեմ, դարման կանեմ,</i>
<i>Վարդի նման փովես դու:</i>	<i>Դյառ էն յարեն յարա յա:</i>

Բանահյուսական մտածողությունը՝ որպես հավաքական հիշողության բացառիկ դրսևորում, արտահայտվում է տարբեր ժանրերում: Շատ օրոքներում կան սիրո, պանդխտության, աշխատանքային երգերին բնորոշ տարրեր:

Մեջբերենք մի օրոք.	
<i>Օրո՛ր, օրո՛ր, քուն ունիս,</i>	<i>Բա՛ց դռնակդ ուր մտնեմ ներս,</i>
<i>Պեշիկթաշը տուն ունիս. Է՛, Է՛, Է՛....</i>	<i>Մտնեմ վարդ ու նուռ քաղեմ,</i>
<i>Բաղչայիդ բախչպանն եմ ես,</i>	<i>Արմադան դրկեմ դարիբիս....¹⁵</i>

Անտունին թեև գերազանցապես պանդուխտի երգ է, սակայն երբեմն պարունակում է օրոքին բնորոշ լեզվատարրեր: Սրվանձտյանցը տարբերում է անտունին ուրիշ երգերից: «Ակնա ժող. երգեր» վերնագրի տակ նա դնում է 1) հարսանիքի երգեր, որոնց մեջ և մի երգ հայրենի չափով. 2) օրոքներ, որոնց մեջ

¹³ Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրոքոցային և մանկական երգեր, Եր., Հայկ.ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 63:

¹⁴ Նույն տեղում, էջ 76:

¹⁵ Գրիգորյան Ռ., նշված աշխ., էջ 61:

դարձյալ մի երգ հայրենի չափով...և այլն¹⁶: Այս ամենը ևս վկայում է օրորի արարման միջավայրի մասին:

Ժողովրդական երգի էական հատկություններից մեկն այն է, որ միևնույն երգը, անփոփոխ կամ փոքր փոփոխությամբ, իր բովանդակության պատճառով երգվում է ն՛ իբրև սիրու երգ, ն՛ իբրև վիճակի երգ, ն՛ իբրև լավ կամ հարսանեկան երգ, *պանդխտի կամ օրորոցի երգ* /ընդգծումը մերն է-Չ.Մ/, զի այս երգերն ունեն հաճախ մի ընդհանուր գիծ, այն է՝ գովքը: Ի՞նչ է օրորոցի երգը, եթե ոչ երեխայի գովք...

Վ. Գույումճյանը բերում է սիրո անտունի և օրորոցի երգ օրինակները՝ փորձելով ցույց տալ, որ նույն անտունին անփոփոխ կամ փոքր փոփոխությամբ երգվում է ն՛ իբրև սիրու երգ, ն՛ մահերգ կամ *օրոր*:

Սիրո անտունի

Օրորոցի երգ

Ծոցիկդ առաւօտ նման,

Ծոցիկդ առաւօտու նման,

Առաւօտուն շաղերին ի վրան,

Առտւան շաղիկն ի վրան, է, է, է՛...

Երթամ բարկ արև լընիմ,

Շաղվոր ետ ու ետ գնա,

Գամ ցաթեմ, շաղերդ ժողվեմ...

Ուր (որ) ցաթե արևն ի վրան, է՛, է՛:

Ըստ Էդ. Աղայանի «Հայերեն բացատրական բառարան»-ի՝ է-ն երկար բացականչություն է եղել օրորի ամեն տան վերջում, որտեղից էլ ունենք *է անել* (*նանիկ անել, քնել*), *է ասել* (*օրոր ասել*) ժողովրդական արտահայտությունները¹⁷:

Է՛- ն արտահայտում է նաև թեթև անցած տառապանք, ընդհանրապես վիշտ, նեղություն, ամսոսանք /նախադասության վերջում/ թեթև բողոք, մասամբ ցանկություն¹⁸:

Հիշյալ օրորը Ռ. Գրիգորյանի հիշատակած ժողովածուում նշվել է հավելված բաժնում, քանի որ, ինչպես հեղինակն է նշում, դրանք բնույթով սիրային երգեր են: Բերված հատվածում զեղչվել է է՛, է՛ է՛-ն.

Ծոցիկդ առավոտ նման,

Առտվան շաղիկն է վրան,

Ու ցաթե արևն ի վրան¹⁹:

Ի դեպ, BBC- ի *Օրորների համընդհանուր լեզուն* հաղորդման մեջ ընդգծվում է՝ շատ օրորներ, անկախ բառերի իմաստից, ունեն հանգստաբեր գործառույթ: Կան նաև օրորներ, որոնք կարծես ողբերգ լինեն: 1920-ական թվականներին իս-

¹⁶ Աբեղյան Մ. Երկեր, հ. Բ, Հայկ.ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1967, էջ 228:

¹⁷ Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ.1, Եր., «Հայաստան» հրատ., 1976, էջ 387:

¹⁸ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հ. 2, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 62:

¹⁹ Գրիգորյան Ռ., նշված աշխ., էջ 333:

պանացի նշանավոր բանաստեղծ Ֆեդերիկո Գարսիա Լորկան, որ ուսումնասիրել էր իսպանական օրորները, նշում էր օրորոցայինների պոետիկ բնույթը և տխրության խորքը: Բանաստեղծը մատնանշում էր, որ օրորի առանցքային գործառույթը մոր անհանգստությունը, հուզող հարցերը բարձրաձայնելն է՝ եղանակավորելը (vocalize), որը, ըստ էության, լավագույն թերապիա է մոր համար²⁰:

Բացի այս խնդրից, կարևոր է նաև բանահյուսական նյութի տեղայնացումը, որը ենթադրաբար բանահյուսական օրորոցային երգի արարման պայմաններից մեկն է: Այն կարևոր է առաջին հերթին նրանով, որ միանշանակ հանդես է գալիս որպես օրորոցայինի միջավայր-համատեքստ: Տեքստի թե՛ իմաստային, թե՛ լեզվաոճական բովանդակությունը անխուսափելիորեն պայմանավորված է հենց այդ միջավայրով: Օրորոցային տեքստում անգամ այլաբերության (trope) բառային ձևավորումը և կարգավիճակը կախված են օրորի կատարման միջավայրից, որի անմիջական ցուցիչը հենց տեղայնացումն է, որն իր հերթին առաջ է բերում բանահյուսական տեքստի տարբերակներ.

- որտե՞ղ է տեղի ունենում օրորոցային տեքստի արտաբերումը /երեխան օրորոցի մեջ, մոր կամ բնության գրկում/: Հաճախ էլ օրորոցային տեքստի հասցեատերը ոչ թե մանուկ ունկնդիրն է, այլ մեծահասակը:

Բանասաց Շուշի Թումանյանը մեզ հետ ունեցած մասնավոր զրույցում նշեց. «Քանի որ օրորոցայինը նպատակային երգատեսակ է, այսինքն՝ քնեցնելու նպատակով է երգվում, անհրաժեշտ է *քնի միջավայր*: Ես դա պատկերացնում եմ խաղաղ, լուռ, անաղմուկ մի վայր՝ լինի տանը, թե բնության գրկում: Քունը առանցքային դեր ունի օրգանիզմի դիմադրողականության և ընդհանրապես առողջության պահպանման համար: Դրա համար խստագույնս հետևում եմ քնի առողջ միջավայրին» /ընդգծումը մերն է –Չ.Մ./²¹: Բանասացներից մեկն էլ նշում էր. «Օրորոցայինը հոգեկան հանգիստ *միջավայր* է պահանջում: Էն հոգեկան հանգստությունը, որն ունենք օրոր կատարելիս հանգստացնում է թե՛ երեխային, թե՛ քնեցնողին: Բնականաբար կա տարբերություն. օրորոցային երգել հանդիսատեսի՞ համար, թե՞ երեխայի: Որովհետև հանդիսատեսի համար ինչքան ուզում է լավ կատարես, էդ ջերմությունը կպակասի, էդ անմիջականությունը, էդ, էդ... թելերը: Կարող է շատ լավ ներկայացնենք երգը, բայց ինչ-որ բան կպա-

²⁰ **Nina Perry** “The Universal Language of Lullabies, // BBC World Service, BBC News Magazine Online, January 20, 2013, <http://www.bbc.co.uk/news/magazine-21035103> (accessed March 3, 2020).

²¹ **Շուշի Թումանյան**. Բանասաց: Մնվել է 1988թ. Լոռու մարզի Շնող գյուղում: Ունի բարձրագույն կրթություն: Նախնիները /մորական կողմը/գաղթել են Մուշ-Բայազետից, իսկ հորական կողմը Կողբ գյուղից է եղել:

կասի, էն հիմնական, էն կապողը, մազանոթները...»²²:

Այս առիթով ոչ պակաս կարևոր է մշակութային տեղայնացումը. ո՞ր մշակույթում է ստեղծվում տեքստը, այլ լեզվամշակույթ ներթափանցելու ժամանակ հնչյախի՞ փոխակերպումների է ենթարկվում: Ակներն է, որ օրորոցային տեքստի արարման համար համապատասխան միջավայրի գործոնը խիստ կարևոր է: Միջավայրն ու ժամանակն են հաճախ ծնում տեքստ:

Մեր կատարած բանահավաքչական աշխատանքների ժամանակ օրորասացները երբեմն չէին հիշում օրորոցային երգի անգամ պատառիկ. մի մասը պատճառաբանում էր, որ երեխաները արդեն մեծացել են, իսկ մյուս մասը նշում էր, որ երեխային քնեցնելու ժամը չէ, և դժվարանում են երգը հիշել: Ավելին, գյուղական ընտանիքներում երիտասարդ մայրերը ամաչում էին տան ավագ անդամների մոտ երգ ասելուց /անշուշտ, ավանդապահության սովորույթով պայմանավորված/: Բանասացներից շատերի փոխանցմամբ՝ հայոց մեջ՝ գերդաստանային ընտանիքներում, հարսները սկեսուրների կամ սկեսրայրների ներկայությամբ երեխային չեն գուրգուրել, օրորոցային չեն երգել: Բանասացներից մեկի պատմելով՝ նախկինում գյուղական վայրերում աշխատող շատ մայրեր գրեթե ժամանակ չեն ունեցել օրոր երգելու, անգամ երեխային քնեցնելու համար նախատեսված համապատասխան տեղ չի եղել. «Մեծերը պատմել են ինձ, որ Սովետի ժամանակ կթվորուհիները իրենց երեխեքին կքնցնեին «կարմիր անկյուն» կոչված տեղում, որը համեմատաբար հարգի անկյուն էր. գոմի մեջ կտրած տարածք էր՝ նախատեսված կթվորուհիների հանգստի համար... Ով որ երեխին նայող չուներ, հետը կբերեր ու էդ անկյունում կքնցներ...»²³:

Մեր ուսումնաքննությունը ցույց է տալիս, որ բանահյուսական և հեղինակային օրորները միահյուսվում են պատմական կերպարներին անդրադառնալիս, և ըստ էության մեկ ընդհանուր միջավայր է նրանց միավորում:

Ուշագրավ օրինակ է *Օրոր, օրոր, բալա՛ ջան* երգային տեքստը՝ վերցված Բալուի (և տարածաշրջանի) երաժշտական-ազգագրական հավաքածուից.

Դա շապիկն է այն քաջ մարդուն, բալա՛ ջան,

Որ քեզի հայր էր կոչում, օրոր, օրոր, բալա՛ ջան:

Առաւօտեան ժամը եօթին, բալա՛ ջան,

Պատերազմում հայրդ սպանուեց, օրոր, օրոր, բալա՛ ջան:

Նա գոհ գնաց վատի սրին, բալա՛ ջան,

²² **Գեղամ Մանուկյան**՝ բանասաց: Ծնվել է 1965 թ. Շիրակի մարզի Գոգհովիտ գյուղում (այժմ՝ Մարապատ համայնք): Ունի բարձրագույն կրթություն: Ուսանողական տարիներին երգել է Հայրիկ Մուրադյանի «Զարթոնք» ազգագրական խմբում և՛ որպես մենակատար, և՛ որպես խմբային կատարող:

²³ **Խանում Միքայելյան**՝ բանասաց: Ծնվել է 1932 թ. Շիրակի մարզի Մեծ Սեպասար գյուղում: Նախնիները գաղթել են Ալաշկերտից:

Դու հայրագուրկ՝ որք մնացիր, օրօր, օրօր, բալա՛ ջան:

Դե՛հ, մեծացիր, շուտ բոյ քաշիր, բալա՛ ջան,

Վատի արին ծծել սորվիր, օրօր, օրօր, բալա՛ ջան:

Նշված օրորի նկարագիրն է տրվում հիշատակված ժողովածուում.

«Ազատագրուած անկախ Հայաստանի մը երագներով օրօրուող հայու հոգիին մէջ սնուող եւ վրիժառական զգացումներով տոգորուած օրօր մըն է այս, ի շարս այդ օրերուն ստեղծուած նոյնանման օրօրոցայիններուն: Ազատ հայրենիքի տեսիլքով մկրտուած այս օրօրները յեղափոխաշունչ պատգամներ էին, որոնք ծագում կառնէին մի շարք յանդուգն հեղինակներու, օրինակ՝ Գամար Քաթիպայի, Մկրտիչ Պէշիկթաշլեանի, Միքայէլ Նալբանդեանցի գրչին տակ»²⁴:

Համանման օրինակ է Բաֆֆու *Ջէյթունցի հայ տիկնոջ օրորոցի երգը*.

Նանի՛կ արա, սիրուն որդեակ,

Օրօրոցդ մօր ձեռքով՝

Դու նանիկ, նանի՛կ, նանի՛կ,

Մեղմիկ, հանդարտ կը շարժես,

Նանի՛կ արա, շուտ մեծացիր,

Քո մեռած հօր յիշատակը

Քեզ մատաղ է իմ ջանիկ:

Քեզ երգելով կը պատմես...

Նանի՛կ արա, աչքի՛ լոյս,

Նանի՛կ, որ շուտ մեծանաս,

Քո անտերունչ քաջ ցեղին

Հօրդ փոխան տիրանաս²⁵:

Վերը բերված նմուշը պատմական իրողություն հաղորդող օրոր է՝ ցանկության բանաձևային արտահայտությամբ: Ավելին, *սիրուն որդեակ, աչքի լոյս* դիմելաձևով է ձևավորվում օրորի ստեղծման և կատարման միջավայրը:

Ուշագրավ է այն, որ կան թե՛ բանահյուսական և թե՛ հեղինակային օրորներ, որոնք արարվում և կատարվում են բոլոր ժամանակների մէջ: Ահավասիկ՝ Հովհ. Թումանյանի *Օրորքը /1882/* բանաստեղծությունը, որը հեղինակը գրել է պատանի հասակում.

Քնե՛, քնե՛, իմ որդի,

Որ քո թշվառ հայ ազգի

Աչքերդ խուփ, չբանաս,

Դառն ցավերը չտեսնաս...

Թումանյանը, համազգաց լինելով մոր ապրումներին, ինքն է օրոր երգում, որը, կարծում ենք, առավելապես պայմանավորված է սահմանային իրավիճակով և ներընտանեկան մշակույթով: Ինչ խոսք, ժողովրդական լեզվամտածողությունը Թումանյանի մէջ ձևավորվել է դեռ մանկուց: Այս են վկայում Ն. Թումանյանի հետևյալ տողերը. «ժողովրդի խոսքն ու գրույցը՝ համեմած առակներով և

²⁴ Ալահայտոյեան Պ., Բալուի (և տարածաշրջանի) երաժշտական-ազգագրական հավաքածոյ, երգասաց Մարօ Նալպանտեան, «Դրագարկ» հրատարակչութիւն, Գալիֆորնիա, 2009, էջ 388:

²⁵ Բաֆֆի (Յ. Մելիք – Յակոբեան), Փունջ, 1 հատոր, Բանաստեղծութիւններ, Թիֆլիս, Հ. Էնֆիա-ձեանց և ընկ. տպարան, 1874, էջ 139-141:

ժողովրդական դարձվածքներով ու ոճերով, հարստացրել են նրա երևակայությունն ու լեզուն. դա է եղել նրա առաջին դպրոցը: Եվ այդ է պատճառը, որ հետագայում բանաստեղծը այնքան կարևորություն է տալիս ժողովրդական բանահյուսությանը... Նա սիրել է սարերում և ձորերում կամ գյուղի օդաներում զրույցի նստել գյուղի մեծերի հետ ու լսել նրանց...»²⁶:

Պատմական ժամանակն ու միջավայրը թելադրում են հեղինակի ասելիքը, և Թումանյանը *Հոգեհանգիստ /1915/* բանաստեղծությամբ կարծես հավերժական օրոր, մեծ քնի օրոր է ասում ննջող հոգիներին.

- Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ...

Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կմնա...

Բանահյուսական օրորոցայինը *կոլեկտիվ՝ համահեղինակային տեքստ է*: Տեղին է միջաբերել Ս. Պալասանյանի՝ բանավոր տեքստի առանձնահատկությանն առնչվող մեկնությունը. «Բանավոր գրականությունը՝ իբրև բնածին պտուղ ժողովրդական վառ երևակայության, հակառակ է բոլորովին գրավոր գրականության, որ կանոնավոր մտքի արդյունքներ է պահանջում: Այս գրականությունը «ազգային» ասվելու արժանի է, որովհետև նրա ստեղծողը մի քանի անձինք չեն, ինչպես որ պատահում է գրավոր գրականության մեջ, այլ ամբողջ ժողովուրդը, որ իր բանաստեղծական զրույցների մեջ կատարելապես նկարագրում է պատկերը»²⁷:

Այս առնչությամբ ընդգծենք Կ. Յունգի հավաքական անգիտակցականի հայեցակերպը. «Հավաքական անգիտակցականը մտաշար է, որը ժառանգվում է և առկա է բոլոր մշակույթներում: Մտքի գիտակցական շերտը ներառում է մարդու արթմնի վիճակը, իսկ անգիտակցականը մտքի, զգացմունքների, փորձի և ինֆորմացիայի պահուստն է»²⁸:

Ըստ էության, օրորոցայինը, լինելով յուրաքանչյուր լեզվամշակույթի կենսական բաղադրիչ, հավաքական անգիտակցականի արգասիք է:

Օրորոցայինը *կատարողական տեքստ է*: Կատարողականությունը, լինելով բանահյուսության գեղարվեստական հաղորդակցման ձև, հատկորոշվում է տեքստային, ոճական կամ համատեքստային չափորոշիչներով: Բանագետ Գերի Էլն Ֆայնը ընդգծում է, որ մանուկ հասցեատերը պահպանողական վերաբերմունք է ցուցաբերում ավանդված տեքստի նկատմամբ, սակայն կատարման ընթացքում երբեմն ստեղծագործական նորամուծություններ է անում: Այլ կերպ՝ տեքստը կայուն է, անփոփոխ, մինչդեռ համատեքստը փոփոխական է, և կա-

²⁶ Թումանյան Ն., Թումանյանի մանկությունը, «Մովետական գրող» հրատ, Եր., 1983, էջ 28:

²⁷ Պալասանյան Ս., Բանավոր գրականություն. Պատմություն հայոց գրականության, հ. 1, Թիֆլիս, 1865, էջ 41:

²⁸ Sherman J. Storytelling: An Encyclopedia of Mythology and Folklore, London, Routledge, 2015, p. 95.

տարողականությունն իր հերթին բերում է ստեղծագործական և ավանդական տարրերի թափանցում դեպի տեքստ²⁹: Մեզ հուզող խնդրի տեսանկյունից միջաբերենք Ռ. Բոմենի առաջադրած չափանիշներից մի քանիսը, որոնք կարևոր նախապայման են կատարողականության համար.

- հատուկ կոդավորում (special codes),
- պատկերավոր լեզու (figurative language),
- հատուկ արտալեզվական գծեր (special paralinguistic features),
- հատուկ բանաձևեր (special formulas),
- ավանդականության անդրադարձ (appeal to tradition):

Վերը բերված բոլոր չափանիշները գործում են նաև բանահյուսական օրորոցային տեքստի կատարման ժամանակ: Օրորասացը՝ որպես տեքստի հիմնական «արտադրող», կատարում է վերոնշյալ պայմանները.

- կոդավորում է իր խոսքը, ընտրում է իր հոգեվիճակին համապատասխան տեքստ կամ վերստեղծում է նորը,
- լեզուն պատկերավոր դարձնելու համար համեմում է խոսքը տարատեսակ բառային միավորներով, անգամ ամենապարզունակ բառերով փորձում է գովերգել երեխային ու նրան շրջապատող աշխարհը,
- դիմում է արտալեզվական հատուկ միջոցների կիրառմանը՝ օրորում է, աչքերն է փակում, որ երեխան նույնը նմանակի,
- հատուկ օրոր հիշեցնող բանաձև է օգտագործում խոսքում (*նանի, նանի, բայ, բայ*),

- անդրադառնում է ավանդականությանը, այսինքն՝ յուրաքանչյուր կատարող օրորասաց հետևում է ավանդությանը: Ավանդականին անդրադարձը մի կողմից ենթադրում է հին արժեհամակարգի ուսումնասիրում, պահպանում, մյուս կողմից՝ բանահյուսական ավանդական օրորոցային տեքստի միջոցով նորի ստեղծում: Կատարողական տեքստը կապողակ է օրորոցային տեքստ ասացողի և ունկնդրի միջև: Այս համատեքստում բանահյուսական օրորոցայինը կարող ենք համարել նաև կատարողակենտրոն տեքստի լավագույն դրսևորում:

Վ. Գոլովինն ընդգծում է հեղինակային և բանահյուսական օրորոցային տեքստերի առանձնահատկությունները՝ կարևորելով վերջինիս *կատարողականության* գործոնը: Ըստ հեղինակի՝ ավանդական օրորոցայինը, լինելով սովորութամշակութային կենցաղի դրսևորում, հատկորոշվում է՝ 1. կատարողական իրավիճակով (երգել-օրորել), 2. կատարողական յուրահատկությամբ (շեշտադրումը, ձայնաստիճանը), 3. գործառութա-պոետական հատկանիշներով: Հեղինակային օրորոցայինը, ի տարբերություն բանահյուսականի, նախևառաջ

²⁹ **Tucker E.** Children's Folklore: A Handbook. London: Greenwood Publishing Group, 2008, p. 4.

տեքստ է՝ պոեզիայի ստեղծում և գեղագիտական գործառույթ ունեցող տեքստ³⁰:

Օրորոցային երգի կատարումը ուղեկցվում է որոշակի շարժումներով, օրորելով: Հայոց մեջ երբեմն օրորոցային երգերը կապում են երեխային օրորելու հետ: Ըստ էության օրորելը դառնում է միջոց բազմաթիվ տեքստեր երգելու և այդ պահին ստեղծելու համար: Բերենք բանասաց Արեգնազան Մխիթարյանի խոսքերը. «Հիմնականում երեխայիս *օրորելու հետ* ես երգել եմ ժողովրդական, ազգագրական, երբեմն նաև գուսանական երգեր, մանիներ՝ «Ելնեմ սարը, բռնեմ բոլորի պարը», «Համբարձման անուշ գիշեր», «Ես լսեցի մի անուշ ձայն» և այլն: Մեկ այլ բանասաց՝ Կառոլինա Թադևոսյանը³¹ նշում է. «Ես օրորոցային կամ նանիկ չեմ երգել, իմ երեխաները խելոք են եղել, *չեմ օրորել ու չեմ երգել*»:

Անգլիական լեզվական իրականությունում ևս նկատելի է օրորոցային երգը օրորելով երգելու իրողությունը: Ուշագրավ են այն օրորոցայինները, որոնք տեղ են գտել *Rock-A-Bye* անվամբ մի շարք ժողովածուներում: *Rock* բառն ունի օրորել, օրորելով քնեցնել նշանակությունը:

Քիչ բացատրություններով՝ օրորոցայինը սեռային առնչությամբ *կանացի տեքստ* (female text) է: Օրորոցային տեքստը կին ասացողների մենաշնորհն է, թեև բացառիկ դեպքերում, իրադրությունից ելնելով, կարող է «պահանջել» այլ ասացող:

Բացառիկ հեղինակային օրորոցային է անգլիացի կին գրող Ք. Ռոզեթիի օրորը.

Lullaby, oh, lullaby,

Օ՛, օրո՛ր, օրո՛ր,

Flowers are closed and lambs are sleeping;

Ծաղիկները փակվել են, գառնուկները՝
քնել,

Lullaby, oh, lullaby,

Օ՛, օրո՛ր, օրո՛ր,

Stars are up, the moon is peeping;

Աստղերը երկնքում են, լուսինը հսկում է,

Lullaby, oh, lullaby.

Օ՛, օրո՛ր, օրո՛ր...

(*թարգմ. հողվածագրի՝ Հ. Մ.*):

Հեղինակը օրորի տեքստում ընդգրկում է բնության կարևոր բաղադրիչներ՝ *ծաղիկ, գառնուկ, աստղ, լուսին*: Հաջորդ տողերում անգլիացի բանաստեղծուհին շեշտում է հարազատության գաղափարը՝ պարբերաբար նշելով իմ (my) դերանունը, երեխային մաղթում է քնքուշ, անդորրաբեր քուն, գունեղ, նկարագեղ երագներ.

³⁰ **Лоитер С.** Поэтика детского стиха в ее отношении к детскому фольклору. Петрозаводск: Изд-во ПетрГУ, 2005, стр 31.

³¹ **Կառոլինա Թադևոսյան**՝ բանասաց: Ծնվել է 1929թ. Ախուրյանի շրջանի Շիրակ գյուղում: Ունի յոթնամյա կրթություն (գրառող՝ Հ. Մատիկյան):

You are my one, and I have not another;	Քեզնից բացի՝ ոչ մեկին չունեմ
Sleep soft, my darling, my trouble and treasure;	Քնի՛ր հանգիստ, հոգյա՛կս,
Sleep warm and soft in the arms of your mother,	Ահ ու դողս, գանձս,
Dreaming of pretty things, dreaming of pleasure. ³²	Քնի՛ր տաքուկ և փափուկ մորդ գրկում, Երագիր միայն գունեղ երագով... (<i>Թարգմ. հոդվածագրի՝ Հ. Մ.</i>):

Եզրահանգում. Ամփոփելով նշենք, որ բանահյուսական օրորոցային տեքստն ունի խոր արմատներ և պահանջում է լեզվա-բանագիտական նոր մեկնություններ: Բանահյուսական օրորոցային տեքստի ուսումնաքննությունը երբեք չի կարելի համարել ավարտված. այն բանավոր ավանդվող, արարվող և կատարվող տեքստ է, միջավայրից սերող տեքստ: Արտատեքստային միջավայրն իր հերթին նպաստում է օրորոցային տեքստի արարմանը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ բանահյուսական և հեղինակային օրորոցայինները երբեմն մերձենում են՝ պայմանավորված պատմական միջավայրով և ժամանակով:

СРЕДА СОЗДАНИЯ ТЕКСТА ФОЛЬКЛОРНОЙ КОЛЫБЕЛЬНОЙ

Матикян А. Г.

Ключевые слова: *традиционный, литературный, структура, хвала, нарратор, формула, автор, лингвостилистический, перформатив, колыбель.*

Текст фольклорной колыбельной песни имеет глубокие корни и требует новых языково-фольклористических толкований. Исследование текста фольклорной колыбельной песни нельзя считать исчерпанным: это устно передаваемый, создаваемый и исполняемый текст. Авторский колыбельный текст в основе фольклорный. Экстралингвистическая среда также способствует созданию текста колыбельной. Исследование показывает, что иногда традиционные и литературные колыбельные, обусловленные историческим контекстом и временем, имеют общие черты.

³² Rossetti Ch. University of California Press, England, 1963.

THE CREATIVE MILIEU OF THE TRADITIONAL LULLABY

Matikyan H. H

Key words: *traditional, literary, structure, praise, narrator, formula, author, linguo-stylistic, performative, cradle.*

The traditional lullaby text has deep roots and needs new survey from linguo-folkloristic standpoint. The investigation of a folk lullaby text can't be considered as limited: it is a narration; it is being created and "produced" at any time. The extratextual environment also contributes to the creation of the lullaby text. The research shows that sometimes traditional and literary lullabies, conditioned by historical context and time, share common features.

References

1. **Aghayan Gh.** Yerker, Sovetakan Grogh hrat., Yerevan, 1979 **(In Armenian)**.
2. Shirak yergaran, kazmogh K. Hannesyan, Peyrut, 2010 **(In Armenian)**.
3. **Porqshayan Kh.** Nor Nakhijevani hay zhoghovrdakan banahyusutyuny, nyuter ev usumnasirutyunner, h.2. Yerevan, Haykakan SSH GA hratarakchutyun, 1971 **(In Armenian)**.
4. **Jivanyan A.** Hrashapatum heqiati poetikan. Hamematutyuny heqiati hamateqstum (haykakan heqiati nyuti himan vra), seghmagir doktorakan atenaxosutyun, Yerevan, 2008 **(In Armenian)**.
5. **Harutyunyan S.** Banagitakan aknarkner, Yerevan, HH GAA Gitutyun hrat., 2010 **(In Armenian)**.
6. **Grigoryan R.** Hay zhoghovrdakan ororocayin ev mankakan yerger, Yerevan, Haykakan SSH GA hrat., 1970 **(In Armenian)**.
7. **Abeghyan M.** Yerker B. Haykakan SSH GA hrat., Yerevan, 1967 **(In Armenian)**.
8. **Aghayan E.** Ardi hayereni bacatrakan bararan, h. 1, Yerevan, Hayastan hrat., 1976 **(In Armenian)**.
9. Zhamanakacic hayoc lezvi bacatrakan bararan, Hr. Acharyani anvan lezvi institute, h.2, Yerevan, Haykakan SSH Gitutyunneri Akademiayi hrat., 1972 **(In Armenian)**.
10. **Palasanyan S.** Banavor grakanutyun, Patmutyun hayoc grakanutyun, h. 1, Tiflis, 1865 **(In Armenian)**.
11. **Loyter S.** Poetika detskovo stikha v yiyo atnasheniya k detskymu falkloru. Petrazavodsk, Izd-vo PetrGU, 2005 **(In Armenian)**.
12. **Malkhasyan S.** Hayeren bararan, Haykakan SSR petakan hratatakchutyun, Yerevan, h. 4, 1945 **(In Armenian)**.

13. Zhamanakacic hayoc lezvi bacatrakan bararan, Hr. Acharyani anvan lezvi institut, Haykakan SSH Gitutyunneri Akademiayi hratarakchutyun, h. 3, Yerevan, 1974 **(In Armenian)**.
14. **Mahari G.** Yerkeri zhoghovacu, h. 2, Hayastan hratarakchutyun, Yerevan, 1967 **(In Armenian)**.
15. **Tumanyan N.** Tumanyani mankutyuny, Sovetakan Grogh hratarakchuthyun, Yerevan, 1983 **(In Armenian)**.

Ընդունվել է՝ 12. 03. 2020

Գրախոսվել է՝ 25. 04. 2020

Հանձնվել է տպ.՝ 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ՄՍՏԻԿՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի

գիտաշխատող, էլ. փոստ՝ hasvrej@mail.ru

ՀՏԴ՝ 338.1

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
XX ԴԱՐԱՎԵՐՁԻՆ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

Արտաշես Բոյաջյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Գայանե Ավետիսյան

Շիրակի պետական համալսարան

Բանալի բառեր՝ բուսաբուծություն, անասնապահություն, ցանքատարածություն, հողային ֆոնդ, գյուղացիական տնտեսություն, կոոպերացիա, հողակտոր, արտաավայր, վարելահող:

Հոդվածում սոցիալ-տնտեսական տեսանկյունից ներկայացվել են Շիրակի մարզի գյուղատնտեսության զարգացումը պայմանավորող հիմնական գործառույթները՝ սեփականաշնորհման, մակրոտնտեսական ցուցանիշների, նոր գյուղացիական տնտեսվարման (մենատնտեսություն, կոոպերացիայի, ֆերմերային տնտեսությունների ձևավորում) և երկրագործական մշակույթի փոփոխությունները:

Նախաբան. Հայտնի է, որ գյուղատնտեսությունը զարգանում է՝ հենվելով բնական ռեսուրսների, տեխնիկական, տնտեսական, պատմական և կազմակերպչական ոլորտների ձեռքբերումների վրա¹: Կլիմայական պայմանների առումով Շիրակի գյուղատնտեսական տարածքի մեծամասնությունը համարվում է ռիսկային, որտեղ արտադրության ճակատագիրը մեծ չափով կախված է տարվա եղանակային պայմաններից: Այս հանգամանքը պետք է անպայման հաշվի առնել արտադրության կազմակերպման, նրա մասնագիտական խնդիր-

¹ **Գրիգորյան Ա.**, Բնառեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումը որպես գյուղատնտեսության էկոլոգացման անհրաժեշտ գործոն (ՀՀ օրինակով), ԵՊՀ գիտական տեղեկագիր, 1, Եր., 2015, էջ 44:

ները լուծելու ժամանակ: Շուկայական տնտեսության պայմաններում գյուղատնտեսական նշանակության հողերը, արտադրական միջոցները դառնում են հիմնականում գյուղացիական տնային տնտեսությունների սեփականությունը:

Դրանով պայմանավորված՝ մարզի գյուղատնտեսական ռեսուրսների և արտադրության միջոցների արդյունավետ օգտագործմանն ուղղված պետության միջամտությունը սահմանափակվում է, արդյունքում գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները և ծրագրերի իրականացումն անցումային շրջանում մեծ բարդությունների առջև են կանգնում: Ներկայացվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության, այդ թվում Շիրակի գյուղատնտեսության ոլորտում տեղի ունեցան արմատական փոփոխություններ՝ պլանային սոցիալիստական տնտեսական համակարգից անցում կատարվեց կապիտալիստական շուկայական հարաբերությունների, ինչն էլ իր գործուն ազդեցությունն ունեցավ մարզի գյուղատնտեսության կառուցվածքի, բնակչության զբաղվածության և տեղաշարժերի վրա:

Հայաստանի Հանրապետության խորհրդային տարիների ագրարային հարցի հիմնական լուծումը եղան հողատերերի դասակարգի վերացումը և կոլեկտիվ ու պետական տնտեսությունների ստեղծումը: Այդ տարիներին Շիրակի գյուղատնտեսությունն ունեցավ բավականին լուրջ հաջողություններ: Սակայն մյուս կողմից էլ, 1960-ական թվականների քաղաքային բնակչության թվի շեշտակի աճը, հիմնականում գյուղական բնակչության հաշվին, լուրջ խնդիրներ ստեղծեց գյուղատնտեսության զարգացման համար: Ակտիվ ուրբանիզացիայի պայմաններում մարզի գյուղական բնակչության տեսակարար կշիռը նվազեց՝ 1980-ական թվականներին կայունանալով 24%-ի սահմաններում: Փոխվեց գյուղական բնակչության սոցիալ-մշակութային միջավայրը: Գյուղաբնակ երիտասարդության մեծ մասը սկսեց նախընտրել ոչ գյուղատնտեսական զբաղմունքը: Դրանով պայմանավորված՝ մարզի բազմաթիվ գյուղական բնակավայրերում շահագործվեցին փոքր արդյունաբերական ձեռնարկություններ: Խորհրդային իշխանությունը 1986-89թթ. փորձ արեց գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման օգնությամբ երկիրը դուրս բերել համընդհանուր ճգնաժամից: Սակայն կոոպերացիայի զարգացման փորձը տապալվեց, որովհետև հստակեցված չէին կոոպերացիայի գործունեության և ինքնակառավարման սկզբունքները: Կոոպերատիվները կառավարվում էին ոչ թե փայտերերի, այլ պետական մարմինների կողմից: 1989թթ. Հայկական ԽՍՀ սպառողական գյուղացիական

կոոպերատիվների շուրջ 1/3-ը լուծարվեց²: Գյուղատնտեսական կոոպերացիան իր զարգացումը չունեցավ անկախության տարիներին:

Ազգագրագետ Մ. Գաբրիելյանի կարծիքով, Հայաստանի Հանրապետությունում կոոպերացիայի ձախողումը պայմանավորվում էր հիմնականում սոցիալական և մշակութային գործոններով³: Մեր կողմից իրականացված փորձագիտական հարցումներով պարզել ենք, որ մարզի գյուղացիությունը չի ցանկանում ստեղծել գյուղացիական կոոպերատիվներ, որովհետև արտադրված գյուղմթերքի ինքնարժեքն ավելի թանկ է, քան շուկայում վաճառվող գյուղմթերքը⁴: Շիրակի մարզի գյուղական բնակչության մի մասը, հատկապես միջին և ավագ տարիքի գյուղացիները, գտնում են, որ գյուղացիական կոոպերատիվների ստեղծումը բացառապես պետության խնդիրն է:

Հիշատակենք, որ Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական կոոպերացումը հաջողություններ է ունեցել 1921-1925թթ., սակայն կոլեկտիվացումը, որի արդյունքում հողատեր գյուղացին դարձավ հողագուրկ, մեծ վնաս հասցրեց կոոպերացմանը: Հայաստանում սպառողական կոոպերացիաների հիմնական մասը, մինչև կոլեկտիվացումը, զբաղվել է արտադրված գյուղմթերքների վերավաճառքով: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 1927թ. ՀԽՍՀ 160 հազար գյուղացիական տնտեսությունների 38%-ն ընդգրկված էր գյուղատնտեսական կոոպերացիաներում⁵: 1920-ական թվականներին Շիրակի գյուղական բնակավայրերում տարածված երևույթ էր կաթի արտելների առկայությունը, ժողովրդական լեզվով ասած՝ «խաբը (փոխանակում)»: Այդ գործընթացին մասնակցում էին 20-30 տներով: Կաթի արտելի նպատակը եղել է ոչ թե առանձին անհատի հարստացումը, այլ ընդհանուրի օգուտը: Կաթի արտելները տարվա ընթացքում գործել են 120 օր: Սովորաբար կազմվում էին երկու արտել՝ «ոչխարի» և «կովի»: Գյուղացու համար «կաթի խաբի» առավելությունը այն էր, որ նրան հաջողվում էր կուտակված կաթից ստանալ կաթնամթերք՝ հիմնականում պանիր և կարագ, որի մի մասը վաճառում էր, իսկ մյուսը՝ պաշարում ձմռան համար: Կաթի փոխանակման աշխատանքին տղամարդիկ հիմնականում չէին մասնակցում:

² Աբրահամյան Մ., Գյուղացիական տնտեսությունների կառավարումը և կազմակերպումը, Եր., 2006թ., «Նաիրի» հրատ., էջ 131:

³ Գաբրիելյան Մ., Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման սոցիալական և մշակութային բաղադրիչները համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը, հողերի խոշորացման կոոպերացիայի հիմնախնդիրները, Եր., 2012թ., էջ 23:

⁴ Բոյաջյան Ա., Դաշտային ազգագրական նյութեր /այսուհետև՝ ԴԱՆ/, Գյուղատնտեսական փորձագիտական հարցումներ, տետր 1, Գյումրի, 2014:

⁵ Աբրահամյան Մ., Նույն տեղում, էջ 7:

Անկախության տարիներին «կաթի խաբր» մարզում վերականգնվեց և լայն տարածում ստացավ: Այժմ մեր հանրապետությունում գյուղացիական կոոպերատիվների թիվն անցնում է երեք հարյուրից, որից 22-ը Շիրակի մարզում են⁶: Փոքր հողատերերի աշխատանքային պատմական փորձը ցույց է տվել, որ կոոպերատիվների ստեղծումը միշտ էլ հանդիսացել է աղքատությունից դուրս գալու գլխավոր նախապայմաններից մեկը: Ի վերջո, Շիրակի ագրարային համակարգը վերջին հարյուր տարվա ընթացքում, հասարակարգի փոփոխությունով պայմանավորված, երեք անգամ ենթարկվել է արմատական փոփոխության (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Շիրակի ագրարային համակարգային փոփոխությունները XX - XXI դդ.

XIX դ. վերջ XXդ. սկիզբ	Խորհրդային տարիներ	XX դ. վերջ XXI դ. սկիզբ
<p>Կապիտալիզմի ներթափանցումը Ալեքսանդրապոլի գավառ, երկաթուղու կառուցումը, ապրանքաշրջանառության շեշտակի աճը հանգեցրին գյուղատնտեսության կառուցվածքի, արտադրության և բնակչության զբաղվածության քանակական ու որակական փոփոխության: Տեղի ունեցավ գյուղական բնակչության հոսք դեպի քաղաքային բնակավայրեր: Նկատվեց գյուղացիների հողագրկման ակտիվ գործընթաց: Ապրանքադրամական հարաբերությունների արմատավորումը, գյուղատնտեսության արտադրողականության բարձրացումը հանգեցրին նահապետական գերդաստանի քայքայմանը և բնակչության սոցիալական կազմի փոփոխությանը, ինչն էլ իր ազդեցությունը թողեց երկրագործական մշակույթի վրա:</p>	<p>Սոցիալիստական կարգերի հաստատում: Հողերի ազգայնացում: Հանրային գյուղացիական տնտեսությունների /կոլեկտիվ, պետական, անանապահական տոհմաբուծական ֆերմաների/ ստեղծում, օժանդակ գյուղացիական տնտեսությունների զարգացում: Գյուղատնտեսության հողակտորների խոշորացումը, մեքենայացումը հանգեցրին գյուղական բնակչության լայնածավալ արտագաղթին: Գյուղական մեծ ընտանիքից անցում կատարվեց միջինի: Գյուղական բնակավայրերից սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողների թվի շեշտակի աճ գրանցվեց 1960-ական թվականներից սկսած: Արմատապես փոփոխության ենթարկվեց գյուղական բնակչության սոցիալական կազմը:</p>	<p>Սոցիալիզմից անցում կապիտալիզմին: Կապիտալիստական արտադրահարաբերությունների վերականգնում: Գյուղատնտեսության ապապետականացում, մենատնտեսային գյուղացիական տնտեսությունների, ընկերակցական ձեռնարկությունների (ասոցիացիաների) ստեղծում: Սեփականաշնորհման արդյունքում ձևավորվեց հողատեր գյուղացիության շերտը: Վարելահողերը բաժանվեցին հազարավոր մանր հողակտորների: Լուծարվեցին խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները: Սեփականաշնորհման առաջին տարիներին գրանցվեց քաղաքային բնակչության հոսք դեպի գյուղեր: Շեշտակի ավելացան արտագնա աշխատանքի մեկնողները: Տեղի ունեցավ գյուղական բնակչության շերտավորում ունևոր, միջակ և չքավոր խավերի:</p>

6. <http://agroecoarm.com/wp-content/uploads/2016/07/> (20.12.2019):

Հայտնի է, որ տարածքային միավորների տնտեսական, այդ թվում գյուղատնտեսության զարգացման ներուժն առկա բնական և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման պարագայում, արդյունք (ավելացված արժեք) ստեղծելու հնարավորությունն է: Բնական ռեսուրսների ինտեգրված կառավարումը հատկապես արդյունավետ է գյուղական վայրերում, որտեղ դրանց օգտագործումը ուղղակիորեն կապված է բնակչության սոցիալական և տնտեսական բարեկեցության հետ:

Գյուղատնտեսության գլխավոր արտադրամիջոցը հողային ռեսուրսն է: Շիրակի մարզի հողային ֆոնդը կազմում է 268,1 հազ. հա, ընդ որում, գյուղատնտեսական նշանակություն ունի մոտ 168,8 հազ. հա-ը կամ 78,5%-ը (տե՛ս աղյուսակ 2), ինչը մեր հանրապետության մասշտաբով բավականին բարձր ցուցանիշ է: Սակայն, կարևորն այն է, որ գյուղատնտեսության սեփականաշնորհումով պայմանավորված՝ հողերի մասնատումը հանգեցրեց դրանց օգտագործման պայմանների վատթարացման: Այսպես, հողային ռեսուրսների ապահովվածության մակարդակով Շիրակը ՀՀ-ում երկրորդ մարզն է, սակայն մեկ շնչի հաշվով ստեղծված գյուղատնտեսական արտադրանքի արդյունքով իններորդն է (2014թ. դրությամբ այն կազմել է 323,2 հազ. դրամ)⁷:

1991թ.-ից ՀՀ-ում իրականացվեցին գյուղատնտեսական նշանակության հողերի համատարած սեփականաշնորհում և ագրարային հատվածի լիակատար ազատականացում, որը կատարվեց նախկին կոլտնտեսային և պետական գյուղացիական տնտեսությունների վերացման հիմքի վրա: Մարզում վարելահողերի սեփականաշնորհումը հիմնականում անցկացվեց 1991-1992թթ., իսկ գյուղատնտեսական ձեռնարկությունների սեփականաշնորհումը՝ 1996-2000թթ., որի արդյունքում գյուղացին տուժեց հատկապես գյուղարտադրանքի իրացման հարցում: Մասնավորապես, սեփականաշնորհված անասուններին կերով ապահովելու հնարավորության պակասի կամ բացակայության պատճառով տեղի ունեցավ անասունների զանգվածային սպանդ⁸:

Մարզի շուրջ 29 հազար գյուղացիական տնտեսություն հողի սեփականաշնորհման արդյունքում ստացավ միջին հաշվով 2,6 հա հողաբաժին: Հողը բաժանվեց ընտանիքի առկա անդամների թվով: Հողամասերի բաժանումը կատարվեց վիճակահանությամբ: Հողը գյուղացուն տրվեց չնչին գումարով⁹: Գյուղացուն թույլատրվեց հողի օտարում, վաճառք, ժառանգելու իրավունք, վարձա-

⁷ **Բաղդասարյան Ա.**, Արտադրական ռեսուրսների մարզային տեղաբաշխումն ու արդյունավետ օգտագործման հիմնահարցերը ՀՀ-ում, ատենախոսություն տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար, Եր. 2016թ., էջ 60:

⁸ **Բոյաջյան Ա.**, ԴԱՆ, Գյուղատնտեսական փորձագիտական հարցումներ, տետր 1, Գյումրի, 2014:

⁹ **Մանասերյան Ն.**, Ագրարային հարցը երեկ և այսօր, Եր., 2005թ., «Տնտեսագետ» հրատ., էջ 97-98:

կալության տալ: Հողը մի քանի տարի չմշակվելու դեպքում տեղական իշխանությանն իրավունք է վերապահված գյուղացուց այն հետ վերցնելու: Հաշվի առնելով հողերի բերրիության ցածր մակարդակը՝ պետք է միանշանակ ընդգծել, որ հողապահովվածության այս մակարդակը (գյուղական բնակչության 1 շնչի հաշվով միջինը բաժին է ընկնում գյուղատնտեսական նշանակության 2,1 հա և վարելահող՝ 0,8 հա կամ յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը՝ 2,6 հա հողակտոր) միանգամայն անբավարար է բնակչությանը պարենով ապահովելու համար:

Աղյուսակ 2

Շիրակի մարզի գյուղատնտեսական հողահանդակները

Տարեթիվ	Գյուղատնտեսական հողատեսք, հա						Վարելահողի մասնաբաժինը գյուղատնտեսական նշանակության հողերում %
	Գյուղատրև տեսական հողատեսք	Վարելահող	Բազմամյա տնկարկ	Կերային	Արոտ	Այլ հողեր	
1990թ.	223109	80573	738	44583	135322	7214	36,1
1995թ.	212675	84676	389	24044	134975	10024	39,8
2000թ.	165737	84737	202	10075	59478	11245	51,1
2005թ.	165737	84530	432	9353	60896	10526	51,0
2010թ.	229636	79822	456	18786	126993	9895	34,7
2015թ.	214548	78940	534	15653	114348	10228	36,8
2016թ.	214531	78678	535	15629	115057	10457	36,7
2017թ.	210934	78160	470	18845	112124	10483	37,1
2018թ.	210881	78151	627	10188	112080	10905	37,0

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են՝ 1. Բաղդասարյան Ա, Արտադրական ռեսուրսների մարզային տեղաբաշխումն ու արդյունավետ օգտագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում՝ Ատենախոսություն, Եր., 2016թ.: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, https://www.armstat.am/file/article/gyux_90_99_1.pdf, 2. Մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման, տրամադրման և վարձավճարների գանձման գործընթացի մասին, http://shirak.mtad.am/u/Orakarg_09_2017.pdf www.armstat.am/file/article/marz_99_17.pdf, (17.02.2020):

Ուսումնասիրվող ժամանակահատվածում գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի մակերեսը բազմիցս փոփոխության է ենթարկվել: Աղյուսակ 2-ից երևում է, որ 1995-2005թթ. գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի տարածքի էական փոփոխություն է գրանցվել: Դա բացատրվում է 1994թ., 1997թ., 2002թ. և 2003թ. ՀՀ կառավարության որոշումներով, որտեղ հողամասերի կադաստրային գնահատման չափորոշիչները ենթարկվել են փոփոխության: Բացի դրանից, Շիրակի մարզի առանձին համայնքներում սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերի, այդ թվում՝ նաև վարելահողերի, չափագրական լիարժեք ու արդյունավետ անհրաժեշտ աշխատանքները դեռևս ավարտված չեն: Վարելահողերի և խոտհարքների օգտագործման տրամադրման ցածր մակարդակը առանձին համայնքներում ունի նաև որոշակի օբյեկտիվ պատճառներ: Այդ հողամասերի զգալի մասը գտնվում է մեծ թեքությունների վրա, օգտագործման ընթացքում խիստ էրոզացվել է, և համապատասխան միջոցների բացակայությամբ պայմանավորված՝ կուլտուր-տեխնիկական, ագրոտեխնիկական և այլ գյուղատնտեսական միջոցառումներով հողատեսքերի որակական հատկանիշները հնարավոր չի եղել գնահատել¹⁰: Աղյուսակ 2-ից երևում է, որ ներկայացվող ժամանակահատվածում կտրուկ նվազել է արոտների հողատարածքը, թե ինչով է դա պայմանավորված, դժվար է ասել¹¹:

Աղյուսակ 3-ի թվային տվյալների վերլուծությունից պարզվում է, որ 1990-2019թթ. ընթացքում գյուղատնտեսական ընդհանուր ցանքատարածությունը պակասել է մոտ 30,2 հազ. հա կամ 37,4%-ով, իսկ վարսակի ցանքատարածությունն ավելացել է 3,2 անգամ, կարտոֆիլինը՝ 1,5 անգամ, տեխնիկականի ցանքատարածությունը պակասել է 2,4 անգամ:

Մտահոգիչ է այն փաստը, որ մարզում չօգտագործվող հողերի տեսակարար կշռի աճ է գրանցվում: 2006թ. այն կազմել է գյուղատնտեսական նշանակության հողերի 13,6%-ը, իսկ 2014թ. 66,4 հազ. հա վարելահողից չի մշակվել 13,4 հազ. հա կամ 20,2%-ը, ինչը բավականին բարձր ցուցանիշ է¹²: Չմշակված հողերի հիմնական մասը բաժին է ընկնում կերային մշակաբույսերին հատկացված հողերին, որոնք ներկայացվող ժամանակահատվածում նվազել են 4,1

¹⁰ Մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման և վարձավճարների գանձման գործընթացի մասին, http://shirak.mtad.am/u_09_2017.pdf (17.02.2020թ.):

¹¹ Ավետիսյան Գ., Շիրակի մարզի հողերի պահպանության և հողաբարելավման հիմնախնդիրները, // Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտական տեղեկագիր, պրակ Ա, Գյումրի, 2014թ., էջ 231:

¹² ՀՀ գյուղատնտեսությունը 1990-2019թթ., <https://www.armstat.am/>, (23.02.2020թ.):

անգամ, իսկ մնացած մշակաբույսերի ցանքատարածությունների չափը չի փոփոխվել: Այսպես, մեր ուսումնասիրություններից պարզվել է, որ 2014թ.-ին մարզի Անուշավան գյուղի վարելահողերի 50%-ը, Ամասիայի Ծաղկուտում՝ 90%-ը, Լեռնագյուղում՝ 41,7%-ը, Լեռնուտում՝ 36%-ը չեն մշակվում¹³:

Աղյուսակ 3

Շիրակի մարզի ցանքատարածությունների շարժը /հա/

	Հացահատիկային և հացահատիկալորեղենային մշակաբույսերի ցանքատարածությունը	Աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունը	Գարնանացան գարու ցանքատարածությունը	Վարսակի ցանքատարածությունը	Տեխնիկական մշակաբույսեր	Կարտոֆիլ	Բանջարանոցային	Կերային	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունը / բնականը/
1	2	3	4	5	6	7	8	9	10
1990թ.	32300	15186	16256	743	173	2079	1438	44583	80574
1995թ.	39648	15190	23033	253	50	2611	1323	24044	67676
2000թ.	38119	22492	14565	460	54	2841	1251	10075	67002
2005թ.	42022	26255	14748	415	19	3060	1268	9353	77857
2010թ.	34413	18811	14413	1123	162	1283	12470	18786	51570
2014թ.	40070	19600	13845	2451	142	3343	1332	15653	78423
2016թ.	48494	27374	17936	2783	130	4556	1896	15629	70706
2017թ.	41998	21698	16719	2746	171	3715	1757	18845	61489
2018թ.	25613	18458	14717	1961	105	3221	1450	10188	52267
2019թ.	33802	15865	15277	2423	72	3228	1373	10902	50375

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են. 1.Բաղդասարյան Ա, Արտադրական ռեսուրսների մարզային տեղաբաշխումն ու արդյունավետ օգտագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում՝ Ատենախոսություն, Եր. 2016թ., էջ 70: 2. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, https://www.armstat.am/file/article/gyux_90_99_1.pdf, 3.Մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման և վարձավճարների գանձման գործընթացի մասին, http://shirak.mtad.am/u_files/file/Orakarg%2008_09_2017.pdf(17.02.2020թ). 4.www.armstat.am/file/article/marz_99_17.pdf

¹³ **Բոյաջյան Ա.**, Շիրակի մարզի գյուղատնտեսությունը, ԴԱՆ, տետր 3, 7, 11, 12, Գյումրի 2014թ.:

Շիրակի մարզում հողերի չօգտագործման պատճառները տարբեր են. ֆինանսական, արտադրական կարողությունների սահմանափակման, իրացման բարդություններ, խիստ ցածր եկամուտ, եկամտի այլընտրանքային տարբերակի առկայություն և այլն, որոնց պատճառով սեփականատերը չի ցանկանում հողը մշակել: Աշխատունակ գյուղացիների մեծ մասը նախընտրում է մեկնել սեզոնային աշխատանքի, քան թե զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով, քանի որ սեզոնային արտադնա աշխատանքից ստացված եկամուտն ավելի մեծ է: Մարզի լեռնային և բարձրլեռնային հողերի սեփականաշնորհման ժամանակ բաշխված վարելահողերի մի մասը գտնվում է բնակավայրերից բավական մեծ հեռավորության վրա, արդյունքում դրանց մշակությունը գյուղացու հնարավորություններից դուրս է կամ պարզապես անարդյունավետ: Կարևոր է նաև ոռոգման գործոնը: Մինչև 1700 մ բարձրության վրա գտնվող գյուղատնտեսական հողերը ոռոգման անհրաժեշտություն ունեն: Մարզում արդյունավետ հողօգտագործումը հնարավոր չէ առանց ոռոգման, այսինքն՝ այն անմիջապես առնչվում է ջրօգտագործման հետ, որով այդ հարաբերություններն ավելի են բարդանում: 1990-2000-ական թթ. մարզի մի շարք գյուղական բնակավայրերի՝ Հայկաձոր, Մեծ Մեպասար, Գետք և այլն, ոռոգման ցանցերն ապամոնտաժվեցին և վաճառվեցին, ինչը բացասական ազդեցություն ունեցավ բուսաբուծության զարգացման վրա¹⁴:

Թվարկված հանգամանքները, անշուշտ, բացասաբար են անդրադառնում մարզի հողօգտագործման գործընթացի և արդյունավետության վրա: Անդրադառնալով հողօգտագործման որակական ցուցանիշների շարժընթացին՝ պետք է նշել, որ այստեղ նույնպես տեղի են ունեցել էական, ընդհանուր առմամբ, բացասական փոփոխություններ: Աղյուսակ 2-ի և 3-ի թվային տվյալները տալիս են մեկնաբանությունների հարուստ նյութ: Բայց այստեղ կսահմանափակվենք՝ ընդգծելով ընդհանուր զարգացումները.

1. Գյուղատնտեսական ընդհանուր ցանքատարածության նվազումը հիմնականում բաժին է ընկնում կերային մշակաբույսերին և արոտներին: Առավել կտրուկ այդ գործընթացը տեղի է ունեցել Ամասիայի, Աշոցքի և Անիի տարածաշրջաններում: Համեմատության համար նշենք, որ 1990-2007թթ. ՀՀ-ում մշակաբույսերի ընդհանուր ցանքատարածությունը կրճատվել է 133,7 հազ. հա-ով կամ 30%-ով¹⁵:

¹⁴ Բոյաջյան Ա., Նույնը:

¹⁵ Ղազարյան Ս., Մկրտչյան Հ., ՀՀ գյուղատնտեսության հողային ֆոնդի շարժընթացը և արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները, <http://socdev.asj-oa.am/66/1/369-376.pdf> (23.02.2020):

2. Ընդհանրապես 1990-2016թթ. ընկած ժամանակահատվածում շրջափակումը, նախկին շուկաներից կտրվելը և հացի խնդրի սրացումը հանգեցրին նրան, որ Շիրակի մարզում ավելացան հացահատիկի և կարտոֆիլի մշակության ցանքատարածությունները: Իսկ թե ինչով է պայմանավորված հացահատիկային և հացահատիկարնդեղենային մշակաբույսերի ցանքատարածության շեշտակի նվազումը հետագայում, դժվարանում ենք ասել:

3. Ներկայացվող ժամանակահատվածում կերային հողատեսքերը նվազել են 33,6 հազար հեկտարով կամ 75,5%-ով, իսկ արոտներինը՝ 23,2 հազար հեկտարով կամ 17,2%-ով: Կերային մշակաբույսերի ցանքատարածքների կտրուկ նվազումը բացատրվում է հիմնականում 1990-ական թվականներին անասնազլխաքանակի, մասնավորապես ոչխարի գլխաքանակի շեշտակի անկումով: Այսպես, մարզում 1991թ. ոչխարի գլխաքանակը կազմել է 183,6 հազ., իսկ 2018թ.՝ 76,4 հազ., բրդի արտադրությունը՝ համապատասխանաբար 449տ. և 104,6տ: Արժե հիշատակել, որ 1988թ. ոչխարի գլխաքանակը 330 հազարից անցել էր¹⁶: Այստեղ պետք է նշենք, որ ոչխարի գլխաքանակի նվազումը սեփականաշնորհումով պայմանավորված չի եղել, այլ նրանով, որ մարզում ոչխարաբուծությամբ զբաղվել է հիմնականում Ամասիայի տարածաշրջանի թուրքալեզու ազգաբնակչությունը, որը, Արցախի հակամարտությունով պայմանավորված, հեռացավ Հայկական ԽՍՀ-ից:

Այժմ քննարկենք, թե ներկայացվող ժամանակահատվածում գյուղատնտեսության սեփականաշնորհման հետևանքով հողօգտագործման կառուցվածքի փոփոխությունները ինչպիսի ազդեցություն ունեցան գյուղական բնակչության զբաղվածության և գյուղմթերքների արտադրության վրա: Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում՝ Շիրակի մարզում, տնտեսության ապապետականացումն իր գործուն ազդեցությունն ունեցավ զբաղված բնակչության թվի փոփոխության և գյուղմթերքների արտադրության վրա: Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Շիրակի մարզում 1990-2019թթ. բնակչության զբաղվածությունը կտրուկ կրճատվել է արտադրական՝ հիմնականում արդյունաբերության և շինարարության ոլորտներում: Հակառակ պատկերն է դիտարկվել տնտեսության ագրարային հատվածում՝ հողի, անասնազլխաքանակի և գյուղտեխնիկայի սեփականաշնորհումն ուղեկցվեց տնտեսության այդ հատվածի զբաղվածության 37,6% աճով՝ վերածելով այն արտադրական ոլորտից ազատվող ավելցուկային աշխատուժի ներգրավման կարևոր ոլորտի: Ըստ պաշտոնական տվյալների՝ 1988թ. Շիրակի գյուղատնտեսությունում զբաղված բնակ-

¹⁶ ՀՀ գյուղատնտեսությունը 1990-2019թթ., <https://www.armstat.am>. (23.02.2020):

չության թիվը կազմել է 29,2 հազ.¹⁷, իսկ 1999թ.՝ 46,8 հազ.¹⁸, 2009թ.՝ 43,1 հազ.¹⁹ և 2018թ.՝ 23,5 հազ. մարդ²⁰: 2009-2018թթ. մարզի գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թվի շեշտակի նվազումը պայմանավորված է ՀՀ ԱՎՄՀ զբաղվածության հաշվառման ստանդարտի փոփոխությամբ²¹:

Աղյուսակ 4

Շիրակի մարզի գյուղատնտեսության մակրոտնտեսական ցուցանիշները

Տարեթիվ	Զբաղվածների թիվը /մարդ/	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունը /հա/	Գյուղատնտեսության համախառն արտադրանքը ընթացիկ գներով / մլրդ դրամ/		Բուսաբուծության համախառն արտադրանքը 1 հա հաշվով /հազ. դրամ/	Շիրակի մարզի բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը /հազ. դրամ/
			Բուսաբուծություն	Անասնապահություն		
1	2	3	4	5	6	7
1995թ.	47,5	67676	14,5	21,0	214,2	100,4
2000թ.	48,5	67002	11,7	19,5	174,6	86,7
2005թ.	49,1	77857	25,6	23,7	328,8	136,1
2010թ.	52,4	51570	35,9	35,2	696,1	252,6
2014թ.	51,2	78423	57,3	52,2	730,6	449,9
2016թ.	39,9	70706	50,8	50,9	718,4	424,9
2017թ.	34,1	61489	41,4	58,0	673,3	420,5
2018թ.	23,5	52267	35,5	62,4	679,2	415,8
2019թ.	23,4	50375	34,4	52,5	682,9	372,4

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են՝ Բաղդասարյան Ա, Արտադրական ռեսուրսների մարզային տեղաբաշխումն ու արդյունավետ օգտագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում՝ Ստեղծարարություն, Եր., 2016թ.: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, https://www.armstat.am/file/article/gyux_90_99_1.pdf: Մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման և վարձավճարների գանձման գործընթացի մասին, http://shirak.mtad.am/u/Orakarg_09_2017.pdf www.armstat.am/file/article/mar_z_99_17.pdf (17.02.2020):

¹⁷ Բոյաջյան Ա., Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հատոր IX, Եր., 2006թ., էջ 122:

¹⁸ ՀՀ գյուղատնտեսությունը 1990-1999թթ., //www.armstat.am// (20.01.2020):

¹⁹ Զբաղվածներն ըստ ՀՀ մարզերի 2005-2009թթ., https://www.armstat.am/10_3.pdf (20.02.2020):

²⁰ Զբաղվածներն ըստ գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտների, 2018թ., https://www.armstat.am/file/article/marzer_2019_17.pdf, (20.02.2020):

²¹ Նոր ստանդարտի համաձայն՝ զբաղվածների թվաքանակից բացառվել են իրենց տնտեսությունում սեփական վերջնական սպառման համար ապրանք(ներ) արտադրողները, ովքեր համարվում էին գյուղատնտեսության ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածներ: ԱՎՄՀ բանաձևի համաձայն վերջիններս համարվում են աշխատանքային գործունեություն իրականացնողներ, բայց ոչ զբաղվածներ: Աշխատաշուկայում իրենց ակտիվության բնույթից կախված՝ վերջիններս դասակարգվել են միմյանց բացառող կատեգորիաներից որևէ մեկում՝ «գործազուրկ» կամ «աշխատուժից դուրս բնակչություն»:

Հիշատակենք, որ նույն ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվածների թիվը պակասել է 2,5 անգամ՝ 552,0 հազարից իջնելով՝ 224,9 հազարի²²: Ինչպես տեսնում ենք, 1990-2019թթ. ընկած ժամանակահատվածում մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մակերեսը պակասել է արոտների և կերային հողատեսքերի հաշվին, իսկ զբաղվածության թվաքանակում էական փոփոխություն չի գրանցվել: Այժմ փորձենք ներկայացնել, թե գյուղմթերքների արտադրության ծավալն ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել:

Աղյուսակ 4-ի թվային տվյալների վերլուծությունից պարզվում է, որ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների նվազմանը զուգընթաց, ընթացիկ գների հաշվին ավելացել է բուսաբուծության համախառն արտադրանքի ծավալը: Կարծում ենք, թե այդ երևույթը բացատրվում է նախևառաջ ոչ այնքան բերքատվության աճով, որքան շուկայում գյուղմթերքների գնի թանկացումով, ինչը երևում է մարզի բուսաբուծության մեկ հեկտարի արտադրության և մեկ շնչին բաժին ընկնող գյուղատնտեսական համախառն արտադրանքի աճով, երկրորդ՝ ներկայացվող ժամանակահատվածում մարզի բնակչության նվազումով: Հիշատակենք, որ 1995-2019թթ. մարզի բնակչության թիվը պակասել է 123,5 հազարով կամ 34,6%-ով, ինչը բնականաբար իր գործուն ազդեցությունն էր ունենալու գյուղատնտեսական համախառն արտադրանքի հարաբերական ցուցանիշի մեծության վրա:

Վերջին տարիների վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարզում գյուղատնտեսության համախառն արտադրանքում բուսաբուծության և անասնապահության տեսակարար կշիռները փոփոխական են՝ առանձին տարիներին դրանցից որևէ մեկի գերակշռությամբ (տե՛ս աղյուսակ 4): Խորհրդային ժամանակաշրջանի համեմատությամբ՝ մարզում նկատելիորեն նվազել են ոչ միայն ցանքատարածությունների մակերեսը, այլ նաև անասնազվաքանակը և դրանց մթերատվությունը: Շիրակի մարզում 1980-ական թվականների կեսերին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 87 հազար էր, որից 24 հազարը՝ կով, ոչխարի գլխաքանակը՝ 282 հազար²³, 1995թ. նույն ցուցանիշը համապատասխանաբար կազմել է՝ 64,3 հազար, 35,8 հազար և 58,2 հազար, իսկ 2016թ.՝ 107,9 հազար, 49,7 հազար և 93,5 հազար (տե՛ս աղյուսակ 5): Սակայն, աղյուսակ 5-ից երևում է նաև, որ 2016-2019թթ. մարզում գրանցվել է անասնազվաքանակի շեշտակի անկում: Կարծում ենք՝ նշված տարիներին անասնազվաքանակի կտրուկ անկումը պայմանավորված

²² ՀՀ աշխատանքային շուկան https://www.armstat.am/file/article/marzer_2019_17.pdf (20.01.2020):

²³ Մանասյան Մ, Գրիգորյան Ա, Պոտոյան Ա., Շիրակի մարզ (բնությունը, բնակչությունը, տնտեսությունը), «Նահապետ» հրատ., Եր., 2002թ., էջ 110:

Է բնակչության պահանջարկի աճով, կերային մշակաբույսերի թանկացումով, ինչը հանգեցրել է անասունների զանգվածային մորթի: Հետաքրքիրն այն է, որ 2016-2019թթ. մարզում մսամթերքների արտադրության աճ չի գրանցվել (տե՛ս աղյուսակ 6): Այսինքն՝ ստացվում է, որ մարզից անասուններ են արտահանել:

Աղյուսակ 5

**Շիրակի մարզի անասնազրահարանակի շարժընթացը
(ըստ ՀՀ ԱՎԿ-ի տվյալների)**

	Խոշոր եղջերավոր անասուն /հազ./	Որից կովեր /հազ./	Խոզեր /հազ./	Ոչխարներ /հազ./	Ձիեր /հազ./
1	2	3	4	5	6
1990թ	89,9	-	-	-	-
1995թ	64,3	35,8	9,6	58,2	0,8
2000 թ	71,5	36,2	8,0	68,4	0,7
2005թ.	89,0	45,9	11,9	72,6	0,6
2010թ.	95,7	46,1	14,5	68,4	0,5
2015թ	107,9	50,6	12,9	90,5	0,4
2016թ	107,9	49,7	14,8	93,5	0,3
2017թ	101,0	47,4	18,7	83,4	0,3
2018թ	91,1	44,3	14,7	71,8	0,3
2019թ.	87,0	40,8	20,2	76,4	0,3

Շիրակի մարզում արտադրված հիմնական գյուղմթերքը՝ ցորենը, գյուղացիները վաճառում են մարզի ալրադացներին, ցորենի ընդունման կետերին, իսկ որոշ մասը օգտագործում են սեփական կարիքների համար՝ ալյուրի տեսքով, ինչպես նաև հաճախ շատ քիչ մաս պահում են հաջորդ տարվա համար սերմնացու: Գարին ամբողջությամբ օգտագործում են որպես անասնակեր, շատ քիչ մասն էլ պահում են հաջորդ տարվա համար սերմնացու: Կարտոֆիլը միջին գյուղացիական տնտեսությունները վաճառում են իրենց գյուղեր եկած առևտրականներին, որոնք էլ այն վաճառվում են ներքին շուկայում, իսկ ֆերմերները հաճախ իրենց կարտոֆիլի բերքը վաճառում են վրացիներին կամ արտահանմամբ զբաղվող միջնորդ կազմակերպություններին²⁴:

Աղյուսակ 6-ի տվյալներից երևում է, որ 2015թ.-ին գյուղատնտեսության համար գրեթե բոլոր մշակաբույսերի բերքատվությունը միջինից բարձր է եղել, սակայն 2017թ.-ին հացահատիկի արտադրության ծավալը նվազել է 73,6 հազ. տոննայով կամ 48,6%-ով, կարտոֆիլի արտադրությունը՝ 20,7 հազ. տոննայով կամ 18,1%-ով:

²⁴ **Բոյաջյան Ա.**, Շիրակի մարզի գյուղատնտեսությունը, ԴԱՆ, տեսր 3, 7, 11, 12, Գյումրի, 2014թ.:

Շիրակի մարզի գյուղատնտեսական մթերքների արտադրությունը

	Հացահատիկ /հազար տոննա/	Կարտոֆիլ /հազար տոննա/	Բանջարեղեն /հազար տոննա/	Պտուղ /հազար տոննա/	Միս /հազար տոննա/	Կաթ /հազար տոննա/	Ձու /մլն հատ/	Բուրդ /տոննա/
1	2	3	4	5	6	7	8	9
1990թ.	74,9	20,8	20,8	3,1	14,4	57,6	-	449,0
1995թ.	59,7	44,8	44,8	2,2	9,8	57,4	-	139,0
2000 թ.	36,9	22,3	13,1	0,7	12,0	61,9	30,9	145,0
2005թ.	50,1	56,5	25,5	2,5	13,7	88,8	40,3	139,1
2010թ.	80,1	69,3	28,3	1,7	20,0	98,8	39,7	160,3
2015թ.	151,2	114,0	55,2	9,7	23,8	112,2	43,0	193,1
2016թ.	157,5	118,0	56,6	8,1	24,7	115,7	45,7	200,1
2017թ.	77,6	93,3	49,1	6,0	25,7	116,4	45,4	160,8
2018թ.	108,6	69,6	31,5	5,1	24,9	110,7	45,5	104,6
2019թ.	44,1	67,9	67,9	2,8	24,7	101,1	45,6	-

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են՝ 1.Բաղդասարյան Ա, Արտադրական ռեսուրսների մարզային տեղաբաշխումն ու արդյունավետ օգտագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում՝ Ատենախոսություն, Եր., 2016թ.: 2. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, https://www.armstat.am/file/article/gyux_90_99_1.pdf, 3. Մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման և վարձավճարների գանձման գործընթացի մասին, http://shirak.mtad.am/u/Orakarg_09_2017.pdfwww.armstat.am/file/article/marz_99_17.pdf (17.02.2020):

Հիմնական պատճառը եղանակային անբարենպաստ պայմաններն են եղել՝ չորային եղանակ, ջերմաստիճանի բարձր ցուցանիշ՝ 30° C, որը պահպանվել է երկար ժամանակ, ռոտում՝ մեծ ընդհատումներով և քիչ, բացի այդ՝ բերքն էլ վնասվել է կարկտահարությունից ու ցրտահարությունից: Կարկտահարված տարածքների վերականգնման համար լրացուցիչ ծախսեր են իրականացվել (լրացուցիչ պարարտացում, փխրեցում, ռոտում և այլն), այդ միջոցառումների շնորհիվ վնասը հասցվել է 20-30%-ի: Մեծ մասի մոտ բերքի վրա իր ազդեցությունն է թողել ցրտահարությունը. ցրտահարվել է կարտոֆիլի ցանքատարածությունների կեսը, և դրա վերականգնման համար լրացուցիչ պարարտա-

ցում ու փխրեցում են կատարվել՝ վնասը հասցնելով նվազագույնի²⁵: 2014թ.-ին Շիրակի մարզի թվով 39 համայնքում տեղացած ուժգին կարկուտը (որոշ համայնքներում՝ նույնիսկ մեկից ավելի անգամ) զգալիորեն ազդել է տվյալ համայնքներում մշակաբույսերի բերքատվության վրա: Կան համայնքներ, որտեղ վնասը շատ մեծ է եղել, և գյուղացին առհասարակ բերք չի հավաքել: Այդ համայնքների գյուղացիների շրջանում կատարված մեր հարցումներից պարզվել է, որ պետական աջակցություն պարարտանյութի տեսքով չի եղել, կամ եղել է, բայց՝ ուշացած և քիչ քանակով, ինչի պատճառով էլ գումար չունեցողները շուկայից պարարտանյութ գնելու հնարավորություն չեն ունեցել՝ չկարողանալով կարկուտի հասցրած վնասը գոնե ինչ-որ չափով մեղմել²⁶:

Եզրահանգում. Շիրակի մարզի գյուղատնտեսության վերաբերյալ վերը շարադրվածը թույլ է տալիս անել հետևյալ սկզբունքային *եզրահանգումներն* ու *առաջարկությունները*.

- Շիրակի գյուղացիության ապրուստի հիմնական միջոցներն են երկրագործությունը, անասնապահությունը, սեզոնային արտագնա աշխատանքը:
- Գյուղացիական տնտեսությունների չափերի՝ գոյություն ունեցող պայմաններում հնարավոր չէ կազմակերպել մասնագիտացված հոծ ապրանքային արտադրություն: Հողօգտագործման չափերը և նրա վիճակը էապես կանխորոշում են գյուղացիական տնտեսությունների ոչապրանքային, բնամթերային բնույթը:
- Գյուղատնտեսությունում եկամուտները չեն ավելանում գյուղմթերքների վերամշակման արտադրամասերի բացակայության պատճառով:
- Հողերի վատթարացմանը Շիրակի մարզում մեծապես նպաստում է երկրագործության վարման ներկայիս չհամակարգված պրակտիկան: Չեն պահպանվում գյուղատնտեսության մեջ պարտադիր համարվող ցանքաշրջանառության կանոնները: Մարզում հաճախ 5-6 տարի անընդմեջ հողը դրվում է հացահատիկային մշակաբույսերի ցանքի տակ:
- Շիրակի մարզի տարածաշրջանների գյուղատնտեսության զարգացման մակարդակների միջև առկա է զգալի անհամաչափություն, ինչը վատ է անդրադառնում բնակչության կենսապայմանների ու կյանքի կենսամակարդակի վրա՝ նպաստելով արտագաղթի մակարդակի բարձրացմանը:
- Գյուղատնտեսության հիմնախնդիրների մի մասի լուծումը հնարավոր է առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման ճանապարհով:

²⁵ Բոյաջյան Ա., Շիրակի մարզի գյուղատնտեսությունը, ԴԱՆ, տետր 14, Գյումրի, 2019թ.:

²⁶ Ավետիսյան Գ., Շիրակի մարզի տնտեսական վիճակի վերլուծություն, Գյումրի, 2014թ., <http://mediafiles.digitalpomohost.com/pdf> (20.02.2020):

- Շիրակի արտադարյերի մեծ մասը դասվում է հանրապետության լավ արտոների թվին: Այս իմաստով Շիրակի մարզի լեռնային արտադարյերի և բուսական ռեսուրսների պահպանումը պետք է համարել ազգային հիմնահարց՝ ընդգծելով տեղի արտադարյերի բուսականության ինքնատիպությունն ու կենսաբազմազանությունը:
- Մարզն ունի պոտենցիալ հնարավորություն ստեղծելու մասաթերք վերամշակող պահածոների գործարան, քանի որ մարզի տեսակարար կշիռը ՀՀ-ում անասնապահության մեջ բավականին մեծ է: Անհրաժեշտ է խթանել բրդի, մորթու վերամշակմամբ զբաղվող ընկերությունների ներուժը:
- Շիրակի մարզի գյուղատնտեսության խիստ ռիսկայնության պայմաններում անհրաժեշտ է ստեղծել ապահովագրական համակարգ:

СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО В ШИРАКСКОЙ ОБЛАСТИ В КОНЦЕ XX И НАЧАЛЕ XXI ВЕКА.

Бояджиан А. Г., Аветисян Г. Р.

Ключевые слова: *растениеводство, скотоводство, посевная площадь, земельный фонд, сельское хозяйство, кооперация, земельный участок, пастбище, пахотная земля.*

В статье представлены качественные и количественные изменения в сельскохозяйственной области Ширакского марза в конце XX и начале XXI века. Переход от социалистической плановой системы к капиталистическим рыночным отношениям был осуществлён путём приватизации сельского хозяйства и создания монопольных хозяйств.

В наблюдаемый период в результате приватизации сельского хозяйства изменения в структуре собственности на землю повлияли на занятость сельского населения, а также на разнообразие и количество сельскохозяйственной продукции.

Были сделаны выводы о сельском хозяйстве Ширакской области, на основе которого были также представлены принципиальные предложения.

AGRICULTURE IN THE SHIRAK REGION AT THE END OF THE XX AND BEGINNING OF THE XXI CENTURY.

Boyajyan A. G., Avetisyan G. R.

Kew words: *plant cultivation, stock, sowing area, agrarian fund, village economy, cooperation, a patch of soil, grassland, acreage.*

The article presents qualitative and quantitative changes in the agricultural sector of the Shirak region at the end of the 20th and beginning of the 21st century. The transition from a socialist planned structure to capitalist market relations was accomplished through the denationalization of agriculture and the creation of monopoly farms.

In the observed period as a result of the privatization of agriculture, changes in the structure of land ownership affected the employment of the rural population and the variety and quantity of agricultural products.

Conclusions were drawn about the agricultural economy of the Shirak region, on the basis of which, fundamental proposals were also presented.

References

1. **Abramyan M.** Gyughaciakan tntesutuneri karavarumy ev kazmakerpumy, Yerevan, 2006 (In Armenian).
2. **Avetisyan G.** Shiraki marzi hogheri pahpanuthyan ev hoghabarelavman himnadirneri, Gyumri, 2014 (In Armenian).
3. **Bagdasaryan A.** Artadrakan resursnery marzayin terabashkhman yev ardyunavet otagorcman himnaharcery, Yerevan, 2016 (In Armenian).
4. **Boyajyan A.** Shiraki marzi social-tntesakan zargacman mi qani harcer, Yerevan, 2006 (In Armenian).
5. **Gabrielyan M.** Hayastani Hanrapetityan gyughatntesuthyan zargacman socialakan yev mshakuthayin baghadrichnery. hamashkharhayin tshgnajami azdecutuny, horeri koopera ciayi himnakhndirneri, Yerevan, 2012 (In Armenian).
6. **Grigoryan A.** Bnaresursayin neruji ardyunavet otagorcumy vorpes gyughatntesuthyan ekologiacman anhrajesht gorcon, Yerevan, 2015t (In Armenian).
7. **Manaseryan N.** Agrarayin harcy yerek yev aysor, Yerevan 2005 (In Armenian).
8. **Manasyan M., Grigoryan A., Potosyan A.** Shiraki marz (bnuthuny, bnakchuthuny, tntesuthuny), Yerevan, 2002 (In Armenian).

Ընդունվել է՝ 02.03.2020

Գրախոսվել է՝ 09. 05. 2020

Հանձնվել է տպ.՝ 27. 05. 2020

Տեղեկություններ հեղինակների մասին՝

Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների
կենտրոնի ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ a.boyajyan@mail.ru
Գայանե ԱՎԵՏԻՍՅԱՆ՝ աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ,
Շիրակի պետական համալսարանի դասախոս,
էլ. հասցե՝ gayane.avetisyan.5@mail.ru.

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Խ Ո Ս Ք

Ծանր ու անդառնալի կորուստ ապրեցինք. կյանքից անժամանակ հեռացավ Շիրակի երկրաբանական թանգարանի վաստակաշատ ֆոնդապահ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի առաջատար գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու, հնագետ

Լ Ա Ր Ի Ս Ա Գ Ր Ի Շ Ա Յ Ի Ե Գ Ա Ն Յ Ա Ն Ը



Լ.Գ. Եգանյանը ծնվել է 1948 թվականին, Շիրակի մարզի Ղազանչի գյուղում: 1969-ին ավարտելով Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը՝ աշխատանքի է անցել Շիրակի երկրագիտական թանգարանում՝ որպես էքսկուրսավար, այնուհետև ստանձնել գլխավոր ֆոնդապահի պարտականությունը: Ֆոնդային աշխատանքը, թանգարանային նյութերի ամենօրյա խնամքն ու հոգածությունը Լարիսայի համար բացում են հնագիտության և ազգագրության բազմաթիվ անհայտներով ու առեղծվածներով լի գրավիչ աշխարհը, որը մինչև կյանքի վերջը եղավ նրա Ես-ի անքակտելի մասը: Արդեն 1971-ին նա ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Ոսկեհասկի հնագիտական արշավախմբում է, այնուհետև մինչև 1988-ի ավերիչ երկրաշարժը մասնակցում է Մարմաշենի, Տիրաշենի, Կումայրու, Կարմրաքարի պեղումներին: Տարիներ շարունակ նա խնամ-

քով հաշվառում, անձնագրավորում և գիտական մշակման էր ենթարկում պեղումներից հայտնաբերված հնագիտական և թանգարանին հանձնված ազգագրական նյութերը: Ի դեպ՝ դժվարին պայմաններում, որովհետեւ թանգարանի այն ժամանակվա տնօրինությունն այդ ամենը համարում էր ավելորդ աղբ և գտնում, որ հին մշակույթը ներկայացնելու համար մի քանի ամբողջական իրերը բավական են, իսկ մնացածը պարզապես պետք է դուրս շարտել: Սկսված հալածանքին և «անհնազանդ» ֆոնդապահից ազատվելու բոլոր փորձերին ի հեճուկս՝ Լ.Եզանյանը որպես նվիրյալ կարողացավ դիմակայել ու պահպանել թանգարանի հնագիտական հավաքածուն:

1988ի Ադետը պատուհասեց նաև թանգարանին: Նրա՝ ընտանիք, բնակարան, հարազատներ կորցրած աշխատակիցների մեծ մասը լքել էր քաղաքը: Այս ծանր պայմաններում թանգարանի պահպանությունն ու վնասված նյութերի վերականգնումը մնաց 2 հոգու ուսերին: Վթարված բնակարանից թանգարանի հարևանությամբ դրված տնակ տեղափոխվելով՝ Լարիսան մեկտեղեց տունն ու անդադրում աշխատանքը:

Երբ 1989-ին Ադետի գոտու վերականգնման ծրագրով Շիրակի տարածքում սկսվեցին աննախնդեպ ծավալի հողային և շինարարական աշխատանքներ, թանգարանի փոքրթիվ անձնակազմը կամավոր հանձն առավ պատմահնագիտական հուշարձանների պահպանության ու հայտնաբերման գործը: 1989-ին Լ. Եզանյանի ակտիվ մասնակցությամբ հայտնաբերվեցին և մինչև 2004-ը պեղվեցին Վարդբաղի, Առափիի, Կարմրաքարի, Բենիամինի դամբարանադաշտերի շուրջ 300 դամբարաններ, որոնց ուսումնասիրության արդյունքները ամփոփվեցին Լարիսայի՝ «Շիրակի անտիկ դամբարանադաշտերը» փայլուն պաշտպանած թեկնածուական ատենախոսությունում (2003թ.): 1994 թվականին, ՀՀ-ում առաջիններից մեկը, Լ. Եզանյանը Եվրոմիության «Արևելյան գործընկերության» ծրագրի շրջանակներում Ֆրանսիայում մասնակցեց մասնագիտական որակավորման դասընթացների և ստացած գիտելիքները կիրառել սկսեց պատմական հուշարձանների պահպանության և ուսումնասիրման գործում՝ 1996-ից միաժամանակ ղեկավարելով ՀՀ ՄՆ պատմական միջավայրի պահպանության Շիրակի մարզային ծառայությունը, իսկ 2004-2014թթ.՝ ՀՀ ՄՆ պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Շիրակ-Արագածոտն տարածքային բաժինը: Իր սկզբունքայնությամբ ու ազնիվ նվիրումով չընկրկելով դժվարությունների և նույնիսկ բարձրաստիճան պաշտոնյաների ճնշումների առաջ՝ նա կարողացավ կանխել շատ հուշարձանների խաթարումն ու ավերումը:

Իր բեղուն գործունեության ընթացքում Լ.Եզանյանը մասնակցել է Ոսկեհասկի, Մարմաշենի, Տիրաշենի, Կումայրու, Վարդբաղի, Առափիի, Մայիսյանի,

Լուսադրյուրի, Աշոցքի, Թավշուտի, Երեբունյքի, Ագատանի, Վարդաքարի, Հայկաձորի, Շիրակավանի, Կապսի, Սարատակի, Երազգավորսի, Բյուրակնի, Արզնիի, Լուսակերտի, Հարթաշենի, Ախուրիկի, Սարատակի հնագիտական արշավախմբերի աշխատանքներին, ղեկավարել Բենիամինի անտիկ դամբարանադաշտի, Մեծ և Փոքր Սեպասարերի վաղ բրոնզիդարյան բնակավայրերի, Ագատանի, Ջրափիի երկաթիդարյան դամբարանադաշտերի, Աղվորիկի ու Ջրաձորի ամրոցների և բնակավայրի պեղումները: Որպես բանիմաց ու փորձառու մասնագետ մշտապես հրավիրվել է մասնակցելու օտարերկրյա՝ հայ-ֆրանսիական, հայ-գերմանական, հայ-ճապոնական տարբեր արշավախմբերի աշխատանքներին: Լ.Եզանյանի առանձնահատուկ ուշադրության և հոգածության կենտրոնում են եղել երիտասարդ մասնագետները և ուսանողները, որոնց նա տասնամյակներ շարունակ հաղորդել է իր փորձն ու գիտելիքները: Նա ծնողական գործվանքով էր վերաբերում արշավախմբերում ընդգրկված սփյուռքահայ երիտասարդ կամավորներին, նրանց մեջ ներարկում սեր ու հարգանք հայ ժողովրդի հարուստ պատմամշակութային ժառանգության նկատմամբ, իմացաբանական և մշակութային թելերով կապում նրանց հայրենիքին: Լինելով այդքան բազմազբաղ, նա երբեք չթերացավ թանգարանի գլխավոր ֆոնդապահի իր պարտականություններում: Տարիների ընթացքում նա միանձնյա մշակել, նկարագրել և թանգարանի գույքամատյան է մուտքագրել շուրջ 23000 ցուցանմուշ, որոնց գերակշիռ մասի գույքահամարներն ու ծագումը անգիր գիտեր:

1997-ից Լ.Եզանյանը ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադիր անդամ էր, հնագիտության խմբի ղեկավարը, առաջատար գիտաշխատող, որի ղեկավարությամբ իրականացվել են 6 հնագիտական և բանագիտական թեմաներ: Նա նաև կանգնած է «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային հեղինակավոր գիտաժողովների կազմակերպման ակունքներում, նրա մշտական ու հեղինակավոր մասնակիցներից էր ու նույնիսկ շատ վատառողջ, բայց ուժ գտավ իր մեջ ներկա գտնվելու նաև իր կյանքի վերջին գիտաժողովին՝ 2019-ի աշնանը: Լարիսան թողեց հսկայական գիտական ժառանգություն՝ հրատարակած մոտ 100 գիտական հոդվածներ ու 1 մենագրություն, ավարտին հասցրած շուրջ 10 ծավալուն հոդվածներ և 2 մենագրություն: Հատկանշական է հնագիտական գտածոների և իրողությունների պարզաբանման ու բացատրության նրա մոտեցումը, որում նա դրանք բաղդատում էր մարդաբանական, ազգագրական, բանահյուսական, դիցաբանական և պաշտամունքային նյութերի ու տվյալների հետ, փորձում հնագիտական նյութերի միջոցով գտնել և մեկնաբանել դրանց ծագումնաբանությունը: Այդ աշխատանքները հրատարակվել են Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Չեխիայի, Էստոնի-

այի, Ճապոնիայի հեղինակավոր գիտական հանդեսներում:

Իր բեղուն և անբասիր աշխատանքի համար Լ. Եզանյանն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալի, ՀՀ ԳԱԱ նախագահության, ՀՀ ՄՆ, ՀՀ Շիրակի մարզպետարանի, Գյումրու քաղաքապետարանի տասնյակ Պատվոգրերի, Շնորհակալագրերի և Գովեստագրերի:

Հանգչիր խաղաղությամբ, սիրելի՛ Լարիսա, մենք քո պակասը միշտ ենք զգալու:

Բ ո վ ա ն դ ա կ ո թ յ ու ն

Բ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵԳԱՆՅԱՆ Լարիսա

Ազատանի բազմանիստ ապակյա կնիքի պատկերագրությունը և
իմաստաբանությունը5

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԵՏՐՈՍՅԱՆ Մարգիտ

Առասպելաբանված եղջյուրի և միեղջյուրի մասին.....33

ԱԿՈՊՈՎ Արկադի

Խոտորջուրցիների պայքարն ավազակախմբերի դեմ XIX դարի II կեսին59

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Արմեն

Դրվագներ 1918թ. մայիսյան հերոսամարտերի պատմությունից.

Շիրակի գոյամարտը71

ԿԱՎՐԵԼԻՇՎԻԼԻ Ռոին

Մի քանի արխիվային փաստաթուղթ վրաց-հայկական

հարաբերությունների պատմությունից (12.02-01.12.1920թ.).....83

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Կարինե

Ալեքսանդրապոլի գավառի բնակչության կորուստները

թուրքական բռնազավթման շրջանում՝ 1918թ. մայիս-դեկտեմբերին.....92

ԱՎԱԳՅԱՆ Ինգա

Մեծ եղեռնը վերապրած Ալխոր Շուշանյանի հուշապատումը.....105

Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԻՎԱՆՈՎ Անդրեյ

Գյումրու պատմական վերնակույյար ճարտարապետությունը.

հասկացության հիմնավորում և պահպանության ուղիներ.....119

Ա Զ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԲԱԶԵՅԱՆ Կարինե

«Մասնագիտություն» հասկացության ավանդական և արդի

ընկալումներն ու մեկնաբանումները139

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հասմիկ

Ժողովրդական երգը որպես ստեղծագործական մեկնաբանություն.....155

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արթուր

Ավանդական աշխատանքի երգերի կիրառության խնդրի շուրջ
(սանդի, խնոցու և գութանի օրինակով).....166

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռոզա, ՍԱՀԱԿՅԱՆ Կարինե

Գյումրու բանավոր երգաստեղծության տեքստի լեզուն178

ՄԵԼՔՈՆՅԱՆ Վարդուհի

Ալեքսանդրապոլ-Լենինականի տնտեսությունը
ըստ պարբերական մամուլի նյութերի (1907-1925թթ.).....190

Բ Ա Ն Ա Ս Ի Դ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԽԱՉԱՏԸՅԱՆ Լալիկ

Հին հայերենի շարահյուսական մի կառուցատիպի մասին199

Բ Ա Ն Ա Հ Յ Ո Ւ Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԽԵՄՉՅԱՆ Մարինե

Կարսի հրաշապատում հեքիաթները որպես
հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթների բաղկացուցիչ մաս.....211

ՄՍՏԻԿՅԱՆ Հասմիկ

Բանահյուսական օրորոցային տեքստի արարման միջավայրը223

Ժ Ո Ղ Ո Վ Դ Դ Ա Գ Դ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԲՈՅԱՋՅԱՆ Արտաշես, ԱՎԵՏԻՍՅԱՆ Գայանե

Շիրակի մարզի գյուղատնտեսությունը
XX դարավերջին և XXI դարասկզբին.....239

Հիշատակի խոսք256

С о д е р ж а н и е

Ф О Л Ъ К Л О Р И С Т И К А

ЕГАНЯН Лариса

Иконография и семантика многогранной стеклянной геммы из Азатана.....5

И С Т О Р И Я

ПЕТРОСЯН Саргис

О мифологическом роге и единороге.....33

АКОПОВ Аркади

Борьба хоторджурцев против разбойничьих групп
во второй половине 19-го века.....59

АЙРАПЕТЯН Армен

Эпизоды из истории майских героических сражений 1918г.: Ширакская битва.... 71

КАВРЕЛИШВИЛИ Роин

Несколько архивных документов из истории грузино-армянских
отношений (12.02.1920 – 01.12.1920 г.)83

АЛЕКСАНИЯН Карине

Потери населения Александропольского уезда в
период турецкой оккупации (май-декабрь 1918 г.).....92

АВАГЯН Инга

Воспоминания пережившего Армянский геноцид Алхора Шушаняна.....105

А Р Х И Т Е К Т У Р А

ИВАНОВ Андрей

Историческая вернакулярная архитектура Гюмри:
обоснование понятия и подход к сохранению119

Э Т Н О Г Р А Ф И Я

БАЗЕЯН Карине

Традиционные и современные восприятия и
трактовки понятия «профессия»139

АРУТЮНЯН Асмик

Народная песня как творческая интерпретация155

ОГАНИСЯН Артур

О применении традиционных трудовых песен.....166

ОГАНЕСЯН Роза, СААКЯН Карине

Язык текста устного песнетворчества Гюмри178

МЕЛКОНЯН Вардуи

Экономика Александрополь-Ленинакана по
материалам периодической печати (1907-1925гг.)190

Ф И Л О Л О Г И Я

ХАЧАТРЯН Лалик

Об одном синтаксическом структурном типе древнеармянского языка.....199

Ф О Л Ь К Л О Р

ХЕМЧЯН Марине

Волшебные сказки Карса как составная часть
армянских народных волшебных сказок.....211

МАТИКЯН Асмик

Среда создания текста фольклорной колыбельной223

Д Е М О Г Р А Ф И Я

БОЯДЖЯН Арташес, АВETИСЯН Гаяне

Сельское хозяйство Ширакской области в конце XX и начале XXI века.....239

Слово памяти.....256

Contents

FOLKLORISTICS

YEGANYAN Larisa

Iconography and Semantics of Versatil Glass Gemma From Azatan.....5

HISTORY

PETROSYAN Sargis

About the Mythological Horn and the Unicorn33

AKOPOV Arkadi

The Struggle of Khotorjourians Against the Robber Groups
in the Second Half of the 19th Century.....59

HAYRAPETYAN Armen

Episodes from the History of Heroic Battles in May 1918:
The Battle of Shirak71

KAVRELISHVILI Roin

Several Archival Documents from the Georgian-Armenian Relations
(12.02.1920-01.12. 1920).....83

ALEQSANYAN Karine

Losses of the Population of Alexandrapol Province during
the Turkish Occupation (May-December 1918)92

AVAGYAN Iinga

Memories of Alkhor Shushanyan Who Has Survived Armenian Genocide.....105

ARCHITECTURE

IVANOV Andrey

Historical Vernacular Architecture of Gyumri:
Justification for the Concept and Ways to Maintenance.....119

ETHNOGRAPHY

BAZEYAN Karine

Traditional and Modern Perceptions and Interpretations
of the Concept of “Profession”139

HARUTYUNYAN Hasmik

Folk Song as a Creative Interpretation.....155

HOVHANNISYAN Artur

On the Issue of the Application of Traditional Work Songs
(by the example of mortar, churn and plough)..... 166

HOVHANNISYAN Roza, SAHAKYAN Karine

The Language of the Text of Gyumri's Oral Song Production178

MELQONYAN Varduhi

The Economy of Alexandrapol-Leninakan Based on
Periodical Press Materials (1907-1925).....190

PHILOLOGY

KHACHATRYAN Lalik

On a Syntax Structural Type of old Armenian Language.....199

FOLKLORE

KHEMCHYAN Marine

Kars Fairy Tales of Magic as a Part of the Armenian Folk Fairy Tales of Magic.....211

MATIKYAN Hasmik

The Creative Milieu of the Traditional Lullaby..... 223

DEMOGRAPHY

BOYAJYAN Artashes, AVETISYAN Gayane

Agriculture in the Shirak Region at the End of the
XX and Beginning of the XXI Century.....239

A Word of Remembrance.....256

*Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն*

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 1 (23) 2020

*Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований*

НАУЧНЫЕ ТРУДЫ. 1 (23) 2020

*Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia*

SCIENTIFIC WORKS. 1 (23) 2020

*Համակարգչային և գերարվեստական ձևավորումը՝ Լ. Կոստանյանի,
Խմբագրումը և սրբագրումը՝ Ռ. Հովհաննիսյանի, Հ. Մատիկյանի,
Ա. Սառաջյանի*

Ստորագրված է տպագրության՝ 27. 05. 2020թ.

Ծավալը՝ 266 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 150, գինը՝ պայմանագրային

**ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5^ա
<http://shirakcenter.sci.am/>. E-mail: scient.works@shirakcenter.sci.am**